



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Учебник Илья
1902

491.99-8
S-45

18 MAY 2010

20 AUG 2013

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ


ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

491.99-8

5-45

Կ.

ԶՈՐՐՈՐԴ ԳԻՐԴԱՐԱՆ



1007
31718

ՏԱՄՆԵՐՈՐԳ ԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԶԽԱՏԱՍԻՐԵՑ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս


Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի
Միջայեկեան փողոց, տուն 81.

1902

9843

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ջ Ո Ւ

Ձ Ո Ր Ր Ո Ր Գ Յ Ա Ր Է



Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Ա Ռ Ա Ջ Ի Ն



1. Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Փ

Միևնոյն երկաթի կտորից և միևնոյն արհեստանոցում շինուած էին երկու խոփ: Դոցանից մինը գնեց մի երկրագործ և սկսեց գործ ածել. իսկ միւսը երկար ժամանակ անօգուտ ընկած էր վաճառականի խանութում: Պատահեցաւ որ, մի քանի ժամանակից յետոյ, երկու ընկերները դարձեալ տեսան իրար: Երկրագործի մօտ եղած խոփը արծաթի պէս պսպղում էր և մինչև անգամ աւելի լաւ էր, քան թէ նոր շինած ժամանակը. իսկ խանութում անգործ ընկած խոփը սեւացել էր ու ժանգոտել: «Աստ, խնդրեմ, ինչո՞ւ դու այդպէս փայլում ես», հարցրեց ժանգոտած խոփը իւր բարեկամին: «Աշխատելուց, սիրելիս, պատասխանեց միւսը. իսկ եթէ դու ժանգոտել ես և առաջուանից աւելի վատացել, այդ էլ նորանից է, որ այսքան ժամանակ, կողքիդ ընկած, ոչինչ չես արել»:

Дозволено цензурою. Тифлисъ, 12 Ноября, 1901 года.

2. ԵՐԿՐԱՌՈՐԾԻ ՅՈՅՍԵՐԸ

Քրտնավաստակ երկրագործի
Աշխատանքով ցանած արտը
Ահա հասնում է, և հրնձի
Պատրաստում է շարքաշ մարդը:

Արդէն լցուել են հասկերը,
Լըցուել են և ոսկեզօծում.
Ծանրացել են հատիկները.
Հողմից դաշտն է ալէկոծում:

— «Այ կին, կանչում է գիւղացին,
Մի լաւ նայիր դու մեր հացին.
Տես, ծրփում է արտն ինչպէս ծով.
Առատ կը լինի հունձն Աստուծով:

Չատ-չատ՝ երկու կամ երեք օր
Երկինքն էլի թէ խնայէ,
Եւ թէ, ինչպէս մինչև այսօր,
Նա ողորմած աչքով նայէ,

Ուրախ սրտով, երգ ու պարով
Մինչ երեկոյ կ'աշխատեմ ես.
Հունձս կ'անեմ սուր մանգաղով՝
Փայլուն լուսնի եղջիւրի պէս:

Մշակի կեանքն է բարեբաստիկ,
Երբ ցորենով ոսկեհատիկ
Լիքն է նորա շտեմարանը,
Անուշ գինով էլ՝ մաւանը:

Աստ'ծով երկուսն էլ կը լինի.
Արտս կը տայ ինձ ցորեն շատ,
Գ'ունենամ և առատ գինի
Ես իմ այգուցը ցանկապատ,

Ուր խաղողի ողկոյգներով
Ծանրաբեռնած են որթերը,
Որոնց, կարծես, յակինթներով
Ջարդարել է ստեղծող Տէրը:

Ուրախ եղիր, սիրելի կին,
Ինչպէս ուրախ է իմ հողին.
Իմ ցանածը հատիկ-հատիկ
Կը ժողովեմ հարիւր պատիկ»:

3. ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԵՒ ԻՒՐ ՍՏՈՒԵՐԸ

Մի տղայամիտ երիտասարդ կամեցաւ իւր ստուերը
բռնել. բայց քանի որ նա ոտն առաջ էր դնում, շուքն էլ
մի քայլ առաջ էր փախչում. էլի ոտը փոխում էր, շուքն
էլ նոյն բանն էր անում. յետոյ երիտասարդն սկսեց յա-
զել, բայց զարմացած տեսաւ, որ ստուերն էլ վազում է
առաջից: Երիտասարդը զօր տուեց ոտներին. շուքն էլ
սկսեց աւելի ու աւելի շուտ փախչիլ: Ճարը կտրուած,
մեր թեթեամիտ երիտասարդը երեսը շուռ տուեց և սկսեց
յետ փախչիլ: Մէկ էլ աչքի տակովը նայի ու ինչ տեսնի՝
շուքը կրնկակոխ վազում է իւր յետեից:

Աշխարհումս բազմաթիւ ասածդ էլ շուքի պէս բան է. շա-
տերը նորա յետեից են ընկնում, ոչինչ ջանք չեն խնայ-
ում, բայց չեն կարողանում ձեռք պցել. ուրիշները, կար-
ծես, փախչում են բաղդից, բայց նա նորանցից պոկ չի
զալիս, չի հեռանում:

4. ՀՈՎԻԻ ԵՒ ՄՈԾԱԿ

Մի հովիւ կար՝ յոյսը դրած շներուն,
Ջուքի մէջը հանգիստ, անուշ քուն եղաւ.

Մի օձ պառկած էր թըրփի տակ դալարուն,
Տեսաւ հեռուանց, ծածուկ սողաց, մօտ եկաւ.

Թոյնը բերանն էր լցրել,

Քիչ մնաց որ խայթէր, խայծէր, մեռցընէր:

Մոծակը այս որ տեսաւ,

Խըղճաց վըրան, թըռաւ հասաւ,

Բոլոր ուժովը կըծեց,

Հովուին քնից զարթեցրեց:

Հովիւն ելաւ, օձն սպանեց.

Բայց դորանից առաջ՝ կէս քուն

Կէս արթուն,

Խեղճ մոծակին էլ զարկեց, տրորեց:

5. ՀԱՅՐ ԵՒ ԵՐԵՔ ՈՐԴԻ

Չատ տարի առաջ արեւելքում ապրում էր մի մարդ,
որ մի թանկագին մատանի ընծայ էր ստացել իւր բա-
րեկամից: Քարը գոհար էր, որ բիւրաւոր գոյներով
փայլում էր ու շողշողում: Բայց այս մատանին մի առա-
ւելութիւն ևս ունէր. այն անձը, որ կրում էր այդ մա-
տանին, թէ Աստուծուն էր հաճելի և թէ մարդկանց սի-
րելի: Ուրեմն ինչ զարմանք, որ արեւելքնակ մարդը եր-
բէք մատից չէր հանած այդ մատանին: Եւ նա կարգա-
գրութիւն արաւ, որ այդ անգին գոհարը յաւիտեան պա-
հուի իւր տան մէջ: Մեռնելիս՝ նա մատանին տուեց իւր
ամենասիրելի որդուն և կտակ արաւ, որ նա էլ նոյնպէս
յանձնի այն որդուն, որ ամենից սիրելին կը լինի: Եւ ով
որ մատանին ստանում էր, առանց տարիքին նայելու, մի-
միայն մատանու զօրութեամբ լինում էր տան մեծն ու
ժառանգը:

Եւ այսպէս որդուց որդի անցնելով՝ վերջապէս մա-
տանին հասաւ մի հօր, որ երեք որդի ունէր: Երեքն էլ
հաւասարապէս հնազանդ էին նորան և նա երեքին էլ հա-
ւասար սիրում էր: Հայրը չէր կարողանում վճռել, թէ
որդիներէից ո՞րը պիտի ժառանգի մատանու արտօնութիւնը:

Երբ մեռնելու ժամանակը մօտեցաւ, բարի մարդը
ժածուկ կանչեց իւր մօտ մի վարպետ, յանձնեց նորան
իւր մատանին և պատուիրեց, որ այդ մատանու պէս եր-
կուսն էլ շինի: Երբ վարպետը բերեց պատուիրած մատա-
նիները, ինքը տէրն անգամ չկարողացաւ որոշել թէ ո՞րն
է իսկականը և որը կեղծը: Ուրախ կանչեց նա իւր զա-
ւակներին առանձին-առանձին, ամեն մէկին տուեց մի
մատանի, օրհնեց ու ճանապարհ գցեց:

Հագիւ թէ հայրը հոգին աւանդել էր, որդիներէից
ամեն մէկը եկաւ և իւր մատանու զօրութեամբ կամեցաւ
տան մեծը լինել: Սկսեցին քննել, վիճել, գանգատուիլ,
բայց ոչ մէկը չկարողացաւ ապացուցանել, թէ իւր մա-
տանին է իսկականը:

Գնացին դատաւորի մօտ: Եղբայրներէից ամեն մինը
երդմամբ հաւատացնում էր դատաւորին, թէ անմիջապէս
հօրիցն է ստացել իւր մատանին, ուրեմն և իրաւունք ու-
նի վայելել դորա արտօնութիւնը:

Դատաւորն ասում է. «Դուք հաւատացնում էք, որ
ձեր հօրից մնացած մատանին այնպիսի հրաշալի զօրու-
թիւն ունի, որ ում մատին լինի, նորան թէ Աստուած
պիտի սիրէ և թէ մարդիկ: Դէհ, ասացէք տեսնեմ՝ երե-
քիցդ ո՞րն է սիրելի մնացած երկուսին: Դուք լռում էք...
Ձեզանից ամեն մէկը, ինչպէս տեսնում եմ, միայն իւր
անձն է սիրում: Նշանակում է երեքդ էլ խաբուած էք և
ձեր երեքի մատանիներն էլ իսկականը չեն, կեղծ են:
Անշուշտ իսկական մատանին կորած է և այդ կորուստը

ծածկելու համար նորա փոխարէն ձեր հայրը շինել է տուել ուրիշ երեքը»:

«Ուրեմն, շարունակեց դատաւորը, վճռիս փոխանակ լսեցէք իմ խորհուրդը. ամեն մէկդ բաւականացէք ձեր ունեցածով և թող ամեն մէկը ձեզանից հաւատայ, թէ իւր մատանին է իսկականը: Գուցէ ձեր հայրն ուզում էր այն մատանու բռնութիւնը իւր տանից վերացնել: Անշուշտ սիրում էր նա երեքիդ էլ հաւասար և չէր կամենում թոյլ տալ, որ մէկը ճնշէ երկուսին: Ուրեմն ձեզանից թող ամեն մէկն աշխատի սիրեք անկեղծ և առանց նախապաշարման մնացած երկուսին: Թող ամեն մէկը ձեզանից ձգտի, որ իւր մատանու քարի զօրութիւնը երևան հանէ, և այդ զօրութեան օգնական լինի նա իւր հեզութեամբ, անկեղծ, ջերմհոանդ անձնութեամբ դէպի Աստուած և դէպի մարդիկ»:

6. Մ Ի ' Յ Ա Ի Ա Տ Ա Ր

Զհաւատաս դու, եթէ քեզ ասեն՝
Հանդիստ դու նստիր և յուսով եղիր.
Օրեր, տարիներ անհոգ թող անցնեն,
Քեզ համար գործը կը դայ ինքն իրեն.
Գու մի հաւատար, թէ որ քեզ ասեն՝
Ձեռքդ մի շարժիր, նստիր ինչպէս կուտ.
Արծիւն ու առիւծ ոսկի կը բերեն,
Քեզ համար օտարք անդուլ կը գործեն:
Գու մի հաւատար այլոց խօսքերին.
Աչքդ մի ձգիր այլոց ձեռքերին.
Միայն հաւատա՛ քո իսկ ոյժերին
Եւ քո խելացի առողջ մտքերին:

7. Յ Ա Ր Ս Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Մի շքաւոր երիտասարդ հանդիպեց իւր նախկին ուսուցչին և սկսեց շատ դանդատուիլ իւր դառն վիճակի ու անյաջողութիւնների վրայ: Մի ժամանակ նա եղած էր ուսումնարանի ամենալաւ աշակերտը և իրանից աւելի վատ ուսանողներն այժմ լաւ անուան ու հարստութեան տէր էին, այն-ինչ ինքն անց էր կացնում թշուառ կեանք: — «Մի՞թէ յիշուի ասածիդ շափ աղքատ ես դու, ասաց նորան ուսուցիչը. դու, ինչպէս տեսնում եմ, առողջ ես. այդ ձեռքը, շարունակեց ուսուցիչը՝ բռնելով իւր աշակերտի աջը, ուժեղ է և կարող է գործել: Թոյլ կը տայիր արդեօք, որ կտրեն դորան հազար մանէթով»: — Աստուած հեռու տանէ, և ոչ տասը հազարով: — «Իսկ սրբանով կը տայիր քո սրատես աչքերը, որ տեսնում են լոյս աշխարհը, — քո սուր ականջները, քո արագաշարժ ոտները: Պարծեմ դու չէիր փոխիլ դոցա մի ամբողջ թագաւորութեան հետ»: — Ի հարկէ ոչ, պատասխանեց երիտասարդը: — «Ուրեմն ինչպէս ես դանդատում քո աղքատութեան վրայ, երբոր ունիս այդպիսի մեծ հարստութիւն», նկատեց ուսուցիչը:

8. Բ Ա Ժ Ի Ն Ք

Քանի մի վարպետ վաճառականներ,
Սիրով միմեանց հետ գործ էին բռնել.
Լաւ աշխատեցան, քրտինք թափեցին,
Լաւ էլ շահուեցան, մեծ փող դիզեցին.
Ժամը հասաւ. պէտք է հաշիւ տեսնէին,
Եղած վաստակն իրանց մէջը բաժնէին.

Բայց ո՞ր գտնեմ ես ընկերներ այնպիսի,
Որ բաժանուին առանց կռուի, վիճամունքի.

Այն պարոններն էլ մեծ վէճ յարուցին,
Որ ծայր-վերջ չունէր, կանչն էր ասագին:

Եւ ասա՛ գրսէն

Չայներ կը լսեն.

«Կըրակ կայ, կըրակ.

Մա՛րդիկ, դո՛ւրս եկէք.

Չո՛ւտ արէք, փախէք,

Թէ չէ՛ կորած էք»:

Քնկերներից մէկը կանչեց.

«Դուրս գանք, տեսնենք ինչ պատահեց»:

Միւսն այն կողմից աղաղակեց.

«Հագա՛ր ոսկիս—առաջ պարտքս տուեցէք»:

—Երկու հագար է առնելիքս, միւսն ասեց.

Մինչև փողս ես լիուլի չստանամ,

Այստեղից ո՞ր պիտ' զընամ:

Միւս կողմ երրորդն էր դորգոռում.

«Հաշին այդպէս չէ, ինչ կ'ասես, եղբայր»:

Չորրորդը՝ դարձեալ իւր պահանջն անում,

Թէ իրան բաժին պիտ' տան հաւասար:

Խեղճ մարդիկը մոռացել էին,

Որ բոցերի մէջ բռնուել էին:

Այնպէս իրանց կռուին էին զբաղուած,

Որ մուխն եկաւ, խեղզեց ամենքը յանկարծ.

Իսկոյն կըրակն էլ հասաւ, պաշարեց,

Ապրանքն ու տէրերն այրեց, տոչորեց:

Այս առակը դու չկարդաս առանց խրատ առնելու.

Չատ մեծամեծ գործերի մէջ վնասն ինչիցն է գոյանում՝

Երբ փոխանակ հասարակաց փորձանքին դէմ զընելու,

Ամեն մարդ իւր օգտի համար հին ու նոր վէճն է բանում:

9. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ

«Ողորմութիւն արէք», աղաղակեցին ողբալի ձայնով
Երկու պանդուխտ մուրացկաններ մի տաճիկ դատաւորի
տան պատուհանի տակից:

Տանտէրն այդ միջոցին նստած էր մի փառաւոր բազ-
մոցի վրայ և գիրք էր կարդում:

—Մեծ մարգարէն տայ, ասաց դատաւորը, կռթնե-
լով լուսամուտին:

«Ողորմեցէք ի սէր մարգարէի», նորից կրկնեցին օտա-
րականները:

—Կորէք այստեղից, անպիտաններ, աղաղակեց դա-
տաւորը զայրանալով, և բարկութիւնից գիրքը վայր ձգեց
յատակի վրայ:

«Ո՛, խղճացէք մեզ և ողորմութիւն արէք, թէկուզ ի
սէր Աստուծոյ», արտասուքն աչքներին կրկնեցին օտա-
րականները:

Այն ժամանակ դատաւորը վեր ցատքեց բազմոցից և
զոչեց զարհուրելի ձայնով. «Է՛յ, Մահմուդ, Ազամէդ, կա-
պեցէք այս թափառականներին և բանտը ձգեցէք»:

Բայց օտարականներն արդէն անյայտացել էին:

Անցկացաւ սրանից հրեք օր. դատաւորը մեծ հրա-
ւէրը ունէր. նա կռթնելով լուսամուտին, կանգնած մեծ
մուֆթիի հետ, դիտում էր Բաղդադի շրջակայքը, երբ
պատուհանին մօտեցան նոյն օտարականները:

«Դու մեծ ուրախութեան մէջ ես, մեծ դատաւոր, ա-
սացին օտարականները ցաւալի ձայնով. մի քիչ էլ մեզ
մաս հանիր այդ ուրախութիւնից»:

—Մեծ մուֆթի, ասաց դատաւորը, ասա արդէն երկ-
րորդ անգամն է, որ գալիս են յայս թափառականներն
ինձ նեղացնելու: Ի՞նչ է շինում մեր խելօք խալիֆան:

նա քնած է և չէ հրամայում, որ տանեն բանտարկեն այս
դատարկաշրջիկներին: Բայց ես կը հրամայեմ շղթայա-
կապ անել, որ էլ չկարողանան շրջել Բաղդադի փողոցնե-
րովը: Էյ, ձայն տուեց նա իւր ստրուկներին. եկէք, կա-
պեցէք այս թափառականներին:

Այդ ժամանակ օտարականները ներս մտան դահլիճ
և նորանցից մէկը դէն ձգելով իւր վրայից պատառու-
տուած վերարկուն, ասաց սպառնալի ձայնով.

— Դատար, այդպէս կարեկից և արդարադատ ես
դու դէպի խեղճերը: Ես կարծում էի, թէ դու իմ ժողո-
վրդի գթասիրտ և արդարասէր դատաւորն ես. բայց սաս-
տիկ սխալուած եմ եղել: Ջաֆար, վեր առ այս չնշին որ-
դը և դատիր մեր իմաստուն օրէնքով: Թո՛ղ դիտենան
ամենքը, որ թագաւորին չէ կարելի խաբել և որ՝ վաղ
թէ ուշ, վատ գործերը կը յայտնուին ու կը պատժուին:

Բոլոր հիւրերը զարմանքից ու երկիւղից քարացան,
տեսնելով որ օտարականի հագուստով խօսող մարդը իրանց
թագաւոր Հարուն-Ալ-Ռաշիդին է, իսկ նորա ընկերը՝ մեծ
վէզիր Ջաֆարը:

10. ԳԹԱՍԻՐՏ ԲՈՒՆ

Կորակտուց, արիւնարբու
Չարագուշակ խոշոր մի բու
Կիսախարխուլ ու անբնակ
Մի տան վրայ կ'ապրէր մենակ:
Եւ ամեն օր, երբոր արև
Կը տար երկրին վերջին բարև
Եւ բընութեան վրայ գիշեր
Մութ վարագոյրը կը քաշէր,
Մեր միայնակեացն արագաթև

Կը թողնէր իւր բունն ու թեթև
Կը սլանար մինչև անտառ՝
Իւր ճանկերով պատառ-պատառ
Գիշատելու բազում անմեղ
Խեղճ թռչնիկներ սիրագեղդեղ,
Որը՝ երգելուց բազմավաստակ,
Կը ննջէին խիտ ոստոց տակ:
Սակայն՝ բարձած հարուստ աւար,
Երբոր դառնար իւր բոյնն խաւար,
Դիտմամբ դետին նա կը ձգէր
Մի քանի հատ թռչնի ձագեր,
Որպէս զի շուն, մուկ կամ կատու,
Իւր զրացիքն ամեն առտու,
Տան առջևից անցած ատեն
Նոցա հոտըն առնեն, ուտեն
Եւ հռչակեն մեծաբարբառ՝
Թէ բուի չափ առաքինի,
Պատուի, գովեստի արժանի
Հոգի մի տեղ չկայ իսպառ:
Եւ արդարև, էլ գունդ ի գունդ
Զընէր, կատուններ սրտաթունդ,
Կուշտ որովայն, ցերեկն ի բուն
Կը կոչէին եռանդագին.
«Երկինք օրեր շնորհեն անգին,
Յաւէտ անփորձ պահեն մեր բուն,
Ջի այսքան սուրբ, ազնիւ, արդար,
Բազումողորմ, կենդանասէր,
Աղքատին նեցուկ, մըխիթար,
Բու՝ մինչև ցարդ մենք չենք տեսել»:

11. Ս Ո Ւ Ն Ա Կ

Գարնան գեղեցիկ երեկոյին մէկ փոքրիկ տղայ իւր վարպետի հետ պտտում էր անտառի շուրջը: Խիտ ծառերի միջից լսում էր սոխակի հրապուրիչ ձայնը: «Ի՜նչ գեղեցիկ ներդաշնակութիւն, ասաց տղան, երկար ժամանակ հիացած ականջ դնելուց յետոյ. սաստիկ ցանկանում եմ այդ գեղեցիկ երգը մօտից լսել. մի քիչ առաջ դնանք, վարպետ, որտեղից ձայնն է գալիս»:

— Զղոյշ կաց, ասաց վարպետը. սոխակը վայրենի թռչուն է և անչափ կասկածոտ. եթէ փոքր ինչ մօտենանք, կը խրտնի և կը դադարի երգելուց:

«Բայց ինչի՞ համար, ասաց տղան, ինչի՞ այդ թռչունը, որ իւր երգի ճոխութեամբ ուրիշներինը խափանում է. վայրենի միայնութիւն է սիրում. ինչի՞ իւր քաղցր ձայնը մարդկային բնակութիւնից հեռու է հնչեցնում, մինչդեռ մեր պարտիզի փոքրիկ ծառերն անգամ մանրիկ թռչունների ձանձրացուցիչ ճռուղիւններով լիքն են»:

— Ստոյգ արժանաւորութիւնը, պատասխանեց վարպետը, համեստ է լինում և սիրում է առանձնութիւն. նրան պէտք է մեծ յարգանքով մօտենանք, և եթէ չի կարելի ձեռք ձգել, պէտք է բաւականանանք հեռուից նորա արդիւնքը վայելելով:

12. Ս Ո Ւ Ն Ա Կ Ն Ե Ր

Մի ճարպիկ թռչնորս, գարնան օրերում Անտառների մէջ սոխակ էր որսում. Խեղճ սոխակները, վանդակում փակուած, ճռուղում էին ճարները կտրած. Թէև, ի հարկէ, նոքա կ'ուզէին,

Որ անտառներում ազատ ման գային. Բանտում փակուածը ինչ սիրտ կ'ունենայ, Որ դեռ երգի էլ, կամ զուարճանայ:

Բայց էլ ի՜նչ անէին,

Որ գոնէ չերգէին

Եւ իրանց սև օրը

Միասին չողբային:

Նոցանից միայն մէկը չէր երգում.

Նա իւր սիրելու կարօտն էր քաշում.

Արտասուածքը աչքերով

Նա դաշտերին էր նայում,

Գիշեր-ցերեկ տանջուելով,

Ընկերուհուն էր յիշում:

Իւր ընկերուհուց խեղճն անջատուած,

Հալում, մաշում էր վանդակում փակուած:

Անբաղդ սոխակը վերջը մտածեց.

«Այսպէս չի լինիլ»,— ինքն իրան ասեց—

«Անխելք մարդիկն են շարունակ տըխրում,

Իսկ խելօքները հնար են փրնտրում,

Որ դժբաղդութեան

Մի կերպով վերջ տան:

Կարծեմ ես ինքս էլ, եթէ աշխատեմ,

Իմ թշուառութեան մի ճար կը գտնեմ.

Մեզ խօս չեն բռնել, որ մեր միսն ուտեն,

Այլ որ մենք երգենք, իրանք էլ լսեն:

Մեր այս պարոնը, ինչպէս կ'երևի,

Երգեր լսելու սաստիկ սէր ունի.

Եթէ իմ ձայնով ես սորան դիւր գամ,

Փոխարէն անշուշտ պարգև կըստանամ.

Եւ նա վերջ կը տայ իմ ստրկութեանս,

Հաւատացնում էր սոխակն ինքն իրան:


եւ ոգևորուեց,
 երգել սկսեց.
 եւ անոյշ ձայնով,
 Սիրուն երգերով
 նա իւր պարոնին զմայլեցրեց:
 Պարոնն էլ միայն նրբան հաւանեց,
 եւ լաւ խընամեց,
 Իսկ մնացածներին—
 Վատ երգողներին
 Իսկոյն արձակեց:
 եւ այնուհետեւ մեր խեղճ սոխակին
 Աւելի ամուր ու պինդ փակեցին:

13. ՀԱՒԵՏԱՐԻՄ ՂՈՒՆԸ

Մի վաճառական ձիով ճանապարհորդելու դուրս
 եկաւ: Նորա յետեից վազում էր իւր հաւատարիմ շունը:
 Վաճառականը զնում էր մի մեծ գումար ստանալու: Փո-
 դերն ստացաւ, լիքը քսակը կապեց թամբի յետերը և վե-
 ղադարձաւ դէպի տուն: Ճանապարհին քսակը կտրուեցաւ,
 վայր ընկաւ, իսկ վաճառականն այդ չնկատեց: Սրտես
 շունը տեսաւ այդ բանը և փորձեց վեր առնել նորան
 ատամներով, բայց երբ զգաց, որ իւր ուժից վեր է, թո-
 դեց պարկը, վազեց հասաւ իւր տիրոջը և, կամենալով
 նորան մի կերպ իմացնել, սկսեց ձիու առաջը կտրել,
 յարձակուիլ նորա վրայ և յամառութեամբ ու կատաղու-
 թեամբ հաջելով՝ աշխատում էր նորան կանգնեցնել: Չի-
 մանալով պատճառը՝ վաճառականը բարկանում էր շան
 վրայ, նախատում էր նորան, խփում էր մտրակով, բայց

ոչինչ չէր օգնում: Հաւատարիմ կենդանին շարունակում
 էր ձիու վրայ յարձակուիլ այնպիսի կատաղութեամբ, որ
 կարծես կամենում էր իւր տիրոջը վայր քաշել: Տեսնելով
 որ ոչինչ չի օգնում և որ վաճառականն աւելի ու աւելի
 հեռանում է, շունն սկսեց կծոտել ձիու ոտները, որ գո-
 նէ այդպիսով կանգնացնէ և յետ դարձնէ իւր տիրոջը:
 Վաճառականը վախեցաւ. նա մտածեց՝ մի գուցէ շունը
 կատաղել է, և գիտենալով թէ՛ սրբան վտանգաւոր են կա-
 տաղի շները, վճռեց սպանել իւր հաւատարիմ ծառային:
 Սակայն դեռ երկար ժամանակ աշխատում էր նա հեռա-
 ցնել շանը մերթ փայփայանքներով, մերթ սպառնալիք-
 ներով և մերթ մտրակի հարուածներով: Վերջապէս՝ տես-
 նելով որ ոչինչ չի օգնում, հանեց ատրճանակը և սրտա-
 մորմոք արձակեց հաւատարիմ կենդանու վրայ: Չունը վայր
 ընկաւ, բայց մի ըոպէից յետոյ դարձեալ վեր կացաւ և
 ցաւալի ճշիւնով ու արիւնաթաթախ սկսեց հետեւել իւր
 տիրոջը: Վաճառականը շատ էր սիրում իւր շանը, ծանր
 էր իրան համար տեսնել նրա շարշարանքը, այդ պատ-
 ճառով շարժեց ասպանդակները և առաջ շարժուեց: Մի
 փոքր հեռանալով՝ նա կամեցաւ տեսնել, թէ ինչ եղաւ
 խեղճ կենդանին և այստեղ ահա՛ յետ նայելիս, նկատեց,
 որ փողի քսակը չկայ: Այն ժամանակ միայն հասկացաւ
 վաճառականը իւր շան արարքը, և նա շան վրայ աւելի
 ցաւեցաւ, քան կորցրած փողի վրայ: Ճանապարհորդն իս-
 կոյն ձիու բերանը յետ դարձրեց, բայց շանը նոյն տեղը
 չզտաւ, ուր թողել էր: Արիւնի հետքը ցոյց էր տալիս,
 որ կենդանին յետ է դարձել: Ո՛րքան ցաւեցաւ բարի վա-
 ճառականը, երբ արիւնը բռնած գնալով՝ նա զտաւ հա-
 ւատարիմ կենդանուն վայր ընկած փողի քսակի մօտ: Գի-
 տակցաբար նայեց շունը իւր տիրոջը և սկսեց փաղաք-
 շանքով լիզել նրա ձեռները... խեղճ կենդանին յայտնապէս

81713
1907



գոհ էր, որ իւր տէրը վերադարձաւ և գտաւ կորուստը: Մի քանի ըոպէից յետոյ շունը սատկեց. իսկ վաճառականը տխուր ու տրտում վերադարձաւ տուն:

14. ԻՄ ԶՆԻԿ

Գրէի այսքարտիկ
ուսկիտ

Արի, իմ սիրուն շնիկ,
Գրկեմ նախշուն այդ թաթեր,
Բաղդաւոր եմ, երջանիկ,
Որ ունիմ քեզ պէս ընկեր:

Ես սիրում եմ միշտ ազատ
Անտառներում զբօսնել,
Եւ դաշտերում ծաղկաշատ
Այս ու այն կողմ թռչկոտել:
Այնտեղ օդը մաքուր է,
Ոչ թէ այսպէս նեղ, խոնաւ...
Ծաղկանց հոտը բուրում է,
Երգիչ թռչունքն են անբաւ:

Բայց այնտեղ ման են գալիս
Միշտ կատաղի գազաններ,
Թէ դու հետս չլինիս,
Գարող են ինձ կլանել:
Ուրեմն արի, իմ շնիկ,
Գրկեմ նախշուն այդ թաթեր,
Բաղդաւոր եմ, երջանիկ,
Որ ունիմ քեզ պէս ընկեր:

15. ԱՐԾԻԻՆ ՈՒ ՀԱԻԸ

Մի անգամ գիշատիչ կենդանին ընկել էր երկաթեայ վանդակի մէջ. տխուր ու մունջ էր նա և կատաղա-

բար չորս կողմը նայելով՝ չէր մօտենում առաջն ածած մսի կտորներին: Վանդակը դրած էր դուրսը և նորա մօտով ման էին գալիս հաւերը: Դորա սկզբում բաւականին հեռու էին շրջում արծուից՝ դող ի դող մտիկ տալով ասհարկու թռչունին. բայց յետոյ, հասկանալով որ նա չի կարող վնաս տալ վանդակի միջից, փոքր առ փոքր սիրտ առան, սկսեցին պտրտիլ վանդակին շատ մօտ. վերջապէս մինչև անգամ սկսեցին խօսել արծուի հետ.

«Ինչո՞ւ չես ուտում, ասաց նորան մի բարեսիրտ հաւ. մի՞թէ չես տեսնում առջևդ թափած քո սիրելի կերակուրը: Տես՝ ինչպէս ախորժակով ուտում ենք մենք գարու հատիկները: Կներ, մեր տէրն էլի կը տայ քեզ: Որ չուտես՝ կը մեռնիս: Հոգս մի սնիր, անազատ կեանքն այնքան վատ չէ, ինչպէս դու կարծում ես. վանդակդ էլ բաւականին ընդարձակ է»:

— Այո՛, այդպէս է՝ միայն հաւերի և ոչ արծիւների համար,— ձայն տուեց վերջապէս տխուր կալանաւորը, հաւի բոլոր դատարկախօսութիւնը զգուանքով լսելուց յետոյ:— Վաղը, աւելացրեց նա, ձեզ շամփրի կ'անցկացընեն կամ կը ձգեն կերակրի մէջ, իսկ դուք այնքան տրխմար էք, որ չէք հասկանում ձեր թշուառ դրութիւնը, և այնչափ կուրացած էք ստրկութեամբ, որ չէք կարողանում սիրել ազատութիւնը, ինչպէս ես եմ սիրում նորան: Դուք փոխել էք նորան շնչին հատիկների հետ, որ ձրի թափուած են դաշտերում. իսկ ինձ համար՝ անազատ կեանքը ոչինչ գին չունի:

16. ԱՐԾԻԻՆ ՈՒ ԱԻՃՈՒՆ

Հսկայ թևերը լայն-լայն տարածած,
Հօր արծիւը ուղղեց իւր թռիչք

Իէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,
 Իէպի անսահման կապուտակ երկինք:
 Երկար սաւառնեց նա խիտ ամպերում,
 Քանի ոյժ ունէր զօրեղ թևերում.
 Եւ վերջ ի վերջոյ՝ յոգնած ու դադրած,
 Նա նստեց հակայ մի լեռան կրճքին,
 Որի գագաթը մինչ երկինք հասած,
 Սարսափ էր ազդում վերև նայողին:
 Նստեց նա հանգիստ, անվախ, անվրդով
 Եւ, շուրջը գոռոզ հայեացք ձրգելով,
 Իւր արքայական ձայնովը անեղ
 Որոտաց ուժգին. «Մենակ եմ այս տեղ,
 Մենակ ու ազատ այս լեռան վրըայ,
 Որպէս քաջայաղթ լիազօր արքայ.
 Իմ գահն է անհուն այս երկնակամար,
 Որոտ ու ամպեր—ոտքիս պատուանդան.
 Ո՛վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
 Ո՛վ կարէ հասնել գահիս բարձրութեան»:
 «Ե՛ս»,

— «Ինչպէս, դու այստեղ, իմ դէմ յանդիման:
 Ասա ինձ շուտով, ճիճո՛ւ անպատկառ,
 Ո՛րտեղից դու այս ամպերին հասար...»

«Այն նեխուած ճահճից, արծիւ ինքնագով,
 Ուր դու ծնուած ես քո այդ վեհ փառքով.
 Այն նեխուած ճահճից, որտեղ այժմ դու.
 Զգուում ես անդամ հայեացք ձրգելու»:

Handwritten signature or scribble.

— Բայց ինչ հնարքով դու, միջատ շնչին,
 Հասար իմ անհաս ամպազարդ գահին.
 Ասա, պատմիր ինձ, ինչպէս, ինչ կերպով...»:
 — «Ինչպէս. — սողալով, արծիւ, սողալով»:

17. ԹՈՒՉՈՒՆԻ ԵՐԳԸ

Վենգրիայի մի մեծ քաղաքի նեղ ու ամուր բանտի
 մէջ նստած էր մի խեղճ բանտարկեալ: Բանտը խոնաւ
 էր, մութ և ցուրտ: Անկողնի փոխանակ նորա տակը խո-
 նաւ դարման էր ածած: Նորա համար օրական մի կտոր
 հաց և մի աման ջուր էին բերում: Նա նստած էր այն-
 տեղ շատ տարիներ—դժգոյն, հիւանդ, տխրաղէմ: Արե-
 գակը հաղիւ էր լուսաւորում բանտի նեղ լուսամուտից.
 Թարմ օդ չէր ներս մտնում նորա մէջ: Վշտամաշ կերպով
 նա մտածում էր իւր սիրելի ազգականների, իւր ընտա-
 նիքի, իւր փոքրիկ զաւակների վրայ. մտածում էր, որ
 գուցէ վաղուց ամենքը մոռացել են իրան, համարելով
 թէ մեռած է: «Ա՛խ, ասում էր, արդեօք ինչ է կատար-
 ւում մեր աշխարհում, ինչ է պատահում իմ ցանկալի
 հայրենիքում»:

Բանտարկեալը մօտեցաւ լուսամուտին: Ամառային
 սքանչելի երեկոյ էր: Արեգակը մայր էր մտնում անտառի
 յետեր, լուսաւորելով ծառերի կատարները իւր ոսկեճա-
 ճանչ ճառագայթներով. իսկ մարդիկ անց ու դարձ էին
 անում փողոցներում: Բանտը բարձր էր, ուստի մարդիկ
 ցածրում մանր էին երևում: Նա ձայն տուեց, բայց նո-
 րան ոչ ոք չլսեց: Կապոյտ երկնքի վրայ թռչուններ էին
 թռչում: Լուսամուտի առաջից հանդարտ անցնում էր ար-
 ծիւր: «Արծիւ, այ արծիւ, բացականչեց բանտարկեալը.

նստիլ իմ լուսամուտի առաջ, պատմիր, խնդրեմ՝ ինչ է լինում աշխարհում. երգիլը ինձ համար:—Ո՛չ, պատասխանում է արծիւը. քո լուսամուտը շատ փոքր է, ինձ տեղ չի լինիլ նստելու: Ես չեմ պատմիլ քեզ, ինչ որ լինում է երկրի վրայ, որովհետև հազիւ եմ իջնում այնտեղ: Ես հիւսում եմ իմ բունս ամենաբարձր ժայռերի և հազարամեայ կաղնիների վրայ, չար մարդկանցից հեռու, որ նոքա չքանդեն նորան: Ես քեզ համար երգ չեմ երգիլ, որովհետև երբէք չեմ երգում երկրի վրայ: Ես սլանում եմ բարձր, շատ բարձր և իմ երգս լսում է միայն յաւիտենական արևը: Եւ իւր լայն թևերն ուժգին շարժելով՝ արծիւը հպարտ բարձրացաւ դէպի երկինք և ծածկուեցաւ նորա աչքից:—Կնրապ, այ կարապ, պատմիր թէ ինչ է լինում աշխարհում. մի երգ երգիլը ինձ համար: «Ո՛չ, պատասխանում է կարապը. ես չեմ պատմիլ քեզ, ինչ որ գործւում է երկրի վրայ. ես միշտ լողում եմ ջրի, մաքուր, սառը ջրի երեսին, կանաչ եղէգների միջով: Երբ որ ջուրը առաւօտեան արշալուսին վարդի գոյն է ստանում, ես բարձրաձայն կոչում եմ՝ ողջոյն քեզ, կենսաբեր արշալոյս: Ես չեմ երգիլ քեզ համար, որովհետև միայն մեռնելիս եմ երգում»: Եւ կարապը լողաց օդի մէջ, շարժելով իւր սպիտակ թևերը:—Ճնճղուկներ, փոքրիկ ճրճղուկներ, նստեցէք իմ լուսամուտի առաջ, պատմեցէք մի բան իմ կարօտեալ հայրենիքից. երգեցէք, մխիթարեցէք ինձ: «Չէ, չէ, մենք ժամանակ չունինք. մենք դեռ պէտք է զնանք ժողովինք՝ այն հատիկները, որ ջաղացպանը յանկարծակի շաղ տուեց»:

Բայց այդ բոլորն մօտ թուաւ մի գորշագոյն թռչնակ, պոռոտ-պտոյտ արեց լուսամուտի առաջ և նստեց երկաթէ վանդակի վրայ:—Բարով քեզ, սոխակ, շնորհակալ եմ, քնքո՛ւշ թռչնակ, որ այց ելար ինձ. պատմիր, աղաչում

եմ, ինչ է լինում աշխարհում, իմ կարօտեալ հայրենիքում: «Ես կը պատմեմ քեզ, ինչ որ լինում է երկրի վրայ, ես երգ կը յօրինեմ քեզ համար քո ցանկալի աշխարհից, քո կարօտած հայրենիքից»: Եւ սոխակը յորդեց այնպիսի ձայնով, որ խեղճ բանտարկեալը արտասուեց ուրախութիւնից: Նա վայր ընկաւ դարմանի վրայ և շարունակ հեկեկում ու լսում էր:

«Երէկ առաւօտ, լուսաբացին, օդը չափազանց թարմ էր և զով: Ես մօտ զնացի քո տնակին, նստեցի կոկոնաշատ վարդենու վրայ՝ բաց լուսամուտի առաջ, և շարունակ երգեցի ու երգեցի: Մանկիկդ պառկած էր անկողնում: Նա բաց արաւ իւր մեծ, փայլուն աչերը և հարցրեց. «Ո՛ւր է հայրիկս». յետոյ սկսեց լսել իմ երգը: Քո ազգականներն արտասուում են քեզ մտաբերելով. նոքա սիրում են քեզ, շատ են սիրում և կամենում են քեզ տեսնել: Մի վհատուիք. Աստուած տեսնում է, թէ ինչպէս անմեղ ես գու. չար մարդիկ կ'արձակեն քեզ և դու նորից կ'ազատուիս, լոյս աշխարհ դուրս կը գաս, մաքուր օդ կը ծծես: Քո որդիքը քեզ կը գգուեն և կը համբուրեն: Ամառային հանդարտ երեկոները, երբ ծառերի երկար ստուերները կը ձգուին, երբ արեգակի վերջին ճառագայթների տակ կը փայլեն լուսամուտի ապակիները, դու՛ պատշգամբի վրայ նստած, կը պատմես քո զաւակներին, թէ որքան նեղութիւններ ես կրել: Դու կ'ուսուցանես նոցա, որ երբ մեծանան, չար մարդկանց տեղիք չտան շարութիւն անելու, չբարկանան չարերի վրայ, այլ զգուշանան նորանցից և աղօթեն Աստուծուն, որ ամենքը սիրեն միմեանց, ինչպէս եղբայրը իւր եղբօրը...: Եւ որդիքդ կը լսեն քեզ: Երբ նոքա կը մեծանան, դու կը տեսնես, որ նոքա բարի և ազնիւ մարդիկ են դարձել. դու կը տեսնես, թէ ինչպէս կ'օգնեն նոքա խեղճերին: Դու կ'ապրես երկար, շատ երկար»:

Քո մագերը կը ճերմակին, բայց սիրտդ ուրախ կը զարկի։
Եւ երբ դու կը մեռնես, ամենքը կ'արտասուեն և կ'աղօ-
թեն քեզ համար ու կը տանեն քեզ կանաչապատ հան-
գըստարան։ Քո գերեզմանի վրայ վարդի թփեր կը տնկեն
և ես մայիսեան պայծառ ու գեղեցիկ առաւօտները, լու-
սաբացին, նոցա վրայ նստած՝ քաղցրիկ երգեր կ'երգեմ»։

18. Ե Ր Գ

Ի՞նչ եղաւ մարին։— Մեռած է վաղուց։
Իսկ նրա որձանկը։— Կատուն թըռցըրուց,
Միսն ու ոսկորը լափեց, կըլանեց
Եւ փետուրները հողմերին տուեց։
Անտէր բնի մէջ ո՞վ է դողդողում,
Ո՞վ է տխրաձայն այդպէս հառաչում.
Ո՞վ կը խնամէ ձեզ, խղճուկ որբեր.
Ոչ որբ։ Ո՞վ թշուառ, փոքրիկ թռչնիկներ։

Ծոյլ և խաբեբայ հովիւն բացակայ,
Մեռած է շունը, էլ հսկող չկայ։
Գայլն է թափառում խուլ մըռնչիւնով,
Իւր սն ցանցերը լարում է փութով.
Ահ ու սարսափ է տիրում փարախում.
Դող ու տենդով են սրտեր բարախում։
Ո՞վ կը զարթեցնէ քնած ոչխարին,
Կը պատերազմէ ընդդէմ այդ շարին.
Ոչ որբ։ Ո՞վ թշուառ, փոքրիկ գառնուկներ։

Աքսորանքի մէջ, հեռու, տարագիր,
Կրում է հայրը վիշտ տաժանակիր.
Մայրը տառապեալ, հալ ու մաշ եղած,
Հիւանդանոցում— այնտեղ վայր ընկած։

Փշում է քամին իւր թափով ուժգին.
Դողում է տնակն, մօտ է կործանման,
Եւ նրա միջում անտէր, անպաշտպան
ձօճում է օրրոցն որբացած մանկան։
Ո՞վ մնաց այնտեղ։— Ո՛չ հայր, ո՛չ մայրիկ.
Դու միայն մնացիր, դ՛ու, խղճուկ մանկիկ։

19. Ա Ն Ա Ղ Ո Ի Կ

Որսորդութիւնից վերադառնալիս՝ ես անցնում էի
պարտէզների միջով։ Չունս վազում էր իմ առաջից։ Յան-
կարծ նա իւր քայլերը փոքրացրեց և կամաց ու զգուշու-
թեամբ սկսեց առաջ գնալ. կարծես թէ որսի հոտ էր առել։

Ես նայեցի փոքր ինչ հեռուն, ճանապարհի վրայ, և
տեսայ մի փոքրիկ ճնճղուկ, որի կտուցի շուրջը դեռ գե-
ղին էր, իսկ գլուխը աղուամագով ծածկուած։ Նա ցած
էր ընկել բնից (քամին սաստիկ շարժում էր ճանապարհի
երկու կողմի ծառերը) և անշարժ պառկել էր միայնակ և
անօգնական, փռած ունենալով դեռ հագիւ դուրս եկած
փոքրիկ թևերը։

Երբ իմ շունը ծանրաքայլ մօտենում էր նորան, յան-
կարծ մօտակայ ծառի վրայից մի պառաւ սև կրծքով
ճնճղուկ, քարի պէս նետուելով, ընկաւ ուղղակի նորա
առաջը և յուսահատ ու սաստիկ ճվճրվոցով մի երկու ան-
գամ թռաւ ուղղակի դէպի շան դունչը։ Նա յարձակուեցաւ,
որ փրկէ, պահպանէ իւր ձագը։ Բայց նորա փոքրիկ մար-
մինը դողում էր երկիւղից։ Նրա ձայնը կատաղի էր. նա
ուժից ընկնում էր. նա զոհւում էր։ Ի՞նչպիսի անհաղին
հրէջ պիտի երևար նրան շունը. բայց այնու ամենայնիւ
նա չկարողացաւ հանգիստ նստել բարձր ու անվտանգ

ճիւղի վրայ. նրա ոյժն աւելի թոյլ լինելով քան իւր կամ-
քը, վայր ձգեց իրան այնտեղից:

Ջունը կանգ առաւ, յետ քաշուեց...: Երևի նա էլ
ճանաչեց այդ ոյժը:

Ես շտապեցի շփոթուած շանս յետ կանչել և հեռացայ՝
զգալով իմ մէջ յարգանք դէպի այդ փոքրիկ թռչունը:

Այո՛, մի ծիծաղէք, ես յարգում էի այն փոքրիկ հե-
րոս թռչունը. նրա սիրոյ ուժգնութիւնը.—Սէրը, մտա-
ծում էի ես, մահից ու մահուան երկիւղից աւելի զօրեղ
է. միայն սիրով է պահպանուում ու շարժում կեանքը:

20. Թ Ռ 2 Ո Ւ Ն

Մի ձըմբան օր էր. փչում էր քամին.

Ձիւնի քուլէքը ամեն տեղ ծածկում.

Մարդ և անասուն ցրտի երեսից

Փախում էր, մտնում, տան մէջը պահուում:

Իմ պատուհանին, որ պինդ փակած էր,

Յանկարծ մօտեցաւ մի փոքրիկ թռչուն.

Նա դողդոզում էր, թևերը շարժում,

Եւ իւր կտուցով խփում ապակուն:

Տեսնելով թռչնի դառն վիճակը,

Յուզուեցաւ սիրտըս, զթացի վըրան.

2թողի երկար տանջուել այն ցրտում,

Իսկոյն սենեակս առայ ես նորան:

Դադարեց ձիւնը, հանդարտուեց քամին,

Իմ սիրուն թռչնակն նորից ոյժ առաւ,

Ուղղեց թևերը, սաւառնեց օդում

Եւ մի քաղցր երգ երգել ըսկսաւ:

Քաղցրը էր երգը, մեղմ ու գրաւիչ.

Նա շարժեց սիրտս, ազգեց իմ հոգուն.

Բրունեցի նորից, զրի վանդակում,

Որ զօ՛հ չըզնայ կատաղի քամուն:

Քայց մի ժամ չանցած, նա տխուր, տրտում,

Գլուխը կախեց, արձակեց մի ճիչ.

Մօտեցայ նորան—նա յետ-յետ քաշուեց,

Գ'ասես ես նորան լինէի դահիճ:

«Այո՛, դժուար է, ասացի նորան,

Չարել քեզ այդպէս բանտարկեալի կեանք.

Ընկերից զատուած, բընիցդ հեռի,

Անմասն երգիչ, սիրելի թռչնակ:

Ան՛ա բացում եմ քո բանտի դուռը,

Սլացի՛ր դէպ' դաշտ և կամ խոր անտառ,

Գըտի՛ր քո ընկեր, սիրէ՛ քո բունը.

Մահ ու գերութիւն մի է քեզ համար»:

21. Ա Ղ Ա Ի Ն Ի Ն Ե Ր

Ես կանգնած էի սեպացած բլուրի գագաթի վրայ,
իսկ իմ առաջ սփռուած էր հաճարի հասունացած արտը.
Նա երբեմն ծածանուում էր ոսկէ գոյնով, երբեմն տարած-
ւում էր արծաթեայ ծովի նման և պսպղին էր տալիս:
Քայց ալիքները բնաւ չէին օրօրում այդ ծովի վրայ.
Խեղդող օդի անշարժութիւնը գուշակում էր մի մեծ փո-
թորիկ:

Իմ շուրջը արեգակը դեռ ևս լուսաւորում էր իւր
ջերմ և աղօտ լուսով. իսկ այնտեղ, հաճարի արտի միւս
կողմում, ոչ այնքան հեռու, մուգ-կապտագոյն մառախու-
ղը անագին կուտակութեամբ բռնել էր երկնակամարի
ամբողջ կէտը:—Ամեն ինչ լուութեան մէջ էր... ամեն ինչ
հստաչում էր արեգակի վերջին ճառագայթների փայլման

ներքոյ: Զէր լսուամ ոչ մի ձայն, չէր երևում ոչ մի թռուչուն, թագնուած էին մինչև անգամ ճնճողուկները: Միայն մի ինչ որ տեղ, մերձակայքում, մենաուր ջրածաղկի խոշոր տերևները յամառ կերպով շշնշում էին և թափահարում:

Ինչպէս սաստիկ բուրում էին դաշտերի խոտաբոյսերը: Ես նայում էի կապտագոյն ամպակոյտի վրայ... մռայլը տիրում էր իմ սրտում: Դէ շուտով, շուտով, մտածում էի ես, փայլատակիր, ոսկեղէն օձ, դղրդա, որոտ, շարժուիր, հեղուիր, ով չա՛ր մառախուղ, վերջ տուր այս տխուր հեծութեանը:

Բայց մառախուղն անշարժ էր: Նա առաջուայ նման ճնշում էր անմուռնչ երկիրը... Միայն կարծես աւելի ուռչում էր և մթնանում:

Եւ ահա՛ նրա միագոյն կապուտակութեան վրայ նըշմարուեցաւ մի ինչ որ բան, որ սլանում էր հարթ-հաւասար կերպով. կարծես թէ իսկ և իսկ մի սպիտակ թաշկինակ լինէր կամ ձիւնի պատառ: Դա մի սպիտակ աղաւնի էր, որ թռչում էր գիւղի կողմից. թռաւ, թռաւ միշտ միևնոյն ուղիղ գծով... և խորասուզուեցաւ անտառի յետեր:

Անցաւ մի քանի վայրկեան. դեռ տիրում էր միևնոյն խիստ լուսթիւնը: Բայց նայիր. այժմ նշմարում են երկու թաշկինակներ, ձիւնի երկու պատառներ յետ են սլանում: Դորա երկու սպիտակ աղաւնիներ են, թռչում են դէպի տուն հաւասար թռիչքով: Եւ ահա՛ վերջապէս պայթեց փոթորիկը և սկսուեց բնութեան կատաղի խաղը:

Ես հազիւ կարողացայ փախչել մինչև տուն: Քամին մռնշում էր, սոսկալի կերպով պտրտում: Պատառ-պատառ եղած շիկագոյն ամպերը ներքեից առաջ էին մղւում: Ամեն ինչ տակն ու վրայ էր լինում, խառնաշփոթութեան

մէջ էր, դղրդում էր: Անձրևի սարսափելի տարափը, ջրային սիւների նման, ցած էր թափւում: Կայծակների հրեղէն կանաչագոյն փայլատակումն աչք էր կուրացում: Որոտի ընդհատուող բամբիւնը, կարծես թէ, թնդանօթներիցն էր արձակւում: Փչում էր ծծմբային հոտ:

Բայց կտուրի ծածկի տակ, երդիկի կողքին, միմեանց մօտ նստած են երկու սպիտակ աղաւնի՝ այն, որ թռչում էր իւր վարուժանի ետևից, և այն, որին բերեց նա և, կարելի է, ազատեց նրան:

Երկուսն էլ գուրգուրում էին միմեանց, և իւրաքանչիւրը իւր թևիկով շօշափում էր դրացու թևը: Երջանիկ էին նրանք: Եւ ես ինձ երջանիկ էի զգում նրանց վրայ նայելով...

ԲԱՋԷՆ ՈՒ ԱՂԱԻՆԻՆ

Դիշատիչ բազէն իւր սուր ճանկերում
Բռնած աղաւնուն պատառոտում էր.

«Հը՛մ, ճանկս ընկար, զո՛ւր ես աշխատում
Պրծնիլ իմ ձեռքից, զո՛ւր այդ հնարքներ:

Խա՛բերայք, ես ձեզ լաւ եմ ճանաչում.

Ա՛յ հայհոյիչներ, խորամանկ օձեր,

Ձեր ցեղը միշտ մեր արիւնն է խմում.

Դուք էք մշտական մեր թշնամիներ.

Բայց կան աստուածներ վրէժխնդրութեան,
Նորա ամենքին կ'անեն դատաստան»:

—Ա՛խ, ուր է, եթէ ճիշդ այդպէս լինի,

Այդ ցանկութիւնն է իմ ճնշուած սրտի,

Հազիւ հառաչեց աղաւնին մարած՝

Սուր-սուր ճանկերում սաստիկ շարշարուած:

«Ինչպէս, ինչպէս, այդ ինչ ասացիր,
 Այ դու ուրացող. մի մէկ էլ կրկնիր:
 Դու չես հաւատում, հա՛, աստուածներին,
 Նախախնամութեան այն հզօր ուժին.
 Է՛հ, ուզում էի ազատել ես քեզ,
 Բայց չէ, տեսնում եմ, որ դորան չարժես.
 Բաս մեռիր. գուր է, գուր քո փրկութիւն.
 Անաստուածներին չկայ թողութիւն»:

23. ԻԻՐ ՎԻՃԱԿԻՑ ԳՈՅ ՄԱՆՈՒԿԸ

Մկրտիչ անունով փոքրիկ հովիւը քշում էր դէպի անտառ իւր հօտը: Խիտ անտառի անցքերում մի անգամ, իւր այծերից մինին որոնելիս, մի մարդ տեսաւ, որ պառկած էր մի թփի տակ: Այս մարդը շատ յոգնած էր երեւում և հագիւ էր շունչ քաշում:

— Մանուկ հովիւ, ասաց մարդը, ես քաղցից ու ծարաւից մեռնում եմ: Այստեղ երէկ եկայ որս անելու, ճանապարհս կորցրի և ողջ գիշերը այս վայրի անտառում անցկացրի:

Մկրտիչը հանեց զրպանից թաժայ հաց ու պանիր և տուեց նրան:

— Կերէք, ասաց նա, և հետևեցէք ինձ. ես ձեզ կը տանեմ մի հին կաղնու մօտ, որի կոճղի տակից լաւ աղբիւր է գուրս գալիս:

Որսորդը կերաւ. յետոյ նրան հետևելով՝ ասած տեղից էլ հիանալի ջուր խմեց: Ապա Մկրտիչը նրան դուրս տարաւ անտառից: Այն ժամանակ որսորդը հովուին ասաց.

— Սիրելի մանուկ, դու փրկեցիր իմ կեանքը: Եթէ ես մի ժամ աւելի մնայի նոյն դրութեան մէջ, հիմա մե-

ռած կը լինէի: Ես կամենում եմ քեզ ցոյց տալ իմ երախտագիտութիւնը: Արի ինձ հետ քաղաք. ես հարուստ եմ և քեզ որդուս պէս կը պահեմ:

— Ո՛չ, պատասխանեց մանուկը, ես չեմ գալ քաղաք. այստեղ ես խեղճ հայր ու մայր ունիմ, որոնց շատ եմ սիրում: Եթէ դուք թագաւոր անգամ լինէիք, ես ձեզ համար չէի կամենալ թողնել իմ ծնողներին:

— Բայց, ասաց որսորդը, դու կենում ես այստեղ յարդով ծածկուած աղքատիկ խրճիթի մէջ, իսկ ես բնակւում եմ փառաւոր սիւներով շրջապատած ու մարմարիոնով զարդարած ապարանքում: Ինձ մօտ դու կը խմես վանակնեայ (կրիստալ) բաժակներով և կ'ուտես արծաթեայ պնակներով համեղ կերակուրներ:

Մանուկը պատասխանեց.

— Մեր փոքրիկ տունն այնքան էլ աղքատիկ չէ, որքան դուք կարծում էք: Թէև նա զարդարուած չէ սիւներով, բայց պտղատու ծառերով ու ողկոյզներով ծանրաբեռնուած հովանոցներ կան նրա չորս կողմը: Մենք խմում ենք պարզ ջուր մօտակայ աղբիւրից և մեր աշխատանքով ձեռք բերած ապրուստով գոհանում ենք. թէպէտ մեր տանը չկայ ո՛չ արծաթ, ո՛չ կրիստալ, ոչ էլ մարմարիոն, բայց մեզ ծաղիկներ պակաս չեն:

— Արի հետս, մանուկ, մենք քաղաքում ծառեր էլ ունինք, ծաղիկներ էլ: Ես մի հիանալի պարտէզ ունիմ ուղղաձիգ ու խիտ ծառուղիներով, ունիմ և ամենասիրուն ծաղիկներով ու թանկագին բոյսերով զարդարուած մի ծաղկոց. այդ պարտէզի մէջ հիանալի ջրբուխ կայ. դու երբէք նրա պէս բան չես տեսել. ջուրը ցայտումներով վեր է բարձրանում և կրկին փրփրալից թափւում է սպիտակ մարմարիոնէ աւազանի մէջ:

— Մենք երջանիկ ենք մեր անտառներում, ասաց մա-

նուկը: Մեր հովաշատ անտառները գոնէ նոյնքան զովարար են, որքան և ձեր փառահեղ զբօսատեղիները: Մեր կանաչ դաշտերը պճնուած են հազար ու մի ծաղիկներով: Մեր տնակի շուրջն էլ կան նոյնպէս ծաղիկներ՝ վարդ, մանուշակ, շուշան, մեխակ: Կարծում էք մեր աղբիւրները պակաս գեղեցիկ են ձեր ջրբուխներէց: Ո՛հ, ինչպէս ես սիրում եմ նայել մեր աղբիւրներին, որոնք ժայռերի խռոչներէց փրփրալով դուրս են գալիս և բլուրների բարձրութիւնից վայր թափուելով ու կանաչազարդ մարգագետինների վրայ կեռման տալով անցնում են:

— Դու չգիտես, սով մանուկ, թէ ինչ ես մերժում, ասաց որսորդը: Քաղաքում կան հոյակապ ուսումնարաններ, ուր քեզ կը սովորեցնեն ամեն տեսակ գիտութիւն: Կան թատրոններ, ուր յայտնի նուագաժողներ կը գրաւեն ականջներդ իրանց ներդաշնակ հնչիւններով: Կան շքեղ սրահներ, ուր դու ներկայ կը լինիս փառաւոր հանդէսների:

— Ո՛չ, պատասխանեց մանուկը. ես չեմ գալ քաղաք: Ինձ գիւղի դպրոցում ուսուցանում են այն, ինչ որ ինձ հարկաւոր է: Ձեր նուագաժողներն աւելի լաւ չեն երգում սոխակից: Ի՛նչպէս մենք երջանիկ ենք, երբ կիւրակի օրը, ընտանիքով խմբուած, նստած ենք լինում մի ծառի ստուերի տակ, կարկաչահոս առուակի ափին. քոյրս երգում է, իսկ ես նրան ընկերակցում եմ իմ սրնգի ձայնով. մեր երգերը թնդում են հեռում, արձագանքը նրանց կրկնում է մեզանից յետոյ, և մեր երջանիկ հայր ու մայրը մեզ քաղցր ժպիտով են նայում: Ո՛հ, ո՛չ, ես ձեզ հետ չեմ գալ քաղաք:

Այն ժամանակ որսորդը տեսաւ, որ պէտք է հրաժարուէր նրան իւր հետ տանելու մտադրութիւնից:

— Ուրեմն ինչ տամ քեզ, ասաց նա, իմ երախտագի-

տութիւնս ցոյց տալու համար: Վերցրու այս ոսկով ու արծաթով լի քսակը:

— Ինչիս է պէտք այդ փողը: Մենք խեղճ ենք, բայց ոչինչ կարօտութիւն չունինք. եթէ ես ընդունէի այդ փողը, ուրեմն ես ձեզ վրայ ծախած կը լինէի իմ ձեզ մատուցած փոքրիկ ծառայութիւնը: Այդ լաւ չէր լինիլ. իմ մայրն ինձ կը յանդիմանէր այդպիսի վարմունքի համար. նա ինձ միշտ ասել է, որ մենք պէտք է օգնենք նրանց, որոնք նեղութեան մէջ են գտնուում և այդ պէտք է անենք առանց որևէ ակընկալութեան:

— Ուրեմն ինչ տամ քեզ, քաղցրիկ մանուկ. պէտք է մի բան ընդունես, եթէ ոչ ինձ կը վշտացնես:

— Լաւ, որ այդպէս է՝ տուէք այդ փոքրիկ շիշը, որ ձեր կողքից կախուած է: Կարծեմ նրա վրայ շներ են նկարուած, որոնք մի այծեամի ետեից են ընկած:

Որսորդը տուեց նրան շիշը, և մանուկ հովիւր՝ ուրախութիւնից ոստոստող գառան նման, թռչկոտալով հեռացաւ գնաց:

25. Վ Մ Ի Պ Ա Տ Ա Ռ Ն Ա Յ

Ա

Յունուարի մի ցուրտ, շատ ցուրտ օր էր. թքէիլ՝ գետին չէր ընկնիլ:

Թէև արդէն առաւօտ էր, բայց քաղաքի փողոցները դատարկ էին և անկենդան. սով էր գժուել այս կատաղի ցրտին գլուխը դուրս հանել տանից, հազիւ երբեմն փողոցների այս ու այն ծայրում ստուերների պէս երևում էին մուշտակների, եափունջիների կամ վերարկուների մէջ կոլովուած մարդիկ, քիթ ու պուռնդ փաթաթած, եղեա-

մով ծածկուած. սրանք էլ, ո՛վ գիտէ, որպիսի անհրա-
 ժեշտ կարիքից ստիպուած էին թողել իրանց փափուկ
 բնակարանները, այն էլ ոչ թէ քայլում էին, այլ յակա-
 մայից վազում էին, համարեա հեալով:

Այդ ժամին փողոցի հեռաւոր ծայրում յանկարծ ան-
 սպասելի կերպով երևացին երկու փոքրիկ մանուկներ, 7
 և 10 տարեկան: Խեղճերն այնքան վտիտ էին, որ ասեա
 գերեզմանից դուրս քաշած մեռելներ լինէին. դժուար էր
 առանց սոսկումի նայել նրանց վրայ: Երկուսն էլ գլխա-
 բաց, զգզուած մազերով, որոնց վրայ առատորէն թափ-
 ուել էին եղեամների թերթիկներ. յօնքերի ու աչքերի
 թերթերունքների վրայ նոյնպէս նստել էին եղեամներ,
 տալով մանուկներին մի տարօրինակ, մի խղճալի տեսք:
 Նրանց մարմինների մերկութիւնը հագիւ հագ ծածկուել
 էր ինչ-որ կախկիտուած ծուէններով. անհնարին էր նոյն
 իսկ որոշել, թէ ինչ է նրանց հագինը, կամ որն է վար-
 տիքը, շապիկը կամ արխալուխը: Տեղացի չէին նրանք,
 այլ գաղթականներ հեռու երկրից, անհայր, անմայր, ան-
 տէր... կատարեալ որբիկներ...

Խեղճերը գիշերները քնում են մի աստուածասիրի
 գոմում. այնտեղ շատ անասուններ կան, տաք է... Առաջ
 փորձեցին մեծ գոմէշների մսուրի մէջ քնել. բայց նրանք,
 այս տարօրինակ մարմինները տեսնելով, խրտնեցին, փրն-
 չացրին: Թշուառները վախեցան և փախան մտան մի
 փոքրիկ, խղճուկ հորթուկի մսուրը, որ նոյնպէս նիհար
 էր, նոյնպէս տխուր, նոյնպէս թշուառ՝ որպէս երկու որ-
 բիկները: Խեղճի մայրը հէնց նոր էր մեռել. նրան ծիծ-
 տուող չկար, ուստի կերակրում էին չոր խոտով. բայց
 նա դեռ ուտել չէր կարողանում, սովոր չէր. մէկ-մէկ ծիւ
 վերցնում էր, ծամլմորում և վէր ածում. նա միշտ սոված

էր, միշտ էլ տխուր, դուռնչը կախած, օրէց օր նիհարա-
 նում էր ու նիհարանում:

«Թշուառին թշուառն է միշտ մխիթար». որբ հոր-
 թուկը սիրով հիւրընկալեց որբ մանուկներին. նրանք բա-
 րեկամացան և սիրեցին իրար. և երբ գիշերները երկու
 որբիկները ճիտ-ճիտ արած, իրար պինդ խտտած քնում
 էին մսուրի մէջ՝ հորթուկն էլ իր փոքրիկ դուռնչը դնում
 էր նոյն մսուրի շրթին, քնում էր, իր տաք շուռնչը մա-
 նուկների երեսին փշելով:

Լաւ էր գոմը նրանց համար, շատ լաւ, տաք էր...
 Առաւօտները վաղ զարթնում էին և իրանց վայելած հիւր-
 ընկալութեան փոխարէն նախ աւելում, մաքրում, շորա-
 ցնում էին հորթուկի տակը, գուրգուրում էին նրան, ապա
 կրում թափում էին մնացած անասունների աղբը և յետոյ
 դուրս էին վազում փողոցներում թափառելու... հաց
 հաւաքելու... Այսպէս էին ապրում նրանք, և գոհ էին—
 «զուլում» չկար:

Սրանից առաջ էլ համարեա ամեն օր նրանք շրջում
 էին փողոցներում. տեղացիք տեսնում էին նրանց նոյն
 ցնցոտիների մէջ, նոյնպէս ոտաբորիկ, նոյնպէս գլխա-
 բաց, զգզուած, որպէս այսօր, և ոչ ոքի խիղճը չէր վրդ-
 դովում: Դէ, եղանակը տաք էր, «եթիմն էլ աներես կըլի-
 նի, հաց հաւաքելով կ'ապրեն, էլի», մտածում էին նրանք
 և խիղճը հանգստացնում: Բայց այսօր... Որբերը զար-
 ձեալ փողոցումն են: «Այս լաւ չէ, անտանելի ցուրտ է,
 մտածում էին անցորդները... ախր այդ ինչպէս են բո-
 բիկ, դողալով վազում և ինչ կարիք կար այսօր էլ ան-
 պատճառ դուրս գալ... Ախ, աներես լակոտներ»...

Բ

Իսկ որբերը... նրանք շարունակեցին առաջ գնալ փողոցով և ամենեին չէին էլ զարմանում, որ իրանք այս անտանելի ցրտին փողոցումն են, մինչդեռ իրանց հասակակից ոչ մի երեխայ չէր երևում. նրանք մի բան միայն գիտէին, որ թէև սաստիկ ցուրտ է, թէև իրանք էլ մերկ են, ոտաբոբիկ, գլխաբաց դողդողում են՝ բայց և այնպէս պէտք է դռներն ընկնեն, որ հաց ճարեն. շատ են սոված, երէկ կէսօրից սկսած բան չէն կերել...

—Վախ, Գալօ, էս ինչ ցուրտ ա, ասաց փոքրիկը ձեռները իրան կապտած շրթունքներին մօտեցնելով և ոտները խշխշացող ձիւնի վրայ վերև ներքև անելով:

—Հա՛, Մրտօ, շատ ցուրտ ա, մրմուռը մարդու ջիւղեարը կուտայ, շուտ արի:

—Ախր գոմը տաք էր,—շարունակեց փոքրիկը լացակումած. արցունքների խղճուկ կաթիլները կախուցին արտևանունքներից, բայց, առանց ընկնելու, սառան:

—Տաք էր, ապա որ անօթի ենք, ինչ անենք... Փոքրիկը լռեց, կծեց շրթունքները, փչեց մատներին—ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ...

Ահա նրանք կանգ առան մի մեծ դարպասի առաջ, որ բացուած էր: Բակի ներսում սաստիկ ցրտից կծկուած քնած էր մի մեծ գամփռ. նա չէր նկատում մանուկներին, որոնք վախվիտելով, ձեռք ձեռքի տուած, անվստահ քայլերով ներս մտան բակը և, մի փոքր առաջ գնալով, տեսան ահաւոր շանը: Մեծը կանգ առաւ, չհամարձակուելով աւելի առաջ գնալ:

—Մրտօ՛, շունը... կը կծի, դառնանք:

—Ախր անօթի եմ, էլ ո՛ւր երթանք,—մրմնջաց փոք-

րիկը. էս տունը հարուստ է, փշուր մը հաց ուզենք, էլ յետ վազենք գոմը, ցուրտ ա, փէտացանք...

Նրանք մի փոքր էլ առաջացան, յուսալով անձայն, անշշուկ անցնել շան մօտից և տանը հասնել: Բայց ձիւնի ճոճոցը զարթեցրեց շանը. նա, գլուխը բարձրացնելով, տեսաւ երկու զգգգուած մանուկներին, մի կատաղի ոստիւն գործեց և վրաները յարձակուեց: Վտանգն զգալով՝ խեղճ մանուկները ճշացին, իրար գրկեցին և վայրկենապէս նստեցին ձիւնի վրայ: Այսպէս են պաշտպանուած շների յարձակումից մուրացիկ մանուկներն ու կանայքը: Ասես իրանց յաղթահարուած ցոյց տալով՝ այդ թոյլ արարածներն ուղում են զագանի սրտում գուլթ գուլթեցնել: Եւ արդարև, շունը կանգ առաւ. կենդանու կատաղութիւնը զսպուեց որբերի անպաշտպանութեան առաջ. նա մի փոքր հեռու պառկեց, գլուխը թաթերի վրայ դրած, ասես հրսկելով երկու թշուառների վրայ, որ չլինի թէ վեր կենան, փախչեն: Սրտածմլիկ, արտասուելի տեսարան էր. երկու ոտաբոբիկ, գլխաբաց, ցնցոտիների մէջ դողդողացող մանուկներ, կապտած շրթունքներով, ուռած ձեռներով, իրար կպած, կծկուել նստել էին ձիւնի վրայ և լալիս էին. եղեամի թերթիկները խաղում էին ցուրտ օդի մէջ և պտտուելով թափում էին նրանց զգգգուած մագերի վրայ: Կատաղած շունը շնթրկել*) էր նրանց կողքին մոմռալով, կարծես սպասում էր, որ թշուառները վեր կենան թէ չէ՝ վրայ պրծնի, կտոր-կտոր անէ: Բակում ոչ ոք չկար: Մանուկները շարունակում էին յուսահատ լալ ու ճշալ. սարսափած աչքերով նրանք նայում էին մէկ շանը, մէկ էլ տան դռանը, այնտեղից օգնութիւն սպասելով: Ահա վեր-

*) Նստել էր:

ջապէս տան դուռը ճռռալով բացուեց և շէմքի վրայ երեւալաց մի կին:

«Փշուր մը հաց, — պռուացիին մանուկները միասին դողդոջուն ձայնով:

— Աներեւ լակոտներ, ասում էի՝ սրանք կը լինին, մըթմըթաց նա և ներս մտնելով բերեց մի կտոր հաց, տուեց սարսափած մանուկներին, իսկ ինքը յետ դարձաւ:

Մանուկները խլեցին հացի պատառը և մինչ պատրաստում էին շտապով դուրս թռչել դռնից՝ շունը վեր թռաւ նրանց յետևից, վրայ պրծաւ, փոքրիկ որբի ոտքից բռնեց, քաշեց կատաղի հռփոցով: Սարսափած մանուկը ճշաց և երեսի վրայ ընկաւ հացը ձեռքին, մինչ գեռ մեծը շշկուած՝ չգիտենալով օդնութեան վազել, թէ փախչել կանգնած մուաց ու լաց էր լինում: Տանտիկինը վազեց, հալածեց կատաղած շանը և երբ ձեռքից բռնելով վեր կացրեց որբիկին՝ երեխան ծանր տնքաց: Գազանի սուր ժանիքները պատռել էին նրա փոքրիկ ոտքը: Կաթ-կաթ արիւնը ծորում էր վէրքից և թափում ձիւնի վրայ: Երեխան ձեռք տուեց ոտքին, ձեռքը ներկուեց արիւնով: Նա զարհուրած յետ քաշեց ձեռքը, նայեց ափին, նայեց վիրաւոր ոտքին և էլ աւելի բարձր ձայնով լաց եղաւ: Այնու ամենայնիւ նա կռացաւ, վերցրեց հացի պատառը, և կաղալով ու տնքալով հետևեց իր եղբորը: Արիւնը շարունակում էր կաթել նրա ոտքից, և երկուսով էլ լալիս էին, տեսնելով կարմիր կաթիլները...

Բայց և այնպէս՝ քաղցած, դողդողացող մանուկները կիսեցին հացի արիւնոտ պատառը և մի-մի կտոր կըծելով՝ առաջ գնացին:

Դեռ երբէք հացի մի պատառ այնքան թանգ չէր գնուել...

51. Ո Ս Կ Ի - 2 Կ Ն Ի Կ

(Առակ)

I

Մի ծերուկ ձկնորս և իր պառաւ կին Բնակում էին մեծ ծովի ափին:

Ծերը գնում էր, ձուկ բռնում ծովից, Պառաւն էլ տանը թել մանում բրդից:

Այսպէս միասին՝ մի հին գետնատան:

Ճիշդ երձուներեք տարի ապրեցան:

Անձ մէկ օր էլ ծերը գնաց ծով,

Որ ձուկը որսայ իր մաշուած ցանցով:

Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց,

Յանցը այս անգամ միայն տիրմ հանեց,

Երկրորդ անգամը ցանցը ձգեց ծով,

Յանցը դուրս եկաւ ծովային խոտով:

Իսկ երրորդ անգամ որ ցանցը ձգեց,

Ո՞վ կարէ ասել, թէ ի՞նչ դուրս հանեց:

Նա բերաւ իր հետ մի ոսկի-ձկնիկ՝

Չկանց արքայի դուստրը գեղեցիկ:

Ծերի ցանցն ընկաւ, իբրև խեղճ գերի,

Ոսկի աղջիկը ձուկ-թագաւորի:

Խեղճ ոսկի-ձկնիկ, ինչպէս է խնդրում,

Մարդկային լեզուով ծերին աղաչում:

«Թող ինձ, թող, ծերուկ, թող ինձ անվտանգ,

Քեզ կը վճարեմ թանկազին փրկանք:

Ինչ սիրտդ ուզի, ինչ որ կամենաս,

Ուզիդ եմ ասում, ինձնից կը ստանաս»:

Վախեցաւ ծերը, մնաց զարմացած.
 Նա այնքան տարի ձկնորս էր եղած,
 Բայց ձկան մասին երբէք չէր լսել,
 Թէ նա մարդու պէս կարող է խօսել:
 «Գնա, Տէր ընդ քեզ, ասաց ծերունին,
 Ինձ չէ հարկաւոր փրկանք թանկագին.
 Գնա քեզ համար դու ծիրանի ծով
 Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»:

2

Այդ դէպքից յետոյ ծերը տուն դարձաւ,
 Պատմեց պառաւին թէ ինչ բան տեսաւ:
 «Այսօր ես ծովից, գիտես ինչ, ա՛ կնիկ,
 Բռնեցի յանկարծ մի ոսկի-ձկնիկ,
 Ոսկի եմ ասում և ոչ քո գիտցած,
 Այսպիսի հրաշք ոչով չի տեսած:
 Նա խօսել գիտէր ուղիղ մեր լեզուով,
 Աղաչանք արաւ, որ յետ ձգեմ ծով.
 «Թող, ասաց, խնդրեմ, թող ինձ անվտանգ.
 Քեզ կը վճարեմ թանկագին փրկանք»:
 Բայց ես ոչ մի բան չըպահանջեցի,
 Ոչինչ չեմ ուզում, գնա, ասացի.
 Գնա քեզ համար դու ծիրանի ծով
 Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»...
 Պառաւը երբոր այս բանը լսեց,
 Խեղճ ալևորին շատ յանդիմանեց,
 Թէ ինչո՞ւ ձկնից փրկանք չի ուզել,
 Ու այնպէս ձրի յետ ծովն է ձգել:
 «Ա՛յ յիմար անմիտ, հայհոյեց ծերին,
 Գոնէ կ'ասէիր դու ոսկի-ձկնին»:

«Մի նոր տաշտակ տուր, տանեմ իմ կնկան,
 Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...
 Դարձաւ ծերունին, ծովի ափ գնաց,
 (Տեսաւ նա ծովը մեղմիկ ծածանուած).
 Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.
 Չուկը լողալով մօտեցաւ ծերին.
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ» հարցրեց:
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, Թագուհի-Չկնիկ,
 Ինձ նախատում է իմ պառաւ կնիկ,
 Հանգիստ չի թողում խեղճ ալևորիս,
 Վրաս մըրթմըրթում, ուշունց է տալիս.
 Մի նոր տաշտակ է հարկաւոր իրան,
 Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...
 Ոսկի-ձկնիկը ծերունուն խզաց.
 Գնա, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց,
 Թող քո պառաւը շատ չընեղանայ.
 Այսօր նա մի նոր տաշտակ կ'ունենայ»...
 3
 Յետ դարձաւ ծերը դէպի իր տնակ,
 Տեսաւ կնկայ մօտ մի սիրուն տաշտակ.
 Բայց կինը գոհ չէր. նա այս անգամ էլ
 Սկսեց ծերին սաստիկ նախատել.
 «Գնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,
 Ի՞նչ շահ դորանից: Էլի յետ դարձիր
 Ոսկի-ձկան մօտ, այ դու անասուն,
 Գլուխ տուր նորան և ուզիր մէկ տուն»...
 Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց.
 (Այս անգամ տեսաւ ծովը սղտորուած).

Ըսկսեց կանչել ոսկի-ձկնիկին.
 Զուկը լողալով մօտեցաւ ծերին.
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց:
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,
 Ինձ շատ նախատեց իմ պառաւ կնիկ.
 Խեղճ ալևորիս հանդիստ չի թողում,
 չիմա էլ կատղել՝ մէկ տուն է ուզում»...
 Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
 «Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց,
 Թող լինի այնպէս՝ ինչպէս կամենար.
 Գուք ձեր ցանկացած տունն էլ կ'ունենար»...
 Ծերը ետ դարձաւ կրկին դէպի տուն.
 Էլ նա չըգտաւ իր հին գետնատուն.
 Մի նոր տուն տեսաւ լուսամուտներով,
 Գտուրից հանած ծխահաններով,
 Պատ ու վառարան մաքուր սրւաղած,
 Գրով ու կաւճով սիպտակացրած.
 Վարպետի տաշած, կաղնի տախտակից,
 Մեծ դուռն էր կախած լայն բակի կողմից.
 Պատուհանի տակ կի՛նն ուռած նստել,
 Իր շարութիւնից ուզում է տրաքել.
 Ինչ անէ՞ք ասես աշխարհքիս տակին.
 Բոլորն էլ թափեց խեղճ մարդի գլխին.
 Վերջը՝ երբ փոքր ինչ բարկութիւնն իջաւ,
 Մուտքը կախած ծերունուն դարձաւ.
 «Անշնորհք ծերուկ, տնակ ուզեցիր,
 Երևի քո մէջ մեծ բան կարծեցիր.
 Յետ դարձիր, անխելք, յետ դարձիր, գնա՛,
 Ոսկի-ձկնիկին իմ կողմից ասա՛,

Որ էլ չեմ ուզում մնալ գեղջուկ կի՛ն,
 Ուզում եմ յի՛նել գերագնիւ տիկի՛ն»...

4

Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց.
 (Այս անգամ տեսաւ ծովը վրդովուած).
 Ըսկսեց կանչել ոսկի-ձկնիկին.
 Զուկը լողալով մօտեցաւ ծերին.
 «Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց:
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ.
 Հանգիստ չի տալիս ինձ իմ շար կնիկ.
 Էլ չի կամենում մնալ գեղջուկ կի՛ն.
 Ուզում է լինել գերագնիւ տիկի՛ն.
 Զրգիտեմ՝ գլուխն ինչ քամի մտաւ,
 Որ գեղջկութիւնից յանկարծ ձանձրացաւ»...
 Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
 «Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց,
 Թող քո պառաւը հէնց այսօրուանից
 Ազատ համարուի իր գեղջկութիւնից»...
 Յետ դարձաւ ծերը, և ինչ է տեսնում.
 (Կարծես ցնորք է աչքին երևում).
 Պառաւն է կանգնած ինչպէս նոր խանում.
 Հագին սամուրէ բաճկոնակ սիրուն,
 Գլխին դիպակէ շարղա թ գոյնզգոյն.
 Վիզը զարգարած մարգարիտներով,
 Մատերին մատնիք անգին քարերով,
 Մաշիկներն ինչպէս կաս-կարմիր որդան,
 Միւս հագուստներն էլ մետաքս պատուական.
 Ծառաներ ունի մի քանի տասնեակ,
 Բոլորն էլ իրան հլու հպատակ:

Մարդին որ տեսաւ՝ պառաւր կատղեց,
 Խեղճ ծառաներին ծեծել ըսկսեց.
 (Երևի ուզեց ցոյց տալ իր մարդին,
 Որ ինքն այժմ է գերազնիւ տիկին):
 Հայհոյանք թափեց ամենքի վրայ,
 Տեղի անտեղի քօթկեց անխնայ,
 Մէկի մագերից բռնեց քաշքրշեց,
 Միւսին էլ մի լաւ ապտակներ զարկեց:
 Ծերը մօտեցաւ դող-դող քայլերով,
 Ասաց պառաւին՝ խոր գլուխ տալով.
 «Բարձր գերազնիւ խանում-խաթունիս,
 Հիմա խօսմ գոհ ես, հանգիստ կը լինիս»...
 Պառաւ տիկինը այնպէս բղաւեց,
 Որ խեղճ ծերունու լեղին պատառեց.
 Նորան հրամայեց որ իսկոյն գնայ,
 Գոմն աւլէ, քերէ ու այնտեղ մնայ:

5

Մէկ-երկու շաբաթ հազիւ անցկացաւ,
 Պառաւ խանումը նորից կատղեցաւ.
 «Չնուտ կ'անես, կ'երթաս, ասում է մարդին,
 Ու իմ կողմանէ կ'ասես ձկնիկին.
 Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,
 Ուզում եմ ազատ թագուհի լինել»...
 Այս խօսքի վրայ ծերունին սոսկաց,
 Եւ աղաչելով պառաւին ասաց.
 «Բժուել ես, ա՛ կնիկ, ես չեմ հասկանում,
 Արդեօք դու գիտես, ինչ ես ցանկանում.
 Մէկ նայի՛ր վրբադ, շէնք ու շնորհքիդ,
 Լըրլըբան լեզուիդ, ծուռումուռ քայլքիդ»

Ախրը ինչ ունիս թագուհու վայել,
 Որ խելքիդ այդպէս քամի է փշել.
 Արի, լսի՛ր ինձ, մի անիլ այդպէս,
 Ամբողջ աշխարհին կը ծիծաղացնես»...

Էլ չըհամբերեց մեր պառաւ տատը,
 Որ վերջացնէր մարդն իր խրատը.
 Նա այնպէս դռուաց, այնպէս որոտաց,
 Որ ամբողջ տունը հիմնովին թնդաց.
 Ինչպէս թէ այդպէս, յանդուգն ըստահակ,
 Գոչեց ու զարկեց մի ուժգին ապտակ.
 «Համարձակում ես, դռեհիկ անգէտ,
 Վիճել ինձ նման ազնիւ տիկնոջ հետ.
 Քեզ հրամայում եմ պատուաւոր խօսքով,
 Որ իսկոյն գնաս քո յօժար կամքով,
 Եթէ ոչ՝ անա՛ ժողովուած կշտիդ,
 Սորա կը տանեն, խփելով վզիդ»:

Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց.
 (Այս անգամ տեսաւ ծովը սևացած).
 Սկսեց կանչել ոսկի-ձկնիկին.
 Ձուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.
 «Ինչ ես կամենում, ծերուկ», հարցրեց:
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,
 Էլի է կուում իմ պառաւ կնիկ.
 Ների՛ր ինձ, խնդրեմ, ես ամաչում եմ,
 Որ չար պառաւիս նոր ուզածն ասեմ.
 Բայց որ ջուրն ընկնեմ, հանգիստ չի թողնում,
 Կրակն է զցել, այրում, խորովում.
 Գնա՛, ասում է,— ա՛խ, նզովեա՛լ կին—
 Չնուտ գնա, ասա՛ ոսկի-ձկնիկին»

Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,
Ուզում եմ ազատ թագուհի լինել...

Ոսկի-ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց.
Թող քո պառաւի ուզածը լինի,
Թող գնայ դառնայ ազատ թագուհի»:

6

Ո՛վ կարէ պատմել, թէ ծերն ինչ տեսաւ,
Երբ ձկան մօտից տուն վերադարձաւ.

էլ ինչ տուն, ինչ բան, դու արքայական
Ապարանք ասա, կամ հսկայական

Մեծ-մեծ պալատներ շարիշար կանգնած՝
Բարձր բուրգերով չորս կողմը պատած.

Չքեղ դահլիճներ, անթիւ սենեակներ,
Մարդ կը շշկուէր, եթէ մէջն ընկնէր:

Ծերը բարձրացաւ մարմար սանդուղքով,
Մի դահլիճ մտաւ խիստ պատկառանքով.

Առջևը բացուեց մի նոր տեսարան,
Երբ այդտեղ գտաւ իր պառաւ կնկան.

Նա հիմա ազատ թագուհի դառած՝
Առօր ու փառօր ճաշի է նստած.

Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէգեր,
Ոտի են կանգնած որպէս ծառաներ.

Թագուհու համար գինի են ածում
Եւ ահ ու դողով աչք-ունքին նայում.

Չէմքում կանգնել են անեղ զինուորներ,
Ուսերին բռնած կացնաձև սրեր.

Մենակ պառաւն էր սեղանին բազմել.
Ո՛վ կը յանդգնէր նորա հետ նստել.

Բայց կերակուրներն այնքան շատ էին,
Որ հարիւր հոգի կը կշտացնէին.

Եւ քանի տեսակ անծանօթ բաներ,
Ի՛նչ անուշեղէն, ի՛նչ տապականեր...

Պառաւն ուտում էր մեծ ախորժակով,
Ու գինին դարտկում լիքը բաժակով,

Վերջն էլ մեղրահաց կերաւ բաւական,
Որ քաղցրացնէ իր գուշիկ*) բերան:

Ծերն այս տեսնելով՝ մնաց շփոթուած,
Ընկաւ պառաւի ոտքերն ու ասաց.

«Բարձր քեզ, բարձր, անեղ թագուհի,
Քո մեծութիւնը յաւիտեան լինի»:

Այս խօսքից յետոյ կամաց շշնջեց
Ու փսփսալով պառաւին հարցրեց.

«Հիմա որ բաղդի վերի ծայրումն ես,
Խօմ բաւակնն ես, ա՛ կնիկ, ի՛նչ կ'ասես...»

Թագուհի դառած պառաւն այս անգամ
Մարդի երեսին չընայեց անգամ.

Հրաման մրմռաց նա քթի տակին,
Որ դուրս վազնդեն մեր անկոշ հիւրին:

Հէնց որ լսուեցաւ թագուհու հրաման,
Հնազանդ երևալ ամենքն ուզեցան.

Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէգեր,
Ինչպէս որսորդի արնախում շներ,

Խփելով ծերի շընքակոթին՝
Չքեղ դահլիճից դուրս վազնդեցին.

Չէմքում կանգնած պահապաններն էլ
Իրանց կացիններն էին պատրաստել,

*) Գուշիկ—պառաւութիւնից ծնօտը դէպի բերանը կոացած:

Վրայ վազեցին ամենքը մէկէն
 Ու քիչ մնաց որ՝ խեղճին խողխողեն։
 Ինչպէս որ եղաւ, մի կերպ դուրս պրծաւ,
 Դուրսն էլ ամբոխի ծաղրի տակն ընկաւ,
 Որ կարծես նորան լինէր սպասում,
 Անձրևի տակին, ցեխոտ փողոցում.
 — «Ա՛յ թէ լաւ արին, ծերուկ դու անգէտ,
 Ո՛ւմ հետ ես մեկնում անճոռնի ոտներդ.
 Թո՛ղ այդ քեզ համար լինի լաւ խրատ,
 Որ էլ չըցանես մանր կտաւհատ»...

7

Այս դէպքից յետոյ, շատ օրեր չանցան,
 Պառաւի այծերն էլի մօտ եկան.
 Ուղարկում է նա իր իշխաններին,
 Որ գտնեն բերեն արտաքսած ծերին:
 Եկաւ ծերունին: Պառաւն սկսեց.
 «Դու պէտք է գնաս ձկան մօտ, ասեց.
 Կերթաս, խոր գլուխ կը տաս դու նորան
 Ու իմ փափագս կը յայտնես իրան.
 Կասես՝ չեմ ուզում մնալ թագուհի,
 Ուզում եմ լինել ծովի տիրուհի.
 Ուզում եմ Ովկիան ծովումը կենալ,
 Ոսկի-ձկնիկին ծառայ ունենալ,
 Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի
 Եւ ինչ ուզենամ, իսկոյն կատարի»...
 Պառաւին լսեց ծերը լուռումուռը,
 Առանց յայտնելու որեւէ տրտունջ:
 Դարձաւ ծերունին, ծովի ափ գընաց.
 (Այս անգամ ծովը խիստ էր փոթորկուած.)

Փրփրած ալիքներ սարեր դառնալով՝
 Իրար են զարկում ասեղ գոռալով):
 Ողբաձայն կանչեց ոսկի-ձկնիկին:
 Ձուկը լողալով մօտեցաւ ծերին.
 «Ի՛նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 «Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,
 Իսպառ գժուել է իմ պառաւ կնիկ.
 Ի՛նչ անեմ արդեօք այդ նզովեալին,
 Մինչև երբ տանջուեմ քաւթառի ձեռին.
 Էլ չի կամենում թագուհի լինել,
 Այլ տես՝ անիծածն ինչ է միտք արել.
 Իշխել է ուզում բոլոր ջրերին
 Ու իշխանուհի դառնալ ծովային.
 Ուզում է Ովկիան ծովումը կենալ,
 Ոսկի-Ձկանդ ծառայ ունենալ,
 Որ իր հրամանին միշտ պատրաստ կենաս,
 Ու ինչ ուզենայ, շուտ կատարում տաս»...
 Ոսկի-ձկնիկը լուռումուռը լսեց,
 Բայց էլ ծերունուն չպատասխանեց.
 Ջրի երեսին շրմփաց պոչով
 Ու անցաւ-գնաց դէպի խորին ծով...
 Զատ մնաց ծերը և շատ նայեցաւ,
 Բայց ոսկի-ձկնիկն էլ չերեցցաւ.
 Դարձաւ իշխակոր որ յայտնէ կնկան,
 Թէ ինչ փորձանքի մէջ գցեց իրան...
 Եւ գնաց տեսաւ... (բայց ի՛նչ տեսնի, լաւ,
 Որ արդար լինի և ոչ անիրաւ).
 Հին խուղի շէմքում պառաւը նստած,
 Կտորած տաշտակը առաջներն ընկած...

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

26. ԲՆՈՒԹԵԱՆ ԿԵՆԴԱՆԱՆԱԼԸ

Ա

Մայիս ամիսն է. գարունը իւր բոլոր փառաւորութիւնով ամեն շնչաւորների վրայ իւր հրաշալի տպաւորութիւնն է ներշնչել: Վարդահոտը՝ բարակ զեփիւռի շնորհիւ ամեն կողմը հետդ ման է գալիս. լեռ ու դաշտ կանաչներով, սէգերով և սիրի-սիրի համեստ երեքտերեւեան խոտերով զարդարուել են. հազարաւոր գոյնզգոյն ծաղիկները երեսիդ ծիծաղում, խնդում են և առհասարակ մի բուռը հող եղած տեղը բուսական թագաւորութիւնը իւր գահն է զրել:

Քարափների ծերպերիցն էլ կեանք է արտադրում. մի կտոր կոշտ ընկած տեղն էլ կանաչի զլուխ է դուրս ցցուել. էլ ապառաժ ու մերկ գետին չէ մնացել: Սրանչելի է մայիսը: Թռչուններն իրանց աղուամագ ձագերի համար կերակուրներ են տանում: Ո՛ւր է վազվզում օդի մէջ ծրծրած ծիծեռնակը: Նայիր այն ճնճղուկի կամ փայտփորի բներին. ինչպէս քնքուշիկ ձագուկները՝ դեղին երկզր կտուցի չորս կողմը, բաց են անում իրանց բերանները և, լեզուիկները հանած, ճիչ ու ծվվոց բարձրացրած՝ կերակուր են խնդրում իրանց մօրից. ինչ քաղցր ճ ո ու ո գիւն են բարձրացրել նոքա:

Սակայն այնպէս չէ կարգադրել բնութեան ամենազէտ

Արարիչը. թող ինչքան ուզում են սիրուն ճուտիկները միմեանց առաջը կտրեն. մայրը իր կարգը լաւ գիտէ. նա հերթը չէ կորցնում, իւր հաշուի մէջ չէ սխալում. նա լաւ գիտէ, թէ առաջ կերակուրը որի բերանն է դրել. նա դեռ այն էլ է հասկանում, թէ իւր ընկեր արուն որին է կերակրել: Նա ուրախանում է իւր նախշունիկների վրայ. մի երկու ըռպէ էլ կանգ է առնում բնի մօտ, քրքրում է իւր կտուցիկով ձագերի դեղին, փափուկ բուրդը, փափկացնում է նոցա անկողինն ու թռչում կրկին գէպի դաշտ:

Բ

Ինչ ախորժալուր է հովուական սրնգի ձայնը մայիս ամսին, երբ նա մի քարի վրայ նստած, կամ լեռան գլխին թեկնած՝ սուլում է ինքնագոհ: Դուք չկարծէք, թէ նա միայն իւր սրտի ուրախութեան համար է ածում. ո՛չ, նա դորանով հասկացնում է իւր սիրելի հօտին, թէ ժամանակ է ժողովուել իւր չորս կողմը և գնացքն ուղղել դէպի փարախը, ուր սիրունիկ գառներն սպասում են լսելու իրանց մայրիկների մայիւնը:

Ո՛հ, ինչ հրաշալի տեսարան է, ինչ քաղցր ըռպէ: Դառները լսում են հեռուից մօր ձայնը և անհամբերութիւնից ուզում են կտրատել *զվուկի**) դուռը, դուրս թափուել՝ դիմաւորելու ամենաթանկագին մօրը, որ իրանց համար կուրծք լի ախորժահամ կաթն է բերում: Մինչև որ հովիւը բաց կ'անէ զվուկի դուռը, ուլերը՝ այդ ճարպիկ պստիկ սատանաները, քիչ է մնում որ բարձրանան նորա ուտերը:

Նախանձելի է հովուի դրութիւնը հօտի վերադառնալու

*) Փարախ՝ ցանկով պատած:

ժամանակ: Գառն ու ուլի մկկոցը, այժ ու ոչխարի հա-
րա-հրոցը նորա սրտի վրայ անպատմելի տպաւորութիւն
են գործում: Ոչ ոք չէ կարող բոլոր ցաւերը շմոռանալ
այն միջոցին, երբ գառնուկներն իրանց փափլիկ դմակ-
ները շարժելով և ուլերն իրանց անհանգիստ պոչուկները
խաղացնելով՝ իրար գլխով են դիպչում:

Գառն ու ոչխարը իրար են խառնուում և նոցանից
իւրաքանչիւրն աշխատում է գտնել իւր մօրը կամ ձա-
գին: Բաւական է, որ մաքին մի փոքր հոտոտէ, իսկոյն
յետ է խփում իրան մօտեցող օտար գառանը և հոտոտե-
լիքը դէպի վեր բռնած՝ ցատկում է դէպի այն կողմը,
ուր իւր սիրելի հարազատն է: Մօր անոյշ մայիւնը և
խանդաղատական ակնարկը թափանցում է անմեղ գառ-
նուկի սիրտը և վստահութիւն է տալիս նորան վազելու
դէպի ինքն եկող ոչխարի կուրծը. իսկ վերջինս իսկոյն
ոտքերը յետ է բաց անում և թոյլ է տալիս իւր ամենա-
սիրելի զաւակին փշիշալով ծծել իւր պտուկները: Եւ իւր
սրտի ուրախութիւնն ու մայրական քաղցը գգուանքն
աւելացնելու համար՝ նա անդադար լիզում է փոքրիկ գառ-
նուկի թաւշանման մորթը:

Անխիղճ են այդ միջոցին մարդիկ. նորա՝ իրանց կեն-
սական պիտոյքը հայթայթելու համար, խլում են խեղճ
գառան բերանից նորա մօր պտուկը և կաթնի մեծ մասն
իրանք են կթում: Անբան անասունն ի հարկէ լաւ գիտէ
մարդկանց անիրաւութիւնը. ինչքան էլ նորա կթին, նա
իւր գսւալի բսժինը թագցնում է կուրծի մէջ:

Ուշադրութեան արժանի է նաև կթողների իրարան-
ցումը: Գալիս են մանկահաս հարսները և մատաղահաս
աղջիկները. հորս լաւ գիտեն ճաշուայ կթի ժամանակը:
Գիւղսլիս ի սուսխներն առհասարակ շինուած են լինում
գիւղից ոչ հեռու, մի ձորամիջում կամ բլրի ստորոտում,

քամուց և տօթակէզ արեգակից ապահով: Եւ անձ մեր
ամօթխածներն ուսում են կամ շալակում կովկիթն ու
կճուճը, գլուխներին են դնում կաթ-քամիչն ու մաղը և
գիւղից միասին դուրս գալիս՝ երեք-երեք, չորս-չորս,
խումբ-խումբ բաժանուած՝ խնդալով, կատակներ անելու,
զալիս են փարախը և սպասում են հօտի վերադառնա-
լուն արօտից:

27. ԳԱՐՆԱՆ ԳԱՆՈՒՍՏԸ

Անցաւ ձմեռը, եկաւ վառ գարուն,
Ջարթեց իւր քնից ամբողջ բնութիւն.
Ամեն առարկայ շունչ-հոգի առաւ,
Եւ սիրոյ ողջոյն գարնանը տուաւ:
Օդը մաքուր է, արեւը պայծառ,
Կանաչ են դաշտեր, սար, հովիտ, անտառ.

Եւ սրլսրլալով գեփիւռը մեղմիկ,
Գալար բոյսերին ասում է նանիկ:
Ահա արտոյտը դայլայլիկներով
ձեղքում է օդը քնքուշ թևերով,
Եւ սիրով վառուած քաղցրաձայն սոխակ
Գտել է վարդին, երգում անուշակ:

Սարերի գլխի ձիւները յստակ
Հալում են, կազմում կարկաշուն առուակ.
Նորա ափերին գոյն-գոյն ծաղիկներ
Ներկայացնում են հրաշալի պատկեր:
Ժայռի կատարին, քարին տուած թինկ,
Նստած է հովիւն, սուլում է սրինգ,
Ու նրա չորս կողմ փռուած այժ, ոչխար,
Կարծես թէ բռնած լինին սիրուն պար:

Այսպէս ամեն տեղ խինդ ու ցնծութիւն,
Ուրախ են մարդիկ, ուրախ բնութիւն.
Գարունը բերաւ անուշ եղանակ,
Վանեց ծուլութիւն, շնչեց աշխատանք:

28. Ա Ռ Ա Ի Օ Տ

Առաւօտ է: Ամենքը շարժողութեան մէջ են: Գիւղացիներն արդէն զարթել են այն փոքրիկ թռչնիկի ձայնից, որ գալիս նստում է երգիքների վրայ ու կանչում. «Լծէ, լծէ»: Նրանք արդէն լծել են իրանց եգներն ու գոմէշները և բաւական վարել են գետինը: Տների մէջ մատակներն ու կովերը կթել են: Ոչխարների հօտն էլ դաշտումը մատղաշ արօտներից արդէն մի քաղցր նախաճաշ է արել: Տանտիկինն էլ կովերն ու հորթուկներն է դուրս հանում:

Գիւղի աղջկերքը խումբ-խումբ գնում են դէպի կանաչ մարգագետինը, ծաղիկները կոխելով, ծաղիկներ քաղելով և իրար վրայ ածելով, ծիծաղելով, խայտալով: Նրանք հանդիպում են կաքանների երամին, լորին, արտուտիկին, որոնք խոտերի տակից թռչկոտում են թփից թուփ, ուզենալով իրար նմանուել, դու ասա՛ աղջկերքը թեւաւոր թռչուններին, թէ՛ թռչունները ոտնաթռիկ աղջրկանց: Նրանք անցնում գնում են առաջ՝ բանջարներ ժողովելու և կանչելու, աղջկերքը՝ «քա՛, քա՛», կաքանները՝ «գա՛, գա՛»:

Կռունկը երամով կարաւան է կազմել սլաքաձև, օղի բարձր տեղերովն անցնելով՝ «կռո՛ւ, կռո՛ւ» է կանչում: Ծառայ եմ ձայնին:

Երկարասրունք արագիւր կտուցը սրած՝ բոյնից դուրս

է եկել, «հօդ, հօդ» ձայնելով՝ դէպի դաշտն է վազում՝ ջրի ու ցամաքի օձերը բռնելու և սպանելու:

Կոյր բուն այս ժամանակ իր համար մի բոյն է որոնում, որ ծածկուի այնտեղ, վերջացնելով իր «վայ, վայ-ն, որով սզում էր գիշերը, մի չորացած ծառի կամ գերեզմանաքարի վրայ նստած:

Ձկնկուլը գետերի ափերն է վազում ու «ձը՛կ, ձը՛կ» կանչելով՝ ձուկ-մուկ է որոնում՝ կուլ տալու:

Բաղն ու սագը ջրերի վրայ նստած՝ կայտառ նաւավարների պէս թռվում են ու երգում:

Սանրակատար յոպուպը անհանգիստ ոստոստում է և անդադար աղաղակում. «յոպ-յոպ»:

Գեղնապուրտիքը փափուկ ու մաքուր, ճերմակ ու դեղին շորեր հագած՝ փոքրիկ մացառների ու թանձր խոտերի միջից գլխիկը ցոյց տալով ու թագցնելով՝ իր ձայնն է լսեցնում:

Սոխակի ձայնն էլ լսում է բոլոր երգողների ձայների հետ և ամեն լսողի ուշք ու միտքը վերացնում:

Բարբարոս բազէն որոտացող ձայնով վեր ու վայր է սլանում՝ մի անմեղ ու անզգոյշ աղաւնի կամ տատրակ պատառոտելու:

Անգղները, ձրի ապրող քիւրդերի պէս, մի սպանուածի հոտ առել, գնում են նրա գիակի մսերը կողոպտելու: Ահա արծիւն էլ երևում է. նրա հզօր թևերի բաղխումից օդը շառաչելով պատուում է. բոլոր թռչունները միանգամից լուռ են, մինչև անցնի հեռանայ այդ անեղ ու փառահեղ թագաւորը:

29. Լ Ո Ւ Ս Ա Դ Է Մ Ի Ն

Ապատ ծովը կաշկանդել էր մառախուղ.
Քամին փրչեց—և նա ցլրուեց, որպէս ծուխ.

Քամին ճամբին ասաց անշարժ նաւերին.
 «Լուսադէմ է, առագաստներդ թող բացուին»:
 Եւ հասնելով ծովի եզերք, նա ուժգին՝
 «Ելէք, ելէք»—գործի կոչեց ամենքին:

Անտառի խորք սըլանալով՝ շրջընջաց.
 «Ջարթիր, անտառ, կանաչ կուրծքդ շուտով բաց»:
 Թըռչնիկների աչքից խըլեց անուշ քուն.
 «Երդէք»—հընչեց նորա շունչը հովասուն.
 Թըռաւ նա գիւղ, գոչեց. «Վեկ կաց, գիւղի մարդ,
 Լոյսը բացուել, քեզ են մընում դաշտ ու արտ»:

Հասկին ասաց, սըլանալով արտի մօտ.
 «Լըցուիր, լըցուիր, քեզ ժըպտում է առաւօտ».
 Ջանգակատան նա հասնելով՝ քաղցրալուր
 Սուլեց. «Ժամկոչ, առաւօտեան գանգը տո՛ւր».
 Բայց երբ մըտաւ գերեզմաննոցն անբարբառ՝
 Խուլ հառաչեց ու ասաց.
 «Քընէք հանգիստ, մեռեալ մարդիկ, քա՛ր աշխարհ.
 Ձեր ժամը դեռ չէ հասած»...

30. ԴԱՐՆԱՆ ՄԵՃ ՏՕՆԵՐԸ

Ծաղկազարդը մի շատ ուրախ կիւրակի է, մանաւանդ
 երեխաների համար. նրանով է սկսում գարնանային մեծ
 տօները մի շարք. նա բերում է փոքրիկներիս համար
 շատ թանկագին գուարճութիւններ: Դեռ շաբաթ երեկոյ-
 եան ես անհամբեր սպասում էի հօրս տուն գալուն: Նա
 պիտի բերէր ինձ համար նոր կօշիկներ՝ վաղ-առաւօտեան
 եկեղեցի գնալու համար, և բացի զրանից մի բան, որ

ամենից շատ էր հետաքրքրում ինձ: Ամբողջ օրը ես նա-
 խանձելով տեսել էի, թէ ինչպէս իմ ընկերներն ուրախ-
 ուրախ վազվզելով ճոճոացնում էին փոքրիկ ճոռանները:
 Կարծես նրանք իօսք էին տուել, որ այդ օրը ինձ լաւ
 տանջեն: Հէնց որ մօտենում էի մէկին, խնդրելով ցոյց
 տալ ճոռանը, որպէսզի գոնէ տեսնեմ նրա բարակ լե-
 գուակը, ատամնաւոր թօփը, նա քթիս առաջ պտոյտ էր
 տալիս այդ աղմկաշատ գործիքը և իսկոյն յետ փախչում,
 հեռու կանգնում և ուշադրութիւնով սկսում էր զննել ճրո-
 ռանի բոլոր մասերը: Ես մնում էի գլխակոր կանգնած,
 քիչ էր մնում որ լաց լինէի: Մտնում էի տուն, բայց չէի
 կարողանում մի ժամ հանդարտ նստել. հէնց որ ականջիս
 էր հասնում խմբովին ճոռոցը, մոռանում էի ամեն ինչ:
 Դուրս էի վազում և էլի նոյն կերպով հեռուից մտիկ էի
 տալիս ընկերներին:

Մի կերպ այդ օրը մթնացրի: Հօրս գալու ժամանակն
 էր. նրան սպասում էի մեր տան դռների մօտ: Վերջա-
 պէս լսեցի նրա քայլերի ձայնը, վազեցի, գնացի առաջը
 և սկսեցի հետաքրքրութիւնով տնտղել, թէ ինչ ունի ձեռ-
 քին: Բայց նա ոչինչ չէր ասում, նայում էր ինձ և ժըպ-
 տում: Որքան սառնասիրտ էր հայրս. միթէ չգիտէր, թէ
 ինչպէս էի օրը մթացրել: Նա էլ, կարծես, ուզում է ինձ
 պատժել: Հարցնում եմ, թէ բերել ես ճոռանս. հարցնում
 եմ երկու անգամ, երեք անգամ, բայց նա շարունակ ժըպ-
 տում է: Պնդասիրտ հայրիկ: Նա մտնում է տուն, նըս-
 տում է օթեակի վրայ. ոչինչ, ոչինչ չի բերել... կատա-
 ընալ յուսահատութիւն: Ես կանգնած եմ մի անկիւնում
 և յօնքերս կիտած՝ աչքիս տակով շարունակ նայում եմ
 նրան. սիրտս եռ է գալիս. ես վճռել եմ երկար լաց լի-
 նել, եթէ նրա բերանից «չէ» դուրս գայ: Տէր Աստուած,
 էրբ պիտի խօսէ...

Մայրս, որ ամբողջ օրը յուսադրել էր ինձ, հասկանում էր ցաւս. նա յայտնեց հօրս, որ այլևս ինձ չնեղացնէ. եթէ մի բան բերել է, դուրս հանէ: Թող սովորի համբերող լինել, ասաց նա վերջապէս և ձեռքը տարաւ դէպի գրպանը: Սիրելի հայրիկս: Նա դուրս հանեց ճռռանը և ծիծաղելով մեկնեց դէպի ինձ: Մի ակնթարթում դուրս թռայ մթին անկիւնից, խլեցի սիրածս առարկան:

Ծաղկազարդի շաբաթ օրը կարծես նոր լուսացաւ ինձ համար: Չեռս առայ կոթը և որքան ուժումս կար, սկսեցի պտտացնել: Չայնը լաւ էր, շատ լաւ. անխ, եթէ այդ ընկերներս... Բայց հայրս հրամայեց լռել. նոյնը կրկնեց և մայրս, աւելացնելով՝ թէ բունի մէջ հանգստացող հաւերը լսում են ձայնը, այլևս ձու չեն ածիլ: Ես կատարեցի նրանց հրամանը. սկսեցի լուռ տնտղել ճռռանիս ամեն կողմերը. ճարտարարուեստ շինուածք չէր, բայց որքան բարձր ձայն էր հանում: Այնքան գերել էր ինձ այդ խաղալիքը, որ մինչև անգամ չէի նկատել, թէ ինչ էր անում հայրս. իսկ նա վաղուց հանել էր ոչ միայն նոր կօշիկներս, այլև իմ նոր արխալուխացուն, որ մի խայտաբղէտ չիթ էր: Երբ տեսայ և այդ իրերը, էլ ոչինչ ցանկութիւն չմնաց իմ մէջ, միայն թռուչել այդ ընկերներս մօտ, ցոյց տալ իմ իրերը և տեսնել նրանցը:

Վերջապէս մենք քնեցինք. պէտք էր առաւօտը շուտ վեր կենալ՝ եկեղեցի գնալու համար: Բայց ինչպէս բաժանուեմ ճռռանից: Ես նրան դրի ծոցումս: Երազումս էլ տեսայ նրան և բաւական ժամանակ ճռռացրի: Այդ քաղցր երազը գեռ չէր վերջացել, երբ մայրս զարթեցրեց ինձ, ասելով՝ թէ օրը բացուել է:

Եկեղեցու մէջ այրւում էին հարիւրաւոր ճրագներ. ես գօռով ճանապարհ բաց արի մարդկանց միջով և մի ան-

կիւնում կուշ եկայ. ձեռքս շարունակ գրպանումս էր՝ ճռռանիս լեզուակի վրայ: Երբ «Փառք ի բարձունս» սկսեցին, իսկոյն դուրս հանեցինք և սկսեցինք ճռռացնել. ես լաւ դիտէի, որ իմս ամենից լաւ էր ձայն հանում...:

Երկու օրից յետոյ չորեքշաբթի էր: Մայրս լողացրեց ինձ, գլուխս սանրեց, հագցրեց նոր արխալուխս: ճռռանի ժամանակն անցել էր, այլևս դիւր չէր գալիս մեզ. նրա փոխարէն կար մի ուրիշ ուրախութիւն. մենք պիտի գնայինք մի սուրբի տակ, որ գտնուում է Չուշի քաղաքի մի ծայրում ու կոչւում է Քամու-խաչ:

Մի մեծ բազմութիւն կար այնտեղ: Մարդ ու տղայ, կնիկ ու աղջիկ խառնուած էին միմեանց հետ. միմեանց հրում էին, ամեն մէկն աշխատում էր առաջ անցնել և ամենից շուտ վառել իւր մոմը և կպցնել սպիտակ քարին: Ես էլ մօտեցայ մօրս հետ: Սպիտակ քարի վրայ մէկը դրել էր թարմ կապուտաչեայ մանուշակներ ի մի փոքրիկ փունջ: Գարնան փութահասիկ կարապետները, այդ համեստ ծաղիկները, կարծես ասում էին, թէ իրանք էլ շատ ուրախ են, որ կարողանում են մարդկանց ժպիտը գրգռել: Իսկ վերեւից լուսաւորում էր ապրիլի հեզիկ արեգակը: Նա էլ, կարծես, ժպտում էր. ուզում էր ցոյց տալ, որ թէև հինգ ամսուայ միջոցում յաղթուած էր սպիտակագգեստ ծերուկից, բայց մի քանի օրուայ մէջ իրանն արաւ՝ թաց գետինը չորացրեց, մարդկանց տաքացրեց, թռչուններին հանեց ծառերի կատարները, որ այնտեղ զօրւածի պէս ճովրռան:

Ուխտի ժամանակ հանդիպեց հօրաքոյրս, որ բերել էր և փոքրիկ աղջիկը: Բաւական չէ՝ որ երեսիցս մի քանի անգամ պինդ համբուրեց, նա վեր առաւ ինձ և տա-

բաւ իրանց տուն, ուր մնացի մինչև միւս օրուայ իրիկ-
նապահը. յետոյ գնացինք եկեղեցի և մի-մի փոքրիկ փա-
թեթ կարագ-իւղ ստացանք: Ես վագեցի տուն, գրկեցի
մօրս և իւղը դրի նրա ձեռքում. նա նախ իւր աչերն
օծեց, ապա իմ ամբողջ երեսն ու մազերը:

—Օրհնած իւղ է, զօրաւոր է, ասաց նա:

Նոյն երեկոյեան հայրս ու ժայրս գնացին եկեղեցի.
ինձ մօտ մնաց մեր հարևանի աղջիկ Մարթան, որ ինձա-
նից չորս տարով մեծ էր: Երկար խօսեցինք, ծիծաղե-
ցինք և յետոյ վերցրինք այն մեծ ու խոր գաւաթը, որի
մէջ մայրս պահում էր մեր հաւերի ձուաները: Համրեցինք
երկու անգամ: Հինգ անգամ տասը և վեց հատ ձու էին
ածել մեր հաւերը: Մի օրից յետոյ դրանք բոլորը պէտք
է կարմրեն: Երբ պէտք է լուսանայ այդ օրը:



Առաւօտեան մայրս չթողեց որ գլուխս սանրեմ:

—Այսօր ոչ սանրի ձեռք կը տան, ոչ սապօնի, ոչ
ասղի, ասաց նա.—այսօր շարշարուել է մեր Քրիստոսը.
անիծուած օր է:

Իրաւ ուրբաթ օրը ոչ ոք չէր բանում. միայն մեր
հարևան դարբինը, կէս օրին մօտ, մի քանի անգամ գար-
կեց մուրճով իւր մեծ սալին: Ճաշից յետոյ մայրս մի
փոքրիկ պողպատէ մատանի դրեց մատս և ասաց, որ այդ
օրը շինած պողպատէ մատանին չարից կը պահպանէ:

Մի այդ տեսակ մատանի էլ նա ունէր իւր մատի վրայ:

Երեկոյին էլի գնացինք եկեղեցի: Որքան տխուր էր
այդտեղ: Սև վարագոյր, մի քանի հատ մօմ, մի սև սե-
ղան, որ դրած էր բեմի առաջ, ծածկած սև թաւիշով և
նրա վրայ սև շրջանակների մէջ դրած մի մեծ պատկեր.
ամեն ինչ սև էր. բահանաների շուրջառններն էլ սև էին:

Ոչ ոք ձայն ու ծպուտ չէր հանում: Մայրս հասկացրեց,
որ այս օր սգի օր է. պէտք է խելօք մնալ: Ժամից յետոյ
նա տարաւ ինձ մեծ սև պատկերի առաջ. ես համբուրե-
ցի մեծ խաչը և յետ դարձայ:



Դեռ մինչև եկեղեցի գնալը՝ երկինքն սկսել էր պղզ-
տորուել. ճրագվառոցին ամպերը բոլորովին ծածկեցին
կապոյտ երկնակամարը. մինչև անգամ մի քանի կաթիլ
անձրև էլ եկաւ:

«Դէհ, վերջացաւ», ասացին ամենքը դժգոհութեամբ:
Եօթը երկար շաբաթներ սպասել էինք, որ այս մի երկու
օրն ուրախանանք: Մենք էլի ուրախ կը լինէինք, բայց
անձրևը և մանաւանդ ցեխը պիտի արգելեն տանից դուրս
գնալ. իսկ չորս-հինգ ամիս շարունակ մենք փորձել էինք,
թէ ինչ տխուր բան է տանը նստելը: Ես անհամբեր ականջ
էի դնում, թէ երբ կ'ընդհատուի անձրևի մեղմ խշշոցը:
Բայց երկար չկարողացայ, այնքան այդ մի քանի օրերը
վազվզել էի, որ նստած տեղս քնեցի. չեմ յիշում, թէ
ինչպէս էին դրել անկողնիս մէջ:

Առաւօտեան զարթնելուս պէս, նայեցի պատուհա-
նին. երկինքը բոլորովին պարզ էր. հեզաստ արեգակը
բաւական բարձրացել էր: Ուրախ-ուրախ վեր կացայ,
հագնուեցի, որ դուրս գնամ: Խոհանոցում մայրս սաս-
տիկ զբաղուած էր. երբ մտայ այնտեղ, երկար տախտա-
կի վրայ շարուած էին կարմիր ձուերը:

«Կարմիր ձու, կարմիր ձու», գոչեցի ես՝ համարեա
պարելով: Մայրս երկու հատ տուեց ինձ՝ պատուիրելով,
որ պահեմ մինչև երեկոյ:

Ես վագեցի մեր տան մօտ դանուղ փողոցը: Զար-
մանքից ձեռքերս տարածեցի և մի քանի բոպէ մնացի

սառած: Աշխարհը, կարծես, ուրիշ տեսակ էր դառել. փողոցը բոլորովին սևացել էր. մարդկանց խմբեր յետ ու առաջ էին գնում, խօսում էին բարձրաձայն, ծիծաղում էին. որը ձուկն էր տանում, որը իւղ, որը թաշկինակի մէջ բրինձ կամ միրգ: Երբեմն-երբեմն երևում էին փոքրիկ գիսակաւոր, խարտեաշ, կապուտակ գառնուկներ. ճրքան փոքր էին. նրանք մայում էին անուշ մանկական ձայնով: «Ջան, ջան», ասում էինք ամենքս և վազում, ձեռքներս դնում էինք նրանց փափուկ մէջքներին կամ բռնում էինք փոքրիկ դնչներից. իսկ նրանք «մա-մա» անելով վազում էին իրանց տէրերի առջևից: Ե՛ւ մարդկանց ձայները, և՛ գառների մայիւնը, երեխաների խաղերը, օդը, արևը, այդ ամենը ցոյց էր տալիս, որ մի ուրախութիւն կայ, մի մեծ տօն, որին երկար սպասել են ամենքը:

Կէս օրից յետոյ մեր հարևան Ծաղիկ տատը կանչեց ինձ և մի քանի ընկերներին ու ցոյց տուեց իրանց համար գիւղից եկած թուխ գառը. յետոյ իւր թոռ Սարգըսին էլ մեզ հետ դրեց և պատուիրեց որ գառը զգուշութիւնով տանենք, արածացնենք: Մեզանից հեռու չէր կանաչազարդ դաշտը. շուտով հասանք այնտեղ ուստոտալով, թռչկոտելով: Մենք գտանք այնտեղ ուրիշ շատ գառնուկներ և երեխաներ: Կանաչ խոտի վրայ խաղ սկսեցինք. բաւական տանջեցինք փոքրիկ հեզ կենդանիներին: Այդպիսով չէինք նկատել, որ արեգակը մայր մտնելու վրայ է: Ես վազեցի տուն, մայրս իսկոյն եկեղեցի դրկեց. ինքը շատ զբաղուած էր. ձուկն էր եփում, փլաւի բրինձն էր թրջում, իւղ էր հալում...

Եկեղեցի մտնել չկարողացայ՝ տեղ չկար բոլորովին.

կանգնեցի շէմքի մօտ և բերանաբաց նայում էի ներսին, կարծես եկեղեցում արև էր ծագել, այնքան շատ մոմեր էին վառել: Ի՛նչպէս անոյշ ձայն էին տալիս աշակերտները, ի՛նչպէս ամենքն ուրախացան, երբ նոցանից մինը բարակ ձայնով՝ «Քրիստոս յարեաւ» ասաց: Չէնց որ մի քիչ նշխարը ստացայ, վազեցի տուն: Կէս ժամից յետոյ սեղան նստեցինք. սկսուեց ամենից մեծ, ամենից փառաւոր տօնը, սկսուեց Հայոց Ջատիկը: Մութն սկսելուց «ետոյ՝ այստեղից-այնտեղից սկսեցին հրացաններ արձակել: Այդպիսի ճարճատիւն լսել էինք և բարեկենդանի վերջին կիւրակի երեկոյին. այն ժամանակ ուտիսն էին հալածում, իսկ այժմ պասը: «Ամեն բան իւր ժամանակին», կարծես ասում էին այդ հրացանները պլպլուն աստղերի տակ: Դեռ նոր էր սկսել Ջատիկը, բայց ճրքան ուրախ էին մարդիկ: Դու տես վաղը և միւս օրը, թէ ինչե՞ր պիտի անենք:

31. * * *

Յոյուն աստղերը կապոյտ երկնքում երգում են անուշ միասին խմբուած, եւ զգուշութեամբ կամաց են երգում, Որ չզարթեցնեն երկիրը նիրհած: Ա՛խ, ամբողջ օրը շրջող ոտներից, Անվերջ աշխատող կուռ բազուկներից, Ամուր բարախող մարդկանց սրտերից Խեղճ մայր-երկիրը սաստիկ է յոգնած:

32. ՄԱՅԻՍՈՒԱՅ ԽԱՂԸ

1

Անուշաբոյր և պարզ առաւօտը յաշորդեց գարնանային կարճ գիշերին: Բոցավառուած աղօթարանը ողողել էր բարձր բլուրների ու ծառերի գագաթները մի կախարդական բոսորային լոյսով: Մայիսուայ հովիկը փչում էր անդադրում: Թռչունները նոր-նոր սկսում էին զարթնել և բաց անել իրանց փոքրիկ բերանները:

Հարաբաղի Գ... գիւղի մօտ մի արօտատեղում շինուած էր անասունների համար մի երկար սև գոմ: Գոմի մաքրած բակում Ասլանը հաւաքեց գառները և մի հաց դնելով պսակի մէջ, կապեց իւր մէջքին ու ճանապարհ ընկաւ դէպի ցած, դէպի գետակը: Առաւօտեան թարմ օդը մրսեցնում էր. գառները խայտալով վազում էին, բարձր սցսելով բարակ փոշի, մայում էին և երբեմն դարձնում էին իրանց փոքրիկ գլուխները դէպի այն կողմը, ուր մնացել էին իրանց մայրերը: Նրանց հետ դէպի յետ էր նայում և Ասլանը. այդ ժամանակ աղօթարանը նրա սևացած, նիհար դէմքը կարմրացնում էր իւր փայլով: Գետակի սառնորակ ջրերը կտրելով, գառներն անցան հանդիպակաց գառիվայրերով: Ասլանը ջրից մի քանի բուռ երեսովը տուաւ և, վերցնելով փափախը, սկսեց նրանով սրբել իւր դէմքը... Նա գառները քշեց դէպի մի ծառագարդ բլուր, որ կոչւում էր «Եղցուն-թալայ»: Ճանապարհն անցնում էր Գ. գիւղի գերեզմանատան մօտով:

Ասլանը իննը տարեկան մի որբ էր, անհայր ու անմայր: Անձ մի տարի էր, որ նա ծառայում էր իրանց գիւղի հարուստներից մէկի՝ Հայրապետի մօտ: Նրա մայրը մեռել էր եօթն ամիս առաջ, թողնելով աստուածա-

սէրների խնամքին իւր տասն ամսական աղջիկը, Նազուանունով: Բայց այդ փոքրիկ ու սիրուն որբիկը չապրեց առանց իւր մօրը: Նոյն աստուածասէրները, որոնք իրանց տան մէջ մի փոքրիկ անկիւն էին տուել Նազուին, մարտի մի ցուրտ ու տխուր օր դրին նորան մօր ծոցում: Այնուհետև Ասլանը մեռակ էր աշխարհի մէջ, բոլորովին մեռակ: Նա հաց էր ուտում իւր աշխատանքով: Յերելով նորա ընկերներն էին անասունները. գիշերները քնում էր մի մութ անկիւնում:

Գառները կանգ առան Գ...-ի գերեզմանատան մօտ և սկսեցին քաղել գերեզմանաքարերի մէջտեղում բուսած կանաչ խոտը: Ինքն Ասլանը նստեց մի քարի վրայ, փոքրիկ ցուպը դրեց կողքին: Երկար նայում էր մի գերեզմանի, որ քար չունէր և ոչ մի յիշատակարան. մի լայն, սև ապառաժի կտոր միայն ծածկում էր մեռեալի կուրծքը: Հովուի աչքերը հետզհետէ սկսում էին թացանալ: Այդ անշուք, աննկատելի հողակոյտը իւր մօր գերեզմանն էր. աջ կողմին նկատելի էր ուրիշ փոքրիկ գերեզման. կանաչ խոտը մի գեղեցիկ թաւշի պէս ծածկել էր այդ գերեզմանները և մի զանգրահեր կարմրախայտ գառնուկ արածում էր այդտեղ, փոքրիկ ոտը դրած գերեզմանի գլխին:

2

Եղցուն-թալան շրջապատուած է մի փոքրիկ անտառով: Արևելեան կողմից նա վերջանում է մի ուղղաձիգ քարքարոտ գառիվայրով, որ պարսպի նման իջնում է դէպի մի նոյնպէս քարքարոտ ու նեղիկ ձոր, որի յատակը քերում է Գ...-ի անանուն գետակը: Գարնանը այդ բարձրութիւնը զարգարւում է ամենահարուստ կանաչներով. խոտը հասնում է մինչև գօտկատեղը, անհամար դե-

դին ծաղիկներ լցնում են օդը սուր անուշահոտութեամբ։ Վաղուց այդտեղ գիւղացիք անասուն չէին արածացնում, և այդ բանը ունէր իւր պատճառը։

Եղցուն-թալա անունը այդ բարձրութիւնն ստացել է մի հին աւերակ եկեղեցուց, որի մամռապատ քարերը թափուած են անտառի մէջ։ Մեծ-մեծ ծառեր են բուսել եկեղեցու տեղը, որ որոշուում է ցածրիկ պատերի հազիւ նկատելի հետքերով։ Անվնաս է մնացել միայն եկեղեցու արևելեան պատի մի փոքրիկ կտորը՝ կազմուած մի մեծ սև քարից, որի վրայ քանդակուած է մի մեծ խաչ։ Այդ խաչ-քարը ծմակի և արօտատեղի սահմանումն է կանգնած և հովանաւորուած է երկու ծառերով։ Դ... գիւղացիք այդ տեղը սուրբ են համարում և այնտեղ նախիր չեն քշում։ Հայրերից լսած են, որ սուրբը պատժում է այդտեղ գնացող անասուններին։

Բայց Ասլանը որքան սիրում էր եղցուն-թալան։ Մայիսի սկզբից ամեն օր իւր գառներն այդտեղ էր բերում։ Պառկում էր խաչ-քարի մօտ, բարձր խոտի մէջ, և մինչդեռ գառները հանգիստ ուտում էին քաղցր խոտը, ինքը, աչքերը յառած երկնքին, կարծես մոռանում էր, թէ ո՞վ է ինքը և ինչ բան։ Մեղմ ու պարզ արևի լուսով որքան հիանալի էին այն երեք գոյները, որոնք մըցում էին միմեանց հետ. կապոյտը, կարծես, ասում էր, թէ ինքն է ամենից բարձրը, ամենից գեղեցիկը. կանաչը որպէս թէ հաստատում էր, թէ կապոյտը առանց իրան գեղեցիկ չէ իսկ համեստ դեղինը այնքան բարձր չէր գնում. նա շատ բաւական էր, որ իւր օգնութեամբ կանաչը աւելի էլ գեղեցկանում է, իսկ կապոյտը առանց ժպիտի չի նայում իրան։ Ասլանը գիտէր, որ ամեն մի գոյն այսպէս էր խօսում, բայց ոչ ոքի իւր մտքում բացարձակ առաւելութիւն չէր տալիս. նա գիտէր, որ ամենքն էլ գեղեցիկ են՝

թէ կապոյտ երկինքը, թէ կանաչ խոտը և թէ նրա մէջ փռուած դեղին խոշոր ծաղիկը։ Եւ այդպէս վճռելուց յետոյ՝ նա նայում էր իւր փոքրիկ գառներին, տեսնում էր, որ նրանք էլ նոյնպէս գեղեցիկ են, ինչպէս միւսները։ Իսկ մի թէ պակաս գեղեցիկ էր այն սպիտակ ամպի կտորը, որ դանդաղ լողում էր կապոյտ կամարի տակ. ինչպէս քամու խաղալիք դառած մի փետուր, այդ ամպիկը կըտրում էր իւր խոտորուն ճանապարհը երբեմն մաս-մաս կտրատուելով, երբեմն ձգձգուելով և զանազան ձևեր ընդունելով։ Մէկ էլ տեսար, որ տեղից որ է, մի թռչուն՝ թևերը տարածած, սլանում է դէպի վեր, դէպի այն աներկիւղ նաւորդը, և երբ նայողի աչքի առաջ մի կէտի մեծութիւն է ստանում, սկսում է ճախրել։ Իսկ այստեղ, ցածրում, այս բարձր խոտերի, այս փոքրիկ թումբերի վրայ թըթռում, խայտում են քանի-քանի տեսակ թիթեռնիկներ և կտրում են օդը զանազան ուղղութիւնով։ Ո՛րքան անհանգիստ են նրանք, որքան եռանդոտ...

Այդ օրը, երբ մեր փոքրիկ հովիւը՝ իւր մօր գերեզմանից կշտացած, եկել-նստել էր իւր սովորական տեղը, հին խաչ-քարի մօտ, արևը աւելի ևս քաղցրաժպիտ էր, օդը աւելի մաքուր, հանդարտ։ Երկնքի մի ծայրում, բարձր սարի գլխին, անշարժացել էր մի ամպ։ Դա սովորական թեթև ամպերից չէր, այլ գորշ էր և սևագոյն. նա հետզհետէ լայնանում էր։

Ասլանի մօտ նստած էր նոյն կարմրախայտ զանգրահեր զառը, որ առաւօտեան արածում էր նրա քրոջ գերեզմանի մօտ։ Դա մի շատ սիրուն գառնուկ էր, սպիտակ ճակատով և սպիտակ ոտիկներով։ Մեծ աչքերին երկար նայելիս՝ Ասլանը հաւատում էր, որ նա էլ իւր հետ մտածում է մի բանի մասին, ուզում է իւր հետ խօսել։ Ասլանը նրան ամենից շատ էր սիրում, միշտ փայփայում

էր նրա փոքրիկ գլուխը. ամեն մի աղբիւրի և գետի մօտ լուանում էր նրա ոտները. իսկ գիշերները պահում էր իւր մօտ, քնում էր նրա գլուխը գրկած: Այդ վառ սիրոյ պատճառն այն էր, որ գառնուկի աչքերը իւր քոյր նազլուի աչքերի նման էին: Նոյն խոնարհութիւնը, նոյն անմեղ հայեացքը, նոյն սիրունութիւնը կար և նազլուի աչքերի մէջ:

Արեգակն այնքան բարձրացաւ, որ խաչ-քարի վրայ տարածուած ճիւղերի շուաքը կարճացաւ: Կէսօր էր. Ասլանը հանեց իւր հացը, սկսեց ճաշել: Այդ աղբատիկ ճաշից բաժին էր տալիս և իւր սիրելի գառնուկին. իսկ երբեմն համբուրում էր նրա փոքրիկ դունչը:

3

Կէսօրն անցաւ:

Սարի գլխին երկար ժամանակ անշարժացած ամպը լայնանալով՝ հետզհետէ սկսեց բռնել երկնքի արևմտեան մասը. նրա հսկայական շուաքը ընկել էր ամենի սարերի և դաշտերի վրայ: Ասլանը, իւր ճաշը վերջացնելով, իջաւ բլրի ստորոտը՝ աղբիւրից ջուր խմելու համար: Հակառակ սովորութեան՝ գանգրահեր գառը չգնաց նրա ետևից, այլ մի կողքի վրայ ընկած մնաց և, իւր անմեղ աչքերը դէս ու դէն ման ածելով, հանդարտ որոճում էր: Միւս գառներն էլ, գանազան տեղեր նստոտած, հանգստանում էին:

Դեռ Ասլանը չէր հասել աղբիւրին, երբ հեռուից մի թոյլ դղրդիւնի ձայն լսուեցաւ: Զուտով տեսանելի եղաւ նաև կայծակի թոյլ լոյսը:

Սկսւում էր մայիսուայ փոթորիկը:

Ասլանը շտապեց դէպի աղբիւրը, որ շուտով էլի յետ դառնայ իւր գառների մօտ, բայց անձրևը նրանից շատ էր շտապում:

Փշեց մի հանդարտ, բայց ցուրտ քամի: Դաշտային ծիծեռնակները բոլորովին գետնի վրայով էին թռչում: Դիմացի սարը ծածկուեց մի բարակ մառախուղով, որ արագ-արագ ցած իջնելով, տարածուեց ամեն կողմը: Երկինքը բոլորովին սևացաւ. ամպրոպը աւելի և աւելի մօտենում էր. կայծակի կռամանները աւելի երկար էին և պայծառ: Բայց այդ իսկ ըուպէին երկնքի արևելեան մասը բոլորովին պարզ էր, և նոյնպէս գեղեցիկ ժպտում էր, ինչպէս առաւօտը: Այդ բանը խաբեց Ասլանին: Նա շըշտապեց վեր ելնել իւր գառների մօտ, այլ հանդարտ քայլեց գառիվայրով: Բայց յանկարծ անձրևի խոշոր կաթիլներն սկսեցին մինը միւսի ետևից սաստիկ արագութեամբ զարկել ծառերի տերևներին: Ապա մի ըուպէ բոլորովին դադարեց անձրևը, մինչև իսկ ամպերի մէջ երևեցաւ մի փայլուն շերտ. կարծես շուտով այդտեղից պիտի նայէր արեգակը:

Ասլանը կանգ առաւ, դէմքը դարձրեց դէպի արևմուտք. բարակ մառախուղը արդէն հասել էր բլրի ստորոտներին: Միևնոյն ժամանակ հեռուից աւելի և աւելի պարզ էր լսւում անձրևի աղմուկը: Մի ըուպէ շանշած՝ Ասլանի գլխի վրայ սկսեցին փայլել ահռելի կայծակներ: Օդը աւելի և աւելի թանձրանում էր. դժուարանում էր շնչառութիւնը. քրտինքը առատօրէն դուրս էր տուել Ասլանի դէմքի վրայ: Որոտոցները, մինը միւսից մեծադղորդ, սկսեցին այնպէս յաճախ կրկնուել, որ այլևս անկարելի էր իմանալ, թէ երբ էր մէկը վերջանում և երբ միւսն սկսւում: Զանթալից ամպերը կուտակուել էին «եղցուն-թալա» բլրի վրայ: Մառախուղի բարակ քողը պատեց ծմակն ու արօտատեղին. ամենայնօրդ անձրև սկսեց շըշուալ:

Ասլանը վազեց, մի հաստաբուն ծառի տակ կուշ

եկաւ: Փոքրիկ որբին շատ էին վախեցնում երկնքի կրակն ու գորգուոցը: Օդը ցրտել էր: Մի ըոպէում գոյացան փոքրիկ վտակներ, որոնք աղմուկով վազում էին դէպի ձորից անցնող գետակը:

Քառորդ ժամից յետոյ անձրևը մեղմացաւ, բայց կայծակն ու ամպրոպը նոյն աներևակայելի արագութեամբ յաշորդում էին միմեանց: Ասլանը բարձրացրեց գլուխը, ուղեց վեր կենալ, նա յանկարծ յիշեց գառներին և նրա սիրտը լցուեց մի դառն տխրութեամբ: Բայց դեռ չէր կարողացել ոտքի կանգնել, երբ մի սոսկալի ճայթիւն շլացրեց նրան, վայր գցեց: Դա կայծակն էր, որ ցածրանալով դէպի երկիրը, զարկեց խաչ-քարի վրայ կանգնած ծառերին: Բարձրացաւ մի թեթև ծուխ և ծառի մի կէսը, ասես թէ սուր կացնի հարուածով, շառաչմամբ կախ ընկաւ: Այդտեղից մօտ էր այն փոքրիկ ծառախումբը, որի տակն էին փախել գանգրահեր գառն ու չորս ուրիշ գառներ: Հարուածի ձայնից փոքրիկները գծուածի պէս դէս ու դէն փախան:

4

Պայծառ արևը ծագեց մեծ սևաթոյր ամպի յետևից: Եղցուն-թալան զարդարուեցաւ բիւրաւոր գոյնգոյն գոհարներով: Այդ գոհարները կազմուել էին ջրի կաթիլներից, որ կախուել էին ամեն մի տերևից, ամեն մի խոտից: Մըսացնող հողմիկը կարծես թէ չէր եղել ամենևին. նրա տեղ օդի մէջ տիրեց մի սքանչելի գովութիւն: Ամեն ինչ կեանք առաւ. ծմակի միջից լսելի եղան մենաւոր թռչնակի դայլայլիկները, որոնցով, կարծես, փառաբանում էր արեգակի կրկին երևալը:

Ասլանը քիչ-քիչ սթափուելով, գլուխը բարձրացրեց, նայեց չորս կողմը: Ո՛րքան սիրուն, գեղեցիկ էր աշխարհը:

Երկինքը դարձեալ կապոյտ, արեգակը նոյնպէս գեղաժպիտ: Մի կտոր ամպ էր մնացել արևելքում և այդ կտորի վրայ կամարաձև ոլորուել էր գեղեցիկ ծիածանը: Ղարաբաղի խրոխտ լեռները, ինչպէս և միշտ, կարծես ձգտում էին իրանց դալարագեղ լանջերով հասնել-դիպչել երկնքի կամարին: Մի կէս ժամ տևեց այդ փոթորիկն ու անձրևը և այդքան կարճ միջոցում ինչքն չարաւ մայիսը: Այո՛, նա մի խաղ էր խաղացել, և այժմ դադարել էր խաղալուց. այժմ դարձեալ մայիսը նոյն մայիսն էր:

Մեր փոքրիկ հովիւը վեր կացաւ տեղից և վազեց դէպի խաչ-քարը: Նրա հայեացքը մի ըոպէում երևան հանեց գանգրահեր գառնուկի և չորս ուրիշների բացակայութիւնը: Մնացածները դուրս էին թափուել ծառերի տակից և զարմացած դէս ու դէն էին նայում:

Ասլանը աճապարեց գտնել կորածներին. մտաւ անտառ, դէս ու դէն վազեց, ձայներ արձակեց, բայց ոչինչ չտեսաւ: Նա արդէն յուսահատուել էր. արտասուքները խեղդում էին խեղճ որբին: «Ա՛խ, Աստուած, ո՞րտեղ են», գոչում էր նա հառաչելով և թուփերի տակերը խուզարկելով:

Նա էլի ետ դարձաւ խաչ-քարի մօտ. այլևս չգիտէր ինչ անելը: Եւ մինչդեռ մի յամառ անշարժութեամբ դիտում էր իւր ոտների տակի գետինը, յանկարծ նշմարեց գառների նոր հետքեր, որոնք մնացել էին մի անտառային նեղ կածանի սևահողի վրայ: Նա սոսկաց և դողաց: Այժմ միայն յիշեց, որ խաչ-քարը հարաւային կողմից շատ մօտիկ է սեպացած քարաժայռին. յիշեց և վազեց նեղ կածանով:

Չորակի գետակը մեծացել-ուռել էր և ասեղ ձայներ էր հանում, իւր պղտոր ջրերը նեղլիկ կողքերին զարկելով: Որքան և բարձր էր կոչում գետակը, բայց և այնպէս չկարողացաւ խլացնել մի սուր յուսահատական ճիչ,

որ արձակեց Ասլանը, երբ հասաւ ժայռի ծայրին: Այն տեղը, ուր նա կանգնած էր, ներկայացնում էր ժայռի վերին աստիճանը. դրանից քիչ ցած, քարի մի մեծ երկար կտոր, դուրս ցցուելով ժայռի ընդհանուր, պարըսպանման կազմուածքից, իւր տափակ խոտաւէտ մէջքով ներկայացնում էր երկրորդ աստիճանը: Հէնց այդ խոտաւէտ մէջքի վրայ Ասլանը տեսաւ երկու սատկած գառը: Երկար չմտածելով, նա սկսաւ ցած իջնել դժուարին խոռոչների միջով, ձեռները արիւնաթաթախ, տանջուած հասաւ այդտեղ:

Գանգրահեր գառնուկը ձգուած էր կողքի վրայ, վիզը երկարացրած, փոքրիկ ականջները կախ դցած: Ասլանը նայեց աչքերին, այլևս այն աշխոյժ, սիրուն աչքերը չէին, որ այնպիսի ուշադրութեամբ նայում էին իրան: Այժմ այդ աչքերն անկենդան էին, սպիտակուցի վրայ շուռ եկած, կարմրած: Բերանը արնոտ էր, փոքրիկ լեզուն ատամների մէջ սեղմուած, ուռած: Խեղճ երեխան այլևս չիմացաւ, թէ ինչ անի. զրկեց գառնուկի գլուխը և համբուրելով՝ սկսեց դառնապէս լալ: Երբեմն և «քոյրիկ» էր կանչում. կարծես այդտեղ նազուն էր ընկած: Կանչում էր և բաց անում մեռած աչքերը, յուսահատ նայում նրանց:

Այսպէս Ասլանը երկար մնաց, մինչև որ ժայռի գագաթին երևաց մի մարդ: Դա գառների տէրն էր, Հայրապետը, որ որոնում էր ամեն տեղ իւր կորած հօտը: Նա ձայն տուեց, իմացաւ ինչ է պատահել և հրամայեց Ասլանին վեր ելնել:

Արեգակը մայր էր մտնում, երբ Ասլանը հագիւ հագ քայլելով, գողալով ու լալով քշում էր իւր գառները: Նրա ետևից գնում էր Հայրապետը, անտանելի հայհոյանքներ թափելով խեղճ որբի գլխին, որ գեռ լաւ ծեծ էլ էր կերել:

5

Հասաւ գիշերը, հանդարտ, տաք, ճիշդ մայիսուայ գիշեր: Գ... գիւղի ծուռ ու մուռ փողոցներում թափառում էր մի փոքրիկ տղայ: Երկար դէս ու դէն շուռ գալուց յետոյ՝ նա մօտեցաւ մի հին մարագի, որ գիւղի ծայրումն էր և նստեց դռան մօտ: Երկար նա նայում էր երկնքին, և նրան թւում էր, թէ երկինքն էլ իւր անհամար աչքերով, իւր բոլոր աստղերով իրան էր նայում, միայն իրան: Երեխային չէր զբաւում գորտերի գիշերային երգեցողութիւնը, չէր վախեցնում բուռի միանման, ձանձրալի վայունը, որ լսում էր հեռու ու հեռու ծմակի խորքից: Նրան զբաւել էր աստղալից երկինքը. նա չէր կշտանում նայելուց. նա, կարծես, խօսում էր երկնքի հետ և երկինքը ուշադրութեամբ ականջ էր դնում նրան: Դա Ասլանն էր: Նրա տէրը արտաքսել էր նրան այն պատճառով, որ գառները տարել էր Եղցուն-թալան, խաչ-քարի մօտ, և հինգ գառն էր կոտորել...

33. ՏԱՊԱՆԱԳԻՐ ՄԱՆԿԱՆ

Հազար երանի քեզ, մանուկ անբիծ,
Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,
Ուր վաղուց ի վեր ունի բնակութիւն
Անմեղութեան հետ մոլի շարութիւն:
Բայց այն ո՞վ զիտէ, քեզ ինչ էր սպասում
Փրշոտ, տատասկոտ այս մեր աշխարհում.
Միթէ յաւիտեան պիտի մընայիր
Հանգիստ զըրկի մէջ քո մօր սիրալիր,
Կամ թէ յաւիտեան քեզ պիտի ժրպտար
Գարնան վարդի հետ այս օտար սշխարհ:

34. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԶՐՎԷԺԸ

Քրդերի վրանները վայր էին թողած հինաւուրց Արագած լեռան թմբանը, 2 ըրչըռ կոչուած ջրվէժի հորի գլխին:

Փոքրիկ գետակը, որ ոռոգում է ոչ միայն մերձակայ Ղաչափար գիւղի, այլև Աբարանու դաշտի միջանի գիւղերի հողեր, նաև կումաններ տալով, ձորակներ ձգելով, դաշտերով սլանալով, պահպանում է Արագածի արևելահարաւային ստորոտի մարդաբնակութիւնը, այդ փոքրիկ գետակն, ասում եմ, իւր յիշեալ ջրվէժով մի գեղահրաշտեսարան է ներկայացնում:

Մօտ երեք հարիւր ոտնաչափ բարձրութիւնից, քարափի սրածայր և խորդուբորդ վերջաւորութիւններից գէպի անդունդը, էլ ջուր չես տեսնում. մի ծուխ կամ գոլորշի բռնած ունի ձորակը և այդ մի կտոր տեղից չէ հեռանում: Այդ ծուխը, այդ ամպը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գետակի ջուրը, որ սաստկութեամբ դահավիժուելով բարձրիցը, ցնդում է օդի մէջ և մանր հիւլէներով փոշիանում նորից մեղմօրէն ցած իջնելու, ջուր դառնալու և գետակի փոխուելու համար. հազարերանգ են այդ ջրային հիւլէները. աչքը չի կշտանալ բնութեան այդ խաղին նայելով. արեգակի ճառագայթները ներս են թափանցում ջրի փոշիացած ամենամանր մասնիկների մէջ և ամեն մի աննշան կտորին մի նոր գոյն են տալիս, գոյն՝ որ դեռ մարդուս հանճարն անկարող է նմանը գտնել կամ անունը տալ: Ես չգիտեմ օրը քանի-քանի այցելուներ և տուրիստներ կը գային այդ բանաստեղծական վայրն ուխտ անելու, քանի արկածախնդիր նկարիչների վրձիներ կը գործէին, գոնէ մի մասն իւր բնական գոյնով և գեղեցկութիւնով

թղթի կամ պաստառի վրայ առնելու և նրանով գեղարուեստասէր միլիօնատէրերից իրանց կեանքի ապահովութիւնը միանգամից դուրս կորզելու, բայց կրտկարանային, բայց չէին գտնիլ գործնական կեանքի մէջ այն աչք շլացնող գոյները:

35. ԶՐՎԷՅԺ ԵՒ ԱՌՈՒԱԿ

Լեռան տակէն մի աղբիւրիկ կը վազէր.
Բայց ջուրն այնքան նուազ էր,
Որ անցնող-դարձողի աչքին հազիւ կ'երևար.
Միայն թէ շատ անուանի էր նրա ջուրն առողջարար:
Աղբիւրի մօտի բարձր ժայռերէն
Փրփրած կատաղի մի ջրվէժ կ'իջնէր.
Սա հրպարտ-հրպարտ գոռամաբ ահագին
Ասաւ առուակին.
«Տես՝ ինչ կ'ասեմ քեզ.
Դու խեղճ ջրիկ ես,
Ուրեմն ինչո՞ւ այդքան
Քեզ հիւրեր կըզան.
Ինձի թէ գան, իրաւցընէ, զարմանք չէ.
Հիանալի տեսք մի ունիմ աննրման.
Ասա՛, տեսնեմ, քո յատկութիւնդ ի՞նչ է,
Ինչի՞ մարդիկ միշտ գունդազունդ քեզ կըզան»:
Առուակն ասաւ խըպնելով,
Հեզիկ ու քաղցըր ձայնով.
«Գիտես ինչու.
Իրժկուելու»:

Գեղեցիկ պայծառ առաւօտ էր, երբ ես և Ասլանը՝ ձի նստած՝ դուրս եկանք Այգեստանի ծառազարդ փողոցներին և ուղևորուեցանք դէպի վանքը: Մեր առջևն էր Վարազայ սարը իւր սքանչելի տեսարաններով: Արևը դեռ նոր էր սկսել ծագել: Նա կամաց-կամաց վեր էր համբառնում Վարազայ լեռնազագագթի ճիշդ այն ամենաբարձր կէտին, որ կոչւում է Գալիլիա: Նս առաջին անգամն էի տեսնում արևի մի այնպիսի հրաշալի ծագում: Ինձ այնպէս էր թւում, որ տուրնջեան լուսատուն գիշերը հանգստացել էր Գալիլիայի դագագթի վրայ, միևնոյն նուիրական այրերի մէջ, որտեղ մի ժամանակ պատսպարուած էր Հռիփսիմէն իւր ընկերուհիների հետ, իսկ այժմ լուսաճաճանչ պայծառութեամբ դուրս էր գալիս իւր հանգըստարանից՝ լուսաւորելու Հայոց աշխարհը: Նոյն այրերի մէջ ճգնում էր երանելի կոյսը, նոյն այրերից դուրս եկաւ նա և որպէս մի պայծառ լոյս, ուղևորուեցաւ դէպի Արարատ՝ կատարելու այն մեծ բարոյական պատերազմը հեթանոս թագաւորի և հեթանոսական խաւարի հետ, որի արդիւնքն եղաւ քրիստոնէութեան մուտքը Հայաստանում: Նոյն այրերի մէջ թագցրեց նա կենսատու փայտի Ս. Նշանը, որ ամփոփուած էր մի փոքրիկ խաչի մէջ և որ նրա կրծքի ու պարանոցի Աստուածային զարդն էր կազմում: Ամբողջ չորս դար հրաշալի Սուրբ-Նշանը մնաց այնտեղ անյայտութեան մէջ, մինչև Թօղթիկ ճգնաւորի մշտական աղօթքով յայտնուեցաւ նա և արեգակի լուսափայլ պայծառութեամբ, Վարազայ լեռնազագագթի բարձրութիւնից թռչելով, իջաւ նրա լանջերի վրայ և, որպէս մի ժամանակ զարդարում էր Հռիփսիմէի կուրծքը, այնուհե-

տև դարձաւ Վարազայ լեռան կրծքի երկնային զարդը: Միևնոյն տեղում հիմնուեցան տաճարներ, որ Սուրբ-Նշանի անունով կոչուեցան Սուրբ-Խաչ: Այդ տաճարներն էին, որ բոլորը միասին ներկայացնում էին Վարազայ վանքը, ուր այդ առաւօտը ես և Ասլանը գնում էինք:

Արևը բարձրացաւ: Նրա ճառագայթները հրեղէն շառաւիղների նման տարածուեցան Վանայ շրջակայքը, տարածուեցան ծովակի մանիշակագոյն մակերևոյթի վրայ և լուսաւորեցին առաւօտեան մռայլի մէջ ծածկուած հեռաւոր լեռները: Ինձ տիրում էր խորին հոգեզմայլութիւն: Արևի ծագումը զարթեցնում էր իմ սրտում այդ նուիրական վայրերի և այդ սրբազան լեռների վաղեմի յիշատակները: Կարծես դարերը յետ-յետ էին գնում և հին աւանդութիւնը կենդանանում էր, կերպարանք էր ստանում իմ աչքի առջև: Կարծես կրկին երևում էր ինձ Թօղթիկ ճգնաւորի սքանչելի տեսիլը—կենսատու Ս. Նշանը թռչելով ցած է իջնում Վարազայ լեռնազագագթի բարձրութիւնից և նորանից ցլանում են տասներկու լուսեղէն սիւներ, որոնք հանգստանում են տասներկու տեղերի վրայ: Հրեղէն սիւները այնքան ժամանակ մնում են այնպէս կանգնած, մինչև երկրի իշխանները և ժողովուրդը տեսնում են նրանց: Յետոյ բարեպաշտ ժողովուրդը, միացած իւր իշխանների հետ, կառուցանում են տասներկու տաճարներ միևնոյն տեղերի վրայ, ուր իջել էին լուսեղէն սիւները: Նրանցից երկուսը իջել էին այն տեղերում, ուր շինուեցան սուրբ Գրիգորի և Գարմարաւոր վանքերը, երեքը իջել էին վերին Վարազում և կոչւում էին Գալիլիա. իսկ եօթը ներքին Վարազում: Այդ եօթն տաճարներից բաղկացած եկեղեցիների խումբը—որոնց իւրաքանչիւրը առանձին-առանձին անուններ ունին—բոլորը միասին, սարի անունով, կոչւում են Վարազայ վանք:

Այն օրից, երբ յայտնուեցաւ Ս. Նշանը, Հայոց եկեղեցին նորա համար տօն սահմանեց, որ կատարուում է մինչև մեր օրերը: Այն օրից, որ յայտնուեցաւ Ս. Նշանը, Վարազը դարձաւ Հայոց լեռների Ս. Սիօնը: Նրա գագաթը, նրա կուրծքը, նրա ստորոտները ծածկուեցան վանքերով և կրօնաւորների բազմութիւնը լցրեց այդ վանքերը: Երկար տարիներ յիշեալ Ս. Նշանը պահուում էր Վարազայ վանքում և ամեն կողմից ուխտաւորների բազմութիւնը դիմում էր այդտեղ երկրպագութեան համար: Երկրի թէ հարուստը, թէ աղքատը թափում էր այնտեղ իւր արծաթն ու ոսկին, նուիրում էր իր կայքն ու կալուածները Ս. Նշանի սպասաւորներին, որպէսզի Վասպուրականի այդ հռչակաւոր սրբավայրը միշտ շէն ու պայծառ մնայ: Արեղաներն այնտեղ վայելում էին ժողովրդի բարեպաշտութեան պտուղները և աղօթում էին աշխարհի համար:

Գագիկ Արծրունին ծախսեց իւր գանձերից ահադին գումար և շինել տուեց յիշեալ Ս. Նշանի համար մի ոսկեայ տուփ և պահարան: Իսկ Աշոտ արքայորդին ծախսեց երեսուն հազար ոսկի և զարդարեց նրա պահարանը մարգարիտներով և թանկագին քարերով: Երբ Արծրունիների վերջին թագաւոր Սենեքերիմը, իւր ամբողջ պետութիւնը տալով Յունաց կայսրին, տեղափոխուեցաւ Սեբաստիա, նա իւր թագաւորութիւնից յօժարուեցաւ զրկուել, բայց Ս. Նշանը տարաւ իւր հետ: Իսկ յետոյ դժբախտ թագաւորի մարմնի հետ կրկին փոխադրուեցաւ Վարագ: Այնուհետև այդ թանկագին սրբութիւնը դարձաւ զանազան բռնակալների ազահութեան առարկայ: 1651 թուին, Խոբաշբերդին տիրող քուրդ Սուլէյման-բէգը՝ 2օբար կոչուած աւազակապետի առաջնորդութեամբ եկաւ, կողոպտեց Վարագայ վանքի հարստութիւնները և Ս. Նշանը

գերի տարաւ իւր բերդը: Բարեպաշտ ժողովրդի առատաձեռնութեան դարևոր արդիւնքները մի քանի օրուայ մէջ ոչնչացան: 2օրս տարի Ս. Նշանը մնաց գերութեան մէջ: Իսկ Վանայ հասարակութիւնը այդ շորս տարուայ ընթացքում սուգ էր կատարում: Քանիցս անգամ պատգամաւորներ ուղարկուեցան, մինչև, վերջապէս, կարողացան գերութիւնից ազատել իրանց աշխարհի սրբութիւնը...

37. ԱՌ ՎԱՆԱՅԱՅՐԻ, ՎԱՐԱԳԱՅՑ*)

Թող բարձրբացնեն ճրոխնչ, աղաղակ
 Թութակ, կաշաղակ,
 Միակ վայելուչ, միակ սրտառուչ
 Երգիչն է սոխակ:
 Թող վայեն բուեր, ագռաւներ անթիւ,
 Հազար հաւ ու ճիւ,
 Ամենից մեծը, ամենից բարձրը
 է ազատն արծիւ:
 Թող տան, ում կ'ուզեն, մանեակ, մատանիք,
 Նըշաններ, դափնիք,
 Միակ արժանին, միակ սիրելին
 Կըմնայ Հայրիկ:

38. Ջ Ր Ա Բ Ե Ր Դ

Ա

Մուայլ է: Առաջևից օձի նման ոլորում է մի հազիւ նշմարուող շաւիղ, որ տանում է անտառապատ լեռների

*) Խրիմեան Հայրիկ:

կողքերով. իսկ վերևից տարածւում է հսկայական ծառերի կանաչազարդ կամարը: Արեգակի ճառագայթները չեն անցնում այդ կամարի սաղարթախիտ հիւսուածքից. ճիւղերը, ոստերը, տերևները սիրալիբ կերպով գրկել են միմեանց:

Տեղ-տեղ կանաչազարդ կամարը տատանւում է և ճիւղերի ճեղքերից տեսնւում է կապտագոյն երկնքի մի փոքրիկ մասը միայն: Այդ ճեղքերից ոսկեայ ժապաւէնների նման ներս են ցոլանում արեգակի բարակ շողքերը և անտառի մէջ տիրող մռայլը փոքր ինչ պարզւում, լուսաւորւում է:

Օդը խեղդում է: Վերևից յուլիսեան արեգակը կրակ է թափում: Բայց այդ կրակը, այդ տապը, այդ բոցը չէ թափանցում մինչև անտառի խորքը: Ոստերի, տերևների խիտ հիւսուածքը ընդդիմադրում է նրանց: Չորերի խոնաւ զովութիւնը, մեղմացած վերևից ներգործող ջերմութեամբ, խիստ ախորժ հրապուրանքով շփւում է ուղևորի երեսին և նա լի ախորժակով շնչում է եղևիններից բուրոդ բալասանը:

Չաւիղը նեղ է: Նա անթիւ ելևէջներ ունի: Երբեմն բարձրանում է գագաթների վրայ, երբեմն իջնում է մթին ձորերի և նեղ փապարների մէջ: Սայլակի անիւնները աշխարհի սկզբից մուտք չեն գործել այդ կուսական անտառների մէջ: Մարդը միշտ սարսափել է իւր համար ճանապարհ հարթելու: Լեռնային գահավէժները սոսկալի են: Ուղևորի ձին անգամ չէ յանդգնում ոտք կոխել նրանց վրայ. մի սխալ քայլ, մի թեթև սայթաքում, և ահա նա կըզլորուի դէպի անդունդը:

Ստիպուած ես գնալ ոտով: Քո առաջնորդը, այդ ահարկու ապառաժների, այդ մթին ծմակների հարազատ որդին, կըտանէ քեզ: Նրան ծանօթ են բոլոր անցքերը,

բոլոր շաւիղները, որտեղ միայն վայրենի այծերը համարձակւում են ոտք կոխել:

Բ

Տիրում է լուսթիւն: Անտառի մէջ մի տերև անգամ չէ շարժւում: Միջօրէի սոթը բոլոր արարածներին հալածել է դէպի ծմակների խորքը, դէպի քարանձաւների մթութիւնը: Թռչուններ անգամ չեն երևում: Ամեն ինչ նիրհում է, ամեն ինչ հանգստանում է խորին, խաղաղական բերկրութեան մէջ:

Ինչ որ մի բան խշխշում է, կարծես, ուղևորի ականջներին դիպչում է թփերի մեղմ սօսափիւնը: Նայում ես քո շուրջը: Եւ ահա բեղմնաւոր շլորենու ճիւղերից քարշ է ընկած մի էակ: Ծառերի խտութիւնը թոյլ չէ տալիս պարզ նշմարել նրան: Երևում է մի կարմիր շապիկ միայն, որ իջել է մինչև մերկ սրունքները: Հետաքրքրութիւնդ վառւում է: Նայում ես, նայում ես, այժմ նկատւում են կնոջ ծամերի երկայն հիւսեր, որ ծածանւում են ճիւղերի հետ: Այդ ինչ է, սրտեղից յայտնուեցաւ այդ անտառային ֆէյան: Ի՞նչ գործ ունի նա այդ վայրենի ամայութեան մէջ, ուր գազաններն անգամ սարսափում են երկիւղից:

Դա մի շինական հայ աղջիկ է, որ հեռաւոր գիւղից եկել է անտառային պտուղներ քաղելու: Նա քաղում է կարմիր, հասունացած շլորները և խնամքով լցնում է գամբիւղի մէջ, որ քարշ է ընկած նրա թևքից: Նա մեծակ է: Փոքր ինչ հեռու, գլուխը առջևի թաթերի վրայ դրած, պառկել է նրա մտերիմ ընկերը, — մի ահագին շուն: Փորձիր մօտենալ մենաւոր աղջկան, այդ գազանը կը պատառոտէ քեզ:

Աղջիկը յետ նայեց: Ուղևորը կասկածաւոր երևեցաւ

նրան: Զարմանալի արագութեամբ ցած ցատկեց նա շտրենուց և մի ակնթարթում անյայտացաւ անտառի մթութեան մէջ: Այլ ևս ինքը սատանան չէ կարող գտնել նրան: Նա չի վախենալ. նա երկիւղ չունի. նա ամեն տեղ կը գնայ: Նա ծնուել է և սնուել այն մամռապատ ծառերի հետ. նրա օրօրոցը եղել են այն վայրենի ապառաժները:

Մի քանի քայլ ևս, և ուղևորը նկատում է այդ անտառային կոյսերի երկրորդը, երրորդը... Գրանք չեն փախչում. դրանք ճանաչեցին, որ դու նոյնպէս հայ ես, որպէս իրանք: Նայում են քեզ վրայ և խորամանկ հեզնութեամբ ժպտում են: Ի՞նչու, ինչն է շարժում այդ միամիտ շինական աղջիկների ծիծաղը:

Նրանք նկատեցին քո դողդողուն քայլերը, նրանք տեսան, թէ ինչպէս դու երկչոտ կերպով մագլցում ես ժայռերից և կրիայի նման առաջ ես սողում: Այդ բաւական է, որ հրաւիրէ երիտասարդի վրայ լեռնային աղջկայ ծիծաղը: Գարծես մարդ լսում է նրանց ուրախ հանաքները. «Ա՛յ փափկամորթ, սովորել ես կառքերի վրայ թեքընկնել, կամ թաւշապատ դիւանների վրայ ծուլանալ. դէ՛, փորձիր մեր սարերի վրայ ման գալ, այն ժամանակ կ'ասենք, որ դու էլ տղամարդ ես»...

Ուղևորը թողնում է բնութեան այդ հարազատ դաւակներին և, իրաւ, կրիայի նման սկսում է առաջ շարժուիլ:

— Զուտով, շտապեցնում է քեզ առաջնորդը. եթէ այսպէս գնալու լինինք, մինչև արևի մտնելը տեղ չենք հասնիլ:

Առաջնորդի ծաղրածութեանը ևս առարկայ չդառնալու համար, ուղևորը ստիպուած է փոքր ինչ թեթեւ շարժուիլ: Յոգնածութիւնը վերջապէս բոլորովին անտանելի է դառնում: Առաջնորդը նկատում է այդ և մի առանձին

քաղաքավարութեամբ միջոց է տալիս հանգստանալու:

— Ծխեցէք, պարոն:

Նստում ես ծառերի հովանաւոր ստուերի ներքոյ, սկսում ես ծխել: Քրտինքը հեղեղի նման թափւում է քո ճակատից: Ամեն ինչ թաց է՝ շապիկ, ժիլէտ և ամարային ժօկէտ: Անկարելի է այդ դրութեան մէջ երկար նստել: Հագուստը կորցնում է իւր ջերմութիւնը և մըսողութիւնն անխուսափելի է դառնում: Գէտք է դարձեալ շարժում գործել, պէտք է առաջ գնալ...

9

Գնում ես, գնում ես, միևնոյն լուութեան, միևնոյն անշարժութեան միջով: Յանկարծ նիրհող անտառի խորհրդաւոր հանգստութիւնը աղմկւում է և, կարծես, լսում ես մի խուլ ստորերկրեայ որոտման ծանր դղրդոց: Որքան առաջ ես գնում, շրջապատող լեռները սկսում են հետըհետէ որոտալ:

Նայում ես դէպի երկինքը. տեսնում ես նոյն մանիշակագոյն կապուտակութիւնը իւր նուրբ ժպիտով, նոյն լուսաւոր արեգակը իւր պայծառ ճառագայթներով: Ամպի մի փոքրիկ պատառ անգամ չէ երևում:

Բայց սրտեղից է լսում այդ խուլ, սարսափեցնող որոտի ձայնը: Մտածում ես, անդռնդի մէջ կատարւում է մի սոսկալի խռովութիւն, կատաղի տարրերը մարտնչում են միմեանց հետ: Ժայռերը, ապառաժները մռնչում են: Խաղաղ մթնոլորտը սկսում է երկիւղածութեամբ դողդողալ: Եւ ուղևորի վրայ տիրում է մի սրբազան սառսուռ. նա խոնարհում է, ծունր է իջնում բնութեան վեհութեան առջև...

— Դա Թարթար գետի ձայնն է լսում, հանգստացնում է քեզ առաջնորդը:

—Չնւտ կը հասնենք:

—Այդ սարի միւս կողմումն է:

Անցնում ես սարը, անցնում ես սարի միւս կողմը: Քո առջև բացւում է մթին անդունդ: Նայում ես, նայում ես անդունդի խորութեան մէջ, աչքերդ սեանում են, գլուխըդ պտրտւում է, ոչինչ չես տեսնում: Յետոյ երևում են քեզ ծառերի հաւասար կատարներ, որոնք կարծես, մկրատով հարթած լինին: Այդ ծառերը աստիճանաբար ցած են իջնում, ցած են իջնում և լցնում են կանաչապատ ձորի ամբողջ խորութիւնը: Ուրիշ ոչինչ չէ երևում:

—Ահա Թարթարը, ցոյց է տալիս առաջնորդը, ձեռքը մեկնելով դէպի ձորի խորութիւնը:

Բայց Թարթարը չէ երևում: Նա կտրել, անցել է ժայռերի ամբողթիւնը. նա տաշել է միապաղաղ ապառաժների զանգուածը, հազարաւոր քայլերով ցած է իջել դէպի երկրի սիրտը. նա դարերով գործել է այստեղ, մինչև քարերի միջով բաց է արել իւր համար մի նեղ և անձուկ ճանապարհ: Այդ ճանապարհի մէջ խեղդուած, ճընշուած, մի հսկայ վիշապի նման գալարւում է նա, պտոյտներ է գործում, որոտում է, մռնշում է և կատաղի կերպով աղմուկ է բարձրացնում, զայրանում է, թէ ինչո՞ւ չէ կարողանում աւելի լայնացնել իւր ուղին: Իսկ վիթխարի լեռները երկու կողմից աւելի և աւելի սեղմում են նրան, և նա, բարկացած, աւելի աղաղակ է բարձրացնում:

Թարթարը հայոց մեծ գետերի ամենակրտսեր եղբայրն է: Նա փոքրիկ է, բայց ահարկու է: Բնութիւնից վիճակուած է եղել նրան կատարել մի ամենազօռարին դեր: Նա չէ վազում ընդարձակ, հարթ-հաւասար և լայնատարած դաշտերի միջով, որ որքան ցանկացայ, այնքան լայնացնէ իւր ափերը և, խաղալով, խայտալով, ուրախ հոսանքով շարունակէ իւր ընթացքը: Ճակատադիրը

Թարթարին սեղմել է Ղարաբաղի լեռնային ձորերի մէջ. նա հազարաւոր տարիներով պիտի կռուէ անզոյ քարերի և անսիրտ ապառաժների հետ,—և այդ է, որ զայրացնում է նրան, այդ է, որի դէմ բողոքում է նա իւր աղմկալի ձայնով:

Այդ ճնշուած, նեղուած զրութեան մէջ ևս Թարթարը պահպանել է իւր վեհութիւնը: Բնութեան խստութիւնը չի կարողացել յուսահատեցնել նրան. նա միշտ կռուել է և շարունակում է կռուել իւր հոսանքին արգելք դնող խոշընդոտների դէմ:

Երբեմն լեռնային գագաթից պոկւում է, ցած է գլորւում մի ահագին քարաժայռ: Նա կտրում է գետի ճանապարհը: Ջրերի ընթացքը կանգ է առնում: Այդ միջոցին կատաղած Թարթարը ուռչում է, ուռչում և, հետզհետէ աճելով, հաւաքում է իւր ուժերը: Մի գօրկ, գօրկ ևս... և ահա ահագին քարաժայռը, որ կտրել էր նրա հոսանքի առաջը, յետ է մղւում, կատաղի ալիքները մի թեթև տաշեղի նման տանում են նրան և, զարկելով ափերի ապառաժներին, խորտակում են, փշրում են: Գետը դարձեալ ընդունում է իւր բնական հոսանքը:

—Դուք կամենում էիք տեսնել Ջրաբերդը, յիշեցնում է ինձ առաջնորդը. շատ հեռու չենք բերդից:

—Տարէք ինձ այնտեղ:

7. >

Ջրաբերդ... այդ անունը լսելիս, իմ սիրտը բաբախում է և՛ ուրախութիւնից, և՛ տրտմութիւնից: Ես պիտի տեսնէի այն բերդը, որ շատ անգամ պահել, պահպանել էր մեր հայրերին Պարսիկների, Թաթարների, Արաբների և Կովկասեան լեռնաբնակների յարձակմունքներից:

Մենք պիտի իջնէինք Թարթարի ձորը: Բերդը տեսնելու համար պէտք էր անցնել գետը:

Բնութիւնը, լաւ հասկանալով այդ դետի անհաշտ բնաւորութիւնը, գիտենալով, որ նա այնքան չար է, որ չէ կարող համբերել արհեստական կամուրջների, գտել էր մի հնարք՝—երկու ժայռեր, երկու անագին սիւնների նման, ամբերի հակառակ կողմերից մօտեցրել էր միմեանց: Նրանք այնքան մօտ են, որ մտածում ես, թէ կարող ես մէկ ժայռից թռչել միւսի վրայ: Այդ երկու ժայռերի վրայ դրած է մի շարժական կամուրջ, որի տակով անցնում է Թարթարը: Ես անցայ կամուրջը: Այժմ գտնւում էի գետաձորի յատակի վրայ: Չորեք կողմից բարձրանում են անտառապատ լեռներ: Նայում ես դէպի վեր, երկնքի մի նեղ շերտն ես միայն տեսնում: Նայում ես դէպի ցած և մտածում ես, որ անձ գտնւում ես անդունդի շրթունքների մօտ, որ իւր անագին բերանը բաց արած, պատրաստւում է կլանել քեզ:

Այդ անդունդի, այդ սոսկալի խորութեան միջից, հրակայական շաքարի գլխի նման բարձրանում է մի մերկ, սեպածն քարաժայռ: Նայում ես նրա վրայ և սքանչանում ես, թէ որքան խելացի է բնութիւնը, թէ որքան նախատեսել գիտէ նա շար մարդիկների շար բնաւորութիւնը, որ կանխապէս ստեղծագործել է մի այսպիսի հրաշք, որ մարդիկ կռիւների ժամանակ պատսպարուին նրա վրայ, պաշտպանուին թշնամու բարբարոսութիւնների դէմ:

—Դա Ջրաբերդն է, ասում է առաջնորդը, ցոյց տալով վիթխարի քարաժայռը: Նրա լայնանիստ գագաթի վրայ գտնւում են բերդի աւերակները: Իսկ ներքեից նա սրածայր է երևում, մի անագին սեպի նման: Բայց ինչո՞ւ է կոչւում նա Ջրաբերդ:

Բերդը արժանի է այդ կոչմանը: Եւ իրաւ նա երեք

կողմից պատած է ջրով: Մի կողմից որոտում է կատաղի Թարթարը, միւս կողմից Թրդի գետը գալով կտրում է առաջինին և կազմում է մի սուր եռանկիւնի: Այդ եռանկիւնու միջից բարձրանում է սեպածն քարաժայռը, և նրա գագաթի վրայ է դրած Ջրաբերդը, որի ստորոտները ողողում են այդ երկու գետերով:

Բերդի գլխաւոր դռան հսկայ կամարներն են միայն մնացել: Այդ դռնից ներս մտնելով, մի օձապտոյտ ճանապարհ, ապառաժների կուրծքը քերելով, դէպի վեր է բարձրանում: Ճանապարհի հին սանդուխքներն այժմ ծածկուած են փլատակների բեկորների տակ: Այդ բեկորների միջից բուսել են, աճել են ծառեր, թփեր, որոնց ճիւղերից բռնելով, պէտք է կամաց-կամաց վեր բարձրանալ: Չեղքից պոկուեցաւ ճիւղը, և դու մի քանի ըոպէից յետոյ կը գտնուիս Թարթարի որոտացող կոհակների մէջ, որ ներքևում հոսում է:

Իմ առաջնորդը խորհուրդ չէր տալիս գնալ մինչև բերդի գագաթը, զգուշացնելով, թէ այնտեղ կարող էինք գազանների հանդիպել: Բայց ինչ էլ որ լինէր, ես վճռել էի տեսնել բոլոր աւերակները:

Մի քանի ամբողջ ժամեր անցան, որ քարերը, ծառերը, թփերը, մացառները բռնելով, մենք դէպի վեր էինք բարձրանում: Ամենադժուարինն այն էր, որ տեղտեղ այդ վայրենի բուսականութիւնն այնպէս խիտ հիւսուած էր մինը միւսի հետ, որ անկարելի էր անցնել: Իմ առաջնորդը խէնջալով կտրատում էր ճիւղերը և ինձ համար ճանապարհ էր բաց անում: Վերջը անկարելի եղաւ շարունակել յոգնածութիւնը մի կողմից, սաստիկ ծարաւը միւս կողմից բոլորովին թուլացրին ինձ: Ես նստեցայ հանգստանալու: Իմ առաջնորդը շուտով դարման գտաւ իմ ծարաւը յագեցնելու համար: Նա քաղեց հասունացած

շլորներ և տուեց ինձ ուտելու: Թթուաշ պտուղները բա-
ւական զովացրին իմ սիրտը: Այդ շլորները բուսել էին
այն աւերակների միջից, որոնք մի ժամանակ շէն էին,
որոնց մէջ մի ժամանակ մարդիկ էին բնակուում:

Վերջապէս մենք գտնուում էինք սեպաձև ապառաժի
գագաթի վրայ: Բերդի շինուածներից ամբողջ ոչինչ չէ
մնացել. երևում են կիսակործան աշտարակներ, երևում
են կիսաւեր պարիսպներ, երևում են զանազան սրահներ,
սենեակներ, որոնց բոլորի ծածկերը ցած են թափուել:
Այն հզօրները, որ մի ժամանակ այդ ամբուլթիւններից
սարսափ էին տարածում թշնամու վրայ, այժմ չկան:
Նրանց փոխարէն երկշտ բուն թագաւորում է աւերակ-
ների վրայ և կանչում է իւր շարագուշակ ձայնով:

— Տեսնում էք այդ անցքը, ցոյց տուեց իմ առաջնոր-
դը. պաշարման ժամանակ այստեղից ջուր էին բարձրա-
ցնում բերդի մէջ:

Այդ գաղտնի անքը ցոյց էր տալիս, թէ որ աստիճան
զարգացած էր հայ մարդու արհեստը, և որ աստիճան
հմուտ էր նա ռազմագիտական հնարների մէջ: Բերդի
բարձրութիւնից ծակել էին ապառաժը և բաց էին արեց
մի անցք, որ տանում էր մինչև բերդի ստորտը, մինչև
Թարթար գետի ափը: Այդ անցքը տունելի նմանութիւն ու-
նէր, և բազմաթիւ քարէ սանդուխքներով իջնում էր ցած:
Սանդուխքները փորուած էին բնական ապառաժի վրայ:
Իմ առաջնորդը բացատրում էր, թէ որպէս այդ անցքի մի-
ջով ջուր էին գողանում գետից, և այդ պատճառով էլ անցքը
կոչւում է ջրագող: Քարէ սանդուխքների իւրաքանչիւրի
վրայ կանգնած էր լինում մի-մի մարդ, վերջինը գտնուում
էր գետի ափի մօտ. նա ընդունում էր իւր մօտ կանգնո-
ղից դատարկ ամանը և փոխարէն տալիս էր նրան ջրով
լցրածը, և այսպէս ամանները ձեռքից ձեռք անցնելով

վերեւից ստացւում էր դատարկը, իսկ ներքեւից տրոււմ էր
լիքը, և մի քանի ըոպէի մէջ լցւում էր ջրի ահագին աւա-
զանը, որ գտնուում էր բերդի մէջ, անցքի մուտքի մօտ:

Մի այդպիսի գաղտնի անցք ևս բերդից տանում էր
դէպի ցամաքը և ծայրը կորչում էր անտառի մէջ: Դա
փախուստի ճանապարհն էր:

Արեգակը սկսել էր թեքուել դէպի իւր գիշերային
կայարանը: Իմ առաջնորդը շտապեցնում էր շուտով ցած
իջնել: Ես տխուր մտածութիւններով հեռացայ այդ սքան-
չելի աւերակներից, որոնք կործանման մէջ ևս դեռ պահ-
պանել էին իրանց վաղեմի մեծութիւնը:

39. Ե Ր Կ 2 Ի Ա Ն Է Ծ Ք Ը

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարիսպներով մի դղեակ,—
հայկապէ էր, փառքն հասել էր մինչ ուկիւստակ.
Ջուրջը փութած ծաղկեպտակ անուշարոյր պարտէղներ.
Թարմ, զովաշունչ շաղրուաններ ցայտում էին վառ շիթեր:

Եւ բազմայաղթ այնտեղ նստող գոռող արքան հողաշատ
Քաղմած էր իւր գահի վրայ մօայլ դէմքով ու գունատ.
Ամեն խորհուրդն արհաւիրք էր, կատաղութիւն աշքերում,
Նորա ամեն խօսքը՝ կորուստ, արիւն էր նա միշտ գրում:

Այս ամբողջ երկու աղնիւ երգիչ գնացին միանգամ
Մէկն ալեգարդ, մինն պատանի ոսկեգանգուր ու փարթամ.
Տաւիդն ուսին, մի գեղեցիկ նժոյգ հեծած ծերունին,
Նորա կողքին ընթանում էր ծաղկահասակ պատանին:

Ծերուկն ասաց իւր ընկերին. «Պատրանս եղիր, իմ որդեակ,
Մեր սրաառուշ տաղերն յիշիր, երգիր ազատ, համարձակ.
Երգիր և՛ վիշտ, և՛ խնդութիւն մատաղ ձայնով դու հզօր,
Դու արքայի քարէ սիրտը պիտի շարժենք մենք այսօր»:

Արդէն շքեղ և սիւնազարդ նրանք սրահումն են կանգնած.
Դահի վրայ թագաւորը և թագուհին են բազմած.

նա սիգապանծ՝ ինչպէս փայլը արիւնավառ հիւսիսի,
Իսկ թագուհին քնքուշ՝ նման արուսեակին յուսալի:

Ջարկեց ծերուկն ոգևորուած նուրբ լարերին մատներով,
ձօխ արձագանք տուին նորա լիահնչիւն ձայներով.
Եւ գեղեցիկ տաղ երկնարժան չքնադատես պատանին,
Ինչպէս համերգ ոգիների, և խլաձայն ծերունին:

Նոցա երգն է գարուն և սէր, երանաւէտ ոսկեդար,
Ազատութիւն, խօսք ճշմարիտ, արիութեան գործ արդար,
Եւ հեշտութեան ամեն վայելք, որ յուզում է սիրտ մարդկան,
Եւ այն ամենն, որ կարող է մարդուն տալ տիպ վեհութեան:

Պալատական ասպետները ծաղու խօսքեր մոռացան
Եւ անվեհեր զինուորները հղօք երգիցն յաղթուեցան.
Իսկ թագուհին, սիրտը շարժուած, աչքին արցունք բերկրալից,
Ահա հանեց, ձգեց երգչին չքնաղ մի վարդ իւր կուրծքից:

«Գայթակղեցիք դուք իմ ազգը, կամիք խլել և իմ կին»,—
Ահեղ գոչեց, դողաց մարմնով թագաւորը մոլեգին.
Ձգեց սուսերն, օդում ցոլաց, մատաղ կուրծքը պատառեց,
Ոսկեհնչիւն երգերի տեղ կուրծքիցն արիւն դուրս ցայտեց:

Ասես մըրիկ իսկոյն ցրուեց այն ունկնդիր ամբոխին:
Իւր վարպետի գրկումն հոգին փչեց անբաղդ պատանին.
Շածկեց մարմինն նա թիկնոցով, նստացրեց երիվար,
Ամուր կապեց և ամրոցից նա հեռացաւ վշտահար:

Եւ դուրս եկաւ, կանգնեց բարձր դարբասի դէմ ծերունին,
Եւ ձեռքն առաւ տաւիղն, ամեն տաւիղներից մեծագին.
Ջարկեց նըրան կճեայ սեանը, փշուր-փշուր խորտակեց.
Դէպի ամրոց ու պարտէզներ սոսկալի ձայն արձակեց.

«Վայ քեզ, խրմիստ դու ապարանք, թո՛ղ ոչ մի ձայն քաղցրութեան,
Լարի հնչիւն, երգ չըլսուի քո յարկի տակ յաւիտեան,
Այլ ստրուկների երկչոտ քայլեր և հառաչանք, հեծութիւն,
Մինչ շար ոգին վրէժխնդրութեան քեզ դարձնէ սև աճիւն:

«Վայ ձեզ և դուք անուշաբոյր, գարնանագեղ պարտէզներ,
Տեսէք ահա մանուկ երգչի դէմքին վառած տանջանքներ.

Թո՛ղ սորա տեղ դուք թառամիք, աղբիւրներդ ցամաքեն.
Գալ օրերին թո՛ղ քար կտրած և ամայի ձեզ տեսնեն:

«Վայ քեզ, նզովքդ երգիչների, վայ քեզ, անարգ մարդասպան,
Արիւնապսակ փառքի համար մարտը լինի թո՛ղ ունայն.
Թո՛ղ մոռացուի քո անունը մշտագիշեր խաւարում,
Ինչպէս մահուան վերջին հառաչք, սին ձայն, ցնդի թո՛ղ օդում»:

Ծերուկն ասաց, և երկինքը լսեց նորա պաղատանք.
Պարխայները փոշի դարձած, կործանուած է ապարանք.
Քարձր մի սիւն դեռ վկայ է անցեալ աուրց փառաւոր,
Այն էլ շուտով պիտի լինի մի փլատակ սրգաւոր:

2ըկայ բուրմունքն այգիների, շուրջը միայն անապատ,
2ըկայ վտակ, սաղարթախիտ չկայ մի ծառ ստուերաշատ,
Եւ չէ յիշում մի տարեգիր կամ երգ անունն արքայի.—
Այսպէս ահա կատարուեցաւ անէծքն անեղ ծեր երգչի:

40. Մ Ա Ս Ի Ս

Այս լերան ընիկ անունը, որ բոլոր Հայոց մէջ յիշա-
տակուում է, Մասիք և կամ Լերինք Մասեաց և առհա-
սարակ Մասիս է: Գոչուում է նաև զանազան անուամբ՝
Աւագ, Թուխ, Մթին, Սեաւ-Լեառն, և ռամկօրէն Մութ-
Աշխարհ, պարսկերէն՝ Նոյի լեռ և թուրքերէն՝ Աղըր դաղ:
Սկզբից մինչև այժմ աւանդուում է Նոյի տապանի
սոյն լերան վրայ հանգչիլը և մարդկութեան խանձարուր
լինելը: Հետևաբար մի սրբազան ուխտատեղի է համա-
րուած թէ կռապաշտութեան և թէ քրիստոնէութեան դա-
րերում: Նշանաւոր է իւր բարձրութիւնով, որովհետև Գով-
կասի Էլբրուս սարագագաթից յետոյ բարձրութեամբ ա-
ռաջինն է Ասիայի մէջ. Սև-ծովի եզերքից 16,334 ոտք
բարձրութիւն ունի:

Նշանաւոր է իւր կազմութեամբը. պօրփիւր քար է,

կարծես, միակտուր երկրիս երեսից ցցուած. ունի հրաբուխներ, որոնք դարերից ի վեր մարած են, բայց բոլորովին չեն դադրած: Լերան հիւսիսային ստորոտը տարածուում է դէպի Երասխի դաշտի արևելեան կողմը, իսկ հարաւային կողմից մի նեղ լեռնադաշտով կցուած է մի ուրիշ լեռան, որ Փոքր-Մասիս է կոչուում: Լերան ստորոտը աւազոտ է, միջավայրը լուսաբեր և քարուտ. շատ տեղեր էլ անհեթեթ կաղմուածքով լաւայ, որից երևում է, որ մի սաստիկ ու զօրաւոր ցնցումից տակն ու վրայ է եղած: Իսկ 12,000 ոտքից վեր համակ ձիւնապատ է: Հիւսիսային կողմը 6,000 ոտք խորութեամբ մի գահավէժ պատրուածք կայ, որ կոչուում է Վիհ-Մասեաց: Սոյն վհի մի կողմը շինուած է Ս. Յակոբայ վանքը, որ ս. Հայրապետի հասնելու տեղն է: Պատմուում է աւանդութեամբ, թէ ս. Յակոբը, ուզելով նոյի տապանի մի կտորից առնել, բարձրացել է Մասիսը և այդտեղից աւելի չէ կարողացել բարձրանալ: Այնտեղ մի փոքրիկ մենաստան կայ, որ մի լուսադրիւր պարտէզ ունի: Այդտեղից մի փոքր ցած գտնուում է Ակոռի կամ Արկուռի գիւղը 5,982 ոտք բարձրութեան վրայ: Այս գիւղում բնակուում էին 300 տուն հայեր և ունէին մի հին եկեղեցի ու գերեզմանատուն հազարամեայ տապանաքարերով:

1840 թ. Յունիսի 20-ին մի մեծ երկրաշարժ եղաւ և տեղեց երկու ամիս: Բարձր Մասիսը անեղ որոտմամբ սկսեց ծուխ արձակել և ամենաբուռն դրդմամբ բոլոր լեռան ու դաշտը սկսեց սասանուիլ. շատ շինուածքներ կործանուեցան և Երասխ գետը ալէկոծուելով՝ շատ տեղերում իւր ընթացքը փոխեց: Մի կարմրագոյն անեղ ժայռ, լեռան բարձրութիւնից փրթելով, Ս. Յակոբայ մենաստանի մէկ մասը և ամբողջ Ակոռի գիւղը կործանելով, գնաց այն մեծ վիհն ընկաւ: Մինչև այսօր երևում

են այն ողորմելի գիւղի և մենաստանի աւերակները, որի տեղը մի նոր գիւղ կառուցին նոր Ակոռի անունով: Այդտեղ 180 տուն հայ կայ:

41. Ա Ր Ա Գ Ա Ծ

Արագածը Հայոց միւս լեռներից գրեթէ բոլորովին զատուած և ինքնագլուխ լեռանց մի խումբ է. չորս գլխաւոր կոնաձև կատար ունի, և դրանց ամենքի վրայ էլ շքեղ լեռնադաշտեր կան: Այստեղ երկիրը աւելի բուսաւէտ ու արգաւանդ է, քան թէ Արարատի վրայ: Սրա պատճառը աղբիւրների, դարատափերի ու լեռնահովիտների առատութիւնն է: Որչափ Մասիսի երկու լեռները աղքատ են աղբիւրների կողմից, այնչափ Արագածը հարուստ է. թէպէտ սրա աղբիւրների մեծ մասը ցերեկուայ աշրիւրներ են, որոնք միայն հալուած ձիւնից են սնունդ առնում, բայց ջուրը լեռան ծակոտ քարերի միջից վայր է իջնում, զտուում, ժողովուում և, դարատափերի վրայով ցայտելով, դուրս է բխում:

Արագածի կողերը ծածկող սև ու ջրաբբի հողի վրայ ամառ ժամանակ սրանչելի գեղեցկութեամբ ծաղիկներ են բսնում: Սրանց մէջ գեղին գոյնը, ինչպէս հրանունկն է, խիստ շատ է. տեղ-տեղ կան նաև լեռնային պերճ ու շքեղ կախաշներ, զանգակիկ և լուրջ-շուշան (iris) կերպկերպ կապոյտ երանգներով: Արագածի վրայ այս ալպեան բոյսերը մայիսի վերջերն են սկսում ծաղկիլ, իսկ սեպտեմբերի վերջերը ձիւնով ծածկուած են լինում:

* * *

Արագածի գլխին է մեր սուրբ Լուսաւորչի աղօթատեղին, որտեղ, ասում են, մինչև հիմա էլ մի կանթեղ անպարան կախուած է մշտավառ ու անտեսանելի և յի-

շեցնում է հայասէր Միածնին իւր սիրելի Գրիգորի ձեռնամած այս կանթեղի տակից Հայոց համար օրերով թափած արտասուքները: Այս սարն է, որ մեր թագաւորներն ու հայրապետներն ընտրել են իրանց համար ամարանոց:

Արագած սարի բարձրաւանդակներն են անա, որ հիմա էլ ամեն մէկը իրանց գլխին հպարտ-հպարտ մի-մի հնութիւն դրած՝ կարծես ուզում են միմեանց դէմ իրանց գերազանցութիւնը ցոյց տալ:

Մի կողմից Ամբերդայ վանքն է մի քարի վրայ՝ մի անդնդախոր ձորի գլխին ուռած բազմել, մի երկար ու ձիգ պարիսպ էլ մինչև Արագածի ծայրը տարածել, որ իւր մէջ ամարանոց եկող թագաւորներին ապահով պահի, միւս կողմից Տեղերու վանքն է գլուխը ցցել և յիշեցնում մեզ, որ ինքը մի ժամանակ արժանի է եղել իւր հովերի մէջ էջմիածնի շոքից ազատելու մեր սուրբ հայրապետներին: Այ կողմից Բիւրականը, Կոշը, Ագարակը մեր միտքն են բերում մեր նախնի իշխանների վերունիստը, նրանց ամառն անցկացնելու տեղերը. ձախ կողմից Փարբին ու Լազրվանն են մեր գրականութիւնը ծաղկեցնող Լազար Փարբեցուն յիշեցնում: Յօշականը, Արագած սարի ստորոտի սրբազան աւանդապահ գիւղերից մէկը, իւր մէջ ամփոփում է մեր տառերը գտնող Սուրբ Մեսրոպի խրնկելի նշխարները:

42. Ծ Ա Ղ Կ Ա Ձ Ո Ր

(Աւանդութիւն)

Գարուն էր. ձիւնը, սառուցը հալուած, Ամեն տան դրոշներ, երթիքներ բացուած. Արևը վերէն՝ վայր նայում էր հաշտ, Ծիծաղում էին ձոր, հովիտ ու դաշտ:

Հայոց աշխարհը սիրուն է գարնան.

Նա եղեմական դրախտի է նման.

Սոխակ ու արտուտ թրփի, արտի մէջ

Օրնիբուն սաղմոս կարդում են անվերջ:

«Քոյրեր, խաղալու ձորն ի վայր երթանք»,

Ասացին իրար անմեղ հայ կուսանք.

Պահժու, երփներանգ հագան նոքա շոր,

Պրճնագարդ գնացին ուղիղ դէպի ձոր:

Գոյն-գոյն հալաւով ձորը փռուեցան,

Խաղով, պարերով կուշտ գուարճացան.

Պանիր, կաթ ու հաց հետերն ունէին,

Խորտիկի նըստան ժամ միջօրէին:

Ինչպէս շար բազէն անմեղ թռչնակին,

Այնպէս դարանած գունդ շարսիրտ պարսկին

Ական թօթափել աղջրկանց վրբան

Սուր ու գէնքերով արագ թափեցան:

Հայ պարկեշտ կուսանք՝ խոստման մըտերիմ,

Որ տուել էին Հայ փեսաներին,

Մահաբեր սըրէն չի սարսափեցան,

Արիւնաթաթախ գետին գլորուեցան:

Արևը իջաւ սարերի թիկունք:

Մայրերը ասին. «Ուր են մեր աղջկունք»:

Այսպէս հոգետանջ ու մըտամոլոր

Չուտ-շուտ վազեցին նոքա դէպի ձոր:

Ամեն մի բլուր, ամեն մի առուակ

Ծածկել էր աղջկանց զարդարուն դիակ.

Ամեն մի տերև, ծառի ամեն ծիլ

Ներկել էր աղջկանց արեան ջինջ կաթիլ:

Ծնողք շատ լացին ու չըսփոփեցան.

Ընկան գետնի վրայ ու խոր քընեցան.

Միւս առաւօտը աչքերն որ բացին,
Տրտմել դադրեցան ու էլ չի լացին:

Ամեն մի բլուր, ամեն մի առուակ
Ծածկել էր վարդը, շուշան, մանուշակ.
Ամեն մի տերև, ծիլ, բանջար ու խոտ
Բուրկենի նրման էին խընկահոտ:

Ու այնուհետև ամեն նոր գարուն
Չորն այն ծաղկունքով է միշտ զարգարուն
Եւ այդ շարաշուք օրից մինչ այսօր
Չորի անունը մնաց ԾԱՂԿԱՉՈՐ:

43. ԽԱՉԱՐՉԱՆՆԵՐ

Հայոց աշխարհի նշանաւոր գիւղերը կամ աւանները
եթէ պատմութիւնն էլ մոռացած լինի իւր էջերի մէջ
տեղաւորուելու, բանասէրն ինքը կարող է նորանց պատ-
մութիւնն իմանալ, եթէ սկսի ման գալ և քրքրել այդ
գիւղերի հնութիւնները:

Ոչ միայն ներկայ՝ աչքի առաջ եղած տեղերն ունին
իրանց անմեռ պատմութիւնը վանքերի, աշտարակների
ու աւերակների վրայ փորագրուած, այլ և շատ ամայի
դաշտեր մի տեսակ յիշատակարան ունին: Մի քար, մի
բլուր, մի այդ գոնէ կը գտնուի, որտեղից մի նորութիւն
լոյս կը տեսնի. քարը շքիլը, վրան մի արձանագրութիւն
կը գտնես. այրը մտիլը, մի հնութիւն դուրս կը բերես,
բլուրը քանդիլը, մի նշանաւոր բան կը հանես. շատ ժա-
մանակ չէ անցկացել, որ Բիւրակնայ մօտ, ամայի դաշ-
տում, դուրս եկաւ Արտաշէս թագաւորի սահման դրած
քարերից մէկը և հիմա տնկած է Բիւրակնայ եկեղեցու
մօտ: Եթէ այս վերոյիշեալ հնութիւններն էլ շարժելու

չլինիք, բաւական են մեզ գերեզմաններն ու խաչարձան-
ները: Չատ սակաւ գիւղ կըլինի, որտեղ մի տապանագիր
մի հնութիւն չքարոզէ. իսկ խաչարձանները պարզ ցոյց
են տալիս, որ այստեղ, իրանց տակին, թաղուած են այս
աւերակի, երբեմն գուցէ շէն քաղաքի, իշխաններն ու
պատուաւոր անձինքը:

Ի՞նչ է Եղուարդը... մի փոքր գիւղ, մի քանի տուն
հայերից կազմուած: Բայց մօտեցիլը եկեղեցուն, մօտեցիլը
այնտեղի հարիւրաւոր խաչքարերին և ինքդ կը պնդես,
թէ այստեղ մի ժամանակ նշանաւոր տեղ է եղել: Գեռ
գիւղը չմտած, հեռուից աչքիդ են ընկնում պատերազմի
պատրաստուած, կարգով կանգնած զինուորների նման,
բազմաթիւ խաչարձաններ: Պարզ լուսաւոր գիշերը իրանց
հրաշալի տեսքով հիացնում են նայողին: Օտարականը
առաջուց կը սարսափի էլ, կը կարծէ թէ արդարև պատե-
րազմի դուրս եկած բանակ է սա, որ սպասում է թշնա-
մու հետ ճակատամարտելու: Սովոր մարդն անգամ մի
փոքր ժամանակ իւր աչքի տեսածի վրայ կը կասկածի.
այնքան բնական են այդ արձանները:

44. Ա Ի Ե Ր Ա Կ

Որպէս վաղեմի մի աւանդութիւն,
Կամ շքեղ երազ անմեղ մանկութեան,
Կենդանանում է այսօր իմ մտքում
Խորխտ աւերակը նախնեաց մեծութեան.
Այստեղ բեկորներ վսեմ արուեստի,
Այնտեղ յիշատակն արքունի փառաց,
Եւ վկայարան սրբազան ուխտի,
Եւ տխուր հետքը մեծաշուք կենաց...
Ո՛հ, այսպէս ողջ մեր կեանքն է վաղանցիկ,

Ողջը լոկ ծաղր է անսիրտ բնութեան.

Ե՛լ սէր, և՛ հրճուանք, համայն գեղեցիկ

Զոհ է արևի և մոռացութեան...

45. Հ Ի Ն Ո Ի Ս Ո Ի Մ Ն Ա Ր Ա Ն Ը

«Այս լաւ բան միտքս եկաւ, այ, հոգուս էլ վարձք է, ասաց մէկ օր Աշտարակեցի Տէր-Յարութիւնը. աշակերտները մեր տանու գործին էլ պէտք կը գան. պարապ ժամանակ է, աշխարհքն էլ հանդարտութիւն, բեր մեր գոմի օդայ ումը մի քանի երեխայք հաւաքեմ, կարդացնեմ, որ ոչինչ չլինի, գոնէ եկեղեցում փոխ կ'ասեն, մոմ կը բռնեն, քան թէ մինչև երեկոյ կալերումն ու փողոցներումը իրար միս են կռծոտում»:

Տէր-Յարութիւնն էլ շատ շատածեց. մի քանի օրումը նորա տունը մի ուսումնարան դարձաւ. Մանուկներից որի՞ ձեռքը մի տախտակի կտոր տուեց, վրան մի քանի տառեր գրեց փայտէ գրչով, որին մի եզան կամ կովի թիակի (ոսկրի) վրայ մի տկճորի բերանից յետ արած պարան կապեց, պարանոցը գցեց, մի երկու տառ էլ նշանակեց, որին էլ մի հին, պապենական ժամանակից մնացած, մխի մէջ կորած, մկան կռծոտած քերական, որ է այբբենաւորան, տուեց: Մի քանիսն էլ, որոնք չորս-հինգ տէրտէր վարժապետ էին փոխել, մի քանի տարի մի ութ կանոն քրքրուած, կազմահան եղած սաղմոս էին կռնատակներին տարել ու բերել, ամառը գնացել՝ իրանց հորթերը հանդումն արածացրել, կամ գութանաւորին հաց տարել, ձմեռն էլ յետ եկել, տէրտէրանց տունը ձանձրացրել— այդպիսիներին էլ Տէր-Յարութիւնը էլի այն միկնոյն գրգգրուած սաղմոսը տուեց ձեռքները և հրամայեց նորի-

նորոյ գլխից սկսեն իրանց «Երա-նեալ-է-այր» սաղմոսը:

— Էլ այսուհետև թող մեր գոմի օդէն ձմեռները մարդ թէ կին չգան, չհաւաքուին. դորա համար Գէորգ Խալֆենց օդէն բաւական է. հիմա ես պէտք է աշակերտներ կարդացնեմ:— Աղջի, Սուսամբար, խորհուրդ արեց տէրտէրը իւր տիրուհու հետ, արի մեր աղջիկներին էլ կարդացնենք. Մանուշակն էլ թող երեխանց հետ խառնուի:

Ժողովուրդից ոմանք ուրախութեամբ բերին իրանց աղջիկներին Տէր-Յարութիւնի մօտ կարգալ սովորելու: Ամեն մի մանուկ բերում էր իրան համար մի ոչխարի խուզած մորթի կամ մի կտոր թաղիք կամ մի հին, մաշուած, քրքրուած, տասը տեղից կարկատած փալաս, գցում էր տակը և գոմի օդումը կարգով շարւում: Գիւղի միւս ծայրիցը կարելի էր լսել մանուկների ձայնը, որոնք բարձր-բարձր իրանց դասերը սերտում էին. «բեն—այբ = բա. բեն—եչ=բէ. բեն—է=բէ. բէն—եթ=բը. —բէն ինի=բի. բեն—վո=բօ. բեն—օ=բօ»: Միւսը գոռում էր՝ անյբ—շան=անշ, խէ—այբ=խան—աշխա, տիւն—վո=տո— աշխատո, դադ—այբ=դա—աշխատողա, կեն—այբ=կա աշխատողակա, նու—այբ—ցո=նաց—աշխատողականաց:

Տէրտէրն էլ ծանրագոգոթ, մի հաստ մորթի իւր տակը ձգած, վերին անկիւնումը հանել է իւր պարսկական, լայնաբերան ոտնամանները, բազմել ծալապատիկ ու մի կակուղ սերկևիլի ճիպոտ ձեռքին բռնած, դաս է տալիս: Այս ըոպէիս նա իւր վարժապետական վեհ պաշտօնի մէջն է:

Չորում է ութ-ինն տարեկան տղայ կամ աղջիկ աշակերտը մեր վարժապետի առաջին և, բռնելով տէրտէրի իրան ձգած ճիպոտի ծայրը, պատասխան է տալիս հետեւալ հարցերին.

Տէրտէր. «Այս ո՞րտեղից է եկել»:

Աշակերտ. «Դրախտիցը»:

— Ի՞նչ է բերել:

— Խելք ու խրատ:

— Ի՛նչ ծայրը պաշիր:

Դողդողալով համբուրում է հլու աշակերտը ճիպոտի ծայրը ու կունճ գալիս: Նա սպասում է տէրտէրի սովորական խօսքերը լսելու: «Օրհնեալ է փայտն, որով լինի արդարութիւն», ասում է տէր հայրը և, մի թեթև հարուած էլ մէջքին իջեցնելով, աւելացնում է՝ «որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ»:

Այս ամենօրեայ բնաբանն է դաս սկսելու, որից յետոյ երեխան կանդում է իւր դասը:

Վայ էր նորան, ո՞վ իւր համարը անգիր չգիտէր. յանկարծ կը կաշէր նորա մէջքին սերկեխի ճկուն ճիպոտը և դիպած տեղը կը կապտացնէր: Այսպէս հետզհետէ միմեանց քամակից կը փշրուէին մահակները աշակերտի բոբիկ ոտքերի վրայ, մինչև որ տէր հօր կամքը կը լրանար, մի երկու խրատական, բայց կոպիտ, խօսքեր էլ կ'ասէր ու կ'արձակէր. «Ինձ, կորիք, տեղդ նստիր, էլ յետ այսօրուան դասն եմ թողում. թէ որ վաղը ջրի նման չես կլկլացրել, մեծ պատառդ ալանջդ կը թողեմ»:

Կարգով անուշ կ'անէին ամենքը միևնոյն կերակուրը և կ'սպասէին միւս օրուայ սպառնալիքին: Բայց եթէ մէկը սաստիկ շարժէր տէր հօր բարկութիւնը՝ բացի ճիպոտելուց, Տէր-Յարութիւնը բաց ծնկներով կը չոքացնէր նորան խոշոր աւազի վրայ, փէշերքին հող կը լցնէր և կը կնքէր: Թո՛ղ արիւնն աչքի առաջն առնի այն աշակերտը, որի փէշերի կնիքը քանդուել է. որքան էլ ծունկը ցաւելիս լինի, պէտք է համբերի, տեղիցը չշարժուի:

Այսպէս էր հին ժամանակուայ ուսումնարանական կարգ ու կանոնը:

46. Հ Ա Տ Ի Կ

Լոյսը բացւում է, շուտ արտը գընամ, Պատուեմ սուր խոփով ես կուրծքը հողի, Իմ սիրուն հատիկ, քեզ նորան պահ տամ Մինչև օրերը ամբան արևի:

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ.

Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,

Թո՛ղ դարդս մեռնի գետնի տակ անհետ.

Գու ինձ մխիթար, կրկին տո՛ւն դարձիր:

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջև

Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,

Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,

Որ քեզ միշտ սիրով նայէ խընդադէմ:

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար

Արժան չըլինիմ, ծով կը դարձնեմ

Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,

Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չթողնեմ:

Ծլիր, կանաչիր, ոսկէ սաւանով

Ծածկիր իմ արտը ողջ ալեծածան,

Նոր այն ժամանակ անուշ շըշիւնով

Տո՛ւր ջարդուած սրտիս մի քուն հանգստեան:

47. Փ Ո Թ Ո Ր Ի Կ

Ծովը հանդարտ էր: Նաւակը լողում էր առանց օրօրուելու: Առաջին անգամն էր, որ ես ծովային ճանապարհորդութիւն էի անում, և իմ ուրախութեանը չափ չկար: Ասլանը նոյնպէս լաւ տրամադրութեան մէջ էր երևում:

Բայց խաղաղութիւնը երկար չտևեց: Հարաւային քամին, որ սկսեց փչել արևը ծագելուց յետոյ, սկզբումը մեղմ էր, հետզհետէ սաստկացաւ: Ծովի հանդարտ մակերևոյթը սկսեց յուզուել: Նաւաստին նիրհում էր: Ասլանը առաւ թիակը նրանից և հմուտ ձեռքով սկսեց ինքը թիավարել: Նաւաստին ոչինչ չգրաց:—Ալիքներն այն աստիճան բարձրացան, որ ջուրն այժմ սկսել էր ցայտել նաւակի մէջ: Նաւաստին զարթնեց: Նա յօրանջելով գլուխը վեր բարձրացրեց, ձեռքով շփեց ճակատը, կարծես աշխատում էր բռնի կերպով քունը փարատել իւր աչքերից: Նա գարմացած նայեց իւր շուրջը: Ներքով թ և Գրգուռ լեռների գագաթների վրայ երևում էին մոխրագոյն ամպեր: Մշուշը պատել էր այն կողմը, որ հետզհետէ մռայլուելով թանձր մառախուղի կերպարանք էր ստանում: Այդ տեսնելով, նաւաստիի հաստ, շագանակի գոյնով շրթունքները հեզնաբար յետ քաշուեցան և երևան հանեցին նրա խոշոր, սպիտակ ատամները:

—Օ—հօ,—բացականչեց նա,—շուտով մի լաւ փոթորիկ կ'ունենանք...

Մառախուղը հարաւային կողմից սկսեց աւելի և աւելի տարածուել և բռնեց հորիզոնի մեծ մասը: Բայց աղօթարանի կողմից նոր ծագող արեգակը ծիծաղում էր: Երբեմն կաթկաթում էին անձրևի խոշոր կաթիլներ, թէև մեր վրայի երկինքը դեռ պարզ էր. ջերմ և հեղձուցիչ գիշերից յետոյ այդ երևոյթը այդ կողմերում անսովոր բան չէր:

Ասլանը դեռ ուժեղ կերպով թիավարում էր: Նաւաստին կանգնած նայում էր նրան և, կարծես, չէր ուզում զրկել նրան այդ փոքրիկ գուարճութիւնից:

—Չո՛ւռ տուր դէպի աջ, նկատեց նա, աշխատիր մօտենալ եզերքին, եթէ ոչ՝ յորձանքների մէջ կ'ընկնենք: Յետոյ դառնալով ինձ հարցրեց.

—Դու լողալ իման՞ում ես:

—Ոչ, պատասխանեցի ես:

—Երբ մի քանի ըոպէից յետոյ այս նաւը ջրի տակը կը գնայ, դու բռնիր այստեղից:—Նա սառնասրտութեամբ ցոյց տուեց իւր գօտին:

Ես սոսկացի:

Նաւաստին անվրդով կանգնած էր և ոտքը դրել էր նաւակի կողքի վրայ, կարծես նրա գօրաւոր ճնշումով աշխատում էր պահպանել նաւակի հաւասարակշռութիւնը, որ այդ միջոցին, մի փայտեայ կտորած շերեփի նման, ծփում էր զայրացած կոհակների մէջ: Հարաւային տաք քամին, որ անցնելով Միջագետքի արևակէզ անապատներից և փոքր ինչ գովանալով Տաւրոսի լեռների վրայ, հասնում էր մինչև այստեղ,—այդ բոթաբեր քամին, աւելի և աւելի սաստկանալով, փոքր էր մնում, որ փշրէր բարակ ձողը, որի գլխին, աղմուկ բարձրացնելով, ծածանւում էր Բերգէն-Օղլու կարմիր և սև գոյնով դրօշակը:

—Տո՛ւր ինձ թիակը, դու յոգնեցար, սասաց նա Ասլանին, առնելով նրա ձեռքից թիակը:—Իսկ դու, իմ գառնուկ, անգործ մի մնար, վեր առ այդ գօտը և ջուրը գո՛ւրս ածա:

Ես վեր առայ փայտեայ գօտը և սկսեցի դուրս ածել ջուրը, որ այդ ժամանակ աւելի առատութեամբ թափուում էր նաւակի մէջ:

Արեգակն այժմ բոլորովին ծածկուեցաւ: Մառախուղը, հետզհետէ աճելով և ընդարձակուելով, բռնել էր ամբողջ հորիզոնը: Մի քանի քայլ հեռու ոչինչ չէր երևում. կղզին անհետացաւ մեր աչքից: Անձրևն սկսեց սաստկանալ: Վերևից հեղեղ, ներքևից ալէկոծութիւն:

Երբեմն լսում էր զանգակահարութեան մեղմ ձայն, որ խլանում էր քամու կատաղի մռնչիւնի մէջ: Զանգակի

այդ տխուր հնչիւնները լսելի են լինում միայն հանդիսաւոր թաղումների ժամանակ: Այդ ձայնն ինձ վրայ խիստ սոսկալի ազդեցութիւն գործեց: Միթէ շուտով պիտի կատարուէր մեր թաղումը. միթէ շուտով պիտի պատառուէր ջրային անդունդը և մեզ տանէր սառն գերեզմանի մէջ:

Ասլանը մտայոյզ էր: Նաւաստին եռանդով մաքառում էր փրփրած ալիքների հետ. իմ մէջ սիրտ չէր մնացել:

— Այդ ինչ զանգակի ձայն է, հարցրեց Ասլանը:

— Այնտեղ, կղզու մէջ, ազօթում են, պատասխանեց նաւաստին: Արեղաները սովորութիւն ունին, սաստիկ ալէկոծութիւնների ժամանակ, մօտենալ փեբրին և խմբով թափօր կատարել:

— Ուրեմն մօտ ենք կղզուն:

— Չատ հեռու չենք:

Ես փոքր ինչ հանգստացայ:

Պէտք էր նաւակի մէջ գտնուած բոլոր ծանրութիւնները ածել ծովը: Նաւաստին նետեց կողովը, որի մէջ գանազան մրգեր էր տանում արեղաներին: Տանձերը, խնձորները մի քանի վայրկեան ծփացին գոհակների վրայ, յետոյ անհետացան: Նետեց հացի պաշարը, որ ծովիկը զրել էր մեզ համար: Ասլանը նետեց նորին Սըբազնութիւնից իբրև յիշատակ ստացած փղոսկրեայ «Տիրուհին», ես էլ յիմարացայ, նետեցի ձեռքիս փայտեայ դօտը:

— Խելացի բան տեսար, նկատեց ինձ նաւաստին ժպտալով:

Ամեն ըոպէ սպասում էինք խորասոյզ լինելուն: Երբ մօտեցանք մի կողմից կղզուն, միւս կողմից ծովափին, նաւաստին ասաց. — Վտանգը պէտք է անցած համարել:

— Ընդհակառակն հէնց այժմ է գլխաւոր տազնապը, նկատեց Ասլանը:

— Ինչո՞ւ:

— Այժմ քամին փչում է արևմուտքից և ալիքները մղում են դէպի արևելք, այսինքն դէպի մերձակայ ծովեզրը. շուտով մեզ կը հեռացնեն կղզուց և, նաւակը զարկելով ցամաքի ժայռերին, կը փշրեն:

— Ես պիտի թողնեմ, որ տանեն և փշրեն:

Նա առաջարկեց թողնել նաւակը և լողալով անցնել կղզին, որ աւելի մօտ էր, քան թէ ցամաքը:

— Ես նպատակ չունիմ թրջուած կատուի նման վանքը մտնել, պատասխանեց Ասլանը:

— Ուրիշ հնար չկայ:

— Կայ:

— Նաւակը շուտով մեզ հետ կը փշրուի ժայռերի վրայ:

— Եթէ այս ուղղութեամբ տանենք, չի փշրուիլ:

— Այստեղ ուժգին յորձանք կայ:

— Հէնց այդ յորձանքը կ'ազատէ մեզ:

— Դուք համոզուած էք:

— Ինչպէս երկու անգամ երկու...

— Տեսնենք...

Գիտութիւնը և փորձը վիճում էին միմեանց հետ: Ասլանը՝ նայելով ալիքների ուղղութեանը, քամու ընթացքին, այդ համոզմունքն էր կազմել: Իսկ նաւաստին՝ հիմնուելով իւր փորձերի վրայ, բոլորովին հակառակ կարծիք էր յայտնում: Նա դարձեալ առաջարկում էր թողնել նաւակը և լողալով ընկնել կղզին: Թէ այսպէս և թէ այնպէս, տազնապը մեծ էր:

Նաւաստին դադարեց վիճելուց: Նա թէօրիայի մարդ չէր: Յանկարծ այն տեսանք, որ նա, նաւակից կապած երկայն պարանի ծայրը ձեռին բռնած՝ նետուեցաւ ջրի մէջ: Սկզբումը բոլորովին խորասոյզ եղաւ նա մի ծանր խարխիսի նման, որ դէպի յատակը գնալով, կանգնեցնում

է մըրկածուփը: Ես սաստիկ վախեցայ. կարծում էի, կորաւ նա: Բայց մի քանի ըոպէից յետոյ՝ կրկին յայտնուեցաւ նա, և սկսեց լողալ դէպի կղզին, իւր ետեից քաշ տալով նաւակը:

Ասլանը շուարած մնաց:

Կղզին այժմ պարզ երևում էր: Մառախուղի միջից ես նշմարում էի արեղանների մռայլ կերպարանքները, որոնք, ափի մօտ կանգնած, իրանց ջերմեռանդ աղերսաւոր ձեռքերը տարածել էին դէպի երկինքը:

— Բերդէն-օղլու ջանքերն իզուր անցան, ասաց Ասլանը, և մի անսովոր անհանգստութիւն երևաց նրա դէմքի վրայ: — Պարանը կտրուեցաւ...

Այնուհետև ինչ պատահեց, ինչ կատարուեցաւ մեզ հետ, ես մինչև այսօր էլ չեմ կարողացել ճիշդ կերպով պատկերացնել իմ մտքում: Այսքանը միայն աղօտ կերպով յիշում եմ, որ կոհակները կրկին բարձրացան և ես, ինչպէս երազի մէջ, զգացի, որ նաւակը այլ ևս իմ ոտների տակին չէր. ես ընկղմուած էի ջրի մէջ. մըրկածուփ ալիքները խաղացնում էին ինձ, երբեմն դէպի յատակը տանելով, երբեմն դէպի վեր բարձրացնելով, և այդ ժամանակը, կարծես, մի աներևոյթ զօրութիւն ինձ պինդ բռնած ունէր: Երկար մենք տարուբերում էինք ջրային տարերքի մէջ, բայց զօրութիւնն ինձանից չէր բաժանում:

Այդ զօրութիւնն ինձ դուրս հանեց կղզին, բոլորովին անզգայացած և կիսաշունչ դրութեան մէջ: Եւ դա ուրիշ ոչ ոք չէր, բայց միայն իմ բարեկամը, Ասլանը: Երբ աչքերս բաց արի, երբ փոքր ինչ ուշքի եկայ, ինձ մի խումբ արեղաններից շրջապատուած գտայ: Նրանք անզաղար փառք էին տալիս Աստուծուն, որ ազատուեցանք:

Վերև կախուած են սևամած ամպեր, ներքև ծըփում է ծովն աղետաբեր. Մորնչում է քամին, փայլում են շանթեր. Հեռուից լսում են խուլ որոտումներ: Տեսնում եմ արդէն՝ մօտ է փոթորիկ, Բայց ծովն եմ ձրգում անհիմ նաւակ: Խրփեց կայծակը. որոտաց երկինք. Յուզուեց, փրփրաց անդունդն անյատակ. Ջրային լեռներն գալիս են անվերջ... — Զարժեցէք, թեքեր, մի վհատիր, նաւակ, — Սարսափելի չէ մահը կռուի մէջ՝ ձանապարհի վրայ, դէպ՝ սուրբ նպատակ: Մեզ արշալոյսը սուրբ ազատութեան Սպասում է այնտեղ, միւս ափին անահ. — Գէ, ըշտապիր դու, իմ նաւ սիրական, Կամ ազատութիւն, կամ կռուի մէջ մահ:

Ս. Էջմիածնից մօտ երեք ժամաչափ դէպի արևմտահիւսիս գտնուում է մի լիճ, որին ժողովուրդը Այղը անունն է տալիս:

Այդը լճից շատ մօտ, թաւ եղէգնուտների և ճահիճների միջից յառաջանում է այն պատմական գետը, որ հնումը կոչւում էր «Մեծամօրի», իսկ այժմ ասում է Սևջուր: Այդը լիճը և այդ գետը միմեանցից բաժանողը մի երկու-երեք հարիւր քայլաչափ մերկ տափարակ է: Մերկ

եմ ասում, որովհետեւ ինչպէս գետի, նոյնպէս և լճի եզեր-
քը ծածկուած են խիտ եղէգներով, որտեղից տարին մի
անգամ մերձակայ գիւղացիները շինում են իրանց համար
փսիաթ կամ խսիրներ. իսկ այդ տափարակի վրայ բացի
սէզից՝ ոչինչ չես գտնիր:

Թէ լիճը և թէ գետը ունին տեղացիների աչքում
մեծ նշանակութիւն: Գետի եզերքի եղէգնուտները նուի-
րական են ամեն հայ քրիստոնէի համար, որովհետեւ այս-
տեղ, ասում են, խոզացած արածում էր մեր քրիստոնէ-
ութեան հիմնաքարը՝ յուժկու Տրդատը. այստեղից նա
մըրթմըրթալով վազեց՝ մեր Լուսաւորիչ պապի առաջին
գլուխը քարշ ձգած կանգնեց և նորա օրհնութեան շնոր-
հիւր կրկին մարդկային կերպարանք ստացաւ՝ մի ական-
ջով միայն Սև-ջրի գլխին արածող կենդանու յիշատակը
չմոռանալով: Մինչև այսօր էլ որսորդները, Սև-ջրի գլխին
խոզ սպանելիս, միմեանց ասում են. «Ի՞նչ կը լինէր հայ-
քրիստոնէի դրութիւնը, թէ որ մեզ պէս մի որսորդ սպա-
նած լինէր մեր խոզացած Տրդատ թագաւորին»: Միւսն
էլ պատասխանում է. «Ասում են՝ ինքը Տրդատ թագաւորը
զգուած է եղել խոզութիւնից, որսորդ տեսնելուն պէս
դիտամբ եկել՝ առաջներին ման է եկել, որ ինչ է՝ տան,
սպանեն, վերջանայ իւր շարշարանքները, բայց Աստու-
ծու հրամանովը նետ ու աղեղի լարը կտրուել է ու Տըր-
դատը ողջ է մնացել»:

Այդը լճի մասին պատմած առասպելներն աւելի
շատ են: Մինչև այսօր էլ ես անտարբերութեամբ չեմ
կարողանում յիշել Այդը լճի անունը, որ անձս չքստմսի:

Երբէք չեմ կարող մոռանալ, ինչպէս իմ հանդուցեալ
հայրը վսեմ և ազգու բառերով պատմեց ինձ Այդը լճի
բոլոր պատմութիւնները, երբոր ձիու վրայ՝ ինձ իւր
թարքն առած, գնում էինք Սև-ջրի գլուխը, մովրովից

ինձ համար արձակման վկայական ստանալու, որ գնամ,
ուսում առնեմ:

— «Դիտես, որդի, որ մենք մօտենում ենք Այդը լճին.
տես, ահա այն քարափի տակին է, մի փոքր էլ ներքև
գնանք՝ կ'երևայ: Այդը լիճը հասարակ ջուր չէ, շարունա-
կեց լուսահոգին. նորա ջուրը չէ գնում, միշտ կանգնած
է. նա անտակ է. մարդ չէ կարող նորա մէջ մտնել. իս-
կոյն կուլ կըտան հրեղէն կենդանիքը: Ուրիշ ջրերի միջի-
նը ձկներ ու գորտեր են, բայց Այդը լճի միջին սրանցից
ոչ մինը չես գտնիր. հրեղէն ձիանք, սպիտակ հրեղէն գո-
մէշներ, մարդաձուկն ու շատ ուրիշ գազաններով է լիքը
Այդը լիճը: Այդ հրեղէն ձիանոց ցեղիցն է— շարունակեց
հայրս— Քեօռ-օղլու դռա (թը*), որ թևաւոր է եղել: Այս
բանը տեսել է խառատ Մուրադը: Մուրադը նշանաւոր
վարպետ է եղել: Նա տասը-տասնուհինգ փայտէ ուղտեր
շինած, իրար քամակից կապած, սանձը ձեռին քաշելով՝
Կողբից աղ է եղել բերելիս. յանկարծ դիմացից տեսնում
է Քեօռ-օղլուն իւր կտրիճներով և երկիւղից քանդում,
վայր է թափում գետնին իւր ուղտերն ու դարձնում մի
կոյտ փայտ, իսկ ինքը մտնում է Այդը լճի եղէգների մէջը:

Քեօռ-օղլին, որ նկատած է լինում ուղտերի շարքը
և հիմա գտնում է փայտ դառած, շատ զարմանում է այս
հնարագէտ վարպետի վրայ. ուր որ լինի, հրամայում է
իւր քաշերին, պտրտել այն մարդուն և իւր առաջին կանգ
նացնել: Խուզարկուները, քաջ գիտենալով, որ մարդը
թագակացած կը լինի եղէգնուտների մէջ, իջնում են այն-
տեղ, ձիանքն արօտի թողնում և սկսում որոնել: Ամբողջ
օրը Քեօռ-օղլին գուր ժամանակ է կորցնում. վարպետը

*) Դռաթն էր այն առասպելական նժոյգ ձին, որի վրայ Քեօռ-
օղլին քաշութեան անունն է տարել:

մի ասեղ է դառնում ու կորչում: Ճարը կտրուած՝ նա հրամայում է ձայն տալ, թէ ինքը երգում է իւր սրովը, որ եթէ փայտէ ուղտերի տէրը դուրս գայ ինքնայօժար, նա նորան ոչ միայն չի պատժիլ, այլ և կը վարձատրի. ապա թէ ոչ՝ երեք շաբաթ շրջապատելով Այդը լիճը՝ քաղցած պիտի սպանի նորան:

Եւ ահա դուրս է գալիս Մուրադը դողալով և գլուխ տալիս Քեօռ-օղլուն:

—Քո՞ ձեռագործն են այդ ուղտերը, հարցնում է Քեօռ-օղլին:

—Հրամեյ էք, գլխիդ մատաղ:

—Ինչի՞ թագկացար:

—Քո անունից աշխարհն է սարսափում: Եւ, ուղիղն ասեմ, հիմա էլ չէի դուրս գալ, եթէ քեզ աւետիք տալու առիթը չունենայի:

Յետոյ Մուրադը պատմում է Քեօռ-օղլուն, որ նորա մատակ ձին լճի հրեղէն այդը (որձ) ձիուց յղացած է և մի տարուց յետոյ նա մի այնպիսի ձի է ունենալու, որի նմանը աշխարհի երեսին չի գտնուիլ:

—Ուրեմն դու ազատ ես. սարքիւր ուղտերդ, բարձիր բռններդ և ճանապարհ ընկիր:

Քեօռ-օղլու հրամանով՝ ի պատիւ այն Այդը ձիու, որ իւր սիրական Ղուաթի հայրն էր, այդ լիճը այն օրուանից կոչւում է Այդը լիճ:

—Այդ Այդը լճի ջուրը ո՞րտեղից է գալիս և ո՞ւր է գնում, հարցրի հօրս:

—Ասում են, որ ջուրը գալիս է Արագած սարի կատարումն եղած լճից. այդ բանն իմացել է մի հովիւ. նա այժի քամակից ձգում է իւր գաւազանը, որ ընկնում է Արագածի լճի մէջը: Մինչև մօտ է գալիս հովիւը, տեսնում է, որ իւր գաւազանը ջրի երեսին չէ: Այս երևոյթը

նորան կարծիքի տակ է ձգում, մանաւանդ երբ նա Արագածի ստորոտումը՝ ոչխարներն արածացնելիս, գլուխը գետնին է դնում, որ մի փոքր հանգստանայ, միշտ ջրի քշքշոց է լսում:

Մի շաբաթից յետոյ դիպուածով նոյն հովիւը՝ իւր ոչխարները դաշտն իջեցնելիս, Այդը լճի մէջ տեսնում է իւր փայտը: Հովուի կասկածն աւելի սաստկանում է. նա մտածում է, որ Արագածի գլխի լճի և Այդը լճի մէջ հաղորդակցութիւն կայ. անպատճառ ջուրը Արագածից գետնի տակովը հոսում է ներքև և գոյացնում է Այդը լիճը: Այդ բանն ստուգելու համար՝ հովիւը շալակում է մի ջուլալ դարման, բարձրանում է Արագածի կատարը և լցնում է ջրի մէջ. երկու օրից յետոյ դարմանի հետքը Այդը լճումն է գտնում:

—Ապա այդ ո՞նց է որ ջուրը միշտ կանգնած է մնում մի փոքրիկ լճի մէջ ու դուրս չի գնում, հարցրի հօրս:

—Աստուծու կամքովն է, պատասխանեց նա. Ղզլբաշի օրովը վերջին Հիւսէյն խան սարդարն ուկեցաւ Այդը լճի ջուրը խառնի Սև-ջրի հետ, երեք անգամ իրան երազ եկաւ, որ այդ լճի ջուրն անիծուած է. դա գնացկան ջրի հետ չպիտի խառնուի, աղամորզին այդ ջրի համը չպիտի տեսնի: Սարդարս ականջ չարեց ու Այդը լճի և Սև-ջրի մէջտեղի թմբան վրայ մի առու փորեց: Վերջին օրը, հէնց որ մի փոքրիկ թումբ էր մնացել, որ ջուրը գնար, մին էլ այն տեսան, որ լճի երեսը կրակ դառաւ, մէջիցը ահագին գազաններ կրակի հետ դուրս թռչկոտացին. քիչ էր մնացել, որ ամենքին էլ կուլ էին տալիս՝ թէ որ գլուխ չառնէին, չկորչէին: Ինքը սարդարը, հեռուում կանգնած, այս բաները իւր աչքերովը տեսել է ու էլ յետ առուն լցնել տուել:

Եւ արդարև՝ հետաքրքիր այցելուն այսօր ևս կը նկատ-

տի լինը և Մեծամօրին բաժանող տափարակի մէջտեղը մի հին առուի հետքերը:

Ահա այսպիսի առասպելների հետ է կապուած Այդր լճի պատմութիւնը: Սակայն հաւանականն այն է, որ մի ճահճալից լիճ է նա, որ տափարակի տակից անպատճառ կապ ունի Մեծամօրի գետի հետ:

Հ Ա Տ ՈՒ Ա Ծ Ե Ր Ր ՈՐ Դ

50. ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Դեղեցիկ էր նախաստեղծ աշխարհը, երբ դեռ նոր էր գոյացել Աստուծոյ խօսքով. բայց նորա վրայ դեռ ևս մարդ չկար և ոչ ոք էր, որ նորա գեղեցկութիւններով գուարճանար: Յերեկը պայծառ արեւը բարձրանում էր երկինքը և թափում էր երկրի վրայ լոյս ու ջերմութիւն. գիշերը երևում էր համեստ լուսինը և փայլում էին անհամար աստղեր. երկնքի կապոյտ կամարը՝ զարդարուած ոսկիափայլ և արծաթանման ամպերով, բարձր տարածում էր իւր հրաշալի անսահման վրանը. ալեկոծւում և վրդովւում էր անեզր ծովը. բարձրագոյն լեռները իրանց ձիւնափայլ գագաթներն ամպերից վեր էին բարձրացնում. ամենայն կողմ հոսում էին յորդառատ գետեր և եռում, ցանում էին իրանց ցումունքները՝ ջրվէժներ կազմելով. փրփրալից առուները խոխոջում էին, հոսելով անուշահոտ և հիւթալի խոտերի վրայով. բարձր արմաւենիները շարժում էին իրանց հպարտ կատարները. ստուերաշատ անտառները խօսակցում էին թեթև զովաբեր գեփիւռի հետ. կանաչ դաշտը, լցուած փարթամ ծաղիկներով, անուշահոտութիւն էր բուրում. սիրունիկ կենդանիները ցատքոտում էին և զուարճանում. խայտապիսակ

Թուշունները և փայլուն միջատները, ադամանդի նման ցուլալով, սլանում էին օդի մէջ. սոխակը հնչեցնում էր իւր բարձրահնչիւն երգը. բայց դեռ չէր ստեղծուած մարդը և ոչ ոք էր, որ վայելէր աշխարհիս բոլոր ճոխութիւնները:

Արեգակը, լուսինը և աստղերը՝ թէև գեղազարդ, բայց անզգայ՝ ընթանում էին իրանց համար սահմանած ճանապարհով, ոչինչ չնկատելով և ոչինչ չզգալով, մինչև անգամ իրանց սեպհական հրաշալիքներին անտեղեակ: Վարդը պճնւում էր և բուրում, առանց իմանալ կարողանալու, թէ որքան գեղանի է ինքը. սոխակի երգը չէր քաղցրացնում ոչ ոքի լսելիքը: Կենդանիք թէև ամենայն ինչ տեսնում ու լսում էին, բայց չէին հասկանում ոչ բնութեան գեղեցկութիւնը և ոչ այն ամենիմաստ օրէնսդրութիւնը, որով նա ստեղծուած էր. նոցանից ոչ մէկը չէր կարողանում մինչև անգամ գլուխը դէպի երկինք բարձրացնել և երախտագիտութեամբ ասել. «Ստեղծող, որքան մեծ ու ողորմած ես Դու, ինչքան սիրում եմ ես Քեզ»:

Տեսնելով թէ որքան գեղեցիկ է աշխարհս, Աստուած, լի անսպառելի սիրով, կամեցաւ ստեղծել մի էակ, որ իւր անմահ հոգով նմանուէր տիեզերքի Արարչին և կատարէր նորա օրէնքը ոչ թէ կարիքից ստիպուած, որպէս միւս անբան արարածները, այլ հասկանալով այդ օրէնքի զգոնութիւնը և քաղցրութիւնը, — որ ձգտէր դէպի ճշմարիտ բարին ու գեղեցիկը և գիտակցօրէն ու կամաւ հրաժարուէր չարից ու յանցանքից:

«Ստեղծենք մարդ մեր պատկերի և նմանութեան պէս», ասաց Տէրը, և ստեղծելով հողից անչափ գեղեցիկ մարմին, ներշնչեց նորա մէջ Իւր աստուածային բերանից բանիմաց հոգի: Մարդը բացաւ աչքերը, զարմացած և հիացած նայեց աշխարհին և նորա հոգին, զգալով իւր աս-

տուածային ծագումը, լցուեցաւ երջանկութեամբ, երախտապարտութեամբ և սիրով դէպի իւր Ստեղծողը:

«Չնայելով որ այսքան գեղեցիկ է երկիրը, բայց մարդս միայնակ տխուր կ'ապրի նորա վրայ», մտածեց Աստուած և, կամենալով կատարեալ կացուցանել նորա բաղդաւորութիւնը, ստեղծեց նորա համար մի գեղեցիկ կողակից: Ստեղծագործութիւնը վերջացնելով՝ Աստուած ասաց առաջին մարդկանց. «Սիրեցէք միմեանց, անեցէք և բազմացէք, լցրէք երկիրը, տիրեցէք նորան, ամենայն ինչ՝ որ նորա վրայ կայ, ձեզ եմ շնորհում»:

51. ՆԱԽԱՍՏՏԵՂԾ ԱՂԽԱՐՀ

I. Մեր դաշտ ու հովիտ ձիւնի մէջ թաղուած, Ծածկուած են սպիտակ սառը պատանքով. Մէդ-մառախուղով երկինքն է պատած, Իետը շղթայած սառցէ կապանքով: Սև-սև ամպերի թանձր ծալերից Արևի շողերն էլ չեն թափանցում, Իառնաշունչ հողմը մռայլ հիւսիսից Փրչում է կատղած և տխուր ցոլում: Եւ շուրջ տիրում է համը տըրտմութիւն. Վճիտ վտակներն էլ չեն կարկաչում. Ռհ, չարագուշակ է այս լուութիւն — Միայն ազուան է — անախորժ ճշում: Մարդիկ քաշուել են իրանց տները եւ տաքանալով օրհնում են կրակը, Կարծես մոռացած լինին խեղճերը Զերմութեան աղբիւր լոյս արեգակը:

II. Բայց կար ժամանակ, այլ էր պատկերը՝ Ուրախ ժպտում էր շքեղ բնութիւն:

երկինքը անամպ, ծաղկում երկիրը
 եւ շուրջը պայծառ լոյս, կենդանութիւն:
 Հովիտն ու դաշտը կանաչազարդուած,
 նրման գեղեցիկ դրախտին փափկութեան,
 Յիշեցնում էին մեր նախածնողաց
 Անդրանիկ օրեր սուրբ երջանկութեան,
 եւ կարկաչելով գըլորում էին
 Բիւրեղի նման մաքուր վտակներ,
 Օղբ երգերով թընդեցնում էին
 Դեղձանիկ, սոխակ ու ծիծեռնակներ:
 եւ երջանիկ էր մարդը աշխարհում,
 Միշտ գեղածիծաղ կապոյտ երկնի տակ,
 Ուրախ աշխատում, խաղաղ կեանք վարում.
 Օրհնած էր նորա քրտընքի վաստակ:

52. ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԻ ՏՈՒՆ

I. Տանուտէր Խաչոյի բնակարանը այն տներէց մէկն էր, որ թէ իրանց մեծութեամբ և թէ հարստութեամբ որոշուում էին միւսներէց: Այս տնից ամեն առաւօտ քշում էին դէպի նախիրը հարիւրի չափ անասուններ: Նրա կովերը, գոմէշները, եզները և ձիաներն ամենաընտիրն էին ամբողջ գիւղի մէջ:

Այս տանն էին պատկանում հազարի չափ ոչխարներ, որոնք սեփական հովիւների հսկողութեան ներքոյ արածում էին մերձակայ լեռների վրայ: Այս տանն էր պատկանում այն անագին ձիթահանը—ձէթ հանելու գործարանը,—որ գտնուում էր գիւղի մէջ: Այս տանն էր պատկանում այն գեղեցիկ ջրաղացը, որ գտնուում էր գիւղից

դուրս, որի անիւները տարուայ բոլոր եղանակներում անդադար բանում էին:

Բայց այն, որ աւելի նշանաւոր էին Խաչոյի հարստութեան մէջ,—դրանք էին նրա եօթը որդիքը, որոնք մինը միւսի յետեից հասած՝ ներկայացնում էին նրա տան հարստութեան սիւները: Որդիքը բոլորը ամուսնացած էին և տունը լցուած էր ամեն հասակի երեխաներով: Ամուսնացած էին և նրա թուռներից մի քանիսը. նրանք նոյնպէս զաւակներ ունէին: Եւ ծերունի Խաչոն իր առաջ տեսնում էր մի քանի սերունդ, որ ապրում և գործում էին միասին: Առակի ձև էր ստացել այն խօսքը, թէ՛ «Խաչոն այնքան զաւակ ունի՝ որքան և անասուն»:

II. Ծերունի Խաչոյի տունը հեռուից բոլորովին հին ու նախնական ամրոցի տպաւորութիւն էր գործում: Նա գտնուում էր մի բարձրաւանդակի վրայ և թէ իր շինուածքով, թէ գիւղքով ունէր այն բոլոր յարմարութիւնները, որոնք պէտք էին մի բնակութիւն ազատ պահելու համար արտաքին թշնամիներից: Այդ ամրոցը պատած էր չորս անագին պատերով, որոնք քառակուսի ձևով միմեանց հետ միանալով՝ թողնում էին իրանց միջնավայրում մի բաւական ընդարձակ տարածութիւն, որի վրայ կառուցուած էին զանազան շինութիւններ: Դրսից ոչինչ չէր կարելի տեսնել, բացի չորս բարձր աշտարակից, որոնք միացնում էին պարիսպների չորս անկիւնները: Ամրոցի շրջապատի մէջ գետեղուած էին բոլոր բնակութիւնները, բոլոր ծածկոցները, որ պէտք էին մի կանոնաւոր տնտեսութեան համար: Այստեղ էր ոչխարների գետնափոր գոմը. այստեղ էր ձիանների, կովերի և գոմէշների փարախը, որ անասունների տեսակի համեմատ՝ առանձին-առանձին բաժանմունքներ ունէր: Այստեղ էր սրահը՝ երկրագործական անօթները պահելու համար:

այստեղ էին մարագը, յարդանոցը, խոտանոցը, որոնց մէջ պահուում էր անասունները դարմանելու պաշարը. այստեղ կային զանազան մառաններ, զանազան ամբարներ մշակութեան բերքերի համար: Այստեղ կային և մի քանի խուղեր, որոնց մէջ բնակուում էին ծերունի Խաչոյի հովիւներն ու ծառաները իրանց ընտանիքներով. նրանք բոլորը ազգով քուրդ էին. կանայք ծառայում էին որպէս աղախիններ, իսկ տղամարդիկ որպէս նախրապաններ, հովիւներ կամ երկրագործական մշակներ: Մի խօսքով՝ այդ ամբողջի մէջ բովանդակուում էր մի փոքրիկ գիւղ, որի միակ տէրը և պետը ծերունի Խաչոն էր:

III. Նրա գերդաստանի համար որոշուած բնակարանները իրանց շինուածքով դեռ ևս պահպանել էին այն ժամանակուայ նախնական պարզութիւնը և ձևը, երբ մի ամբողջ ընտանիք ապրում էին մի վրանի տակ, այն դանազանութեամբ միայն, որ այժմ այդ վրանին փոխարինում էր քարեղէն շինուածքը: Նորա բազմաթիւ որդկերանց համար, որոնց իւրաքանչիւրը իր զաւակներով մեծ ընտանիք կարող էր կազմել՝ առանձին սենեակներ չկային, այլ բոլորը ապրում էին միևնոյն յարկի տակ, միևնոյն սենեակում, որ ոչ այլ ինչ էր՝ բայց եթէ չորս պատ, ծածկած անագին գերաններով: Այստեղ վառում էին, այստեղ թխում էին, այստեղ կերակուր էին պատրաստում, այստեղ բոլորը միասին պառկում էին: Այստեղ կարելի էր տեսնել նորածին հորթեր, փոքրիկ ուլեր, որոնք երեխաների հետ խառնուած՝ վազվզում, ցատքոտում, ազաղակում էին և տունը լցնում կենդանի աղմուկով: Մի խօսքով՝ դա նոյի տապանն էր, որտեղ գետեղուած էին ամեն տեսակ կենդանիներ: Այս բնակարանին կից էր մի երկրորդը: Դա առաջուանից զանազանուում էր նրանով միայն, որ առջևի ճակատը բոլորովին բաց էր և նայում

էր բակին: Դրան ևս կոչում էին սրահ, թէև դա ծառայում էր որպէս ամառուայ բնակարան: Սրահի միջից մի դուռն էր բացուում դէպի գլխաւոր սենեակը, և այսպիսով նա ներկայացնում էր բուն բնակարանի նախագաւիթը: Նրա կողքին կար մի առանձին փոքրիկ սենեակ, որ կոչուում էր օղայ. նրա դռները միայն այն ժամանակն էին բացուում, երբ տունը հիւր էր գալիս: Սա միշտ պահուում էր մաքուր ու զարդարուած:

53. Ա Ն Ձ Ր Ե Ի Ի Կ Ա Թ Ի Լ

Փայլուն կաթիլը գարնան անձրևի Մի օր հարց տրւաւ իր ընկերներին.
«Ինչո՞ւ մենք այս հին, աղքատ խրրճըթի
Լուսամուտն այսպէս բախում ենք ուժգին»:

Կաթիլներն իսկոյն տըւին պատասխան.
— Այստեղ երկրագործ մըշակն է ապրում.
Ուրախ աւետիք տալիս ենք նորան,
Որ նորա արտը ծըլում է, ծաղկում:

54. ՈՒՍԻՐ ԱՌԱՋ ՔՈ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒՆ

Ծառայել հայրենիքին և օգնել Դորա կարիքներին կարելի է այն ժամանակ, երբ դու տեղեակ ես նոցա, երբ դու ուսումնասիրել ես նորա պիտոյքները, երբ դու իմանում ես քո ազգի լեզուն: Ամենայն ուսման հիմը և գիտութիւն ստանալու միակ և ճիշդ ճանապարհը լեզուագիտութիւնն է, և եթէ դու կամենում ես կարգով ու հեշտ սովորել ուրիշ լեզուներ, աշխատիւր ուսանիլ նախ քո մայրենի լեզուն: Լեզուն է ազգայնութեան առաջին և գլխաւոր նշանը. լեզուն է այն միակ կապը, որ ազգի ան-

դամներին կապում է միմեանց հետ. այս պատճառով կարելի է ասել, թէ իւր մայրենի լեզուն չիմացողը համարեա թէ իւր ազգութիւնից հրաժարած և իւր ազգից օտարացած է: Այս ընուծիւնից դրած մի պարտականութիւն է, որ մարդս իմանայ իւր ազգի լեզուն. այս ընական պարտքը նոյն իսկ վայրենի ազգերը կատարում են ճշգրութեամբ, չնայելով որ նոցա լեզուն անկիրթ է, աղքատ, չմշակուած. ուրեմն որչափ անպատշաճ բան կը լինի, եթէ մէկը ազնիւ, հարուստ, հիմնաւոր և մշակուած լեզու ունենայ և չկամենայ սովորել: Բայց մայրենի լեզուի դիտութիւնը, բացի օգտակար լինելուց, պարտք էլ է. ամեն մարդ պարտաւոր է իւր հայրենիքին և ազգին ծառայել. բայց այս պարտքը մարդս չէ կարող ըստ արժանւոյն լըցուցանել, եթէ իւր լեզուն լաւ չիմանայ: Այս պատճառով ուսեալ և կրթեալ ազգերի մէջ մեծ ամօթ և նախատինք է իւր լեզուն չիմանալը և շատ անգամ ընկերութիւնների մէջ այսպիսիներին չեն ընդունում և նոցա երեսին մտիկ չեն տալիս: Ուրեմն ամենայն մարդ իւր ազգային պարտականութիւնները կատարելու համար պէտք է ուսանի իւր մայրենի լեզուն, որով և կարողանայ իւր ազգի հետ միանալ, նորա ուրախութիւններին ուրախակից և նեղութիւններին վշտակից լինել:

55. ԱՌ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ո՛վ մեծասքանչ դու լեզու,
 Ո՛վ հեշտ բարբառ մայրական,
 Փափկահնչիւն բառերուդ
 Նըման արդեօք այլ տեղ կան:
 Դու որ նախ ինձ հնչեցիր
 Նախ սիրոյ, ս՛հ, հեշտ խօսքեր,

Այն նախ զքեզ թոթովելս
 Դեռ իմ մտքէն չէ ելեր:
 Իմ մայրենի քաղցր լեզու,
 Կեանց անսասան, կեանց յաւէտ,
 Կեանց միշտ, լեզուդ Հայկարժան,
 Կեանց ծաղկալից-ծաղկաւէտ:
 Լեզու համակ սիրաշարժ,
 Քանի ճոխ, պերճ ու պայծառ
 Մինչ կը հնչես՝ դու քեզի
 Սրտերն ամեն գողացար.
 Հընչէ, հընչէ յաւիտեան,
 Վեհ դիւցազանց պերճ հրդ դու,
 Թօթվէ փոշիդ խոր մութէն,
 Ե՛լ երևան, պերճ երգ դու:
 Իմ մայրենի քաղցր լեզու,
 Կեանց անսասան, կեանց յաւէտ,
 Կեանց միշտ, լեզուդ Հայկարժան,
 Կեանց ծաղկալից-ծաղկաւէտ:
 Յաւերժական սուրբ գրոց մէջ
 Կեանց միշտ նորէն ու նորէն,
 Կշռեալ անուշ քո տողերդ
 Թո՛ղ ամեն սիրտ արծարծեն՝
 Չնորհ ունել Արարչէն,
 Կամ պէտք ըլլայ աղօթել,
 Չըթունքս սրտէ բորբոքած
 Կաղաղակէ անարգել.
 Իմ մայրենի քաղցր լեզու,
 Կեանց անսասան, կեանց յաւէտ,
 Կեանց միշտ, լեզուդ Հայկարժան,
 Կեանց ծաղկալից-ծաղկաւէտ:

56. ՍԻՐԻՐ ՔՈ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՒ ՔՈ ԱԶԳԻ

«Սիրելի Արամ—ասում էր միշտ հայրը իւր որդուն—
 ծնողներիցդ յետոյ քեզ ամենից մերձաւորը և ամենից սի-
 րելին քո ազգդ է. այս պատճառով՝ ինչպէս որ պարտա-
 կան ես քո ծնողներիդ սիրել, մեծարել և նոցա ծառա-
 յել, նոյնպէս էլ պարտական ես քո ազգդ և քո հայրենա-
 կիցներիդ սիրել և քո կարողութեանդ համեմատ նրանց
 օգնել: Այս պարտքը քեզ սովորեցնում է հայրենասի-
 րութիւնը, որ, կարծես, նոյն իսկ բնութեան մէջ տնկուած
 է, որովհետեւ վայրենի ազգերի և մինչև անգամ անբան
 անասունների մէջ էլ երևում է այդ ձգտումը: Այժմ լաւ
 մտածիր, սիրելիդ իմ, թէ որչափ մեծ ամօթ և նախա-
 տինք կըլինէր քեզ, եթէ այսպիսի մեծակշիռ յատկու-
 թեան կողմից աւելի պակասաւոր լինէիր, քան վայրենի-
 ները, կամ քո հայրենասիրութիւնդ նոցա հայրենասիրու-
 թիւնից աւելի մեծ և ազնիւ չլինէր: Հայրենասիրութիւնը
 կըթուած մարդկանց վրայ աւելի մեծ պարտականութիւն-
 ներ է դնում, և որչափ քո տարիքդ աւելանում են, այն-
 քան էլ պարտականութիւններդ դէպի քո ազգի օգուտները՝
 շատանում և բազմապատկուում են: Սիրելի բարին, սիրելի
 գաւակս, վախեցիր և փախիր չարութիւնից, մտքումդ
 պահիր քո պապերի, քո արժանաւոր նախահայրերի արար-
 քը, որոնք իրանց անձը չեն խնայել իրանց հայրենիքի
 համար, և դու կարող ես քո պարտքերդ սրբութեամբ
 կատարել: Ինչպէս որ բարի գաւակը պատիւ է համար-
 ւում իւր ծնողացը, նոյնպէս էլ բարի մարդը պարծանք
 և պատիւ է իւր ազգին: Եւ ինչպէս որ հայրը իւր անպի-
 տան որդուց իրաւունք ունի տրտնջալու, այնպէս էլ ազգը
 իրաւունք ունի իւր անպիտան անդամների վրայ դան-

գատուելու: Ուրեմն ազգիդ պատիւ ու պարծանք լինելու
 համար հետեւիր միշտ առաքինութիւն գործել և չարու-
 թիւնից հեռանալ»:

57. ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՁՑ

Մնաս բարեաւ, իմ հայրենիք,
 Իմ մանկութեան օրօրան.
 Քեզ պաշտել եմ ես վառ սրտով,
 Եւ կըպաշտեմ յաւիտեան:
 Թէպէտ բախտը խլում է ինձ
 Նուիրական քո գրկից,
 Բայց երբէք նա կարէ ջընջել
 Սուրբ անունդ իմ սրտից:
 Ուր էլ լինիմ, ուր էլ ապրեմ,
 Թէկուզ օտար երկրի մէջ,
 Սիրել եմ քեզ և այդ սէրը
 Կըմնայ անխախտ ու անշէջ:
 Մնաս բարեաւ, իմ հայրենիք,
 Ինձ կեանք, արև պարզևող.
 Մնաս բարեաւ... վերջին անգամ
 Համբուրում եմ քո սուրբ հող:

58. Ա Ն Ա Ռ Ա Կ Ո Ր Դ Ի Ն

Ի ծննդնէ եւթ մոլութեամբ լեալ,
 մինչ նովիմք եւ վախճանեցաւ:
 Խորն. Բ. ԿԱ.

Ա

Արշալոյսը ոսկեգօծեց Մասիսի ձիւնապատ դազաթ-
 ները: Աշխարհն արթնացաւ հայր Արամազդի հետ:

Ազատ Մասիսը կեանք առաւ: Արամազդն աչքերը բացաւ, նստեց իւր քարեայ գահի վրայ, աչքը յածեց քարեայ քնարանի չորս կողմը: Յաւերժական ծաղիկները շարիշար բարձրացրին իրանց չքնաղ գլուխները և ժպտացին ու ողջունեցին. «Բարի լոյս, մեծ Արամազդ»: Գեղամայ ծովակի ալիքները խնդալով, խոխոջելով, միմեանց հրհրելով՝ ծառացան, գլուխ իջեցրին արի Արամազդին ու գոչեցին. «Քո՛ւնդ անոյշ, աստուածների հայր»: Բացօթեայ թռչնակները հանեցին իրանց փոքրիկ նախշուն գլուխները թևերի տակից, քնաթաթախ աչքների մէկը բաց, մէկը փակ, բաց արին փոքրիկ մաքուր կտուցներն ու գեղգեղեցին բիւրաւոր դայլայլիկներ. «Բարի օր, բարի տեսութիւն, հայր», ասացին ամենքը»:

Աստուածների հայրը զուարթ դէմքով ողջունեց բովանդակ աշխարհին՝ շոյելով իւր սպիտակափառ երկայն միրուքը, աւետեց ուրախ օր: Փափուկ մամուռը, որ թաւիշի պէս բռնել էր գահը, աւելի ևս բարձրացաւ, խտացաւ, փափկացաւ. կաթնորակ աղբիւրը, որ նագով, շնորքով ծորում էր այրի աջ կողմից, նոր-նոր անուշիկ ձայներ հանեց: Նրա մաքուր ակունքից դուրս եկաւ մի յաւերժահարս ու լցնելով խեցեղէն փոքրիկ դոյլը արշալոյսի կարմրացած ջրով, մօտեցաւ Արամազդի սպասին: Հայոց աշխարհի պաշտպանը լուացուեցաւ, սրբուեցաւ յաւերժահարսի մագերով ու նստեց:

Մինչ այս, մինչ այն, աղօթարանը բոցավառուեցաւ: Երկինք և երկիր բռնուեցան ծննդական ցաւերով: Գեղամայ ծիրանի ծովն էլ տանջւում էր երկնքի և երկրի ցաւերով՝ նոյնպէս երկնում էր: Սար ու ձոր, հովիտ ու անտառ պլշած նայում էին ասեղ ծննդականներին: Բայց երկար չէին նորանց ցաւերը: Գեղամայ ծովի վրայ կարմրիկ եղէգնիկն սկսեց ծխախառն բոց ծխել. բոցի մի-

ջից վազեց մի խարտեաշ պատանեկիկ: Նրա մազերը հրեղէն էին, միրուքը բոցավառ, երկու աչքը երկու արեգակ: Արարած աշխարհը լուսաւորուեցաւ, տաքացաւ: Վահագն էր դա, հայր Արամազդի սիրելի որդեակը: Նա զինավառ և խրոխտապանծ կտրեց անցաւ օդի տարածութիւնը, մտաւ հայրենական այրը:

Հայր ու որդի փաղաքշանքով գրկախառնուեցան: Եւ աստուածների օրինակով Մասիսի լանջերում և ստորոտներում որքան եղնիկներ ու տատրակներ կային, բերան բերանի դրին, միմեանց համբուրեցին:

Բ

Անմահների ընտանիքը հետզհետէ ժողովուեցաւ գեղազարդ այրի մէջ:

Եկաւ Աստղիկ դիցուհին: Անմահական շուշանները, անթառամ վարդերը շարիշար թագ կապած նստած էին հրաշագեղ գլխի վրայ: Հայոց աշխարհի լուսինն էր դիցուհին. ամառնային լուսնի պէս նազելի, հեզահամբոյր, գեղեցիկ: Նա մի գեղեցիկ եղնիկ էր հեծած և երկու յաւերժահարս, բամբուկները ձեռներին, երգում էին նրա առաջ աստուածային երգեր: Եկաւ, գուրգուրալով փաթաթուեց Արամազդ հօր և Վահագն ամուսնու վզով:

Ապա եկաւ ոսկեմայր Անահիտը: Թէև նրան ոսկի արձան էին կանգնեցրել Աշտիշատում, բայց նա պարզ, անպաճոյճ կերպարանք ունէր. նման էր մի աշխատասէր և ժրպլուխ գեղջկուհու, որ աշխատելիս, քրտինք ու վաստակ անտես է անում: Իմաստութիւնը և զգաստութիւնը, որի հեղինակն էր դիցուհին, այն ժամանակները շրջում էին գծուծ հագուստների մէջ: Այսպէս և աստուածուհին:

Բայց նրան որդիական յարգանքով զլուխ էին տալիս Մասիսի քաջերը և բոլոր անմահների սպասաւորները:

Միմեանց յետևից հասան Նանէ դիցուհին: Միհր աստուածը Բագայառինն աւանից: Ամենից յետոյ եկաւ Ամանոր աստուածը, բերելով իւր հետ հայ երկրագործի աշխատութեան պտուղներից պարգև անմահներին: Այդ տարին երկրագործը, այգեպանը շատ գոհ էին նրանից և նա ուրախ էր: Նոր էին վերջացել նաւասարդի տօները, որ Հայոց աշխարհը յատկացրել էր իւր առատաձեռն աստուծուն. ուրախ-ուրախ տօնում էր, գոհ և երկրպագութիւն էր անում: Այդպիսի պատիւ ունէր նա, որ երկիրը դառն քրտինքով հերկել էր տալիս և փշի ու մացառի տեղ ոսկի ցորեն էր բուսցնում:

9.

Տրտունջ բարձրացաւ անմահների շրջանում առ հայրն Արամազդ. տրտճւնջ Արշակունի Արտաւազդ թագաւորի դէմ: Քաջ և աշխարհաշէն հօր այդ չար զաւակը ընդհանուր զայրոյթ էր պատճառել:

Այսպէս տրտնջաց Վահագն.

«Արտաշէս մեռաւ և դեռ գերեզմանի մէջ հանգիստ չառած, որդին նախանձելով նրան արած պատուին և համայնական սուղին, չարախօսեց անմահների վրայ, որոնց սիրելի էր թագաւորը, դառնութեան լեզի թափելով ասաց, թէ հայրը բոլոր աշխարհն իւր հետ տարաւ և այժմ ինչի վրայ պիտի թագաւորէ ինքը: Արտաշէսը պատանն ուսին եկաւ ինձ մօտ, դառնապէս անիծում էր որդուն: Յիշեցրեց՝ թէ ինչեր էր արել Արտաւազդը, քանի ինքը կենդանի էր: Ի՞նչ կրկինէր մանուկ Արտաշէսը, եթէ Սմբատ Բագրատունին չխնայէր նրան, փտարանդի

լինելով նրա հետ Պարսից երկիրը: Սմբատը պահեց, մեծացրեց նրան, մտցրեց Հայաստան, տարաւ նրան հօր դահի մօտ: Բայց անարժան արքայորդին կամենում էր իրանց բարերարին սպանել: Բաւական չէր այդ, մեր Մուրացան ցեղին վերջին պատուհասը հասցրեց: Արքայապատիւ Արզաւանի ապարանքը կործանեց, պատճառ դառաւ նրա և նրա որդու մահուան: Սակայն Արզաւանը Արտաշէսի սիրելին էր: Արզաւանն էր, որ թողելով իւր բարձն ու պատիւը Երուանդի մօտ, զնաց միացաւ մանուկ Արտաշէսի զօրքին, երբ սա գալիս էր Պարսկաստանից՝ վրէժ լուծելու և իւր գահն առնելու: Բարերար էր Արզաւանը, փառաւոր. բայց Արտաւազդ նախանձեց և, ապերախտութիւնից կուրացած, կարճեց նրա կեանքը»:

Զօրաւոր էր ոսկեմայր Անահիտի տրտունջը.

— Երէկ, ասաց նա թախծալի ձայնով, ես տեսայ այն սուզն ու վայնասունը, որ ընկել էր Արտաշէս թագաւորի ընտանիքի մէջ: Արտաւազդը քշել էր տալիս նրանց, ուղարկում էր հեռու աշխարհ, որպէս զի Արարատեան երկիրը իրան մնայ: Արքայագուն մանուկները լալիս էին անպաշտպան. կանայք ամօթահար ծածկում էին իրանց դէմքերը խոնուած ամբոխի մէջ. վայրագ զինուորները քշում էին... նրանց հեռացրին և Արտաւազդ հանգիստ նստեց իւր սովորական մոլութիւնների մէջ: Օրեր է անցկացնում մոլի թագաւորը. երկիրն անտէր է մնացել. մարդկանց դատը չեն լսում. հզօրն անզօրի ուսերին է նստած: Դեռ պատանի էր Արտաւազդը, երբ սկսեց անպատիւ անել իւր հարադատ մօրը, չարախօսելով նրա մասին: Արզաւան Մուրացանին Արտաշէսի աչքում վատաբանելու և նրա պատիւը խլելու համար, անպատկառ որդին խօսք բարձրացրեց Սաթենիկ տիկնոջ մասին, իբրև թէ Արզաւանին պատուում է իւր ամուսնուց շատ:

Աստղիկ դիցուհին էլ իւր զանգատն արաւ, ասելով որ Արտաւազըը սպանել է իւր քրմապետին, որ նորա հարազատ եղբայրն էր, որպէս զի մենակ մնայ: Խօսեցին և միւս աստուածները: Ամենից յետոյ խօսեց առատաձեռն Ամանորը.

— Անմահների հրամանով Արտաշէսը մտաւ մահուան անկողինը: Ես թագաւորի մօտն էի, երբ նա, տանջուած ու յուսակտուր, յիշեց նաւասարդի տօները: Գլուխը բարձրացրեց, անձկութեամբ աչքերը դէս ու դէն դարձրեց, թառանշ քաշեց: «Ո՛վ, ասաց, կըտար ինձ ծխանի ծուխը և նաւասարդի առաւօտը, եղնիկների վազելը և եղջերուների վազելը. մենք փող էինք ածոււմ և թմփուկ էինք զարնում»: Արտաւազըը լսում էր այդ խօսքերը, տրտընջում, որ հայրը չի մեռնում, որպէս զի ինքը թագաւորէ: Աստուածների դէմ զանգատուում էր, որ այդքան սիրում են նրան և քառասուն տարի նորա արած թագաւորութիւնը բաւական չեն համարում:

Տիրեց լուռութիւն: Այրի աղբիւրը սկսեց իւր բարակ ու անոյշ կարկաշիւնը. հողմերը դադարեցին. աստուածները լուռ սպասում էին:

Հայր Արամազդը լսեց այդ բոլորը, լսեց լուռ կերպով: Յօնքերը կիտեց, աչքերից բարկութեան շանթեր հանեց: Գաւազանը խփեց քարին և Մասիսի հիմունքները որոտացին: Ապա ասաց բարկացած.

— Գարձուխ Արտաւազդի թագաւորութիւնը, անիծուի նա և նորա պէս գաւակը: Նա որսի գայ Մասիսի ստորոտները. Մասիսի քաջերը բռնեն, ձգեն նորան խոր վիհի մէջ: Այդտեղ չմեռնի նա, լոյս չտեսնէ: Զղթայակապ տանջուի, միշտ տապալուի լոյս աշխարհ տեսնելու տենչանքով: Դժոխքից երկու շուն սպասաւորեն նրան, օր ու գիշեր լիզեն, կրծեն շղթաները. նա կարծէ, թէ իւր

շղթաները ահա կըկտրատուին, բայց դարբինները մուրճով ծեծեն իրանց սալերը, շղթաներն ամրապնդուին: Յաւիտեան ազատութիւն չտեսնէ Արտաւազըը, իւր ականջներով լսի դարբնոցների ձայնը, զայրանայ, բայց ի գո՛ւր...

Աստուածները այս հրամանը հասցրին իրանց քուրմերին:

Անցան դարեր: Հայր Արամազդը իւր փառաւոր ընտանիքի հետ հալածուեցաւ Մասիսի այրից՝ Հայաստանից: Ազատ Մասիսը, ձիւնով և սառնամանիքով շրջթայուած, մնաց անբնակ, մենակ: Միայն ալեոր արծիւը պտոյտներ էր անում նրա կողերով:

Մոռացուեցան հեթանոսական աստուածները... բայց Հայ դարբինը, ուշադիր մնալով պապենական խրատին, չմոռացաւ իւր գործը: Ամեն կիրակի օր ձեռքն է առնում ծանր մուրճը, երկու-երեք անգամ ծեծում է սալը: Արտաւազդի շղթաները հաստանում են, պնդանում...

Մո՛ւթ աշխարհումն է հօրից անիծուած անառակ որդին...

59. ԱՐՏԱԻԱԶԳԻ

Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին,
Զարկեցէք կռանը, շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան.
Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին:

Ահարկու ամպերը եկան ժողովուեցան,
Ծեր Մասեաց ճակատին սև քօղ փաթթեցին,
Դոռում է փոթորիկ զազանի նման,
Հառաչում, սուլում է կատաղած քամին:

Զարկեցէք կռանը:— Խորունկ քարայրից
Ահա չար հողմի հետ հասնում են ձայներ...

Յուրացաւ փայլակը,— արքայի աչքից
Դէպի վեր թռչում են բարկութեան կայծեր:

Կամի նա ելանել վրէժխնդիր հոգով՝
Իւր անվերջ տանջանքի թոյնը մահաբեր
Աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով,
Բայց ամուր են նորա ծանր շղթաներ:

Մտերիմ գամփոններ կրծում են կապանք,
Կրծում են անդադար կապանքն արքայի...
Ա՛րտաւազդ, վերջ չունի հոգուդ տառապանք,
Եւ դեռ շատ հեռու է վախճանն աշխարհի:

Եւ անզօր չարութեան քո կուռ հարուածներ
Դեռ պիտի փշրուին մեր մուրճի տակին.

Կ՛ունենանք մենք դեռ գեղեցիկ օրեր,
Դեռ հաշտ է երկինքը մեզսոտ աշխարհին:

Բայց եթէ՝ քարացած, մենք չենք լսելու
Բարբառը սուրբ սիրոյ, և վերածնութեան
Նոր կեանքի աւազան մեզ չէ փրկելու,—
Ա՛րտաւազդ, փշրուի թո՛ղ մեր կուռ կրռան.

Մենք էլ չենք զարկիլ երկաթի սալին,
Թո՛ղ կրծեն գամփոններդ ոտքիդ շղթաներ,
Արձակուին բազուկներդ, և դու աշխարհին
Դո՛ւրս արի բերելու կոտորած, աւեր...

Բայց ո՛չ, մենք փրկութեան դեռ հաւատում ենք.
Մեզ մի նոր երկնքից նոր լոյս կը բացուի.
Եւ ահա ծիածանն արդէն տեսնում ենք
Մենք ազատ, լուսաւոր մի նոր վիճակի...

Ջարկեցէք, դա՛րբբիներ, կռանը սալին,
Ջարկեցէք կռանը, շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան.
Ջարկեցէք, դա՛րբբիներ, կռանը սալին:

Հին-Հայոց համար տարուայ ամենատաք Օգոստոս ա-
միսը բարեկենդան էր, կաղանդ էր: Այն ժամանակ, երբ
բնութիւնը գարնանանման գեղեցկանում էր, մեր նախ-
նիք կատարում էին Նաւասարդի տօնը, որ նրանց տա-
րեգլուխն էր և սկսում էր Օգոստոսի 11-ին:

Նաւասարդին մի քանի տօներ էին կատարում և զը-
րանքը ամենքն էլ մեր հեթանոսութեան ժամանակուայ պա-
հապան աստուածների տօներն էին, քաջ նախնեաց յիշա-
տակները, կտրիճների մրցանքը և հասարակ ժողովրդի
խաղերն ու վայելքներն էին:

Այդ հանդէսները կատարում էին քրմապետները. մեր
քրիստոնէութեան ժամանակ նրանց փոխանակեցին խա-
չապսակ քահանայապետները, որոնք մեհեանների տեղը
եկեղեցիք շինեցին: Բնութիւնը իւր կերպարանքը չփո-
խեց, ազգն էլ իւր հանդէսները չփոխեց, այլ տօները
սրբեց և աստուածներին նուիրելու փոխանակ՝ ճշմարիտ
Աստուծուն և նրա նահատակներին նուիրեց:

Նաւասարդի տօնից քանի մի օր առաջ կատարում
էր Վարդածղի վարդանման «Աստղիկ» դիցուհու տօնը, ո-
րի փոխանակ մեր առաջին Հայրապետ Ս. Գրիգոր Լու-
սաւորիչը կարգեց «Վարդավառի» տօնը, Քրիստոսի պայ-
ծառակերպութեան տօնը, որ և մինչև այսօր տօնում
ենք պայծառապէս: Իսկ Նաւասարդի առաջին օրը ազ-
գային ամենից մեծ, պանծալի, սրբազան օրն էր, և
հանդէսները շատ օրեր էին տևում զանազան յիշատակ-
ներով, որոնք մի անունով «Ամանորայ» կամ «Աշխարհա-
ժողով» էին ասում: Այս վերջին անունը ցոյց է տալիս,
որ այդ տօնի հանդիսականները միշտ մեծ բազմութեամբ
էին ժողովում: Թագաւորը իւր Արարատեան չորս բիւր

գնդովը, նախարարները ութ բիւր գումարտակներով, վեց հարիւր գաւառատեարք և չորս հարիւր գահակալ իշխաններ, բազմաթիւ քրմեր իրանց պաշտօնեաներով և ուրիշ հազարաւոր հանդիսականներ զարդարում էին այս տօնը:

Հայոց այս «համաշխարհական» տօնի պատճառը երեք բան էր. առաջին՝ հին տարեմուտն էր, որովհետև «Նաւասարդ» նշանակում է «Նոր տարի». երկրորդ՝ Նաւասարդը ջրհեղեղի յիշատակն էր, ուստի և այդ օրերը զանազան ջրախաղեր էին կատարում՝ տապանով Արարատ սարի վրայ մարդկանց փրկութեան տօնը յիշատակելու համար. իսկ մենք հիմա ջրի այս հանդէսը Վարդավառի օրն ենք կատարում. երրորդ՝ «Ամանորայ ամենաբեր» դից տօնն էր, որ բերքի և առատութեան աստուածն էր համարում:

61. ԵՐԵՔ ԱՐՄԱԻՆԻ

Աւազոտ դաշտում Արաբիային
Արմաւի երեք գոռոզ ծառ կային,
Ու նոցա տակի գետնից աղբերակ
Կարկաչեցնում էր ջուրն իր սառնորակ.
Ստուերախիտ սաղարթն հովանի էր վրան,
Տօթից, աւազից էր պատսպարան:

Չատ-շատ տարիներ անյայտ գլորուեցան,
Խոնջացած պանդուխտք բնաւ չմօտեցան,
Չապաւինեցան նոցա խորշակէն,
Բերան թաց չարին պաղ աղբիւրակէն.
Ցամբեցնում էին շողք արեգակին
Ծառերի սաղարթն և ջուրն այն ակին:

Սկսան ծառերն Տէրէն գանգատիլ.
«Միթէ խամբելու աշխարհ ենք եկել.

Բըսանք, ծաղկեցանք մենք սննպատակ,
Տօթի, փոթորկի յար միշտ նպատակ,
Ոչ մի պանդխտի չեղանք ապաստան...
Անարդար է, Տէր, Քո սուրբ դատաստան»:

Հազիւ լռեցան, ահա հեռուից
Փռչին դէպի վեր բարձրացաւ գետնից,
Ջիլ-գիլ լսուեցան զանգակի ձայներ,
Երևան եկան ճամկաւոր հակեր.
Ինչպէս ծովի մէջ տատանած նաւակ,
Չարք-շարք գալիս էր ուղտի երամակ:

Սապատողներէն դէպի վայր կախուած՝
Չերտաւոր և խայտ վրանների քղանց,
Եւ երբ թուխ ձեռք էր այն բարձրացընում,
Ցուլուն աչքեր էր տակից երևում.

Ու թամբաղեղին կրծքով դէմ ընկած՝
Դըրդում էր Արաբն իր ձին մուկեցնած:

Չին դիք կանգնում էր յետին ոտքի վրան,
Ոստնում նետահար յովազի նման.
Ճերմակ թիկնոցի ծալքերը ուսին
Չքեզ ծածանում էին հեծեալին,
Որ որոտնաձայն աղաղակներով՝

Չէնքը խաղցնում էր՝ ուժգին չափ տալով:
Այսպէս աղմկով հասաւ կարաւան.
Ծառերի ներքև հարուեցաւ վըրան.
Դատարկ անօթներ լըցուեցան ջըրով.
Եւ արմաւենիք թարմ գագաթներով
Նորեկ հիւրերին բարև են տալիս.
Աղբիւրն էլ նոցա իւր ջուրն է տալիս:

Հազիւ թէ մութը իջել էր գետնին,
Կացինը դիպաւ նոցա արմատին.

Եկևորքը ծառերն վայր կործանեցին,
 Մտահակ տղայք կաշին քերթեցին.
 Փայտը մանրեցաւ սուր-սուր դանակով,
 Խարոյկ դիզեցաւ, այրեցաւ կրակով:
 Երբոր արևմուտք մէզը մեկնեցաւ,
 Կարաւանն իսկոյն տեղէն շարժեցաւ.
 Նորա ետեից չոր գետնի վըրան
 Գորշ թեթև մոխիր եկաւ երևան.
 Մնացածն արևի շողք ցամքեցուցին.
 Հովերն էլ ասդին անդին ցրուեցին:
 Ու խոպանացաւ վայրըն այն գուարթ.
 Էլ չեն շշընջում աղբիւր ու սաղարթ,
 Խեղճ ակին ոչ որ չի պատըսպարում.
 Աւագն էլ նորան է միշտ տոչորում.
 Գիշատիչ անգղը այնտեղ է գալի,
 Ծուլատել-լափել որսն իր նողկալի:

62. ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՍԿԻՉԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայոց Աբգար թագաւորի ժամանակն էր, որ մեր Փրկիչ Յիսուսը Երուսաղէմում հրաշքներ և բժշկութիւններ էր անում և Խորայեւացոց ազգին քարոզում էր ղէպի ապաշխարութիւն: Աբգարը՝ լսելով նորա հրաշագործութիւնների մասին և ինքն էլ հիւանդոտ ու մարդկային բժշկութիւնից յոյսը կտրած լինելով, դեսպաններ է ուղարկում Յիսուսի մօտ և խնդրում է նորան գալ, բժշկել իւր հիւանդութիւնը: Թագաւորը իւր նամակի մէջ յիշում է այն հրաշագործութիւնների մասին, որ նա գործել է չրէաստանում և խոստովանում է, որ նա Աստուած է և Աստուծոյ Որդի, ուստի առաջարկում է նորան գալ և

բնակուիլ իւր քաղաքում, ասելով՝ որ ես ունիմ մի փոքրիկ քաղաք, Եդեսիա անունով, որ ինձ և Քեզ բաւական է. այստեղ Դու կարող ես հանգիստ լինել և ազատուիլ հրէաների ամբաստանութիւններից և հալածանքներից: Յիսուսը, ստանալով Աբգարի նամակը, ասում է. «Երանի նորան, որ դեռ չտեսած՝ հաւատում է ինձ, որովհետև որոնք տեսնում են ինձ, չեն հաւատում, իսկ որոնք չեն տեսնում, հաւատում են և կ'ապրեն»: Յետոյ աւելացնում է, որ Ինքը չէ կարող գալ և նորան բժշկել, որովհետև պէտք է կատարէ այն ամենը, ինչի համար որ աշխարհ է եկել. բայց խոստանում է Իւր մահից յետոյ Իր առաքեալներից մէկին ուղարկել, որ նորան բժշկէ: Յիսուսը Իւր նամակի հետ, որ գրում է Թովմա առաքեալը, ուղարկում է և Իւր անձեռագործ պատկերը—Դաստառակը, որ երկար ժամանակ պահում էր Եդեսիայում:

Յիսուսի յարութիւնից յետոյ, ինչպէս որ Տէրը հրամայել էր, Թովմա առաքեալը ուղարկեց Թաղէոս առաքեալին, որ Քրիստոսի եօթանասուն աշակերտներից մինն էր՝ Աբգարին բժշկելու: Թաղէոս առաքեալն եկաւ, բժշկեց թագաւորին և մկրտեց թէ թագաւորի տունը և թէ պալատականներից շատերին: Աբգար թագաւորը, ուրիշ վեհապետների նման, չկամեցաւ ուժով տարածել քրիստոնէական հաւատը, այլ տուեց իւր հպատակներին խղճմտանքի և կամքի ազատութիւն՝ ընդունելու նոր կրօնի վարդապետութիւնը. իսկ ինքը միայն բարոյապէս էր նպաստում նորա ընդհանրանալուն: Այդ նպատակով նա երկու անգամ նամակ գրեց Հռոմայեցոց կայսեր Տիբերիոսին, յայտնելով այն սքանչելիքների մասին, որ գործել էր Յիսուսը և գործում էին նորա աշակերտները նորա անունով: Կայսրը իւր կողմից Աբգարին խոստացաւ, որ ազատութիւն կըտայ իւր հպատակներին դաւանաբանա-

հան գործերում և խիստ կերպով կրպատժէ նոցա, որոնք կըհալածեն քրիստոնեաներին: Արգարը նամակ գրեց նաև իւր ցեղակից և դաշնակից թագաւորներին՝ Պարսից Արտաշէսին և Բաբելացոց Ներսէհին նոյն բովանդակութեամբ, ինչպէս էր կայսրինը: Բայց առաջին քրիստոնեայ թագաւորը, դեռ չստացած իւր վերջին երկու նամակների պատասխանը, մեռնում է 32 թուականին Ք. Յ.

63. * * *

Երբոր տեսնում եմ, որ մոլեգնաբար
 եղբայր եղբօր դէմ դարան է գործում,
 եւ մարդիկ չընչին շահերի համար
 Մատնում են իրար և դաւաճանում.
 Երբ ես տեսնում եմ՝ սիրոյ դիմակով
 Ծածկուած անսահման ինքնասիրութիւն,
 Իդէալների շողշողուն փայլով
 Քօղարկուած կոպիտ նիւթապաշտութիւն,
 Այն-ժամ ակամայ ինձ այցելում է
 Յոռետեսութեան մոլեգին ոգին,
 եւ լոյս աշխարհըն աչքիցս ընկնում է
 Այդ չարաբաստիկ մռայլ ըոպէին.
 եւ իմ շրթունքից, կարծես, ուզում են
 Թափուել անէծքներ մարդկութեան վրբան,
 եւ ապրստամբում, ալեկոծում եմ
 Անողորքելի ովկիանի նըման:
 Էլ չըկայ այդ-ժամ ինձ համար աշխարհ,
 Ուր անկեղծ սիրով մարդիկ են ապրում.
 Այդ-ժամ կայ միայն մի վայրի անտառ,
 Որտեղ գոյութեան արիւնուշտ կուում
 Արիւնածարաւ գայլեր են վխտում...

Բայց յանկարծ անա սրբտիս խորքերից
 Լսում եմ ազնիւ բարկութեան գոչիւն.
 —«Միթէ մոռացար Քրիստոսի ճակտից
 Առուակի նման կարկաչող արիւն.

Միթէ մոռացար

Այն հազարաւոր մարտիրոսներին,
 Որ սուրբ արիւնով, մահով չարաչար
 նորա կտակը մեզ աւանդեցին...»
 Իսկոյն ինձ համար բացուում է արագ
 Ահա վարագոյրն հեռու անցեալի,
 եւ աչքիս առաջ ներկայանում է
 Մի սուրբ բազմութիւն նահատակների...
 Ահա ներոնի հեթանոսական
 Խաւար պարտիզում վառ-վառ ճրագներ—
 Զինաւորներ են Քրիստոսի անուան,
 Կենդանի մարդկանց վառուող մարմիններ—
 Փայլուն վկաներ մարդասիրութեան:
 Ահա կրկէսի լայն ասպարիզում
 Հռոմի զոհերը, շարիշար կանգնած,
 Պիտի յօշոտուին վագրի ճանկերում,
 Մարդկային սիրով նոքա տողորուած:
 Ահա ճարճատող խարոյկի վրբան
 Բոցավառում է կենդանի մարմին—
 Մեռնում է յանուն մարդասիրութեան,
 Բայց ջերմ աղօթք է նորա բերանին...
 Իմ աչքի առջև գալիս, անցնում են
 Անվերջանալի կորովի դէմքեր,
 եւ ջերմ հաւատով նոքա պարպում են
 Մահաբեր թոյնով լի-լի բաժակներ.
 եւ իմ սրտի մէջ խորը ցայտում են
 նոցա կշտամբանք, նոցա հայեացքներ...

64. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ

Երբ Հայոց թագաւոր Տրդատը դեռ ևս Հռոմումն էր, նորա մօտ ծառայում էր մի Գրիգոր անունով մարդ: Գրիգորը այն եղեռնագործի (Անակի) որդին էր, որ սպանեց Տրդատի հօրը՝ Խոսրով թագաւորին, որսի ժամանակ, և ինքն ու իրան բոլոր գերդաստանն էլ մահամերձ թագաւորի հրամանով սպանուեցան: Անակի որդիներից միայն Գրիգորն ազատուեցաւ սպանուելուց, այն որդին, որ ծնուել էր Վաղարշապատում: Եւթազ անունով մի մարդ ազատեց նորան և իւր ստնդու Սօֆիայի հետ տարաւ Կեսարիա, ուր և մկրտել տուեց և անուանեց Գրիգոր: Գրիգորը կրթութուեցաւ քրիստոնէական ուսման մէջ, սնաւ առաքինութեամբ և ուսաւ Հելլենական դպրութիւն: Յետոյ նա ամուսնացաւ մի Մարիամ անունով քրիստոնեայ աղջկայ հետ և նորանից ունեցաւ երկու զաւակ՝ Արիստակէս և Վրթանէս: Երեք տարուց յետոյ երկու ամուսնակիցները միահաւան քակեցին իրանց ամուսնական կապը. Մարիամը՝ փոքր որդին վեր առնելով, վանք քաշուեցաւ, իսկ Գրիգորը, իւր մեծ որդին թողնելով դայեակի մօտ, զնաց Հռոմ: Գրիգորը լսել էր, որ իւր հայր Անակը սպանել է Տրդատի հօրը, ուստի մտքումը դրեց իւր ծառայութեամբ քաւել հօր յանցանքը: Գրիգորը Տրդատի հետ եկաւ Հայաստան: Երիզայ քաղաքում, երբ Տրդատ իւր յաղթութիւնների համար գոհ էր մատուցանում Անահիտ Աստուծուն, հրամայեց Գրիգորին, որ նա էլ երկրպագէ միւսների նման, Գրիգորն առաջին անգամն էր, որ ընդդիմացաւ իւր տիրոջ հրամանին: Թագաւորը բարկացաւ և հրամայեց սարսափելի շարշարանքների ենթարկել նորան, մանաւանդ երբ տեղեկացաւ, թէ նա Անակի որդին է. բայց Սուրբը

անտրտունջ տանում էր ամենը: Աստուծոյ զօրութեամբ մխիթարուած և նախախնամութեան տնօրէնութեամբ մեծ առաքելութեան համար սահմանուած լինելով, Սուրբ Գրիգորը դիմացաւ տասն և չորս անտանելի պատիժների: Այդ պատիժներից յետոյ Տրդատը հրամայեց ձգել նորան մահապարտների խոր վիրապը, որ գտնուում էր Մասիսի ստորոտում: Այս անցքը պատահեցաւ 287 թուին: Այնուհետև զայրացած թագաւորը միմեանց յետեից երկու հրովարտակ հանեց, որոնցով խստօրէն արգելում էր քրիստոնէութիւնը և հրամայում էր ջերմեռանդութեամբ պաշտօն մատուցանել անկենդան կուռքերին: Գրիգորը տասն և հինգ տարի մնաց Խոր-Վիրապում, որ լի էր թունաւոր օձերով, և Աստուածային հրամանով բուրոյվին անվնաս մնաց այդ սողունների մէջ: Աւանդութիւնն ասում է, որ մի պառաւ կին այդ ժամանակամիջոցում կերակրում էր նորան օրական մի կտոր ցամաք հացով:

Այդ ժամանակներն էր (301 թ.), որ հռոմայեցոց կայսր Դիոկղետիանոսի ձեռքից փախաւ Հայաստան հաւատացեալ կոյսերի մի խումբ, որոնց առաջնորդներն էին Հռիփսիմէ և Գայիանէ, որովհետև կայսրն ուզում էր Հռիփսիմէին կին առնել ուժով, մինչդեռ վերջինս չէր կամենում: Սորա եկան և բնակուեցան Վաղարշապատ քաղաքում մէկ հնձանի մէջ: Տրդատը Դիոկղետիանոսի նամակից իմացաւ այդ մասին և տեսնելով Հռիփսիմէի գեղեցկութիւնը, ինքը կամեցաւ ամուսնանալ նորա հետ: Պոյսն ընդդիմացաւ և թագաւորը կոտորել տուեց բոլոր խումբը, որոնք 35 հոգի էին: Այս անիրաւ արիւնհեղութեան համար Աստուծոյ պատուհասը հասաւ թագաւորի և նորա պալատականների վրայ. նորա կորցրին իրանց խոհականութիւնը և անասնական բնաւորութիւն ստացան: Յետոյ

Տրդատի քոյր Խոսրովիդուխտի կրկնակի տեսիլներից զըրդուած հանեցին Ս. Գրիգորին Խոր-Վիրապից, թէև սկզբում նորան արդէն մեռած էին համարում: Ս. Ծերունին նախ թաղեց կոյսերի մարմինները և շինեց նոցա վրայ վկայարաններ, որին ամենայն եռանդով և իբրև հասարակ մշակներ մասնակցում էին թագաւորը, նախարարները և Խոսրովիդուխտը, ապա 65 օր թագաւորին, պալատականներին և հասարակութեանը քարոզելուց յետոյ, բժշկեց նոցա: Այսպէս ահա 302 թ. Հայաստանում նորոգուեցաւ քրիստոնէական հաւատը, որ Արգարի ժամանակ մասնաւորապէս ընդունուել էր և նորա յաջորդների ժամանակ, հալածանքների ենթարկուելով, մոռացուել, թէև, չէ կարելի ուրանալ, կային ծածուկ երկրպագողներ ճշմարիտ Աստուծուն: Այնուհետև Ս. Գրիգորը թագաւորի և նախարարների հետ պտըտեցին Հայաստանի գանազան կողմերը, ամենայն տեղ կռատունները քանդեցին և նորանց տեղը Քրիստոսի խաչը կանգնեցրին: Այսպէս այն մարդու որդին, որ սպանելով մեր արժանաւոր թագաւորին, գցել էր մեզ տառապանքների գիրկը, հանեց մեր աշխարհը և մեր ազգը հեթանոսական խաւարից և տարածեց նորանում քրիստոնէական հաւատի փրկարար և կենդանաբեր լոյսը: Թագաւորը՝ նախարարների և իշխանների միաձայն հաւանութեամբ, Ս. Լուսաւորչին ընդհանուր քահանայապետ ընտրեց և ուղարկեց Կեսարիա Ղեւոնդիէս պատրիարքի մօտ, որ թաղէոս առաքեալի յաջորդն էր, որպէսզի ձեռնադրէ նորան քահանայապետ Հայոց աշխարհին: Ղեւոնդիէսը մեծ ուրախութեամբ կատարեց Տրդատի խնդիրը: Կեսարիայից վերադառնալով Հայաստան՝ Ս. Գրիգորը քանդել է տալիս մեհեանները և նորանց տեղը եկեղեցիք է կառուցանում: Մուշ քաղաքի մօտ շինում է, ի միջի այլոց, Ս. Կարապետի վանքը, գետեղե-

լով Սուրբի նշխարների մի մասը, որ մինչև այսօր հրուշակաւոր ուխտատեղի է Հայաստանում: Յետոյ գալով Վաղարշապատ քաղաքը, եփրատ գետում մկրտում է Տրդատ թագաւորին իւր ընտանիքով, բոլոր նախարարներին և զօրքին: Այնուհետև Լուսաւորիչը, թագաւորի հետ շրջելով Հայաստանի ամեն կողմերը, մկրտում է ամենքին, շատ տեղերում ուսումնարաններ է բաց անում. ժողովում է քուրմերի որդիներին և նորանց ուսուցիչ է նշանակում նորաբաց ուսումնարաններում յոյն և ասորի լեզուների, որովհետև այն ժամանակ հայերը զեռ այբուբեն չունէին և բոլոր գրագրութիւնները օտար լեզուներով էր լինում: Քուրմերի որդիներից արժանաւորներին Լուսաւորիչը եպիսկոպոս է ձեռնադրում և գաւառների ու քաղաքների վրայ տեսուչներ է կարգում. նոյնպէս կարգադրում և բազմացնում է քահանաների և ստորին պաշտօնակալների թիւը, շինում է շատ եկեղեցիներ, վանքեր, կուսանոցներ և հեթանոսական տօների փոխանակ սահմանում է քրիստոնէական տօներ: Եւ այսպէս ամբողջ Հայաստանը յեղաշրջում է կռապաշտութեան խաւարից դէպի քրիստոնէութեան լոյսը:

Եկեղեցին այսպէս կարգաւորելուց յետոյ, Ս. Գրիգորը իւր պաշտօնը յանձնում է Արիստակէս որդուն և ինքն առանձնանում է Սեպուհ սարը և Մանիա այրի մէջ իւր վերջին օրերն անց է կացնում մենական ճգնութեամբ (331 թ.): Տրդատ թագաւորն էլ, Լուսաւորչի մահից յետոյ, անբաւական իւր նախարարներից, առանձնանում է նոյն այրի մէջ և, չնայելով նախարարների խնդրանքին այլևս յանձն չէ առնում թագաւորել նոցա վրայ: Նախարարները՝ տեսնելով որ Տրդատը հրաժարուում է նոցա առաջարկութիւնն ընդունելուց, տիրանենգաբար թունաւորում են նորան և այդպիսի դառն վախճան են տալիս մեծ և

բարեպաշտ թագաւորի արդիւնաւոր կեանքին: Սուրբ թագաւորը մեռնում է 56 տարի թագաւորելուց յետոյ:

65. Ք Ա Հ Ա Ն Ա Յ

Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վրայ,
Գողգոջուն ձեռքերն երկինք ամբարձած,
Գլխառատ աչերն լի արտասուքով,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած:

Որին ամենքը հայր են անուանում,
Ծանօթ-անծանօթ հաւասար յարգում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Սրտի գաղտնիքը նորան են յայտնում:

Քահանայ է նա, քաւոյ մեղքերի,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
Երկնաձիր գանձին նա է արթուն դէտ:

Երբ մենք, թաթախուած Ազամի մեղքով,
Եկանք այս աշխարհ լցուած ցաւերով,
Ո՞վ սրբեց-մաքրեց մեր հին մեղքերը,
Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով:

Կամ՝ երբ ժանտախտած ընկած մահճումը,
Մտատանջ, անյոյս մահ էինք խնդրում,
Պանդխտի նման ամենից թողուած,
Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութիւն:

Կամ՝ երբ մոլորուած գառներու նըման
Կոյր վազում էինք դէպի խորխորատ,
Ո՞վ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
Դիւական գրքէն հանեց անարատ:

Կամ՝ երբ մեղսալից աչքներս բընաւ
Ձենք համարձակում երկինք ամբառնալ՝

Ո՞րին ենք կանչում միջնորդ հաշտութեան,
Ո՞ւմով յոյս ունինք թողութիւն ստանալ:

Եւ կամ զբաղուած ունայն գործերով,
Մոռցել ենք Աստուած, կրօն, սուրբ հաւատ,
Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
Արտասուք թափում աչքէն յորդառատ:

Քահանան է այն և միշտ քահանան,
Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ:

Ե՛կ, պատուենք, եղբարք, այդ սուրբ քահանան,
Սիրենք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իւր որդոց վրայ
Պատրաստ է հըսկել անքուն աչքերով:

Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
Չուզեց փառք, պատիւ, զբօսանք աշխարհի.
Քանց սուրբ քահանան էլ ո՞վ է կարող
Արդեօք մեզ համար լինել հայր բարի:

66. Ն Ե Ր Ս Է Ս Մ Ե Ծ Ը

Ներսէս Մեծը Գրիգոր Լուսաւորչի որդի Ս. Վրթա-
նէսի թոռն էր: Սա իւր բոլոր կեանքի մէջ ջանք էր անում,
որ քրիստոնէութիւնը և քրիստոնէական առաքինութիւնն
ամենայն տեղ տարածուի ու հիմնաւորապէս հաստատուի
Հայաստանում: Ներսէս Մեծը՝ սնուած լինելով նախ Բիւ-
զանդիայում և ապա Կեսարիայում, երբոր նստեց կաթո-
ղիկոսական գահի վրայ, տեսաւ որ քրիստոնէական դաս-
տիարակութիւնը պակաս է ժողովրդեան մէջ և շատ հար-
կաւորութիւններ կայ լրացնելու: Նա այդ բանի վրայ հոգս

քաշեց և շատ դժուարութիւնների յաղթելով, կռուեց կր-
 ուապաշտական մնացորդների դէմ և քրիստոնէութիւնը
 գործով սկսեց արդիւնաւոր կացուցանել ժողովրդի հա-
 մար: Ընդհանուր ժողով կազմելով աշխարհականներից և
 հոգևորականներից, կուապաշտական խիստ սովորութիւն-
 ների տեղ ողորմածութիւն հաստատեց, որովհետև հեթա-
 նոսական օրէնքներով բորոտներին, իբրև պիղծ մարդ-
 կանց, հալածում էին, և նրանք անապատներում էին իրանց
 համար բնակութիւն հաստատում և ոչ ոք չկար, որ մխի-
 թարէր նոցա թշուառ վիճակը. անդամալոյծներին չէին
 խնամում և անծանօթ հիւրերին ու օտարականներին չէին
 ընդունում: Այս բոլոր բաները ցոյց էին տալիս, որ կու-
 ապաշտական սովորութիւններն այն ժամանակ տակաւին
 չէին կորցրել իրանց նշանակութիւնը և քրիստոնէական
 մարդասէր օրէնքները տակաւին խոր չէին դրոշմուել նո-
 ցա սրտի մէջ: Ներսէս Մեծը այս կուապաշտական սովո-
 րութիւնների դէմ պատերազմելով՝ կարողացաւ նորան-
 ցից շատերը ջնջել և Հայոց կոշտ կեանքի մէջ մտցնել
 քրիստոնէական մարդասիրութեան գործադրութիւնը: Նա
 հրամայեց իւրաքանչիւր գաւառում օտարականների, որ-
 բերի, չքաւորների և ծերերի համար ճաշարաններ պատ-
 րաստել. անապատներում շինել տուեց եղբայրանոցներ
 և մենաստաններ:

Արշակ Բ-ըդի թոյլ թագաւորութեան ժամանակ Մեծն
 Ներսէսի կեանքը գլխաւորապէս անցնում էր հաշտութիւն
 ձգելով նախարարների և թագաւորի մէջ: Նա մինչև ան-
 գամ իբրև խաղաղութեան դեսպան գնաց յունաց Վաղէս
 կայսեր մօտ, բայց նորանից արսորուեցաւ և, նաւաբե-
 կութեամբ ընկնելով մի անմարդաբնակ կղզի, ութ ամիս
 ապրեցաւ նորա վրայ:

Թէոդոս կայսեր ժամանակ Մեծն Ներսէս արսորան-

քից վերադառնալով և Արշակի որդի Պապին կայսրի օգ-
 նութեամբ թագաւորեցնելով՝ եկաւ Հայաստան և, որքան
 հնար էր, բարեկարգեց նորա վիճակը, որ իւր բացակայ-
 ութեան միջոցին բաւականին աւերուել էր: Սակայն Հայ-
 աստանի այսպիսի լուսատու ճրագը՝ Պապ թագաւորի
 զազրագործ կրքերին զոհ եղաւ և թունալից բաժակը նո-
 քա փառաւոր կեանքին վախճան դրեց:

67. Մ Ե Ն Ա Ս Տ Ա Ն

Որպէս մի ամուր բարձր պատուանդան,
 Որպէս մի հզօր և անյաղթ պաշտպան,
 Լերկ քարաժայռը իւր կուրծքի վրայ
 Հանգստացնում է մի սուրբ մենաստան:

Մնձուկ աշխարհի ազատ հոգսերից,
 Ազատ, ունայն վայելչութիւնից,
 Հեռու ամենից, այնտեղ փակուած են
 Մատաղ կուսանքը մաքուր և անբիծ:

Իդուր է զուարթ գարունը ծաղկում,
 Պայծառ արևը իզուր է փայլում.
 Խաբուսիկ բնութեան խաբուսիկ զեղը
 Զուարճատեաց կուսանց չնչին է թրւում:

Ո՛չ մեղկ ոտները սրբապիղծների
 Եւ ոչ նենգ միտքը չար ոգիների,
 Երբէք վրդովել չեն կարողանում
 Անդորը լուութիւնն այն սրբավայրի:

Այնտեղ հանապազ ծխում են խունկեր,
 Հանապազ առկայծ վառում են մոմեր,
 Եւ մաղթանքները՝ որպէս խորտակուած
 Սրտի հառաչներ, առաքւում են վեր:

68. ՄԵԾՆ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Ներսէս Մեծի մահից փոքր ինչ յետոյ բացւում է այն լայն մտաւոր ասպարէզը, որտեղ, իբրև պարագլուխ հայկական լուսաւորութեան, հանդէս են գուրս գալիս նորա որդի և ձեռնասուն աշակերտ Սահակ Մեծը և իւր լծակից Մեսրոպ Մաշտոցը, որ նոյնպէս Ներսէս Մեծի աշակերտն էր: Այս երկու անձանց բարոյական բարձրութիւնը և հայրենասիրական ոյժը դնում են Հայաստանի մէջ այն կենդանական սերմերը, որոնք ծլելով ու վեր աճելով՝ մտաւորական և բարոյական կենդանութիւն են տալիս հայկական սերնդին:

Սահակ վերջին Պարթև կաթողիկոսը՝ Գրիգոր Լուսաւորչի վեցերորդ սերունդը, 390 թուականին նստելով կաթողիկոսական աթոռի վրայ, իսկոյն քննեց ժողովրդի դրութիւնը, տեսաւ ու լաւ նկատեց նորա բարոյական ցաւերը և հմուտ բժշկի պէս վերահասու եղաւ և իմացաւ, որ ազգի տարտամ դրութիւնն ամբացնող և գուարթացրնող միակ հնարքը ուսումնն ու դաստիարակութիւնն է: Նա լաւ էր ճանաչում, որ մի ազգի բարոյական և մտաւոր զօրութիւն տալու համար՝ պէտք է ներգործել սրտի և հոգու վրայ, որ ֆիզիքական կոշտ զօրութիւնը, առանց ներքին համոզման, շատ դիւրաբեկ է. ներքին համոզմունքն է, որ կենդանութիւն և ամբութիւն է տալիս ֆիզիքական զօրութեանը: Մեծն Սահակ՝ ազգին բարոյական զօրութիւն տալու համար, միակ միջոցը ուսումնն ընտրեց:

Հայոց գրերը գտնելուց յետոյ Սահակ Մեծը ջանք է անում Մեսրոպ վարդապետի հետ Ս. Գիրքը թարգմանել, բանալ ուսումնարաններ և դաստիարակել ազգի մատաղ

սերունդը Հայոց գրով և լեզուով և ընդ նմին տնկել ու հաստատել նոցա սրտի մէջ քրիստոնէական և ազգասիրական վսեմ պարտականութիւններն ու առաքինութիւնները: Տեսնելով որ Հայաստանում չի կարելի աւանդել աշակերտներին այն ուսմունքն ու գիտութիւնները, որ աւանդում էին աւելի լուսաւորեալ քաղաքներում, որպիսիք էին Բիզանդիա, Աթէնք, Աղէքսանդրիա, Եղեսիա, և այլն, Մեծն Սահակ և Մեսրոպ, վաթսունի չափ ընդունակ և ուսմանը բաւականին ծանօթացած երիտասարդներ ուղարկեցին վերոյիշեալ քաղաքները՝ գիտութեանց այլևայլ բաժինները սովորելու և կատարելագործուելու:

Այսպէս՝ Հայաստանի մեղունները, իրանց վարդապետի հոգովը թեւաւորուած, դիմում էին դէպի գիտութեան ծաղիկները: Բիզանդիայի Մաքսիմիանոս եպիսկոպոսը, այնտեղ գտնուող հայ երիտասարդների վրայ մեծ խնամք և սէր ցոյց տալով, նոցա հետ ուղարկեց Հայաստան Աստուածաշունչի ստոյգ և հարազատ օրինակը Յունաց լեզուով: Սահակ հայրապետը և Մեսրոպը իրանց աշակերտների հետ նորից թարգմանեցին Ս. Գիրքը այն ստոյգ օրինակից:

Մեծն Սահակ, որ ազգի բարօրութեան և լուսաւորութեան համար նուիրել էր իւր անձը, որ իբրև արթուն և անխոնջ հովիւ՝ աւետարանական քարոզութիւնը տարածել էր Հայաստանի ամենայն կողմերը, Արշակունեաց Արտաշէս վերջին թագաւորի հետ իւր ծերութեան օրերն անցկացրեց Պարսկաստանում, բանտի մէջ, Հայոց նախարարների ամբաստանութեան զոհ լինելով: Թէպէտ նախարարները, վերջապէս հասկանալով իրանց սխալանքը, միաբան աղաչեցին ծերունի Ս. Սահակին, երբոր նա ազատուել էր բանտից ու վերադարձել Հայաստան, որ յանձն

առնէ կաթողիկոսական իշխանութիւնը, սակայն Ս. Հայ-
րապետը, մարգարէական նախագուշակութեամբ լցուած,
հրաժարուեցաւ այդ առաջարկութիւնից և փոքր ժամա-
նակից յետոյ կնքեց իւր բազմաշարչար և օրհնաբեր կեան-
քը 441 թուին: Այս մեծ մարդն էր, որ լուսաւորութեան
սերմերը խոր արմատացրեց Հայաստանի պտղաբեր մա-
տաղ սրտերի մէջ, որոնցից դուրս աճեցին հինգերորդ
դարու հայկական գրականութեան ծաղիկները: Նա իւր
հզօր հոգովը կառավարեց կաթողիկոսութեան աթոռը 51
երկար և արկածալի տարիներ: Նորա մարմինը իւր հարսը,
Վարդան Մամիկոնեանի կին Դստրիկը, տարաւ Տարօնի
գաւառը և իրանց Աշտիշատ գիւղում հողին յանձնեց: Հայ-
ոց եկեղեցին, ի շարս սրբոց դասելով Սահակ Պարթևին,
տօնում է նորա անմոռանալի յիշատակը ամենայն տարի:

69. Ժ Ա Յ Ռ

Որպէս յաղթանդամ մի ծերուկ հսկայ
Կախուած է ժայռը ջրերի վըրայ.
Ալիքը կայտառ գնում են, գալիս
եւ ժայռին սիրոյ համբոյր են տալիս:
Խաղում են անհոգ ալիքը գետի,
Յուցնում են գրկած պատկերն արևի,
եւ որպէս մանուկ ժպիտն երեսին,
Մեղմիկ շշուկով ասում են ժայռին.
«Ասիք, ծերունի, ինչո՞ւ ճակատիդ
Սև կընճիռները չեն տալիս դէմքիդ
Մի օր խնդութեան շողով ցուանալ—
Ողջը փոխում է, դու նոյնն կս դարձեալ:
«Ազատ լեռների ազատ գաւակներ,
Մենք քեզ բերել ենք անթիւ գոհարներ,

երկնքի դստեր-վարդի լեռնասուն
Կըցօղենք կըրծքիդ անուշ'հոտութիւն:
«Մենք երանաւէտ քնքուշ նուագով
Կը կոչենք խորքից ձըկներն երամով,
եւ ոսկեգօծուած գարնան արևից
Մեր զուարթ պարին կ'անենք խնդակից.
«Եւ քո ականջին միշտ սիրոյ երգեր
Մենք արշալոյսից կ'ասենք մինչ գիշեր,
եւ քեզ կը փարենք և քո կըրծքին ծեր
Կըտանք որ հանգչին մեր քաղցը կըքեր»:
Ալիքը կայտառ գնում են, գալիս,
Սև ժայռը նախկին իւր վիշտն է լալիս...
Խաղում են ալիք, ուրախ կարկաջում՝
Նա կըկին անշարժ, նա կըկին տրտում...

70. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԻ ԳԻԻՏԸ

Սուրբն Մեսրոպ, մականուանեալն Մաշտոց. Տարօն
գաւառի Հացեկաց գիւղից, ներսէս Մեծի աշակերտը և
հայ թագաւորների ատենադպիրն էր: Նա անդադար կար-
դում էր Սուրբ Գիւրքը և այնչափ վարժուեցաւ ու վա-
ռուեցաւ հոգևոր կրթութեան մէջ, որ թողեց աշխարհը,
արեղայ ձեռնադրուեց ու վանք մտաւ: Յետոյ նա միայ-
նակեաց կեանք վարեց Գողթան գաւառում: Բայց Մես-
րոպը, որ լոկ կրօնական անձն չէր, այլ ունէր քաղաքա-
գիտական և ազգասիրական բարձր յատկութիւններ, մի-
այնակեցական կեանքն անձուկ համարելով, ձեռք առաւ
ազգային լուսաւորութեան գործը. նա ժողովեց շատ ա-
շակերտներ, կրթեց նոցա և իւր հետ առած՝ քարոզու-
թիւններ էր անում զանազան տեղերում, ջնջում էր մնա-

ցած աղանդները և աւելորդ սնապաշտութիւնները Գողթան գաւառից և Սիւնեաց նահանգից: Այս քարոզութիւնների ժամանակ սկզբում նա մեծ նեղութիւն էր կրում, որովհետև ինքը պէտք է Աստուածաշունչ գիրքը և՛ կարգար, և՛ թարգմանէր հայերէն: Այս դժուարութիւնները ստիպեցին Մեծ Մարդուն մտածել Հայկական տառեր գտնելու մասին. այս նպատակով նա շատ փորձեր արաւ, բայց սկզբում բոլոր փորձերն անօգուտ անցան: Ապա իմանալով Ս. Սահակ հայրապետի բարելաւութեան համբաւը, եկաւ նորա մօտ յայտնեց իւր մտադրութիւնը և տեսաւ, որ այդ միւսնոյն խնդրով նա ևս գրաւուած է: Ս. Սահակը ժողով գումարեց Վաղարշապատ քաղաքում, ուր մեր Վառձապուհ թագաւորը յայտնեց, թէ ինքը երբեմն Միջագետք լինելով, մէկ Յարէլ երէց ասել է իրան, թէ Դանիէլ եպիսկոպոսի մօտ կան Հայոց նշանագրեր: Այս նշանագրերը բերել տուին և, թէև երկու տարի շարունակ սկսան փորձեր անել և նորանցով ուսուցանել, բայց աշխատանքներն իզուր անցան, որովհետև ձայնաւոր տառերը պակաս էին: Ս. Մեսրոպը կամեցաւ աւարտել սկսած աշխատութիւնը, ուստի մի քանի աշակերտներով գնաց Դանիէլ եպիսկոպոսի մօտ, որ միասին խորհեն և, եթէ հնար է, լրացնեն տառերի պակասորդը. բայց այս ևս զուր անցաւ: Մեսրոպը՝ աշակերտներից մի քանիսին Դանիէլի մօտ թողնելով, երկուսի հետ գնաց Եղեսիա, Պղատոն անունով ճարտասան հեթանոսի մօտ: Այս ևս անօգուտ անցաւ: Վերջապէս նա գնաց Սամոսատ, Հռոփանոս փիլիսոփայի մօտ, բայց իզուր: Եւ այսպէս՝ օտարների օժանդակութիւնից և մարդկային հնարներից ձեռնունայն մնալով, ապաւինեցաւ Աստուծուն և, անձնատուր լինելով իւր մտածութեանը, վերջապէս գտաւ ցանկացած տառերը 406 թուին:

Գլխաւոր դժուարութիւնը վերցրած էր մէջտեղից: Երանելի վարդապետը Սամոսատում ուսումնարան բաց արաւ և իւր աշակերտ Յովհան եկեղեցականի և Յովսէփ Պաղնացու օգնականութեամբ Սողոմոնի Առակաց գիրքը և նոր Կտակարանը թարգմանեց. իսկ երբ վերադարձաւ Վաղարշապատ, թագաւորը, հայրապետը և բոլոր բազմութիւնը մեծ ուրախութեամբ ընդունեցին նորան նորագիտ նշանագրերի և նորաթարգման մատեանների հետ և այն օրը ուրախութեան տօն կատարեցին: Բացուցան ուսումնարաններ, ծաղկեցաւ հայերէն դպրութիւնը զարմանալի յառաջդիմութեամբ: Այնուհետև Մեծ Մարդը հնարեց Վրաց և Աղուանից գրերը: Յետոյ Ս. Սահակի հետ գնաց Հայաստանի արևմտեան մասը, որ Յունաց բաժնումն էր, որտեղից Մեսրոպը Ս. Հայրապետից դեսպան ուղարկուեցաւ Թէոդոս կայսեր մօտ և իւր մեծ գիտութեան համար պատուեցաւ «էկլէսիաստիկոս» կոչմամբ: Սա Սուրբ Սահակից յետոյ վեց ամիս կառավարեց հայրապետական աթոռը և կնքեց իւր արդիւնաւէտ և յաւիտեան անմոռաց կեանքը: Հայաստան ղեռ այն ժամանակ ցոյց տուեց նորան իւր երախտագիտութիւնը և Վահան Ամատունի իշխանը մեծ յուզարկաւորութեամբ նորա սուրբ մարմինը հանգստացրեց Օշական գիւղումը և նորա վրայ շինեց եկեղեցի: Հայրենեաց բարերարների յիշատակը օրհնութեամբ և երախտագիտութեամբ յիշուի...

71. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
 Ախորժ, ընտանի իմ հոգու համար.
 Առաջին դու խօսք ականջիս հասած,
 Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօղուած.

Մանկական լեզուիս թոթովանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ինչպէս քաղցր հրնչում ես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Հնչիր դու, հնչիր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի, բարձրացիր հնութեան փոշուց,
Դու իմ հայ լեզու, մոռացուած վաղուց.
Ջգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,
Որ ամենայն սիրա վառուի քո սիրով:

Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է, այն, միւս այլ ձև ու ոճը.
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք է,
Իմ սրտի սէրը յայտնել արժան է,
Իմ երանական մրտաժուծիւնքը,—
Ապա կըխօսեմ իմ մօրս խօսքը:

72. ՍՐԲՈՅ ԱՏՈՎՄԵԱՆՅ ԵՒ ՎԱՐԳԱՆԱՆՅ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

1. Արշակունեաց թագաւորական հարստութիւնը վերջանալուց յետոյ Հայաստանի քաղաքական ոյժը տկարանում է: Երկու դրացի պետութիւնք, Յունաստանն ու Պարսկաստանը, ձգտում էին Հայաստանին տիրելու և

վերջինս, ի հարկէ, աւելի ուժեղին պիտի մնար: Պարսկաստանը վաղուց-հետէ ցանկանում էր իւր հպատակ քրիստոնեայ ազգերի մէջ մոգականութիւն մտցնել, բայց, ակնածելով քրիստոնեայ Յունաստանից, չէր վստահանում վճռողական քայլ անել: Վերջապէս բացուում է յարմար դէպքը: Պարսիկները յաղթում են Յոյներին և, պատերազմական մեծ տուգանք առնելով, խաղաղութեան դաշն են կապում նրանց հետ: Հեռացնելով այսպիսի մի մեծ արգելք, Պարսից Յագկերտ թագաւորը մոգերի և Միհրներսես հազարապետի խորհրդով աներկիւղ գործադրում է իւր վաղուցուայ մտադրութիւնը՝ քրիստոնէութիւնը ջնջելու: Գործն սկսում է Հայերից, յուսալով թէ Վրացիք և Աղուանք ևս կըհետևեն նոցա օրինակին: Մտադրութեան իրագործման համար հարկաւոր էր հող պատրաստել. նախ՝ պէտք էր նոյն իսկ երկրի մէջ գտնել մի ազդեցութիւն ունեցող անձն իրանց կամակից և գործակից (այդպիսի մարդկային արժանաւորութիւն ստորացնող պարտաւորութիւն յանձն է առնում երկրի մարզպան—գաւառակալ Վասակ Սիւնեաց իշխանը) և ապա նիւթապէս ևս տկարացնելով Հայերին, խլել նոցանից դիմադրելու կարողութիւնը: Սորա համար Պարսիկները պատերազմն են սկսում Քուշանաց կամ Հոնաց դէմ, որին մասնակցում են տէրութեան հպատակ բոլոր ազգերը. իւրաքանչիւրը դոցանից իւր այրուձիով, նախարարներով և իշխաններով դիմում են Ապար աշխարհ և այնտեղից արշաւում Քուշանաց վրայ: Եօթը տարուայ պատերազմից յետոյ՝ Պարսիկները յաղթութիւն են տանում, վերագրելով այդ իրանց աստուածների օգնութեանը. դրանից յետոյ հրաման է ուղարկւում պարսկական տէրութեան բոլոր ազգերին, որ միմիայն արեգակը պաշտեն, կրակին երկրպագեն և մոգութիւնն ընդունեն: Պատերազմում գտնուող քրիստոնեաներին մահուան

սպառնալիքով արգելու՛մ է հայրենիք վերադառնալ: Մի-
այն Ատոմ Գնունի և Մանածիհր Ռշտունի իշխանները,
վտանգն արհամարհելով, իրանց զօրքով շտապում են Հայ-
աստան, բայց Պարսից զօրքը հասնելով, ամենին նահա-
տակում են: Սոցա յիշատակը Հայաստանեայց եկեղեցին
տօնում է «Ատովմեանց զօրավարաց» անունով:

2. Այնուհետև Միհրներսես հազարապետը հրովարտակ
է ուղարկում Հայերին, որի մէջ մոգակրօնութիւնը գտնու-
մ է, իսկ քրիստոնէութիւնը պախարակում. ուստի և առա-
ջարկում է՝ հրաժարուիլ քրիստոնէական, ըստ նոցա կար-
ծեաց, մոլորութիւնից և ընդունել ճշմարտաքարոզ մոգա-
կրօնութիւնը: Հրովարտակը վերջանում է հետևեալ խօս-
քերով՝ «կամ պատասխանել նամակին բան առ բան և կամ
Պարսից դուռը գնալով, ներկայանալ թագաւորական
բարձրագոյն ատենին»: Սոյն հրովարտակը գրաւում է ամ-
բողջ ազգի ուշադրութիւնը: Արտաշատ թագաւորանիստ
քաղաքում 450 թուին գումարում է ազգային ժողով՝ նա-
խագահութեամբ Յովսէփ կաթողիկոսի և մասնակցու-
թեամբ ազգիս հոգևորական ու քաղաքական ներկայացու-
ցիչների: Գրում է ազգու պատասխան, որով ջրում է
զրադաշտական մուար վարդապետութիւնը և հաստատում
է քրիստոնէութեան ճշմարտութիւնը: Պատասխանը վեր-
ջանում է հետևեալ խօսքերով. «Այս հաւատից ոչ ոք կա-
րող է մեզ խախտել, ոչ հրեշտակները և ոչ մարդիկ, ոչ
սուրբ և ոչ հուրը և ոչինչ աշխարհային ամենածանր տան-
ջանք»: Այս համարձակ պատասխանի վրայ սաստիկ դայ-
րանում է Յագկերտ թագաւորը և սպառնալից հրովար-
տակով պատուիրում է Պարսկաստան ուղևորուելու Վա-
սակ մարզպանին, Վարդան սպարապետին և ուրիշ նա-
խարարներին: Նոյնպիսի հրովարտակ ստանում են նաև

Աղուաններն ու Վրացիք: Այս երեք ազգերը պատգամա-
ւորութեամբ իրարու հետ ուխտ են դնում հաստատուն
դաշնաւորութեան մէջ մնալու: Ս. Յովսէփ կաթողիկոսը
օրհնում է գնացողների ուղևորութիւնը: Նախարարները
գնալով Պարսից դուռը և յայտնելով իրանց քրիստոնէա-
կան հաւատի մէջ հաստատ մնալու անդրդուելի գիտաւո-
րութիւնը, ձգւում են բանտը, և թագաւորի անձնական
խորհրդում վճռւում է, որ բոլոր նախարարներին կապեն
ու աքսորեն շատ հեռու տեղեր, իսկ իրանք մտնեն Հայ-
աստան և իրանց հաւատն ու օրէնքները տարածեն: Խոր-
հրդականներից մինը, ծածուկ քրիստոնեայ, այս վճիռը
յայտնելով նախարարներին, յորդորում է նոցա, որ առ-
երեսու ուրանան քրիստոնէութիւնը, որպէս զի ազատու-
թիւն ստանալով, կարողանան վերադառնալ իրանց երկի-
րը և միաբան ուժով պաշտպանեն հաւատն ու հայրենիքը:
Նախարարները համաձայնում են նորա խորհուրդն ընդու-
նելու: Յագկերտը երբոր այս իմանում է, անչափ ուրա-
խանում է, առատ պարգևներ է բաժանում նախարարնե-
րին և 700 մոգերով ուղևորում է նրանց դէպի իրանց եր-
կիրը, պատուիրելով՝ հասնելուն պէս, իսկոյն մոգութեան
կրօնին աշակերտել Հայերին, Վրացիներին ու Աղուաննե-
րին և ուրիշ քրիստոնեայ ազգերին:

3. Նախարարների ուրացութեան լուրը և մոգերով
դէպի հայրենիք ուղևորուելը կայծակի արագութեամբ
հասնում է Հայաստան. ամբողջ ազգը ոտի է կանգնում.
ամենքն ուխտ են դնում Աստուծոյ առաջ՝ հաստատ մնալ
քրիստոնէական հաւատին և իրանց կեանքը շինայել եկե-
ղեցու և հայրենիքի ազատութեան համար: Հոգևորական
դասը սփռւում է զանազան գաւառներ՝ ժողովուրդն աներ-
կիւղ չդիմադրութեան պատրաստելու: Այս միջոցին նա-
խարարները Պարսից զօրքով և մոգերով մտնում են Հայ-

աստան և բանակ դնում ծաղկոտն գաւառի Անգղ գիւղաքաղաքում: Մէկ կիւրակէ օր, ժամերգութեան միջոցին, մոգպետը իւր մոգերով եկեղեցի է մտնում և կամենում է գրաւել այն: Անոնդ երէցը, որ ուրիշ քահանաների հետ պաշտօն էր մատուցանում, հակառակում է մոգական խումբին. ժողովուրդն էլ, միացած հոգևորականների հետ, բռածեծ և գլխապատառ դուրս են մղում ամենքին: Մոգպետը, տեսնելով Հայերի հաստատամտութիւնը և աներկիւղ դիմադրութիւնը, կամենում է թագաւորին նամակով խորհուրդ տալ, որ յետ կենայ այսպիսի վնասակար առաջարկութիւնից, բայց Վասակ Սինին արգելում է, խոստանալով շուտով համոզելու Հայերին: Պարսկաստանից եկած Հայ նախարարները, Վարդանի հետ միասին, իրանց առերեսու ուրացութիւնը յայտնելով եպիսկոպոսներին, Ջահապիվանում ժողով են կազմում և խաչով ու Աւետարանով երգում են քրիստոնէական կրօնը պաշտպանելու: Ուխտապահ նախարարները կալանաւորում են ուրացող Վասակին, բայց սա, եպիսկոպոսների առաջ զղջալով իւր յանցանքը, ներումն է ստաւում: Այնուհետև Հայերը յարձակում են մոգերի և Պարսից զօրքի վրայ, ահագին հարուած են հասցնում, գրաւած բերդերը յետ են խլում և այդպիսով սրբում են հայրենիքը կռապաշտութիւնից և մոգութեան զօրութիւնը խորտակում են: Մինչ հայերը տօնում էին իրանց յաղթութիւնը, անհ Աղուանից աշխարհի եպիսկոպոսը և հազարապետը հայերից օգնութիւն են խնդրում, յայտնելով որ պարսից զօրքը մտել է Աղուանք և ստիպում է մոգութիւնն ընդունելու: Հայերն այս միջոցին օգնութիւն են խնդրում Յոյներից, բայց բացասական պատասխան ստանալով՝ չեն վհատում, այլ յոյսները իրանց անձնական ոյժի վրայ դնելով, զօրքը երեք գունդ են բաժանում: Վարդանն ուղևորում է դէպի Ա-

ղուանից աշխարհ, Վասակը մնում է Արարատեան գաւառում, իսկ ներշապուհ Արծրունի իշխանը յանձն է առնում Պարսից սահմանագլուխը պաշտպանելու: Վարդանը մտնում է Աղուանից աշխարհը, Պարսից գրաւած բերդերը յետ է առնում, հրամայում է կռատունները կործանել և մոգերին կոտորել: Մինչ Վարդանը շարունակում էր իւր յաղթութիւնները, յանկարծ Հայաստանից բօթաբեր է հասնում նորան և յայտնում է, որ Վասակը, ժխտելով իւր երդումը, այրում է Հայոց գիւղերը, կործանում է բերդերը և սրի կերակուր է անում իւր եղբայրակիցներին: Վարդանը մեծ աւար վեր առած պարսիկներից, անսպասելի արագութեամբ հասնում է Հայաստան՝ Վասակի աւերիչ ընթացքին վերջ տալու համար. վերջինս, երկիւղ կրելով Վարդանից, փախչում է իւր գաւառը: Վարդան սպարապետը իւր նիզակակիցներով խաղաղացնում է աշխարհը և որովհետև ձմեռը վրայ էր հասել, զօրքը մի քանի մասն է բաժանում և ապահով տեղեր ուղարկում ձմեռելու:

4. Այն ինչ Հայերը ուրախութեամբ տօնում էին գաւակական օրերը, յանկարծ լուր է հասնում, որ պարսից ահագին գունդը՝ Հեր և Ջարեանդ գաւառներից անցնելով, բանակ է դրել Արտագ գաւառի Աւարայր դաշտում, Տղմուտ գետի ափերի վրայ: Հայոց նախարարներն իրանց զօրքերով հաւաքում են Արտաշատ քաղաքը, որոց թիւր 66,000-ի էր հասնում և այն տեղից ամբողջ զօրախումբը դիմում է դէպի Աւարայրի դաշտը և ամրանում է Տղմուտ գետի այս կողմը: Նոյն տեղն եկել էին Յովսէփ կաթողիկոսը և Անոնդ երէցը ուրիշ եպիսկոպոսներով և քահանաներով՝ պատերազմին մասնակցելու: Վարդան սպարապետը, զօրքի առաջ կարդում է Մակարայեցոց գիրքը, ազգու ճառով քաջալերում է նրանց դէպի անվհերութիւն, երկիւղը թերահաւատութեան նշան համարելով:

Ոգևորիչ ճառ է խօսում նաև Ղևոնդ երէցը: Ապա սեղան է կազմուում, Հոգեգալստեան եօթներորդ օրը մատուցանուում է սուրբ պատարագը և հաղորդուում են թէ՛ զօրքը և թէ՛ զօրավարները և, իրանց անձը յանձնելով Աստուծոյ խնամքին, խնդրում են, որ Աստուած իւր եկեղեցին չտայ հեթանոսաց ձեռքը. Պարսիկներն արդէն պատրաստ էին: Հայերն անցնում են Տղմուտ գետը, յարձակուում են Պարսիկների վրայ և ցրում են նրանց զօրքը, և մինչ յաղթութիւնը Հայոց կողմն էր երևում, Պարսիկները, վերջին ճիգը թափելով, շրջապատում են Վարդանին իւր նիզակակիցներով: Այստեղ Վարդանը քաջութեան հրաշքներ է գործում, ահագին վնասներ է հասցնում թշնամուն, բայց մահաբեր վէրք ստանալով՝ նահատակուում է թէ՛ ինքը և թէ՛ իւր քաջ նիզակակիցները: 451 թուի յունիսի 2-ին վերջանում է այս ահելի պատերազմը, որի մէջ Պարսիկների և Վասակի գնդից մեռնում են 3544 մարդ, իսկ Հայոց նահատակների թիւը լինում է 1036: Այսպէս քրիստոնէական հաւատի և ազգային եկեղեցու ազատութեան համար զոհեցին իրանց անձը այն ընտիր նահատակները, որոնց անմահ յիշատակը տօնում է Հայոց եկեղեցին «Վարդանանց զօրավարաց» անունով ամեն տարի բուն բարեկենդանի հինգշաբթի օրը: Իսկ Վասակը, իւր ազգակիցներից ժառանգելով դաւաճանի անարգ անունը, Պարսիկներից ևս զրկուեցաւ պատուից և դառն ցաւերով մեռաւ բանտումը:

73. ՏԱՊԱՆԱԴԻՐ

Նա չէր նախանձում ոչ իշխանական
 Մեծագանձ անուան,
 Ոչ կարծուում էր հըպարտ հարուստի
 Զլացնող փառքի.

Նա չէր փափագում հզօր յաղթանակ,
 Դափնիք ու պսակ,
 Ոչ երազում էր գովեստ դղրդող,
 Արձան ու կոթող:
 Յրուել թշուառի տանջուած ճակատից
 Դառնութեան թախիծ,
 Եւ կանգնել պաշտպան իւր անմեղ ընկճուած
 Եղբօր իրաւանց՝
 Այս էր տենջալի նրա վառ փափագ,
 Հոգու նպատակ.
 Եւ զոհուած նա իւր ուխտին անսասան,
 Իջաւ գերեզման:

74. ՈՒՐԱՅՈՂԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

(Ե Ղ Ի 2 Է Ե Գ)

«Մի հանդիսաւոր օր Պարսից թագաւորը ճաշի հրաւիրեց բոլոր մեծամեծներին: Հրաւիրուած էր և Վասակը: Նա հագաւ իւր պատուական վերնագգեստը, նորա վրայ դրեց ոսկեայ խոյրը, մէջքին կապեց մարգարիտներով և պատուական ակներով զարդարուած ռսկէ դօտին, հագաւ ականջի գինտերը, մանեակը կախեց վզիցը, սամոյրը ձգեց թիկունքին և բոլոր պատուանշանները հագած, գնաց պալատ: Թագաւորի արտաքին սրահում շղթայակապ կային մի քանի հայ նախարարներ և սուրբ քահանաներ: Երբ Վասակն անցաւ սոցա առաջով, ցաւակցական հայեացք ձգեցին այդ անխելք վաճառականի վրայ, որ անսպառելի և անփոխարինելի առաքինութիւնը վաճառել էր մի քանի կանացի զարդարանքների: Դոցա առաջից անցնելով՝ Վա-

սակը մտաւ ներսի դահլիճը, որ մեծ իշխանների հրապարակն էր և նստեց: Այս միջոցին թագաւորական սենեկապետը դուրս եկաւ թագաւորի մօտից, մերձեցաւ նորան և ասաց. «Թագաւորը, որից դու ստացել ես այս պատուական նուէրները, ինձ ուղարկեց որ հարցնեմ քեզանից, թէ ո՞ր արդար աշխատութեանդ համար ես ստացել դորանք»: Այնուհետեւ պատմեց բոլոր ամբաստանութիւնները, որով նորան դատապարտել էին, նմանապէս աւելացրեց և այնպիսի բաներ, որ չէին խօսել ատեանի մէջ: Ասաց՝ որ նա ապօրինի կերպով տիրեց Սիւնեաց աշխարհին՝ խորամանկութեամբ և ստութեամբ սպանել տուեց իւր եղբայր Վաղենակին և ինքն ստացաւ նորա իշխանութիւնը: Դատապարտեց նորան և այլ շատ բաների մէջ, որոնց բոլոր մեծամեծները վկայ էին: Վասակը պապանձուեցաւ և ոչ մի ճշմարիտ բան չգտնուեցաւ նորա բերանում: Այնուհետեւ մահի վճիռ կարգացին նորա գլխին: Դահնակեան եկաւ, հանեց նորանից այն պատուանշանները, որ ստացել էր թագաւորից և հագցրեց մահապարտի զգեստ: Նորա ոտներն ու ձեռները կապեցին և, իբրև անառակ կին, նստեցրին էգ ձիու վրայ ու տարան ձգեցին այն բանտը, ուր բանտարկում էին բոլոր մահապարտներին: Ամենայն օր դուրս էին բերում նորան, իբրև անշունչ մարմին ձգում էին հրապարակի մէջ, ցոյց էին տալիս բոլոր զօրքին, ծաղր էին անում և ծիծաղում էին վրան: Կողոպտեցին և հանեցին նորանից ամենայն բան, ինչ որ ունէր իւր հետ և այնպիսի ծաղրալի աղքատութեան մէջ ձգեցին, որ իւր ծառաները հաց էին հաւաքում՝ նորան տալիս: Նորա բոլոր կալուածները, մինչև անգամ կանանց զարդերը, արքունական պարտքի համար վերցրին:

«Երբ Վասակն այսպէս ամենայն կողմից անարգուեցաւ, բանտումը կապանքների մէջ դժնդակ ցաւի մէջ ըն-

կաւ: Նորա փորը տաքութիւնից տապակուեցաւ. նորա գոգը տրորուեցաւ, մաշուեցաւ և քամուելով՝ մաղուեցաւ նորա թանձրամսութիւնը: Որդեր եռացին նորա աչքերի վրայ և ներքև սողացին նորա քթածակերից. խլացան նորա ականջները և չարաչար ծակոտուեցան նորա պռօշները. հոտեցին նորա կռների շլերը և դէպի յետ կուացան նորա ոտների կրունկները: Մահուան հոտ փչեց նորանից. փախան, հեռացան իւր հաւատարիմ ծառաները. միայն լեզուն էր կենդանի նորա բերանում, բայց խոստովանութիւն չէր դուրս գալիս նորա շրթունքներից: Ճաշակեց խեղդամահի բաժակը և իջաւ դժոխքը անպատմելի դառնութեամբ: Ոտի տակ տուին նորան իւր բոլոր սիրելիքը և չկշտացան սաստիկ հարուածներով իւր բոլոր թշնամիները: Չերևեցաւ այն մարդու գերեզմանի տեղը, որ կամենում էր մեղքով թագաւորել Հայոց աշխարհի վրայ, որովհետեւ շան պէս սատկեցաւ և էշի պէս քարշուեցաւ: Չյիշուեցաւ նորա անունը սուրբերի մէջ և չմերձեցաւ նորա յիշատակը եկեղեցու սուրբ սեղանին: Նա իւր կեանքումը ոչ մի չարութիւն չթողեց, որ չգործէր. և ոչ մի չարաքանք չմնաց, որ չհասնէր նորան իւր մահուան ժամանակ»:

75. Յ Ո Ի Դ Ա Յ

Ա. Տէրն աղօթում էր... արիւնի քրտինք
 Կաթ-կաթ հոսում էր նորա ճակատից.
 Աղաչում էր նա, որ ներէ երկինք
 Մարդկային ցեղին, ցեղին մեղսալից:
 Ոգևորութեան սրբազան կրակ
 Փայլում էր նորա պայծառ երեսին
 Եւ նա տանում էր իւր վերջին տանջանք,

Փրշեայ պսակի ցաւը դժնդակ,
Խոր կարեկցութեան ժպիտ շրթունքին:

Նորա խաչի շուրջ կանգնած խուժանում
Երբեմն ծիծաղ հնչում էր կոպիտ.
Ամբոխն կուրացած չէր էլ հասկանում,
Թէ ում է արդեօք ինք թշնամանում
Իւր անգօր ոխի ցոյցերով անմիտ:

Նա ինչ է արել: Ինչո՞ւ տանջանքի
է դատապարտուած որպէս զող, ծառայ.
Եւ ո՞վ յանդգնեց առանց արգելքի
Ձեռք բարձրացընել իւր Աստծու վրայ:

Նա աշխարհ մտաւ սուրբ սիրոյ ուսմամբ,
Ուսուցանում էր, աղօթում, տանջում,
Եւ պիղծ աշխարհը նորա սուրբ արեամբ
Իւր վրրայ անջինջ մի բիծ է դնում:
Արդէն կատարուեց:

Բ.

Եւ կէս գիշերին
Փայլում էր վերից աստղավառ երկին.
Կապոյտ կամարում հեզիկ ու խաղաղ
Ահա երևաց լուսինն ոսկեշաղ:
Նա մերթ մտախոհ ամպերի տակից
Փայլ էր արձակում գերթ աղօտ դամբար,
Մերթ դողդոջ փայլով սըփուում էր նորից
Պայծառ նշոյլներ դէպ' Գողգոթայ սար:
Յածում, միգապատ խաւարի միջին,
Տեսանելի էր քաղաքը լռին:
Վերևում, որպէս յաղթանդամ հսկաչք,
Երեք խաչափայտ երևում էին:

Երկուսի վրայ երկու մահապարտ
Կախուած էին դեռ: Նրանց դառն կսկիծ
Յայտնող դէմքերին՝ լուսինը հանդարտ
Նայում էր իւր խոր, անհուն թարձունքից:
Բայց երրորդ խաչը պարապ էր: Փրկչին
Վերցըրել էին, հողում ամփոփել
Եւ բարեկամաց արցունքներ վերջին
Գերեզմանաքարն էին ողողել:

Գ. Այն ո՞վ է գաղտնի հեծկլտում, սըզում
Միջին խաչի մօտ՝ մագերը փետում.
Ո՞վ է այդ մարդը: Տանջանք անփարատ
Դրոշմած է նորա գունատուած դէմքին:
Գուցէ հեռաւոր երկրից ըշտապով
Եկել է այդտեղ նա հիւանդ անյոյս,
Որ ամենազօր սրբազան խօսքով
Տայ բժշկութիւն ախտերին Յիսուս:
Նա իւր աղերսով պատրաստ էր արդէն
Յիսուսի ոտներն ընկնել, բայց ահա
Նա ամենուրեք լըսում է հիմա,
Թէ նա՝ որին որ ամբոխ համօրէն
Քիչ առաջ որպէս արքայ ընդունեց,
Որ լոյս համասփիւռ բերեց աշխարհին,
Որ չխընկարկեց երկրիս կուռքերին,
Եւ չարը արձակ միշտ յանդիմանեց,—
Այժմ արհամարհուած իբրև մի ստրուկ,
Դառն տանջանքով մեռնում է անշուք:

Կամ գուցէ ծածուկ աշակերտ Փրկչին,
Սըտում խորին վիշտ և աղերս պահած,
Եկել է փարուիլ նա Փրկչի խաչին,
Խոնջած զլուխը հեզիկ խոնարհած:

Գուցէ թողութիւն չստացած մի ոք,
Յանցաւոր, մաշուած դիմել է այդտեղ
եւ խաչի առաջ մենակ, ծընկաչոք
Զղջումն է թափում, որպէս բազմամեղ:

Ո՛չ, այդ Յուդան է. ոչ թէ աղօթքով
եկել է այդտեղ: Նա չէ յանդգնել
Աղօթելու պիղծ, չարանենդ հոգով.
Ոչ Տիրոջ մարմինն երկրպագանել
Կամեցել է նա: Ի՞նչպէս կամ թէ էր
Ընկել էր այդտեղ, ինքն էլ չգիտէր:

Գ. Երբ չարչարանքի նա դատապարտուած,
Խուռն բազմութեամբ հոծ շրջապատուած,
Գէպ՝ պատժավայրն էր Յիսուս բարձրանում,
եւ ծանր խաչը անտրտունջ տանում,
Յուդան, թագկացած, տեսաւ տանջանքը
եւ խղճահարուած զգաց յանցանքը՝
Ո՛ւմ անմտութեամբ ինքն այնպէս ատեց,
Անարգ արծաթով ո՛ւմ կեանքը ծախեց:
Իմացաւ նա որ էլ չըկայ իրան
Ներման ոչինչ յոյս արդար երկնքից.
եւ անզօր երկիւղ, երկիւղ ստրկական,
Չարագործութեան մռայլ ուղեկից,
Մտաւ սրտի մէջ: Գիշերն մինչև լոյս
Նորա հիւանդոտ հայեացքի առաջ
Կանգնած էր Յիսուս: Իզուր խոովայոյզ
Նա դէն է մղում տեսիլն այն տրհաճ.
Իզուր է ճըգնում նա շուտ քրնանալ,
Ամեն ինչ մոռնալ ու հանգստանալ,
Խաղաղ գիշերուայ գրկի մէջ թաղուած.
Հազիւ փակում է աչքերը յոգնած,

Ահա խաւարից պատկերն ահալի,
Որպէս կենդանի, առաջն է գալի:

Խ. Ահա նա մաշուած, հիւծեալ, տառապեալ,
Սուրբ ճշմարտութեան հզօր ջատագով,
Անարատ սիրոյ անսուտ առաքեալ,
Խաչուած վայրենի ամբոխի ձեռքով.
Աստուած՝ անհոգի, կոյր, կաշառակեր
Գատաւորների վճռովը դատուած.
Ահա նա, ահա... հեղիկ աչերում
Լուռ կշտամբանք է անբարբառ փայլում.
Սիրոյ պսակը, պսակ փշալից,
Ծակում-խոցում է ճակատը Փրկչին
եւ պարզ հնչում է, կարծես, բերանից
Խիստ դատավրճիւ ընդդէմ մատնըչին...
— «Հեռո՛ւ, անարատ տեսիլ ահաւոր,
Ո՛հ, հերիք, տանջանք, թո՛ղ գոնէ մի ժամ,
Գոնէ մի վայրկեան՝ կրծքով վիրաւոր
Չապրեմ, չըյիշեմ, թո՛ղ հանգստանամ:
Մի տես, մատնիչդ է աւասիկ լալիս
Ոտներիդ առաջ... Ո՛հ, Գու խնայիր.
Պատառում է քո հայեացքը հոգիս,
Գնա՛, չքացիր, տեսիլ, մի նայիր...
Տեսնո՛ւմ ես, ահա՛ արտասուքներով
Պատրաստ եմ իմ նենգ համբոյր լուանալ.
Ո՛հ, տուր ինձ անցեալն իսպառ մոռանալ,
Տո՛ւր հողուոյս հանգչիլ ջերմ աղօթքներով:
Գո՛ւ՛ Աստուած, ներում կարող ես միշտ տալ . . .
.
Իսկ ես. գիտցել եմ ես կարեկցութիւն.
Չիք ինձ համար գութ, չըկայ թողութիւն»:

Չ. Փախիր դու, մատնիչ, մարդկանց երեսից,
 Եւ լաւ իմացիր, հոգիդ մեղսալից
 Երբէք ոչ մի տեղ հանգիստ չի գտնիլ.
 Որտեղ էլ լինիս, քեզ հետ անբաժան
 Կըգայ ամեն տեղ ահալի տեսիլ,
 Իբրև գրաւական խիստ մեղազրութեան:
 Փախիր, անարժան, այդ խաչափայտից,
 Մի պղծիւր նորան ողջագուրանքով.
 Նա՛ վըրան խաչուած Փրկչի տանջանքով
 Սըբագործուած է, հեռու նրանից:

 Եւ նա փախչում էր

Ի. Կէս հորիզոնը
 Ալ բոցը գրկեց, լեռնոտ Գեղրոնը
 Փայլի ալիքով շառագունեցաւ:
 Բլուրների յետն ահա բարձրացաւ
 Ոսկէ պսակով արևը պայծառ,
 Ամեն ինչ զարթնեց... անտառը դալար,
 Դաշտերի գոռոզ այդ հսկան հպարտ,
 Չարժում է ճիւղերն, խշշում անընդհատ:
 Անտառի խորքում առուն է հոսում
 Արծաթ-ջրերով, անվերջ կարկաջում...
 Եւ այնտեղ, ուր միշտ մշուշ է, խաւար,
 Ուր չի թափանցում արևը պայծառ,
 Մռայլ դիակ է օրօրում կախուած,
 Իսկ կաղամախը վերևից սըփռած
 Իւր կենդանարար զմրուխտ հովանին,
 Բարեկամի պէս գրկել է այդ դին:

Մեռաւ նենգ Յուզան... նա չդիմացաւ
 Խուլ տանջանքների կըրակին. մեռաւ
 Առանց հաշտութեան արտասուքների,
 Առանց գղջումի, առանց իղձերի:
 Բայց մինչ վերջին ժամ, մինչ վերջին վայրկեան
 Միշտ նոյն սլատկերը տրտում, ահալի,
 Կենդանի պատիժ չարագործութեան,
 Դիշերուայ մռայլում առաջն էր գալի:
 Միշտ նոյն զայրագին պատուէր դժընդակ
 Կարծես հնչում էր նորա բերանից,
 Եւ գլխին ծանր տանջանքի պսակ:
 Դրած ունէր նա, պսակ փշալից:

76. ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԿԱՆԱՅՔԸ

(Շ Ո Ւ Չ Է Ե Գ)

«Ես չեմ կարող համարել Հայոց աշխարհի բոլոր երա-
 նելի առաքեալների, կապուածի և պատերազմի մէջ սպա-
 նուածների կանանցը, որովհետև ինձ անծանօթներն աւե-
 լի շատ են, քան թէ ծանօթները: Հինգ հարիւրի չափ
 անձամբ ճանաչում եմ ոչ միայն մեծամեծներից, այլև
 փոքրերից շատերին: Նոքա ամենքը միասին երկնաւոր
 նախանձով վառուած, ոչնչով պակաս շմնացին նոցանից,
 որոնք աշխարհ չէին մտել: Որովհետև մեծերն ու փոքրե-
 րը մի հաւատի առաքինութեամբ գինուորուեցան. նոքա
 ամենեկին չյիշեցին մայրենի ազատութեան փափկութիւնը,
 այլ ինչպէս գիւղացի մարդիկ, որոնք սովոր են փոքր հա-
 սակից չարչարանքներ և տանջանքներ կրելով անցկացնել

իրանց կեանքը, նոյնպէս և նոքա յանձն առան նոցանից
աւելի ևս համբերութեամբ դիմանալ ցաւերին:

Ընդառ և միայն իրանց հոգու մէջ մխիթարուով էին
յաւիտենական աներևոյթ յուսովը, այլ մարմնի նեղութիւն-
ներովն աւելի ևս դէն ձգեցին ծառայութեան բեռը: Թէ-
պէտ նոցանից իւրաքանչիւրն ունէր ձեռնասուն սպասա-
ւորներ, բայց բոլորովին չէր կարելի նշմարել, թէ որն է
տիկինը և որը աղախինը. բոլորի շորերը միևնոյն էին.
երկուսն էլ միասին պառկում էին չոր խոտի վրայ: Ոչ ոք
միւսի համար անկողին չէր պատրաստում, որովհետև նո-
քա չէին ճանաչում խոտերը միմեանցից զանազանելի-
պատճառ որ բոլոր խոտերները միապէս թխագոյն էին՝ իսկ
զլխատակի բարձերը՝ սև: Չկային նոցա համար առանձին
խոհարարներ՝ անուշ կերակուր պատրաստելու և ոչ որո-
շած հացթուխներ՝ ազատների սովորութիւնների համե-
մատ, այլ ամենի ուտելիքը մին էր: Ձաթաթամուտն անց
էին կացնում այն միայնակեաց մարդկանց պէս, որոնք
բնակում են անապատում: Ոչ ոք միւսի ձեռին ջուր չէր
ածում և փոքրերը մեծերին երեսսրբիչ չէին մատուցա-
նում: Սապոն չդիպաւ փափկասուն կանանց ձեռքերին և
հոտաւէտ իւր չգործ դրուեցաւ նոցա զուարճութեան հա-
մար: Նոցա առջևը չդրուեցան մաքուր ամաններ և գործ
չդրուեցան ուրախութեան համար բաժակակալներ. ոչ ոք
չկանգնեց նոցա դռանը հիւրերը ընդունելու և նոցա հոյա-
կապ տների դռները չբացուեցան պատուական հիւրերի
առաջ: Ոչ ոք նոցանից չյիշեց, թէ ունեցել է մի ժամա-
նակ փափկասունդ դայեակներ կամ սիրելի հարազատներ:

Փոշոտուեցան ու ծխոտուեցան նախարարների սե-
նեակներն ու վաքագոյրները և սարդի ոստայն ձգուեցաւ
նոցա հարսանիքի սենեակների մէջ: Կործանուեցան նոցա
տները զարդարող աթոռները և փշացան նոցա սեղաննե-

րը զարդարող ամանները. կործանուեցան ու քանդուեցան
նոցա հոյակապ տները և փուլ եկան, աւերուեցան նոցա
ապահովութեան ամրոցները: Չորացան, աղանձուեցան նո-
ցա ծաղկեայ բուրաստանները և արմատախիլ եղան այ-
գիների գիներբեր վագները: Նոքա իրանց աչքով տեսան
իրանց կայքի յափշտակութիւնը և իրանց ականջովը լսե-
ցին իրանց սիրելիների ցաւալից շարչարանքների հառա-
չանքները. նոցա գանձերը թագաւորական արին և երես-
ների զարդարանքները յափշտակեցին նոցանից: Հայոց
աշխարհի փափկասուն տիկիները, որոնք գրկուած և
զգուած էին իւրաքանչիւր բաստեռունների և զահաւորակ-
ների մէջ, միշտ բայ ոտով գնում էին եկեղեցի, ուրախու-
թեամբ խնդրելով, որ կարողանան համբերել այն մեծ
նեղութեանը: Նոքա, որ իրանց մանկութիւնից մեծացել
էին հորթերի ուղեղներով և էրէների փափուկ մսով, վայ-
րենիների պէս մեծ ուրախութեամբ ուտում էին խոտեղէն
կերակուրները և բոլորովին չէին յիշում իրանց սովորա-
կան փափկութիւնը: Սև գունով ներկուեցաւ նոցա մարմնի
մորթը, որովհետև ցերեկն արևախորով էին լինում, իսկ
գիշերը գետնի վրայ պառկում: Սաղմոսներն էին նոցա
ամենօրեայ ցաւերը թեթևացնող երգերը և մարգարէից
զրուածներն էին նոցա կատարեալ մխիթարութիւնները:
Նոքա երկու-երկու միաբանուեցան, իբրև համահաւասար
ջուխտ լծակիցներ, ուղիղ տանելով արքայութեան ակօսը,
որ առանց սխալուելու հասնեն խաղաղութեան նաւահան-
գիստը: Նոքա մոռացան կանացի տկարութիւնը և առաքինի
տղամարդիկ զարձան հոգևոր պատերազմի մէջ. սաստկու-
թեամբ կուռեցին մեղքերի դէմ, կտրեցին, ջարդեցին, մի
կողմը ձգեցին նորա մահաբեր արմատները: Միամտու-
թեամբ յաղթեցին խորամանկութեանը և սուրբ սիրով
լուացին նախանձի կապոյտ ներկերը. կտրեցին ազահու-

Թեան արմատները, չորացրին նոցա ճիւղերի մահաբեր պտուղները: Խոնարհութեամբ ջարդեցին ամբարտաւանութիւնը և նոյն խոնարհութեամբ հասան երկնաւոր բարձրութեանը: Իրանց աղօթքներով բաց արին երկնքի փակուած դռները և սուրբ խնդրուածներով իջեցրին հրեշտակներին փրկութեան համար: Բարի համբաւ լսեցին հեռուից և փառաւորեցին Աստուծուն երկնքում: Նոցա մէջ եղած այրի կանայքը կրկին առաքինութեան հարսներ դարձան և մերժեցին իրանցից այրիութեան նախատինքը: Կանայքը յօժարութեամբ կապեցին իրանց մարմնաւոր ցանկութիւնները, մասնակից լինելով սուրբ կապեալների շարժարանքներին: Նոքա իրանց կեանքովը նմանուեցան քաջ մահուամբ նահատակուածներին և հեռուից մխիթարիչ վարդապետներ դարձան բանտարկուածների համար: Իրանց ձեռներովն աշխատեցին ու կերակրուեցան, իրանց ոռճիկները տարէց տարի ուղարկելով կապուածների մխիթարութեան համար: Նոքա նմանուեցան անարիւն ճպուռներին, որոնք քաղցրութեամբ երգելով՝ ապրում են առանց կերակրի և միայն օգ ծծելով կենդանի են մնում՝ անմարմիններին նմանուելով: Չատ ձմեռների սառուցները հալուեցան, հասաւ գարունը, եկան նոր ծիծեռնակներ, կենցաղասէր մարդիկը տեսան նոցա և ուրախացան, բայց նոքա երբէք չկարողացան տեսնել իրանց սիրելիներին: Գարնանային ծաղիկները Հայոց կանանց միտը բերեցին իրանց ծաղկազարդ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարօտ մնացին տեսնելու նոցա երեսի ցանկալի գեղեցկութիւնը: Վերջացան որսի բարակները և դադարեցան որսորդների արշաւանքները: Բնագիրներով յիշատակուեցան նոքա և ոչ մի տարեկան տօն չբերեց նոցա հեռու երկրից. նոցա սեղանատան վրայ նայեցան և արտասուք թափեցին և ամեն ատեանի մէջ յիշեցին նոցա

անունները: Չատ արձաններ կանգնեցրին նոցա անուններովը և իւրաքանչիւրի անունը նշանակեցին նոցա վրայ: «Երբ այսպէս ամեն կողմից մտքերն ալեկոծոււմ էին, այն ժամանակ նոքա բոլորովին չէին թուլանում և չէին հեռանում երկնաւոր առաքինութիւնից: Արտաքուստ նոքա երևում էին զարդարուած և մխիթարուած երկնաւոր սիրով: Այլևս չէին հարցնում հեռաւոր տեղերից եկողներին, թէ երբ կարող ենք տեսնել մեր սիրելիներին, այլ նոցա դէպի Աստուած աղօթելու գլխաւոր նպատակն այն էր, որ ինչպէս սկսեցին, նոյնպէս երկնաւոր սիրով լցուած՝ քաջութեամբ մեռնին...»

77. ՍՊԻՏԱԿ ԶԳԵՍ

Անճրգ, խայտառակ մահուան մատնուած,
 Հունգարացի կոմսն շրջթայակապ էր.
 Նա օգնել ուզեց իւր խեղճ հայրենեաց.
 Հպարտութիւնը խիստ վրդովուած էր:
 Նա ըստրուկներին՝ հոգով ստորացած,
 Վաղուց անողորմ թշնամի դարձաւ,
 Եւ միշտ կռուելով ընդդէմ այդ շարեաց,
 Գոմսը կախուելու դատապարտուեցաւ:
 Հազիւ նա եղաւ քսան տարեկան,
 Բայց պիտի մեռնէր: Մահը չարիք չէ,
 Այլ սփոփիչ է վշտին հոգեկան:
 Բայց մեռնել անարգ, խայտառակ մահով,
 Կախաղան ելած, ծաղր ու ծանակով,
 Դառնալ կերակուր սև ագռաւների՝
 Ահն նախատինք, չարիք սոսկալի:
 Առաւօտը նա մօրը գրկելով,
 Ասում էր տրտում. «Մայր, մնաս բարով,

Ահաւասիկ ես միակ որդիդ եմ,
 Մատաղ հասակիս դատապարտուած եմ
 Կարճօրեայ կեանքիցս ես անջատուելուն.
 Անհետ պիտ' կորչին ինձ հետ իմ անուն
 եւ իմ պատիւս: Խնդրում է որդիդ,
 Մայր, որ դու փրկես քո խեղճ զաւակիդ:
 Ո՛չ, պատերազմի փոթորիկներում
 Ահ չեմ զգացել, ոչ ծըխում, հըրում.
 Բայց վաղուան օրը՝ ելած կախաղան,
 Ես պիտի դողամ տերևի նըման»:

Մայրը ասում էր, մխիթարելով՝
 «Ի՛նչ չվախենաս, սիրած զաւակս,
 Ես պալատ կ'երթամ և, աղերսելով,
 Արցունք կը թափեմ. ես իմ լացովը
 Արքայի սիրտը, գու՛թը կը շարժեմ.
 Եւ առաւօտը երբ կը տանեն քեզ
 Դէպի կախաղան, պատշգամբի վըրան
 Թէ սև զգեստով կանգնած լինիմ ես,
 Գիտցիր, զաւակս, անխուսափելի
 Քեզ մահ կըլինի:

Ո՛չ ապաքէն դու, հըսկայի նըման,
 Յառաջ պիտ' զընաս մահիդ յանդիման:
 Հօ քո արիւնը հունգարական է:
 Իսկ թէ սպիտակ շոր վըրաս տեսնես,
 Գիտցիր, որ մայրդ իւր արցունքներով
 Զաւակի կեանքը դարձրեց ապահով:
 Թո՛ղ զահիճներից դու բռնուած լինես,
 Բայց երբէք, որդեակ, չդողաս—սարսես»:
 Կոմսը այդ օրը հանգիստ է լինում,
 եւ ամբողջ գիշեր մնում է քնած.
 Իւր երազներում նա մօրն է տեսնում,

Պատշգամբի վրայ՝ սպիտակ շոր հագած:
 Գուժկան զանգակի ձայնն է յօղանջում.
 Վազում են մարդիկ... հանդարտ քայլերով
 եւ շրջապատուած պահապաններով,
 Ըղթայած կոմսը առաջ է գընում:
 Քանի-քանի աչք պատուհաններից
 Արցունք են թափում կոմսի յետևից,
 Ի՛նչքան ձըգում են կանացի ձեռքեր
 Վերջին բարևի նորան ծաղիկներ.
 Բայց կոմսը ոչինչ բան չէ նըկատում,
 Դէպի հրապարակ է միայն նայում.
 Այնտեղ պատշգամբում մայրըն է կանգնած,
 Հանգիստ, անվըրով, սպիտակ շոր հագած:
 Ո՛հ, կոմսի սիրտը թընդաց խիստ ուժգին.
 Դէպի հրապարակ համարձակ քայլով
 Ընթացաւ կոմսը, ժպիտն երեսին,
 Անտրտում վերև բարձրացաւ փու՛թով,
 Զուարթ և ուրախ զահճի մօտ գընաց
 Ու մինչև անգամ կախուելիս ժըպտաց:
 Բայց ինչո՞ւ մայրը սպիտակ էր հագել:
 Ո՛հ, խաբէութիւն: Այդպէս կարող էր
 Սուտ խօսել մի մայր, սոսկ բեկուած ահից,
 Որ իւր զաւակը չսարսէ մահից:

78. Ք Ա Ջ Ի Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր Ը

Դսեղեցի Մեհրաբեան Թումանեանց Յովակիմի անու-
 նը քարերը սարսափեցնում էր: Սարերի, ձորերի միջում
 մեծացած, զագանի ու հարամիւ արիւնը թափելով էր նո-
 րա ոսկորները հաստացել: Երկու տղամարդ նորա կուռը

չէին կարող ուրեւել. նորա գլուխը մէկ օր չէր ցաւել: Կերածը մեղր ու կարագ էր, հագածը շալ, կոխածը ծաղիկ և կանաչ խոտով ծածկուած աղբիւրների ու անտառի միջուան էր աչքը բաց արել: Նորան ինչ կըզիմանար: Աժդահայ և ոչ տղամարդ: Չորս գագ ու կէս հասակն էր. գագ ու կէս թիկունքի լայնութիւնը. կուրծքը ապառաժի պէս հաստ. ամեն մէկ ձեռը մէկ սիւնի չափ, ամեն մէկ ոտքը մէկ կաղնու ճիւղը, պարանոցը մէկ ծառի բնի հաստութիւնով. երեսի մագն եկել, կոխել էր երկու թղաչափ. ճակատի տակի սև-սև ունքերն այնպէս էին բռնել ու նորա արծուի աչքերն ու բիթը կոխել, ինչպէս կարկտախառն ամպը ծածկում է գիշերուան աստղերը: Ութ եղբայր ունէր, մէկը քան միւսը աժդահայ. ամեն մէկը հինգ վեց որդի ունէր. նրանց շատի ոչ թէ մենակ հարսանիքն էին տեսել, այլ թոռներն էլ մեծացել, առաջներին խաղում, սարն էին գնում:

Այս Յովակիմը մի օր լողանալիս է լինում. անտառից յանկարծ տասնուհինգ լազգի են դուրս գալիս և յարձակում վրան. ինքն էլ անվրդով ջրիցը դուրս է գալիս և որպէս թէ նորանց բանի տեղ չի գցում. սկսում է շորերը հագնել: Լազգիքը սովորաբար մարդ չեն սպանիլ. ողջ-ողջ կըբռնեն, որ տանեն, ծախեն: Հէնց որ մօտենում են, ձայն է տալիս այն հսկան, որ կանգնեն ու ասում է՝ տղամարդութիւնն այն չէ, որ տասնուհինգ մարդ մէկի վրայ թափուեն, բռնեն. եթէ սիրտ ունին, իրանք մէկ կողմը կանգնեն ու ինքը մեն-մենակ միւս կողմը, թէ որ յաղթեն, թող այն ժամանակ բռնեն, տանեն: Լազգիքն էլ իրանց գլուխն այնչափ ցած չհամարելով՝ համաձայնում են: Առիւծ Յովակիմը հրացանը դցիլն ու առաջին մարդին սպանելը մէկ է անում: Այս տաք ըոպէին էլ գնդակին չի մտիկ տալիս, թուրը հանում է, մէջներն ընկնում. թշնա-

մին երեսը յետ է շուռ տալիս. տասնուչորսին այստեղ, այնտեղ՝ որին թրով, որին փշտովով (կարաբինա) սպանում՝ աղցան է անում: Վերջին տասնուհինգերորդն էլ՝ որ գերու պէս չորում, գլուխը դէմ չէ անում քաջին, նա թևիցը բռնում՝ վեր է կացնում ու ասում. «Քո կեանքը քեզ կըբաշխեմ, որ գնաս ձեր երկիրն ու ձեր քաջ ազգին պատմես, որ իմանան, թէ մենակ իրանք չգիտեն թուր խփել, թէ Լօռու Դսեղ պիւղումն այսպէս ինձ նման հազարաւորները կան, որ եթէ ուզենան, ձեր երկիրը ոտի տակ կըտան, կըջնջեն:

Այս Յովակիմը, այս Լօռու ձորերի աստուածը, այս սարերի առիւծը, այս անտառների վագրը՝ մենակ հերիք էր, որ մէկ քարի քամակից ձայն տալիս, մէկ հանդում պատահելիս՝ հարիւր թուրքի լեզին ջուր կտրուի, աչքները սևանայ: Այն սեացած՝ արևի և անձրևի ներգործութիւնից մուր դարձած ունքերի տակիցը՝ որ աչքը չէր ընկնում մարդու երեսին, դիմացինը այնպէս էր իմանում, թէ կայծակն էր խփում ու սար ու ձոր սևանում իւր գրկին. գետինը կ'ասես թէ պտրտում էր և ինքը, քար դարձած, մնում էր առաջին կանգնած: Քանի-քանի այսպիսի քաջ տղամարդիկ քամակը դցած՝ գիշեր ցերեկ, այս ահագին հսկան, վիշապի պէս պտրտում և Լօռուայ ձորերումն ու սարերի գլխին՝ թռչունը երկնքիցը վեր էր բերում և ձիաւորի ոտի հետքերը բռնած, ձորէձոր ընկնում, հորսի քամակիցը հասնում ու տասը ձիաւորով հարիւր ձիաւորի մէջը ճղում, ջարդուբուրդ անում, բայց դարձեալ թուրքերի վրանների միջից անցկենալիս՝ ոչ մէկը չէր համարձակում, որ աչքը խեթի նորա վրայ: Ինչպէս ինքն էր մեծացել, այնպէս էլ իր բոլոր ընկերները. ամեն մէկ տան հինգ-վեց տղամարդ կար, բացի մեծն ու պստիկը. սարի սէզախոտը, ծաղիկը, աղբիւրը, ձորերն ու այրերն էին նորանց կեանքը, նորանց հոգին: Փափուկ վերմակների

մէջ, տաք վառարանի առաջ ձգուած հօ չլին մեծացել, որ ա՛ն ունենային կամ թուլութիւն: Չատանգամ անձրեւ, կարկուտ գալիս էր, նրանք հանդումը կամ սարումը քընած տեղը՝ գլուխ չէին բարձրացնում, որ քունը չփախչի: Նրանց հնոցը տան մէջտեղն էր՝ մի լայն օջաղ, երկու-երեք անագին ծառ իրար վրայ գցած, առաւօտից մինչև երեկոյ այրում էր ու իրանք էլ դռները բաց, շատ անգամ շապկանց, գլխաբաց՝ կրակի շորս կողմը կտրում, խմորը դունդ էին անում, միջումը թխում, միս էին խորովում, հաց էին ուտում ու իրանց ձորերի պատմութիւնն անում, և որդին հօր պարանոցովն ընկած, եղբայրը քրոջը խտտած, անմեղ գառի պէս կրակի շուրջը վէր թափւում, քնում: Մէկ վրդովմունք ընկնելիս էլ՝ իրանց ունեցածը ամուր և անմերձենալի ժայռերի մէջ պատսպարելուց յետոյ, իրանք հրացաններն ուսերին՝ սար ու ձոր ոտի տակ էին տալիս:

Ա՛խ, ի՛նչ տեղ են կենում, որ այսպէս չանեն: Ամեն քար նորանց համար գիրք է, ամեն ապառաժ նորանց համար պատմութիւն, ամեն հին բերդ, քանդուած մատուռ կամ եկեղեցի՝ որ այդ տեղերը լիքն են, նորանց համար կենդանի վարժապետ: Ամեն գերեզման, ամեն արձան նորանց համար կենդանի վկայ ու պատմագիր: Լօռուայ անառիկ բերդերը, Սանահնի ու Հաղպատի վանքերի պատերը, տաճարները, սրահները նորանց համար վարժարան: Իրանք, ճշմարիտ է, կարգալ չգիտեն, բայց սրտներումը երկաթի պէս դրած է թէ՛ այս այն սուրբ հողերն են, այն սուրբ դաշտերը, ուր մեծն Չահն-Չահ, Աշոտ Բագրատունի, Սմբատ, Զաքարէ սպասալար, Արղութեանց-Երկայնարագուկ նախնիք, Յովհան Օձնեցի իմաստասէր, Յովհան Երզնկացի՝ արծուի պէս խոյանում, առիւծի պէս մռնչում էին ու հրեղէն Սերովբէի ու Քիրովբէի պէս թուրը ձեռն առած՝ երկրումը՝ Օմարին, Յունաց, Զինգիզխանին, Թամուրլանգին էին քա-

ղում, իսկ երկնքումը իրանց համար անմահութեան բրաբիոն, անթառամ պսակ էին պատրաստում:

79. ՊԱՆԴԻՍԻ ԵՐԳԸ

Մատաղ լինիմ ձեզ, իմ որդիք սիրական,
 Ես անխնայ ձեզ մեն-մենակ թողեցի.
 Խելքս առել ու տարել էր սատանան՝
 Խենթի նման կանաչ դրախտը ձգեցի:
 Մի օր ես էլ նամուս, պատիւ ունէի՝
 Գոնէ ձեզ մօտ դէմքս պարզ էր ու պայծառ.
 Թողի թէ չէ մեր երկիրը պապերի,
 Լոյս աշխարհը դառաւ խաւար ինձ համար:
 Էս քարուքանդ ողջ քաղաքում շրտեսայ
 Գոնէ մէկին, որ ունենար խղճմտանք.
 Սև օրերս քաշ եմ տալիս ակամայ.

Ողջի համար դառել եմ ծաղր ու ծանակ:
 Մատաղ լինիմ պաղ աղբիւրի ջրերին,
 Նրա մարգրիտ կաթիլներին ես մեռնիմ.
 Եարանք, Աստուած, կ'արժանացնես ինձ կրկին,
 Որ մուրագիս, իմ մուրագիս ես հասնիմ:
 Եարանք, նորից կըտեսնեմ իմ գերզաստան,
 Որ ցաւերս իմ սրտիցը հեռանան...
 Ա՛խ, թէ մին էլ Աստուածածնայ սեղանին
 Ես չօքեչօք, մոմը ձեռիս, մօտենամ
 Ու Տիրամօր սուրբ պատկերի առաջին
 Արտասուքովս ես գետինը լուանամ,
 Էնժամ էլ հէջ դարդ չի մնալ իմ սրտում.
 Տէր երկնային, Քեզ եմ խնդրում, պաղատում...
 — 177 —

Կոտորուէին իմ ոտները, սիրելիք,
 Որ ձեզ անտէր, անտիրական չանէի.
 Քոռանային իմ աչքերը, իմ որդիք,
 Որ իմ եկած սև ճամբան չըջոկէի:
 Բեռնաւոր եմ, չեմ վաստրկել կրքելուց,
 Բեռան տակին միտք եմ անում ձեզ համար.
 Օր ու գիշեր ձեր կարօտը քաշելուց,
 Ես հալումաշ էլայ, դառայ խելագար:
 Սպասելուց ջուր կտրեցին ձեր աչքեր.
 Ձեր աչքերին, որդիք, լինիմ ես զուրբան.
 Տէր, Դու լսես իմ աղաչանք, աղօթքներ,
 Ինձ խնայես, արժանացնես ինձ իմ տան:

80. Ա Ղ Ա Ս Ի

Աղասու անուշ բնաւորութիւնը, բարի սիրտն ու հոգին քիչ մարդ կ'ունենար: Այն հասակը հասել էր, քսան տարին անց կացել, նա դեռ հօրն ու մօր առջևն այնպէս էր, ինչպէս մէկ անմեղ գառը: Մէկ օր նրանց անհնազանդ չէր գտնուել, մի օր նրա բերանից մի թթու խօսք չէր լըսուած. աչքը նրանց աչքին հանդիպելիս՝ նա նրանց միտքն իսկոյն հասկանում ու ամեն կերպ աշխատում էր, որ նրանց կամքը կատարէ: Գիւղացիք բոլորը նրանով էին ուրախանում, նրա անունով երգում: Ամենքի աչքը նրա վրայ էր, նրան էր գովում, նրան էր օրհնում: Մէկին մի փորձանք պատահելիս կամ մի հոգս ունեցած ժամանակ նա անձնանուիրութեամբ նրա ցանկութիւնը կատարում, իւր փափազին էր հասցնում: Բերանի պատառը հանում էր՝ ուրիշին ուտեցնում: Այնքան իւր ապրանքին, իւր հանդին ու տաւարին չէր զգուշանում, որքան իւր դրացի-

ների: Ճանուտէրի որդին էր, աղքատի ու ողորմելիի ընկերը: Որք էր գնում նրա դուռը, սփռոցն էր բաց անում կամ քսակը. ո՛վ դուժան չունէր, նրան իրանցն էր բան տալիս. ո՛վ եզ ու հօտաղ չունէր, նրան իրանցն էր ուղարկում. ո՛վ փող չունէր որ մշակ վարձէ, այգիումը բանեցնէ, ինքն էր առաջ ընկնում, գիւղի տղայքը հաւաքում ու գնում՝ առանց կանչելու ու խնդրելու, նրա դործը կատարում, այնպէս որ՝ երբ այգիի տէրը ներս էր մտնում այգին՝ աչքը սառած էր մնում և նրան կեանք ու արև էր մաղթում: Չատ ծնողներ երանի էին տալիս նրա ծնողներին, որ այդպիսի բարի գաւակ ունին: Ո՛րտեղ հրակէրք ու խնջոք էր լինում, նա էր հիւրերի գլուխն անցնում, նրան կառավարում և ուրախացնում:

Նրա երկայն հասակը, նրա թուխ-թուխ աչքերը, նրա դալամով քաշած յօնքերը, նրա աննման գեղեցիկ դէմքը, նրա անուշ լեզուն, քաղցր ձայնը, նրա լայն թիկունքն ու բարձր ճակատը մարդու խելք էին տանում. տեսնողը երեսին նայելուց չէր կշտանում: Սաղը ձեռքն առնելուն պէս, քարին, փայտին շունչ, հոգի, լեզու էր տալիս: Ուղիղ է՝ արևը երեսն այրել, գոյնը փախցրել էր, բայց ծիծաղելիս՝ երբ աչք ու յօնքը բաց էր անում, կարծես վարդ էր բացւում, երեսիցը լոյս թափում: Նրա հրացանի գնդակը ապարդիւն չէր անցնում: Սիրտը այնքան բարի էր, որ զուր տեղը թռչուն էլ չէր սպանում, մրջիւնը չէր կոխում. բայց երբ թուրքերը գնում, այգին լցւում էին, կամ իրան էին ուղում սպանել կամ դրացուն, այն ժամանակ՝ եթէ երկնքում էլ լինէր, ցած էր իջնում. գիւղի ծայրիցը ձայն տային, իսկոյն, մի ակնթարթում, պատրաստ էր, և եթէ բանը խօսքով չէր վերջանում, այն ժամանակ նա իւր սրի, հրացանի ու բազկի շնորհքն այնպէս էր ցոյց տալիս, որ

Թշնամին մնում էր կատու դարձած, կամ նրա ձեռքին գոհ էր գնում:

Այնչափ ուժեղ էր, որ ձեռքը տղամարդու գօտիկը ձգելիս՝ հաւի ձագի պէս բարձրացնում, իւր գլխի ծայրին էր հասցնում, պտոյտ տալիս և կրկին ցած բերում: Զի հեծնելիս՝ հէնց որ ձեռքը բարձրացնում էր, առիւծ ձին խոնարհում էր ու մէջքը դէմ անում: Գոմշի կամ եզան պարանոցին մէկ սուր խփելով՝ այնպէս էր դուրս կտրում, որ սրի ծայրը գետինն էր խրում: Զատ անգամ քսան աւազակ իւր սրի կոթովն էր փախցնում: Թուրքերը, նրա անունը լսելիս, լեղապատառ էին լինում: Յաճախ, կռուի ժամանակ, հէնց որ նրա ձայնը լսում էին, ճանճի պէս ցրւում, ցիր ու ցան էին լինում, կորչում: Մականունը Ասլան-Բալասի*) էին դրել:

Բայց այսքան զարմանալի յատկութիւններն ունենալով՝ դարձեալ երեսայի հետ երեսայ էր, մեծի հետ՝ մեծ: Խանի, շահի առաջն այնպէս էր կանգնում, պատասխան տալիս, որ կարծես թագաւորի որդի լինէր: Ծիծաղն ու խնդուլը նրա երեսից պակաս չէր երբէք. այնքան պարզ էր նրա սիրտը, այնքան հանգիստ նրա խղճմտանքը, այնքան արդար նրա հոգին: Նրա ամեն մի խօսքը անգին գոհար էր:

81. ԱՂԱՍՈՒ ՄՕՐ ԵՐԳԸ

Զարթիր, մանուկ իմ նագելի, բաց այդ պայծառ աչերըդ, Թերթերունքէդ քունը թօթուէ, գիրկը հանդիր քո մօրըդ, Բաւ քեզ՝ որքան բարի հրեշտակք հէքեաթ ասին երազում, Այժմ արի քեզ այն պատմեմ, ինչ պիտ' տեսնես աշխարհում:

*) Առիւծի-Գորին:

Զարթիր, որդեակ, քանի քընես, Բաց աչերդ այդ նախշուն, Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը, Գեանք ու արևն է տեսնում:

Դու կըմեծնաս, բոյ կըքաշես, շինար բոյիդ ես դուրբան, Քեզ ոյժ կըտան Մասսի քաջեր, որ դու լինիս քաջ Վարդան: Իմ մատներով մի ոսկեթել մէջքիդ գօտի եմ կարել, Գօտիիցդ թուր կըկապեմ, այն էլ ինքս եմ սըրել:

Զարթիր, որդեակ, քանի քընես, Բաց աչերդ այդ նախշուն, Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը, Գեանք ու արևն է տեսնում:

82. ԶԻՐԻԴ ԽԱՂԱՅՈՂՆԵՐ

Արեգակն եկել, երկնքի մէջտեղը բռնել էր. օրուան փուշը մի քիչ կոտրուել, տաքացել էր: Սար ու ձոր արծաթի պէս պսպղում, պլպլում էին: Այս միջոցին ով որ Քանաքեռ մտնէր, հէնց կ'իմանար, թէ երկնքիցը մէկ աւետեաց ձայն է եկել, աշխարհս արքայութիւն է դարձել: Այստեղ գուռնէն էր փշում, այնտեղ ճզլախտի էին խաղում, միւս տեղը գօտեմարտներ էին կոխ ունում: Աղա սին էլ, քէֆն արել, պըծել՝ իւր խումբը յետից զցած՝ եկաւ մէկ տասը ձիաւորով դիւղի միջովն անցկացաւ, որ գնայ, կալերի դգումը (տափարակումը) իւր շնորհքը ցոյց տայ՝ շիրիք խաղայ, որովհետեւ գիւղամիջին այդպիսի տափարակ տեղ չկար: Հէնց իմանաս մէկ թագաւորի որդի է գալիս: Զէնք ու զրահը կապած, հրացանն ուսին, թուրը կողքիցը կախ, ջուխտ փշտովն ու դաշոյնը կողքումը, կանաչ մովի շալվարը, զար կարէն հագին, մետաքսէ աղ-

լուխը վզին փաթաթած, բուխարայ թուխ գգակը կիսով
չափ կոտրած՝ թեք գլխին դրած, բեխերն էլ աբրեշումի
պէս ոլորել՝ այնպէս էր թշի վրովը դուրս տարել: Մտիկ
անողի խելքը գնում էր:

Հեռուից երևում էր, թէ ինչ կրակ էր անում կտրի-
ճը: Ջիու ակտնջը մտած՝ այնպէս էր քշում, կրակին տա-
լիս, որ հէնց իմանաս թեւաւոր թռչուն լինէր: Չատ ան-
գամ ջիբիդը հեռու տեղից շարտում, ձին չափ էր գցում
ու գետնիցը վեր ցատկելիս, ձիու վրայից բռնում, նորից
գցում: Չատ անգամ հէնց այնպէս ուղիղ շարտում էր ու
կրակի պէս յետեից հասնում, բռնում, էլ յետ ծուլ անում:
Գետնին վայր ընկած տեղիցն էլ այնպէս էր թամքի մի-
ջիցը կռանում, բարձրացնում, որ ջիբիդն առաջին դողում
էր: Ընկերների վրայ էլ եթէ երբեմն-երբեմն ջիբիդ էր
գցում, այնպէս էր նշանում, որ գլխարկների ծայրին էր
դիպչում, կամ գլխարկը հետը տանում, որ իմանան, թէ
նա նրանց խնայում է: Չատ անգամ թամքի միջին ջուխտ
ոտի վրայ կանգնած, այնպէս էր ձին չափ-գցում: Աչք
պէտք է լինէր, որ նրա կտրճուլթիւնը, տղամարդու թիւնը,
շնորհքը տեսնէր ու զարմանար:

Յանկարծ, երբ մեր տղայքը ջիբիդ էին խաղում և
բոլոր գիւղը բարեկենդանի քէֆի մէջն էր, հէնց բռնես
մի ամպ տրաքեց, կամ երկինքը փուլ եկաւ: Տարան, տա-
րան, աստուածասէրք, մօտ եկէք, օգնեցէք, գլուխս լա-
ցէք. տունս կոխեցին, օջաղս քանդեցին, աչքիս լոյսը հա-
նում են, Թագուհուս խլում են: Թագուհի ջան, գլխիդ
մատաղ գնամ. Թագուհի, անունիդ մեռնիմ, աչքիս լոյսի
պէս մեծացրի, որ այդ տեղն ընկնիս. թող ինձ սպանեն,
այդ թուրը թող իմ սիրտս կոխեն, թող առաջ ես հողը
մտնեմ, յետոյ ուր տանում են քեզ, թող տանեն»:

Այսպէս աղիողորմ կերպով մորմորում էր անման

Թագուհու մայրը, որի ձեռքիցը սարգարի կատաղի սպա-
սաւորները զօրով կամենում էին նրա մին ու ճար աղ-
ջիկը դուրս խլել և սարգարի պիղծ կանանոցում գերի
շինել: «Ձայնդ կտրիր, անգգամ, ասում էին անբաղդ մօրը.
հէնց այս բոպէիս փորդ վէր կ'ածենք: Սարգարի հրամանն
է՛ պէտք է ձեր աղջիկը քաշենք, տանենք, ինչ խօսք ու-
նիք, ինչ կարողութիւն. սարգարի հրամանին սարը չի
գիմանալ՝ դուք ինչ կարող էք անել»:

Խալխի գլխին ջուր մաղուեցաւ. բարեկենդանը հա-
րամ եղաւ. ամենքը, ձեռները խաչած, մնացին կանգնած.
սարգարի ֆառաշներն եկել էին, որ աղջիկ քաշեն. ով
յանդգնութիւն ունէր ընդդիմանալու: Երեխանց լացը, կա-
նանց սուգ ու ողբը իրար խառնուեցան: Գիւղը հէնց բռ-
նես՝ գլխովին քանդուեցաւ: Տարաբաղդ մայրը շատ գլու-
խը թակելուց՝ նուաղեց, անշնչացած վայր ընկաւ: Թա-
գուհին հօ վաղուց էր թուլացել: Հէնց այն է՝ ֆառաշնե-
րը տեսնելով, որ մայր ու աղջիկ դարդի ձեռքից նուաղե-
ցան, էլ ձայն, շունչ չէին տալիս, լաւ համարեցին, որ
այդպէս թուլացած՝ վերցնեն երկուսին էլ, տանեն: Երկու-
սը ձիու վրայ նստել՝ այն է տեղ էին բաց անում, որ մէ-
կը մօրը խտրտի, միւսը աղջկանն առաջն առնի,—մէկ թուր
պսպլաց, ֆառաշների մէկի գլուխը գետնի վրայ ընկաւ ու
սկսեց զլղլացնել ու պար գալ: Գեռ սա ձայնը չէր կտրել,
որ միւս ընկերն էլ սրա հացը կերաւ, սրա մօտ գնաց:

«Աղասի ջան, ձեռքդ քեզ քաշիր, քո խեղճ, ալևոր
հօրը խնայիր, մեր տունը մի քանդիր», ձայն տուին
չորս կողմից հայերը: Բայց թնդանօթ էլ տրաքէր, Աղա-
սին չէր իմանալ. էլ ոչ ականջն էր իրանը, ոչ մարմինը,
ոչ աչքը. բայց խելքն ու ձեռքը լաւ իմանում էին, թէ
ինչ բանի վրայ են: Ջիբիդատեղիցը նկատել էր, որ աշ-
խարհն իրարացով դիպաւ ու ձայնը կտրեց: «Տղէք, սրա-

նում մէկ բան կայ, գնանք. մեր բարիկենդանը հարամ եղաւ: Առիւծի պէս ներս ընկաւ հսկայ երիտասարդը: Երկուսի գլուխը սրբելուց յետոյ՝ միւսները կամեցան, որ թուր հանեն, բայց քաջն Աղասի որ բերանը բաց չարեց. «Իժոխքի որդիք, ձեզ ով է ուղարկել այստեղ, ում վրայ էք այդպէս կատաղել. ասենք թէ Հայր ձայն չի հանում, պէտք է նրան ողջ-ողջ ուտէք. աչքներիդ լոյսը կը թըռցընեմ այս ըոպէիս. կորէք, թէ չէ ամեն մէկդ ճուտի պէս առաջս կը թըրպրտայ»: Ասեց ու մէկի էլ ուսը վէր բերեց, միւսի աղիքը վէր ածեց: Մնացած վեցը տեսան, որ ճար չկայ, ձիանը հեծան ու մինչև Երևանի բերդը մէկ գնացին:

83. ԼԵՌՆԱՅԻՆ ՎՏԱԿ

Սպիտակ, փայլուն սարի կատարից
 Զիւնը հալում է արևի տաքին,
 Եւ մի հրաշախօս վտակ այնտեղից
 Ծնունդ առնելով, թափում է ուժգին:
 Կամ նագում է նա քաղցրիկ շըշիւնով,
 Կամ ոստոստելով ժայռից դէպի ցած,
 Հընչում միաձայն, մեղմիկ կարկաչով,
 Մանկական անբիծ խընդուլթեամբ լցուած:
 Նայիր, վագում է, պարում, թռչկոտում,
 Արևին քնքոյշ համբոյրներ տալով,
 Եւ իւր կուսական կուրծքը զարդարում
 Եօթնեակ գեղեցիկ շքեղ գոյներով:
 Նա գնում է... բայց ուր: Այնտեղ, ստորոտում,
 Ինչպէս մի առիւծ, փրփուրը բերնին,
 Ունում է, մանչում, սաստիկ որոտում
 Կատաղի գետը, մռայլը դէմքին:

Նրա տըղմոտ ջուրը պղտոր է ցեխից,
 Աղմուկն սաստում է օտար ձայներին,
 Եւ սարսափելի ահից, երկիւղից
 Սասանում, դողում նոյն իսկ և՛ գետին:
 Կարկաչին վտակն այնտեղ է դիմում,
 Իւր եղեմական երգերն երգելով.
 Դըժոխքի գետը ներքն է եռում՝
 Սա դարձեալ անդորը, դարձեալ անվրդով
 Դեռ ցած է գլորում: Նորա առաջին
 Ահա մի ալիք բերանը բացեց
 Եւ մատաղահաս անմեղ էակին
 Իւր որովայնում իսկոյն ամփոփեց:
 Եւ կոհակների մթին անդունդից
 Ահա լուսեցաւ մի խուլ դղրդոց.
 «Ինչո՞ւ դու, թշուառ, յստակ երկնքից
 Իջար և ընկար մեր ցեխոտ սև ծոց»:
 Բայց սիրուն վտակն էլ չըհանեց ձայն.
 Նորա հետքերը բնաշինջ եղան.
 Միայն գետն ուռած, գոռոզ ժըպտալով,
 Ժայռեր փշրելով՝ գիմեց հեռաստան:

84. ԱՂԱՍՈՒ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՀՈԴՍԵՐԸ

Աղասին՝ երբ Քանաքեռ սարդարի ֆառաշներին սպանեց, ինքն էլ այնպէս մնաց ազիզ Թագուհու և իւր արածի վրայ սառած՝ կանգնած: Ընկերներն էլ ժամանակ չը կորցրին. գիտէին որ բոլորի վերջը մահն է. էլ ոչ հօր մտիկ արին, ոչ մօր, Աղասուն կապեցին ձիու վրայ ու ընկան Աբարանի սարը, որ կամ Փամբակ փախչեն, կամ Ղարս, կամ Ախալցխայ, որ իրանց գլուխն ազատեն:
 Բայց ինչ Աղասու հալն էր, Աստուած ոչ շհանց տայ.

ձեռն ու ոտը կապած, դժոխքը փորումը, սաղայէլեան չար հրեշտակները գլխին պտոյտ տալով՝ Ջանգուի վրայով անցկացրին ու հէնց բռնես՝ սար ու ձոր բերանները բաց, կամենում էին նորանց կուլ տալ: Չատ տեղ իրանից գնում՝ փոքր էր մնում ձիուցը վայր ընկնի, դարձեալ ընկերները հասնում, երեսին ջուր էին ածում, ականջները տրորում, ուշքի բերում: կրկին սիրտը դնում՝ ձիու գրէխովն էր ընկնում: Երբեմն էլ որ յանկարծ՝ «Քնուհի, հայրիկ, մայրիկ, նազու» չէր ձայն տալիս, քար ու հող կամենում էին կրակուիլ: Հէնց մութը գետինն առաւ, նրանք ներս մտան Աբարանի քանդուած եկեղեցին: Զիանքը որ շունչ չէին քաշում, աչքներից կարծես արիւն էր կաթում, քթներից ու բերաններից՝ կրակ: Վաթոն սկսեց ձիանը ման ածել, Կարոն՝ սար ու ձոր աչքի տակն առնել, հսկողութիւն անել: Մուսէն՝ Աղասուն ուսին դրած, մտաւ եկեղեցու աւերակը, գլուխը դրեց գողը, ձեռք երեսին ու աչքը երկինքը զցեց, որ իմանայ թէ աստղերն ինչ են ասում: Միւսները այս կողմ այն կողմն ընկան, որ ձիանոնց համար մի փոքր ուտելիք ճարեն: Բայց այն ժամանակ հանդուհան ինչ կըլինէր. խոտի չոփերն էին մնացել տեղ-տեղ ցից կանգնած: Երկինքն աչք ու յօնքը կիտած՝ իւր անիւր պտըտում էր հանդարտ. լուսինն ամպերի տակիցը մէկ երեսը հանում՝ ցոյց էր տալիս, մէկ էլ ծածկում, կորչում էր: Գերեզմանատունն այնքան սարսափելի չէր լինիլ, ինչպէս այս ամայի հանդը: Ամեն մէկ սարի արանքից կամ քարի տակից դժոխքի ձայն էր գալիս: Գայլ, չաղալ, արջ մէկ կողմից, դառնաշունչ բուքը միւս կողմից, Սանդարամետը բաց էին արել, սար ու ձոր իրար գլխով տալիս: Ամեն մէկ քար, ամեն մէկ թուփ, նրանց աչքին դե էր դառել ու, ձին ոտը փոխելիս, կամ փռնչալիս, քարերը կամենում էին ճաքիլ, ձորերը տրա-

քիլ: Աղասին՝ շունչը փորն ընկած, երբեմն որ ան չէր քաշում, գետինն ուզում էր պատուի, ընկերներին ներս տանի: Նրա հաւատարիմ շունը գլուխը նրա ոտի տակն էր դրել՝ մնացել փէտացած: Զին էլ բերին, գլխավերեւ կապեցին, որ գուցէ նրա շունչը Աղասուն մի ճար անի: «Ջանիդ մատաղ, Աղասի, այս ինչ օրն ես ընկել, մեր աչքը պէտք է դուրս գար, որ քեզ այսպէս չտեսնէինք. այս ինչ է քո դրութիւնը», ասում էր երիտասարդ Մուսէն ու գլխին տալիս, երեսը երեսին դնում, ձեռք կրծքին. երակի գարկն ու ջերմի սաստկութիւնն էլ որ չէր տեսնում, գլխին կրակ էր վառում:

Միւս ընկերներն էլ, ձիանոնցը ջուր տուեցին, ձեռները քամակներին քսեցին և նորից թամբեցին, սանձը բերանները զցեցին, հրացանները, ատրճանակների ոտներն էլ քաշեցին, նորոգեցին և ամեն մարդ իւր ձիու սանձը ձեռին՝ եկան, Աղասու չորս կողմը կտրեցին: Աչքներից արտասուքը գետի պէս էր վէր թափում: Ծնողաց հոգսը մէկ կողմից, իրանց սև օրը միւս կողմից, իրանց սիրելի ընկերին էլ այդ դրութեանը տեսնելիս՝ ուզում էին քար ու թուփ պոկեն, գլխներին տան. «Փնուքիդ մատաղ, Աստուած, հէնց այս առաւօտ ամեն աչք մեզ էր երանի տալիս. ինչ արինք, որ մեզ այս պատժին հասցրիր: Աղասի ջան, Աղասի, ինչ կըլինէր, որ ամենքս էլ քո բաղդին մատաղ լինէինք. եղբայր ջան, մեր հողի, մեր աչքի լոյս, Մէկ ճանճ անգամ իզուր տեղը չես սպանել, մէկ սառը խօսք քո բերնիցը չի դուրս եկել, այ Աստուածու գառը. ուրեմն ինչո՞ւ պէտք է Աստուած քեզ էլ, մեզ էլ այստեղը հասցնէր: Տօ մէկ բերանդ գոնէ բաց արա, քո ջանին մեռնիմ. ինչի՞ ես այստեղ մեզ այրում, փոթոթում. ինչ կըլինի, որ այդ սիրուն աչքերդ բաց անես, մեզ այսպէս չսպանես: Մեր գլուխը քեզ մատաղ, ամենքս էլ քո

առաջ մեր արիւնը վէր կ'ածենք: Կաթն ու ծիծ մէկ տեղ նրա համար ենք կերել, որ քեզանից ձեռը քաշենք. բարդ ու լաւ օր մէկ տեղ նրա համար ենք վայելել, որ քեզ նեղ օրը բաց թողնենք: Որիս ուզում ես, վեր կաց, քո ձեռով մատաղ արա, ով երեսը յետ թեքի, պարանոցը կտրիր. քո ձէնին մատաղ, ախր մէկ խօսես ինչ կըլինի»:

Այս խօսքին յանկարծ մէկ ձիու ոտի շփլթոց եկաւ: Երկինք, գետինք գլխներին սևացաւ. հէնց իմացան մէկ ամպ տրաքեց, մէկ սար գոռաց՝ փուլ եկաւ: Զէնք ու զրահ առան ուսները. ամեն մէկը մէկ բուռը հող սրբութիւնի տեղակ բերանը գցեց, մէկ քարի առաջի չոքեց, իւր մեղքը խոստովանուեց, մէկ քանի ծունր դրեց, երեսին խաշ հանեց, ժամի քարերը պաշելով՝ տեղիցը վեր կացաւ, ձիու աչքերը ճմբուեց, սղալեց, որ ականջները սրել, խլշացրել՝ այն կողմն էին մտիկ անում, որտեղից ձայնը գալիս էր: Չունը մի կողմ քաշեցին, մատով ձեռով արեցին, որ ձայն չհանի ու իրանք թուր ու հրացան պատրաստած, ձիու սանձը գցած՝ սկսեցին պատի ճեղքից անձայն ականջ դնել, որ տեսնեն՝ եկողներն ուղբեր են:

Այսպէս կէս ժամաչափ մնացին փէտացած, էլ չէին ուզում ծպտան. շատ մտիկ արին, ձայն չեկաւ. հէնց այն է՝ կամենում էին տեղները նստել, որ մէկն այն կողմից սկսեց բերանը բաց անիլ. «Տղերք, ինչ կըլինի, թող լինի. տղամարդութիւնն այն է, որ մարդ իւր գլուխը թըշնամու ձեռքը շտայ: Դուք լաւ գիտէք, որ մեր մէկ հայր տասը թիւրքի հաւասար է: Երևում է յետևներիցս մարդ են գցել. թող գան, զրանց փերն իրանց խռով կենայ: Բոլորին կամ կըջարդենք, կամ կըջարդուենք: Մէջք մէջքի տանք, տմարդին մուհիթաջ չլինինք»:

Հէնց այս խօսքն էր Կարոյի բերանում, որ յանկարծ երկու գագ ծուլ էլաւ, թուրը դուրս քաշեց և կամենում

էր որ դուրս պրծնի. բայց ընկերները փէշիցը քաշեցին, ձեռքները բերանին դրին, որ սուս տեղը նստի, որովհետեւ ձիանոնց ոտի թըրխկոցն ու փունչոցը այնպէս մօտեցաւ, որ կ'ասես թէ ականջների տակին լինէր: Բայց նըրանք լաւ գիտէին, որ գիշերը ձայնը շատ շուտ տեղ կը հասնի, այդ պատճառով էլ չուզեցան, որ իրանց տեղն իմաց անեն ու նրանք հազրուած գան: Քիչ-քիչ եկողների խօսակցութիւնն էլ էին ջոկում, որովհետեւ պարզկայ գիշեր էր, քարերն էլ էին համբաւ բերում:

«Լաւ ուժ են տուել», ասաց թուրքերից մինը. «կեցցեն. անիծած բուքն էլ հետքերը կորցրել է. գիշեր էլ է, որ գոնէ մարդ տեսնի. բայց ուր կըկորչեն. երկնքումն էլ լինին, վէր կըբերենք. դեռ քշենք. այս ամայի տեղը նրանք չէին մնալ».— Թուր, հրացան պատրաստի պահեցէք, ասաց թուրքերից միւսը. մի գուցէ հէնց այս թփերի տակ թագ կացած լինին, ասածներս լսեն ու յանկարծ այնպէս վրայ թափուին, որ էլ չկարողանանք ձեռքներս գլուխներս տանել: Սրան Աբարան կ'ասեն. Աղասու պէս աւիւծը այսպէս տեղը մենակ քսան ձիաւորի չի ասիլ, թէ Աստուած է ստեղծել.— «Տօ, քիչ գովիր այդ պիղծ, անհաւատ հային. չէ, չէ, մեզ ողջ-ողջ կ'ուտի: Հայն ինչ է, որ ինչ ջան ունենայ: Չմեռնիմ, մինչև աչքս նրան հասնի. կըտեսնէք, թէ ինչպէս ճուտ կըդառնայ առաջիս»: «Այ տղայ, այ տղայ, ասաց այն կողմից թուրքերից մինը. այս եկեղեցուց հեռու կենանք. սրա միջումն, ասում են, սուրբ Մողնու մասունք կայ թաղած ու դուք լաւ գիտէք, որ այդ գիծ սրբի հետ գլխի տալ չի լինիլ. մարդի պարանոցը ծուռում, երեսն յետևն է ընկնում... հազար այսպիսի բան ծուռում, երեսն յետևն է ընկնում. Հայ, թուրք, ամենն էլ նրա ծառան են».— «Բերանիցդ հայի հոտ է գալիս, մաշաղի, ասաց մի ուրիշ թուրք. տօ, հայն ինչ է, որ իւր սուրբն ինչ լինի»:

ես քո ջգրու այս գիշեր մինչև սրա միջումը խորոված չանեմ, չուտեմ, ձիս միջին չկապեմ, բաս ես մարդ չեմ...

Դեռ խօսքի կէսը թուրքի բերանումն էր, որ «ո՛վ Սուրբ Սարգիս», ձայն տալն ու թուանքների ճուռոցը մէկ եղաւ: «Տղէք, ձեր ջանին մեռնիմ, էլ մտիկ մի անէք, մեր թուրը նրանց գլուխը. էլ որ օրուան համար ենք կողքներիցս կախ անում», ձայն տուեց հսկայ Կարոն. «երեքի գլուխը գնաց, սրանց փիրն անիծած»:—Երկուսն էլ իմ թրիս մատաղ արի, քաջացէք, այն կողմիցը գոռաց Վաթոն:—Երկուսն սպանել, մէկի գլուխն էլ ահա ոտքիս տակն է, ասաց Վանին:—Տղէք, փախան, ձիանը հեծէք, սրանց եկած ճանապարհը քոռանայ. սովորել են՝ գեղերումը հաւի գլուխ թուցնելով ման գան, Հայերի արիւնը խմեն. սրանց տունը քանդուի. տղէք յետամուտ եղէք. սուրբ Սարգսի ջանին մեռնիմ, հրապարակը մերն է. ասացին ու վիշապի պէս ընկան թշնամու քամակիցը, որին ինչ տեղ հասցրին, այն տեղ կտոր-կտոր արին: Քար ու սար աչքներին լոյս էր տալիս, կռներին ոյժ:

Բայց անխ, արիւնն աչքները կոխած՝ հէնց քշեցին գնացին, էլ միտք չարին, թէ Աղասին ինչ նեղ դրութեան մէջ ընկեր է ձայն տալիս, ընկեր չկայ, ախ է քաշում, ձայնը լսող, իմացող չկայ: Հրացանները որ միանգամից չճրուռացին, հէնց իմանաս թէ հոգին յետ եկաւ տեղը. վրայ թուաւ տեղիցը, ընկաւ ձիու քամակն ու խելքը կորցրածի պէս՝ էլ չիմացաւ, թէ ուր է գնում: Թուրը որ մէկի գազաթին չհասցրեց, գլխի հետ երկու կտոր եղաւ. մինչև դաշոյնը կրհանէր, պարանն ընկաւ ճտովն ու շատ էլ կամեցաւ որ ձին առաջ քշի, չեղաւ. ձին տակիցը դուրս թուաւ, ինքը գետնին դիպաւ ու չորս հսկայ տղամարդ վրայ թափեցին: Նրա շանը վաղուց էին ուզում սպանել, որ ձայն չհանի, բայց այս տիրասէր հաւատարիմ կենդա-

նին՝ տեսնելով որ իւր տիրոջն էլ օգուտ չի անիլ, ընկաւ գնացածների յետևիցը: Աղասու ձեռները կապեցին, բերանը բամբակով լցրին, աղլուխով պինդ հուպ տուին ու աչքը բարին տեսնի, միւս օրն էր թնդանօթն ու Աղասու ջանը:

Չատն ու քիչն Աստուած գիտէ, թէ ուր հասան տղայքը, յանկարծ որ յետ դարձան, գլխներին կրակ վառուեց, երբ Աղասու շունը տեսան ճանապարհին: «Վայ, մեր տունը քանդուեց, տղէք», ձայն տուին. «այս ինչ արինք. մեր ձեռովը մեր աչքը հանեցինք. հասնենք, գնանք. էլ ինչ ենք անում մեր գլուխը, երբ նրան կըտանեն»: Բայց ո՛ր էր Աղասին... Լուսնեակ գիշերը շատ այս ու այն կողմն ընկան, բան չգտան. էլ յետ հաւաքուեցան ու միտք արին: «Տղէք, մնանք այստեղ: Աղասու շունը՝ տեսնում էք, անյայտացել է. նա իմաստուն կենդանի է. ինչպէս որ լինի՝ հետքի վրայ կարող է գտնել. թէ ճար կայ, նրանից կըլինի այս գիշեր, մենք ոչինչ չենք կարող անել»: Այսպէս բաւական ժամանակ տարակուսած միտք էին անում, երբ յանկարծ խելօք շունը՝ լեզուն հանած, հեթեթալով լոյս ընկաւ: Չունը վազեց, նրանք յետևից: Բաւական տեղ անց կենալուց յետոյ՝ շունը յետի ոտը վեր քաշեց՝ կանգնեց: Չատ էլ զօր արին, որ տեղիցը եռայ,—չեղաւ: Իսկոյն իմացան գզոյշ կենդանու միտքը. ձիաներից վէրեկան, մէկին յանձնեցին ու Կարոն առաջներն՝ ընկած՝ կամաց-կամաց տոները փոխեցին... Մէկ բլրակի մօտեցան թէ չէ, էլի շունը կանգնեց, հոտոտեց: Հրացաններն առան ձեռները: Աստուծոյ ողորմութիւնը հասաւ. նրանք այն կողմիցը գնացին, որ բլրակի ստուերը մնաց առաջներին: Քարերի տակովը փորսող անելով՝ այնքան գնացին, որ մտան մէկ քանդուած փոսի մէջ: Զուր չկար միջումը. անձրեի ճղած էր: Բլրակի ստուերը մէկ հինգ գազ էլ այն կողմն էր ընկել նրանց գլխի վրայովը: Այս հեղեղատի միջովն այնքան

այսպէս զգուշութեամբ գնացին կռացած, որ թշնամին մնաց դէմ ու դէմը: Լուսնեակը հէնց ընկաւ թուրքերի ճակատներին. տեսան որ Աղասին մէջներումը չի, սիրտներն ընկաւ տեղը. մի փոքր էլ շունչ առան ու ամենմէկը մէկի ճակատին նշանիլը, հրացանների տրաքիլն ու թշնամիների բանհոգի լինելը մէկ եղաւ: Հաւի պէս դեռ այնպէս թրպրտում էին, որ մեր տղայքը վրայ հասան: Ա՛խ, ո՞վ կարող է նրանց ուրախութիւնն ու արտասուքը պատմել. երկնքից հոգին յետ բերին. էլ նրանց բերանն ինչ խօսք կըգար: Որ էլ ժամանակ չկորցնեն, վեր առան իրանց կորցրած գանձը, հանեցին թշնամու գէնք ու զրահը և բարձեցին թուրքերի ձիանոնց վրայ ու ճանապարհ ընկան: Ո՞վ կըզարմանայ, որ լսի, թէ Աղասին ամեն անգամ իւր շանը տեսնելիս՝ ուզում էր կեանքը նրան տայ: Նշաններով մինչև տասնուհինգ մարդ այն գիշերն սպանել էին: Երբոր կրկին եկեղեցու մօտ հասան, հանեցին մի քանի շահի փող, դրին սեղանի վրայ, չորեցին, Աստուծուն փառաբանութիւն տուին ու ճանապարհ ընկան...:

86. ԳԱՂԹԱԿԱՆԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Պատրաստում էին մեր բոլոր գիւղեր՝
 2ուել-գաղթելու հեռաւոր տեղեր.
 Ես էլ, զբաղուած միւսների նրման,
 Վերջացնում էի գործեր զանազան.
 Մեծ ճանապարհի համար հարկաւոր
 Հաւաքում էինք սարք ու կարգ բոլոր:
 Բայց շատ էր ցաւում իմ սիրտ ու հոգին,
 Եւ ուրախ չէի ես իմ արածին...
 Ի՞նչպէս ես թողնեմ իմ ապրած տեղեր,
 Ի՞նչպէս մոռանամ մեր ձոր ու սարեր.

Տանջում էի խիստ ցերեկ ու գիշեր,
 Ողբում լալագին մեր բաղդ, մեր օրեր:
 Ջերմ համբոյր տալով երկրիս պապական,
 Ես հարցնում էի ինքս ինձ շատ անգամ՝
 Գաղթեմ հեռուններ, թէ նստած մնամ,
 Ի՞նչպէս այս ցաւին անեմ լաւ դարման.
 Տանեմ զրկանքներ իմ բնիկ երկրում,
 Թէ հանգիստ ապրեմ խաղալ աշխարհում:
 Վերջին օրն գնացի մեր հանգստարան,
 Ուր թաղուած էին՝ հայր, մայր, ազգական.
 Գերեզմանների առաջ չորեցի
 Եւ արտասուքով նոցա կոչեցի.
 «Մի խելք ցոյց տուէք, ո՞վ փորձուած ծերեր,
 Երագ-տեսիլքում տուէք խորհուրդներ»:
 Եւ երագ եկաւ, երագ սարսեցնող,
 Որ միշտ յիշելիս ազգում է ինձ դող.
 Երկաց ծերուկ իմ հայր սրգաւոր
 Եւ ասաց անեղ ձայնով զօրաւոր.
 «Մի թող դու, որդի, քո ծընած տեղեր,
 Որ կեանք են տուել մեզ ամբողջ դարեր.
 Ցաւ ու տառապանք մենք էլ ենք տեսել,
 Անգութ տանջանքից հալ ու մաշ եղել.
 Արդ՝ ո՞վ է կարող համարձակ ասել,
 Թէ լաւ վախճանի կարող էք հասնել.
 Ո՞վ է մեր կեանքի գաղտնիքն իմանում,
 Հեռու ապագան ուղիղ գուշակում»...

87. ԱՐԻԱՍԻՐՏ ԶԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԸ

I

Հանգստարանի ձայն էր գալիս, երբ մեր ճանապարհորդները, գիշերուայ կիսին, աւերակ քաղաքի պարիսպներին մօտեցան: Լաւ կտրիճ մարդ պէտք է լինէր, որ այս ժամանակին այսպիսի վայրենի ամայի տեղ վտահանար մտնել: Գուցէ մեր յոգնած ճանապարհորդներն այստեղ չհասնէին, եթէ հեռուից լուսնեակի լուսով նօքա չխաբուէին տաճարների ու բուրգերի գլուխները նըր՝ մարելով: Նրանց խաբողը մանաւանդ իրանց տղիտութիւնն էր. Անի քաղաքի անունն էլ չէին լսել, ուր մնաց որ իմանային, թէ նորա աւերակները դեռ աշխարհումս կան: Աշմարիտ է՝ հեռուից քաղաքի ձայն չէր գալիս, բայց սարերի հովիւների ձայնը լսելով՝ էլ կասկած չունեցան, ուղղակի քշեցին ու մտան ամայի քաղաքի մէջ: Մի բոլակական սարսափ կալաւ կտրիճ երիտասարդներին. հէնց իմացան՝ թէ մեռելատուն կամ գերեզմանատուն ընկան և ամեն մէկ ձիու ոտի շփլթոցը կամ իրանց քաշած շունչը սար ու ձոր կ'ասես թէ կատաղեցնում էր:

Ամենայն մարդ փորձած կըլինի, որ երբ մարդս մութը ժամանակին մէկ գերեզմանատան կամ քանդուած եկեղեցու մօտով անցնում է, սիրտը թուլանում է, մարմինը ցնցում, հազարաւոր ցնորքներն էլ դե ու վիշապ համարում, որ իրան կամենում են ուտել. շատ անգամ ուշագնաց էլ է լինում: Սորա պատճառն այն է, որ մարդ սովոր է, ինչ տեղ տուն է տեսնում կամ շինութիւն, կարծում է թէ նորա մէջ մարդ կըլինի, բայց յետոյ որ ձայն չի լսում, այնպէս է ենթադրում, թէ անպատճառ չար ո-

գիններն են այնտեղ բուն դրել: Ապա թէ ոչ՝ մեռելի չոր մարմինը կամ աւերակ պատերը ինչ գօրութիւն ունին, որ մեզ ինչ անեն: Էլ ո՞վ սիրտ կ'անէր ապա մէկ եկեղեցու մօտենալ կամ մէկ բուրջ մտնել, այն էլ այնպիսի ժամանակ, երբ ամեն քարի տակի հարիւր գլուխ էր կտրուում: «Տղէք, չար սատանի թուրը գլխներիս խաղում է», ձայն տուեց քաջն Աղասի. «Տղամարդութիւնն այսպիսի տեղը յայտնի կըլինի. գէնք, զրահ պատրաստեցէք, ձիանոնցը հանգստացրէք, որ եթէ Աստուած տայ մինչև առաւօտ գլխներս վրաներս լինի, տեսնենք թէ այս ո՞ր տարտալուսն ենք ընկել: Տմարդութիւնն էլ ձեռք չի տայ. ձիաները ջրեցէք, քաշեցէք մէկ պատի տակ, ես մէկ շունս առնեմ, կամաց-կամաց մէկ աչք ածեմ՝ տեսնեմ թէ տեղներս ապահով է, թէ էլի սրով ու արիւնով պէտք է կամ գլուխ պահենք կամ գլուխ կտրենք»: Ընկերները շատ խնդրեցին, որ չգնայ, ականջ չարեց. հրացանն ուսին դրեց, փշտովները (ատրճանակ) պատրաստեց, Սուրբ Սարգսի անունը տուեց ու ոտը փոխեց: Գիժ կըլինի այն մարդը, որ իւր գլուխը մահու կըտայ, բայց Աղասին իւր գլխից վաղուց էր ձեռք վեր առել: Հաւատարիմ շունը գլուխը նորա ոտիցը չէր հեռացնում. մէկ հոտ առնելիս՝ կամ շշուկ լսելիս՝ կանգնում էր, յետի ոտների մինն էլ ցցում, երկար ժամանակ ականջ դնում, յետոյ առաջ գնում:

Հէնց մի փոքր հեռացան թէ չէ՝ մէկ եկեղեցու դռնից կրակի լոյսն ընկաւ Աղասու աչքը: Արիւնն աչելն առած, էլ չմտածեց՝ թէ այսպիսի տեղը գողից, թշնամուց աւելի ուրիշ ոքմին չի լինիլ. ուղիղ կրակի վրայ գնաց: Աստուած հեռու տանի, ինչ նա տեսաւ. տասը քուրդ եկեղեցու մէջտեղը կրակ էին վառել, չորս կողմը նստել՝ խորոված էին անում, շանփուրներով բերանները քաշում, ուտում, խնդում և աչքները զգաստ որսորդի շան

պէս կամ դէպի դուռը գցում կամ դէպի պուճախը: Թըշ-
 նամին որքան էլ դազան լինի, շատ անգամ իւր ստուե-
 ըրիցն էլ կը վախենայ: Մինչև որ նրանք կրակի մօտիցը
 ձեռքներն աչքներին կը դնէին ու դուան ուրուականը կը
 տեսնէին: Աղասին կամաց-կամաց ներս մտաւ, ծանր դէմ-
 քով՝ առանց բարև տալու, կրակին մօտեցաւ ու ձեռքը
 մեկնեց, որ մէկ խորոված շամփուր էլ ինքը քաշի: Նրա
 դեղնած մեռելային պատկերը, նորա անահ շարժմունքն
 ու այնպէս անժամանակ և անակնկալ ներս գալը երբ տե-
 սան քրդերը, հէնց իմացան, թէ նա այն աշխարհիցն է
 վեր եկել: Լեզուները շորացան, ձեռքները թուլացան.
 Ինչպէս կարող էին կարծել, թէ այդ միջոցին աղամոր-
 դին մեն-մենակ սիրտ կ'անէր այն աւազականոցը մտնել,
 որի մօտիցն անցկենալիս ցերեկն էլ հարիւրաւոր մարդիկ
 սարսափում էին, որի մէջ հազար տարուց աւելի էր, ոչ
 ոք չէր վստահանում գալ և պատրաստի տներում բնակու-
 թիւն հաստատել: Բայց Աղասին այնպէս էր ձևացնում, իբր
 թէ իւր առաջինը մարդիկ չեն. աչքը խոժոռած՝ մէկ այս
 կողմը դցեց, մէկ այն կողմը, քրդերէն էլ չզիտէր, որ մէկ
 բառ անգամ խօսի. բայց այս էր, որ նորան ազատեց.
 որովհետև եթէ խօսեցել էր, կ'իմանային, որ մարդ է, դև
 չէ, իսկոյն պատառ-պատառ կ'անէին: Մէկ շամփուր խո-
 րովածից սրը կերաւ, սրն էլ յետ կրակը դցեց, տաճարի
 հիանալի շինուածքին ու գեղեցկութեանը մտիկ արեց ու
 գլուխը շարժեց: Քրդերը փէտացած՝ մնացել էին նստած.
 աչքը որ յանկարծ նրանց վրայ չխոժոռեց, ամեն մէկը
 քիչ մնաց որ տեղն ու տեղը հալուի: Այնքան այսպէս
 նրանց աչքը մոխիր ածեց, որ ընկերների ոտի շփլթունն
 իմացաւ և շունն ուրախ ներս ընկաւ, ոտներովը փաթա-
 թուեցաւ: Հէնց շունը տեսան թշնամիքը թէ չէ, աչքների
 փառը վայր ընկաւ, ամեն մարդ թրին վրայ վազեց, որ

նրան կտոր-կտոր անի: Առաջին թուրը վրայ բերողի զը-
 լուխը կէս եղաւ. փշտովները երկուսն էլ իրանց որսը
 ձարեցին. յետոյ դաշոյնը հանեց և գողաց. «Տղէք, ձեր
 արեին մատաղ, Աստուած մեր կողմն է. դուռը փակեցէք,
 որ սրանց մատաղն այս գիշեր անենք»: Հայի խօսքեր որ
 շլտուեցան, հէնց բռնես պատերը լեզու առան. «Աման,
 ձեր եկած հողին մատաղ, ճար ունիք՝ տեսէք, մեզ ազա-
 տեցէք», լսուեցաւ տաճարի խորքից: Տասը-տասնուհինգ
 քրդստանցի հայ էլ այս կողմից այն կողմից որ գլուխ
 չբարձրացրին ու քրդերի մնացած թրերն ու մզբախները
 ձեռք առան, թշնամու աստղը թեքուեցաւ, ութը կտոր-
 ըուել էին, երկուսը մնացել վիրաւորուած, ընկած, սրանց
 էլ կապեցին մէկ ձիու բհրի (ցից) վրայ ու... աչքդ բա-
 րին տեսնի. երբէք մարդկային քաջութիւնը այն բարերա-
 ըութիւնը չի արել, ինչպէս հիմակ: Աղջիկ ասես, տղայ,
 հարսը, երեխայ, ծծկեր՝ հազարաւոր թոկերով կապած՝
 տուն էին արել, Ղարսի գիւղերիցը գերի բերել, որ տա-
 նեն կամ սարգարին ընծայեն, կամ ծախեն: Ո՛ւմ այսպի-
 սի ըուպէին մարդ կեանք տայ, որ նրա առաջին ծունկ
 չղնեն, երկրպագութիւն չանեն: Բայց հսկայն Աղասի ինքն
 էր ընկնում նրանց ճտովը, ինքը նրանց կապը յետ անուս,
 ինքը երեխային ջուկ, մօրը ջուկ փայփայում, գուրզուրում,
 որ Աստուծուն փառք տան, Սուրբ Սարգսին խունկ ու
 մոմ վառեն, ապա թէ ոչ՝ սա իւր շնորհքը չէր: Ոչինչ գի-
 շեր այն լոյսը, այն կեանքը չի տեսել, ինչպէս այս գիշե-
 րը. ազատուողք թէ ազատողք իրար տեսնելիս՝ հէնց իմա-
 նում էին՝ թէ երկնքումն են և ոչ երկրումը:

II

Փոքր ինչ հանգստացան, աչքդ բարին տեսնի: Քրդե-
 րի շորերը, զրահները, ձիու սարքը և խուրջիները որ բաց

չարին, հագար արիւնի գին կար մէջներումը. ամեն մէկի վրայ հարիւր թումանի գարդ, արծաթ ու ոսկի կար, բացի պատրաստի փողից: Աղասին ոչ մէկին մտիկ չարեց, ուղարկեց՝ ձիանքը բերել տուեց, ներս քաշեց և քրդստանցի հայերին հարցրեց, որ իրան միամտացնեն, թէ արդեօք այն գիշեր կարող են այնտեղ ապահով ու հանգիստ մնալ թէ ոչ:

— «Աղա, գլխուդ, արևուդ դուրբան, վալլախայ չընք գինայ, թէ էս շան լաճերիցն էլ կան, թէ չէ, ամա օյադու թիւնն աղէկ է: Սրանց ճանդիցը շունը չի խլըսի, մարդն իմալ կըխլըսի: Մկայ Աստծուն փառք. խաղար էսպէս ջանավար մեր առաջը դան, գէնոնց խէրն անիծեմ, մէկ թո՛ւր տուր մեր ձեռը, մենք գինանք թէ իմալ քո ճակատը պարզ կ'էնենք: Մեր ամեն մէկը, Սուրբ Կարապետ գինայ, էսոնց տասնին խաւի պէս կըծալի, տակը կըքաշի. դու դարդ մի արա, ռահաթ պառկի, մեր երեսն ոտացդ հողն ըլի: էսոնց քօքը կտրուի, քանց շուն շատ են, քանց գէլ առաւել: Թէ մեզ կըխարցնես, մենք էմլայ խէլրաթ կը տեսնանք, որ մեր կէսը պառկի, կէսը դարաւուլ քաշի. էս ձորեր խանայ լիքն են»:

Հէնց այս զրոյցն էին անում, մէկ էլ այն տեսան, որ ձիաւորի ոտի ձայն է գալիս: Արիասիրտն Աղասի միտք արեց, որ սրանք նրանց ընկերները պէտք է լինին. ական թօթափել՝ մանուկներին ու կանանց մի կողմը քաշեց, հագար անգամ ձեռքը սրա ու նրա բերանին դրեց, որ ձայն չհանեն, երկու քրդերին էլ, որոնք կենդանի էին մնացել, բերան, ձեռք, ոտք աւելի պինդ կապեց ու մէկ քաջ քրդստանցու՝ թուրը հանած, վրաները կանգնացրեց, միւս քրդստանցոց կրակի շորս կողմը նստացրեց, որ կարծիք չընկնին, ու ինքը իւր քաջասիրտ տղերանցովը եկեղեցու դռան աջ ու ձախ կողմը կտրեցին՝ թուրները հա-

նած՝ պատն ի վեր ցցուեցին ու թշնամուն ճանապարհ տուին:

Լօլօ ձայն տալով՝ քսանից աւելի ձիաւոր ժամի գուանը վեր եկան, ձիանը տուին մէկ երկուսի ձեռքը, որ ման ածեն: Նրանց բերած հայի երախաների ու կանանց ողբի ու լացի ձայնը որ ժամը չէր ընկնում, պատերն էլ սուզ էին անում: Բայց խեղճերը չէին իմանում, թէ Աստուած ինչ բարի հրեշտակ է ուղարկել իրանց համար: Քրդերը հէնց խմբովին, որ աղմուկ անելով ներս չընկան, էլ չիմացան թէ մարդ է, որ իրանց գլուխը կտրում է. դե կարծեցին կամ սուրբ. էլ թրի, տէգի կամ վահանի ժամանակ չէր: Քրդստանցի հայերը էլ միջոց չտուին աջամի հայերին. շատին հէնց կրակի շամփուրը կամ թուրն էին բերանը կոխում, գլխին, կրծքին քարով, փայտով ծեծում, որ շուտով չմեռնին ու տանջուին: Էլի Աղասին էր, որ այս կատաղութեան չափ դրեց, սպանածներին դուրս ածել տուեց ու ո՛րը կենդանի էին կամ վիրաւորուած, ձեռն ու ոտքը կապել տուեց ու մի կողմ քաշել տուեց:— «Աղա, մեր տուն քանդողն էսոնք են, էսոնց խոր տունը քանդուի, էսոնք մեր ճիժ ու մանչ խատացրին. թո՛ղկ, թո՛ղկ էսոնց սատանի կեր անենք, էսոնց խոր դատը գեօռքէգեօռ ըլի»:

Թո՛ղ կարդացողն ինքը մտածի, թէ այդ գիշերն ինչ գիշեր կըլինէր այս ջրատար գերիների համար, թէ ինչ սրտով նրանք աղօթք կ'անէին, ինչ հոգով իրար կընայէին ու Աստուծուն փառք կըտային: Զարմացած, մահի դուռը գնացած ու յետ եկած հայերը իրանց ազատողին որ չտեսան, կամենում էին ոտներն արտասուքով լուանան. բայց համեստ երիտասարդը հէնց այն էր խնդրում, որ Աստուծուն փառք տան, Սուրբ Սարգսի և Սուրբ Կարապետի անունը յիշեն: Աղասու սիրտը վկայում էր, թէ այն

գիշեր այլևս փորձանք չկար: Բոլորին էլ խնդրեց, որ չորքեն, աղօթք անեն: Գերիները մէջ տէրտէր էլ կար, տիրացու էլ, որոնք սկսեցին առաւօտեան ժամերգութիւնը...

88. Ա Ք Ս Ո Ր Ա Վ Ա Ն

«Վա՛ն ծաղիկներ, անո՛ւշ բուրմունք դաշտերում. չիւր է եկել մայիսն ուրախ, գեղեցիկ.

Մի՛թէ ոչ մի ուրախութիւն չեն բերում, Աքսորական, քեզ ո՛չ արև, ո՛չ ծաղիկ»:

— «Այն ծաղիկներն, որ հայրենի աշխարհում Բուսցըրել եմ և փայփայել սիրավառ՝ Այժըմ մենակ, ես նոցա եմ միտ բերում... Առանց նոցա մայիս չըկայ ինձ համար»:

«Աքսորական, նայիր, անշարժ շիրիմներ— նորա անգամ ըսթափուել են, կեանք առել. Այդ արևն է, նորա պայծառ, ջերմ շողեր, Տըխուր, նիրհած շիրմավայրում կեանք վառել»:

— «Ես յիշում եմ այլ շիրիմներ անբարբառ, Եւ իմ ձեռքով յաւէտ փակած այլ աչեր. Սիրելի չեն արտորեալիս այս օտար՝ Ո՛չ երկիրքը, ո՛չ արևը կենսաբեր»:

«Աքսորական, տես, ինչպէս են թըռչնիկներ Բընեը հիւսում թաւ անտառի խորքերում. Օ՛, որքան կեանք, երջանկութիւն, մաքուր սէր նոցա գողտրիկ, անուշաձայն երգերում»:

— «Ես յիշում եմ հայրենական իմ բընիկ, իմ պաշտելի նըւիրական այն աշխարհ, Ուր թողել եմ հարագատներ, սիրելիք... Օտար երկրում մայիս չըկայ ինձ համար»:

89. ՊԱՆԴԻՍԻ ԿԵԱՆՔԸ

Արիստակէս վ. Տէր-Սարգսեանին.

Նժդե՛ն վարդապետ, դու ևս նժդե՛ն լինելով, նժդե՛նի ցաւերն ես զգում, տեսնելով նոցա տառապեալ կեանքն ու վիճակը: Զրջում ես մայրաքաղաքում (Պոլիս) և մտնում ես պանդուխտների մէջ, աչքով դիտում, ձեռքով շօշափում ես նոցա ամենադառն կեանքի բոլոր հանգամանքները, յիշելով Աւետարանի բանը՝ պանդուխտ հիւանդին ի տես գնացէք: Հովիւ ու հայր էք, մի գարշիք, գնացէք, մտէք մի ժահահոտ սենեակի մէջ. կըտեսնէք այնտեղ՝ կտրիճ ու քաջալանջ նորահասակ, նորապսակ մի երիտասարդ, մահճի մէջ հիւանդ ընկած կըհեծէ. ընտանի հոգացող մտերիմներից ոչ ոք ունի շուրջը՝ ո՛չ գործվալի ծնողք, ո՛չ անձկալի ամուսին, ո՛չ քոյր, ո՛չ եղբայր, ո՛չ բարեկամ, ո՛չ ազգական: Նա այնպէս ի վերջոյ կըմեռնի անխնամ, անդեղ, անդարման: Հոգեվարքի պահուն մարած աչերն այսր անդը կըյածէ. երեակայիր դու, թէ ո՛ւմ տեսնել կ'ուզէ...: Այնտեղ չեն գինքը լացող ընտանիքը, որ մի կաթ արտասուք թափեն մեռած պանդխտի մահճի վրայ: Ո՛հ, ո՛վ կըլինի պանդխտին յուղարկաւոր: Գնա՛, տես դու. դագաղի առաջից գնում է մի պանդուխտ քահանայ, իսկ յետևից քանի մի պանդուխտ եղբայրներ գնում են լուռ. իսկի չի լսում ողբ ու կոծ. պանդուխտները տանում են պանդուխտին. օտար երկրին ու հողին են աւանդում...:

Կըտեսնես նաև հրապարակների անկիւններում կոյտ-կոյտ նստած մեր բեռնակիր եղբայրները, որոնց բազմօցներն իրանց համետներն են: Մի՛թէ դոքա Վանայ դաշտերի այն խոնջեալ մշակներն են, որ բանթողի ժամանակ աղբիւրների գլխին և ցորենի բրգաձև դէզերի հովանեաց

տակ նստած կրհանգստանան և մանգաղները կըսրեն, մերթ ևս իրանց գլուխը սոցա տակ դնելով, անուշ քուն կըքաշեն:

Վահ, հազար վահ. այժմ ո՞վ կըվարէ դոցա տեղ, ո՞վ կըցանէ, ո՞վ կըհնձէ. դաշտերն ամայի են մնացած. նոցա հոգասէր վաստակաւոր մշակները, ինչպէս կըտեսնէք, օտարութեան մէջ մաշուելով, կըսպառուին և կըմեռնին ընտանեաց կարօտով, ջրի կարօտով, սիրելեաց և բարեկամաց կարօտով: Ո՞վ կըտանէ և կըպատմէ պանդուխտի մահուան լուրը. ո՞վ կըգրէ նոցա դուժալից սև գիրը: Դու այդ սև թղթերի դպիրն ես, որ մի կողմից պանդուխտների մահը կըպատմես, միւս կողմից ընտանեաց ողբն ու կոծը, որդոց որբութիւնը, այրի մնացած ամուսնու սև բաղբը կ'ողբաս, կըգրես...:

90. ԱԼՊԵԱՆ ՈՐՍՈՐԳ.

— 2էս ուզիլ դու գառն արածես.

Գառնուկն է հեզ ու խոնարհ.

Առուի ափին սրինգ կ'ածես,

Նա կըխաղայ վեր ու վար:

«Մայրիկ, մայրիկ, թո՛ղ ինձ երթամ,
Լեռան գլխին էրէ որսամ...»:

— 2էս ուզիլ դու ոչխար տանես

Փողի ձայնով արօտը.

Կ'երգես անուշ, կըպահպանես

Կանաչ պրակում քո հօտը:

«Մայրիկ, մայրիկ, թո՛ղ ինձ երթամ,
Վայրի լեռան գլխին ման գամ»:

— 2էս ուզիլ դու ծաղիկ պահես,

Ծաղիկ-ծաղկունք մարգերում.

Դրսում չկայ սիրուն պարտէզ,

Վայրի է ողջ լեռներում:

«Թո՛ղ դու ծաղկունք, թո՛ղ որ ծաղկեն,
Մայրիկ, թո՛ղ ինձ ելնեմ բազէն»:

Ու քաջ որդին որսի գնաց.

Չգտում է նա հեռու-վեր,

Անդուլ հեռու, խիզախընթաց,

Իէպի լերան խուլ տեղեր:

Նորա առաջ, քանց հողմ արագ,
Փախչում է մի այծեամ վայրագ.

Լերկ, ապառաժ սարաւանդից

Թեթե քայլով վազվըռտում

Եւ ժայռերի պատառուածքից

Այծեամն անվախ է ցատքում:

Բայց յետևից, աղեղ ձեռին,

Գալիս յանդուգն իւր թշնամին:

Նա լեփ վախքի վըրայ փախչում,

Կախուած մնում է ծայրին,

Ուր ժայռն ուղղորդ, — մէկէն կորչում,

Անհետանում է ուղին.

Ներքեն ընկնում անդունդը խոր,

Ետեն որսորդն աղեղնաւոր:

Նա սարսափած լուռ հայեացքով

Կեանք է հայցում բիրտ մարդէն.

Ի գո՛ւր, աղեղն անգուլթ ձեռով,

Լարել, քաշել է արդէն:

Յանկարծ, տեսնես, ելնում է վեր
Մուլթ անդունդից լեռնողին ծեր:

Եւ պաշտպանում հրգօր աշով
Իւր հալածուած կենդանուն.

«Ինձ մօտ էլ ես մահ ու վրդով՝
Կոչում է նա, բերում դուն:

«Տեղ ամենքին կայ աշխարհում.
«Ի՞նչ ես իմ հօտը շարշարում»:



Հ Ա Տ ՈՒ Ա Ծ Չ ՈՐՐ ՈՐ Դ

91. Գ Ա Ր ՈՒ Ն

Դեկտեմբերի տասնից օրն սկսում է երկարիլ, իսկ մարտի իննին օրն ու գիշերը հաւասար են լինում. այս պատճառով գարնան սկիզբը մարտի իննիցն են հաշւում: Արեգակը գարնան ժամանակը շատ է մնում երկնքի երեսին, ուստի և օրէցօր աւելի է տաքացնում երկիրը: Չիւնն սկսում է փոքր առ փոքր հալուել և ջուրը առուի պէս գնում, գետերի և լճերի մէջն է թափւում: Չուտով հալւում է գետերի սառուցը և ջուրն այնքան է աւելանում նոցա մէջ, որ շատ անգամ դուրս է գալիս ու թափւում է շրջակայ մարզագետիններն ու դաշտերը: Այն փոքրիկ գետերը, որոնց վրայով ամառը կարելի էր շատ հեշտութեամբ անց կենալ, գարնան ժամանակը յորդանում և լայնանում են, իսկ մեծամեծ գետերը, որոնց մէջ բազմաթիւ գետակներ և վտակներ են թափւում, գարնանը ծովի պէս տարածւում են:

Դեռ բոլոր ձիւնը չհալուած՝ այստեղ-այնտեղ, հին չորացած խոտերի մօտ, արդէն նոր և փափուկ կանաչ խոտ է սկսում դուրս գալ: Խոտի հետ միասին դուրս են գալիս և առաջին ծաղիկները: Քարափնների գլուխներին

և բլուրների վրայ ծաղկում է ձնծաղիկը և այնպէս խիտ, որ կարծես սպիտակ կտաւ լինի փռած: Այնուհետև ծաղկում է և գարնան յայտարարը, համեստ և անուշահոտ մանուշակը: Ծառերը նոյնպէս ձմերային քնից զարթնում են և արեգակի ներգործութիւնից տաքանալով՝ լցւում են հիւթով և սակաւ առ սակաւ կանաչում են ու ծաղկում: Թփերն ու ծառերը, ընկեր ընկերի առաջ, շտապում են պճնուիլ Զատիկի և Կանաչ-կիրակէի համար: Սկզբումը ծառերի և թփերի վրայ կանաչը նօսր և փոքր է երևում, բայց քիչ ժամանակից յետոյ նորա այնպէս մեծանում և բազմանում են, որ կանաչազարդ անտառները միանգամայն անթափանցիկ են դառնում: Գաշտերի վրայ հազարաւոր ծաղիկներ, կարծես, ուրախութեամբ ողջունում են գարնան գալուստը:

Գարունը գալուն պէս՝ թռչուններն էլ բազմութեամբ երևում են: Արտուտները, ծիծեռնակները, սարեակները, արագիւնները և կռունկները, վերջապէս կկունները և սոխակները մինը միւսի ետևից վերադառնում են իրանց հայրենիքը և սկսում են բնակութիւն հաստատել դաշտերում, անտառներում և ծառատունկերում:

Աշխատասէր մրջիւնները, գոյնզգոյն թիթեռները, անձողնի բզէզները և այլ հազարաւոր միջատներ ու գեռուններ լոյս աշխարհ են դուրս գալիս: Մեղուն, որ փեթակի մէջ բոլոր ձմեռը քնած էր, զարթնում է, թողնում է իւր մոմեղէն խուցը և թռչում է ծաղիկներից քաղցը մեղր ժողովելու:

Չատ փոքր փոփոխութիւն է նկատում վայրենի չորքոտանիների մէջ. նորա ամառ ձմեռ միևնոյն տեղն են ապրում և տաք երկիրներ չեն գնում: Բայց և այնպէս՝ նորա էլ անհամբերութեամբ սպասում են գարնան գալուն: Արջը, ոզնին և միւս ձմերային քնի ենթարկուող կենդա-

նիները արթնանում են իրանց երկարս տև թմրութիւնից և սկսում են իրանց համար ապրուստ որոնել:

Երկրագործ գիւղացու գործերն էլ բնութեան հետ արթնանում են. նորա տարեկան պաշարը՝ թէ ընտանիքի և թէ անասունների, սպառուելուն մօտ է, ուստի նա պատրաստում է իւր երկրագործական գործիքները և երբ գետինը փոքր ինչ տաքանում ու կակղում է, դուրս է գալիս դաշտը և հերկում ու սերմանում է գարնանացանը: Այգեպաններն ու պարտիզպանները ցանում և տնկում են զանազան տեսակ բոյսեր և ծաղիկներ: Գարնանը ամենեքեան ուրախ են լինում և զուարթ, նամանաւանդ աղքատները, որոնք ձմեռը ոչ փայտ ունէին և ոչ տաք հագուստ: Գարնանը Աստուծոյ արեգակը նոցա էլ միւսների պէս ձրի լուսաւորում է և ձրի տաքացնում:

92. Գ Ա Ր Ո Ի Ն

Գալիս է գարուն, նոր կեանք է բերում՝
 Վարդն ու շուշանը բացւում են, բուրում.
 Թարմ և ծաղկազարդ փայլում է տերև.
 Մանուկ զօրութեամբ ծագում է արև:
 Չնչում է անտառ: Երգում է ծիծառ:
 Վաղորդեան ցօղը սփռում է գոհար.
 Կանաչ հովիտը վառւում է պայծառ:
 Զարթեց բնութիւն կուսական խանդով.
 Դէպ՝ գործ մեղուներ դիմեն եռանդով.
 Վաղ առաւօտեան ձայնը կոչնակին
 Կանչում է դէպ՝ դաշտ շարքաշ մշակին:

93. Ա Մ Ա Ռ

Ամառուայ սկզբին ամենաերկար օրերն են լինում: Արեգակը համարեա երկնքից չի հեռանում. միայն վեց կամ եօթը ժամ է լինում գիշերը: Արեգակի ուղղահայեաց ճառագայթները սաստիկ այրում և ջեռուցանում են թէ երկիրը և թէ օդը: Մարդս ակամայ գովութիւն է խնդրում ու գիմում է գէպի անտառաշատ և ստուերախիտ տեղերը ապահովութիւն գտնելու: Կէս օրերին սաստիկ շոքը բոլորովին տիրապետում է: Զովն էլ չի փշում, ծառերն էլ չեն շարժւում և տերէնները սաստիկ չոքից իրանց գլուխները կախում են: Թռչուններն անտառի խորքում են թաղչում, ընտանի կենդանիներն էլ չեն արածում և գովութիւն են որոնում. մարդս, քրտնքով ողողուած և սաստիկ դաղաբաժ, թողնում է իւր գործը. ամենքը սպասում են, թէ երբ կընուազի և կ'անցնի շոքը: Բայց արտերի, բոյսերի և ծառերի համար շոքը անշուշտ հարկաւոր է: Սակայն երկարատե երաշտը վնասակար է բոյսերի համար, որոնք թէև սիրում են տաքութիւն, բայց սիրում են և խոնաւութիւն: Երաշտ ժամանակ մարդիկ ուրախանում են, երբ երկնքում երևում են ամպերը, թնդում է որոտումն, փայլում է կայծակը և գովարար անձրևը ծարաւ երկրին արբուցանում է: Միայն երբ անձրևը կարկտախառն է լինում, այն ժամանակ վնաս է տալիս հասած արտերին և պարտէզներին, այս պատճառով երկրագործները ջերմեռանդութեամբ աղօթում են, որ կարկուտ չգայ:

Ամեն բան, ինչ որ սկսել է գարունը, ամառը վերջացրնում է, ծառերի տերէնները մեծանում են, ինչքան որ հարկն է, և մի քանի ժամանակից յետոյ նախկին թափանցիկ անտառը հազարաւոր թռչունների անթափանցիկ բնա-

կարան է դառնում: Զրովի դաշտերում խիտ և բարձր խտր ծովի նման տատանւում է. նորա մէջ թռչկոտում և բզգում են բիւրաւոր միջատներ: Այգիներում և պարտէզներում կարմիր բալը, շիկակարմիր ծիրանը և սալորը փայլում են արդէն ծառերի կանաչ տերէնների մէջ: Դաշտերը ծածկուած են երփներանգ ծաղիկներով, որոնցից դիւրաւի անուշահոտութիւն է բուրում: Այդ անուշահոտ ծաղիկների մէջ լսում է մի ներդաշնակ ու յամր ձայն, այդ հազարաւոր մեղուններն են, որոնք երգելով քաղցրահիւթ ծաղիկների վրայ, անուշ մեղր են պատրաստում թէ մեզ և թէ իրանց համար: Հաճարի և ցորենի արտերն արդէն բարձրացել են, հասկ են տուել և սկսել են դեղնիլ. նոքա քամու փոքր ինչ փշելուց ծովի պէս տատանւում են: Դաշտերի հատապտուղներն էլ հասունանում են. Եւրօբան քաղցրահամ պտուղներ կան դաշտերում:

Ամառը թէ թռչունների, թէ չորքոտանիների և թէ միջատների համար առատութիւն է: Ահա փոքրիկ նորածին թռչուններն իրանց բների մէջ կերակրւում են. մինչև նրանց փետուրների դուրս գալը՝ աշխատաւոր ծնողները ուրախ ձայնով սլանում են օդի մէջ և իրանց ձագերի համար կերակուր են որոնում: Լայնածաւալ բնութեան մէջ թէ թռչունների, թէ աշխատասէր միջատների և թէ չորքոտանի կենդանիների համար առատ կերակուր կայ և յարմար բնակութիւն: Ողորմած Արարիչը բոլորի համար լայն բացել է Իւր առատ ձեռքը և երկրիս վրայ անխնայ սփռել է Իւր բարութիւնը:

Գիւղացու գործերը ամառուայ ժամանակը շատ և շատ են: Նա աշնանացանի համար պէտք է հերկէ և պատրաստէ վարելահողը. նորանից յետոյ պէտք է խոտը հնձէ: Խոտի հունձը դեռ չաւարտած, արդէն արտերը հասունացել են. պտղաւի հասկը գլուխը դէպի գետին է կռացրել

և եթէ նորան թողնեն այլևս մի քանի օր՝ կծղած հասկերից հատիկները կըսկսին թափուիլ և Աստուծոյ տուրքը ի գուր կըփչանայ: Ուստի գիւղացիք թողնում են գերանդինները և մանգաղներն են ձեռք առնում: Ուրախութիւն է նայել՝ թէ ինչպէս արտերի մէջ շարուած՝ արիաջան հնձողները հնձում են մարդահասակ ցորենը և խուրձ են կապում: Աշնանացանի հունձը դեռ չաւարտած, հասունանում, դեղնում է գարնանացանը և մանգաղ է կանչում: ասն փուշը (կտահատ) քաղելու ժամանակն էլ եկել է. նա բոլորովին հասունացել՝ ընկել է. ժամանակ է հանել և կարտոփիլը: Բոլորն էլ հասել են, բոլորն էլ պէտք է ժամանակին ժողովել... մինչև անգամ ամառուայ երկսր օրերը բաւական չեն նոցա հաւաքելու: Երեկոնները մաքրիկ ուշ են տուն գալիս գործատեղից. նոքա թէև յոգնած են, բայց իրանց ուրախ երգերի ձայնը թնդացնում է օգը վերջալուսի խաղաղ ժամին: Քաղցր է քնում գիւղացին այսպիսի ծանր աշխատանքից յետոյ, զգալով որ ինքը կատարել է իւր սուրբ պարտականութիւնը: Առաւօտը, արեգակը ծագելուն պէս, գիւղացիք կրկին գնում են դաշտը բանելու. իսկ ձեզ լաւ յայտնի է, որ ամառը արեգակը շատ վաղ է ծագում:

Բայց ինչո՞ւ է գիւղացին ամառն ուրախ, երբ այդքան շատ գործեր ունի: Ո՛հ, սորա պատճառները շատ են: Նախ՝ գիւղացին գործից բոլորովին չէ վախենում. նա դժուարութիւնների մէջ է մեծացել. երկրորդ՝ նա գիտէ, որ իւր ամառուան աշխատութիւնն ամբողջ տարին իրան և իւր ընտանիքը կերակրում է. երրորդ՝ գիւղացին զգում է, որ իւր աշխատանքով ոչ թէ միայն իւր ընտանիքն է կերակրում, այլև ամբողջ աշխարհը՝ և՛ ես, և՛ դու, և՛ բոլոր այս մեր շրջաբնակ պարոնները, թէև սոցանից մի քիչիսը արհամարհանքով են նայում գիւղա-

ցու վրայ: Նա հերկելով և մշակելով երկիրը, իւր հանդարտ և համեստ գործովը կերակրում է բոլորին, ինչպէս ծառի արմատները կերակրում են իրանց այն հպարտ ճիւղերին, որոնք կանաչ տերևներով զարդարուած են: Չորրորդ՝ գիւղացին վաճառելով իւր աշխատանքի աւելորդ պտուղը, փող է ստանում և հոգում է իւր տան պակասութիւնները:

Չատ աշխատութիւն և շատ համբերութիւն է պէտք գիւղական գործերի համար, նմանապէս փոքր գիտութիւն և փորձառութիւն չէ պահանջում: Փորձեցէք հնձել և դուք կըտեսնէք, որ սորա համար շատ հմտութիւն է հարկաւոր: Ո՛վ որ սովոր չէ գերանդի բանեցնելուն, նա չէ կարող ժամերով գործ ածել նորան: Լաւ դէպ դնելն անգամ հեշտ բան չէ. իսկ գետին հերկելը ամեն մարդու գործ չէ: Բացի դրանից գիւղացին պէտք է իմանայ, թէ ինչպէս հարկաւոր է շինել և պատրաստել արօրը, ցաքանը, սայլը,— ինչպէս պէտք է բուրդը և բամբակը գզել, թել մանել, շալ, գորգ, կտաւ գործել, պարաններ հիւսել: Ո՛հ, շատ և շատ բան կարող է գիւղացին և նորան ոչ մի կերպով և ոչ մի ժամանակ չէ կարելի տգէտ կոչել, եթէ նա կարգալ անգամ չգիտենայ:

94. Ա Մ Ա Ռ

Դալիս է ամառ—այրող եղանակ՝ Անխոնջ վաստակի, պտղի ժամանակ, իւր աստուածեղէն ջերմութեան հոգին կենսատու շնչով ծաւալէ արփին. չասել է ծիրան, տանձը մեղրածոր. Կարմիր վարդի պէս փայլում է խնձոր. Սաթանման—գեղին կախուած է ողկոյգ, Մանկտին գրաւում է շլոր, նուռն և թուղ.

Սեխով, ձմերկով լիքն է բուրաստան.
 Ոսկեայ հոսանքով ծփի անդաստան.
 Եւ արտորայքի ծանրացած հասկեր
 Խիստ հիանալի նկարեն պատկեր:
 Յետ երից անգամ երգի խօսնակին՝
 Զարթնում է իսկոյն հնձուորի հոգին:
 Փայլում է մանգաղ: Գործում է մշակ:
 Բարձած սայլակի ճռիչն անուշակ
 Հնչում է հեռու, հեռու դաշտերից,
 Բերում դէպի կալ հունձքը արտերից:

95. Ա Ղ Ո Ի Ն

Աշնան գալուստը կատարւում է դանդաղ և հանդարտ: Մենք սովորապէս նկատում ենք նրան այն ժամանակ, երբ որ կատարելապէս երևան են գալիս նրա աչքի զարնուող նշանները: Դաշտերում հնձում և բարդում են հացաբոյսերը. բայց սա էլ ամառուայ վերջանալու նշան է, որովհետեւ հացաբոյսերի հասունանալն ապացոյց է ամառուայ թառամելուն: Նախ խշխշալով թեքւում է գերանդիի առաջ խոտը և բարձրանում են հարիւրաւոր դէզեր. ապա մեր աչքի առաջը բոլորովին մերկանում է դաշտային ճանապարհը, ուր առաջ լսւում էր լորերի ձայնը, որոնք եռանդով երգում էին հասունացած արտերի գլխակոր հասկերի տակ: Մի քանի օրից յետոյ արտերը միանգամայն մերկանում են և մենք նկատում ենք աշնան մօտենալու առաջին նշանը—դաշտային ամենուրեք մերկութիւնը: Բնութիւնը դարձեալ մի մեծ գործ է իրագործել և, բաժանելով մեզ իրան ձիւրքերը, պատրաստւում է հանգստանալու: Երկնակամարի տակ նոյնպէս խաղաղութիւն է տիրում:

Թռչունների ուրախ խմբերը լռում են: Կլուն և սոխակը վաղուց արդէն չուել են: Արագիլը պատրաստւում է ուղեւորուելու, որ նոցա յետևից հասնի, և իսկոյն, նրանից յետոյ, կռունկների հրաժարական գոչիւնն է հնչում: Արտուտը դեռ դաշտումն է. բայց նա էլ անմռունչ նստած է ցելերի ակօսներում: Գաքաւը կոյտերի տակն է մտնում և ուշի ուշով նայում է իւր շուրջը, մինչդեռ նորա խայտաբղէտ փետուրները փայլում են արեգակի ճառագայթների տակ: Միայն սարեակներն են շշուկ հանելով թռչում դաշտերի վրայից. իսկ ագռաւները՝ բարեկամաբար շարուելով միմեանց մօտ, կռաւելով զրոյց են անում: Բայց կարծես նոքա էլ պատրաստւում են աշնան համար. նրանց կրկոցը օրէցօր նուազում և վերջապէս բոլորովին դադարում է:

Այսուամենայնիւ արօտատեղերը դեռ կանաչ են: Տեղտեղ դեռ ևս երևում են մի քանի ծաղիկներ, որոնց վրայ թռչկոտում է թիթեռը, որ նրանց մեղրային հիւթը ծծէ և անուշահոտութեամբ շնչէ: Զատիկը, այս գեղեցիկ բզէզը, դեռ տատանւում է ծղօտների վրայ, իսկ անխոնջ ճրպուռն, աւելի բարձր քան ամառը, երգում է իւր միաձև երգը: Մերկացած արտերի տեղն էլ բոլորովին դատարկ չէ. այնտեղ կամ գիւղականների նախիրն է արածում, կամ վայրենի կենդանիներն են իրանց համար կերակուր որոնում: Նապաստակը միամիտ արածում է նրանց մէջ. մուկը ձմեռուայ համար մնացած հասկերից պաշար է պատրաստում. գորտն աներկիւղ թռչկոտում է, վստահ լինելով, որ այլևս արագիլի երկար կտուցը չէ սպառնում իրան. ճնճղուկներն էլ խմբովին մի ծղօտատեղից միւսն են թռչում: Դեռ կարծես ամենի համար բնութիւնը բաց արածունի առատ սեղան. դեռ հազիւ է նկատւում, որ դաշտային կանաչ խոտի մօտ թագչում է և նրա մի թառամած թերթիկը:

Պէտք է աւելացնել, որ աշունը պտուղների ժամանակն է և ոչ ծաղիկների: Ամառը, ճշմարիտ է, հասնում են մի քանի պտուղներ, բայց սոքա անցողական նշանակութիւն են ունենում: Իրանց գեղեցկութեան և անուշահոտութեան կողմից գերազանցող պտուղները բնութիւնը մատակարարում է մեզ աշնանը: Այստեղ ոսկեգոյն տանձը և կարմրաթըշիկ խնձորն է փայլում. այնտեղ կախուած են բազմատեսակ դամբուլներ, որոնց վրայ կարծես մոխրագոյն փոշի լինի ցանած. ահա՛ առաջդ, արևի տակ, ժպտում է թաւշապատ դեղձը. նորա մօտ, փոքրիկ ծառերի վրայ, կախուած են մեծամեծ դեղին սերկեխներ. բազմաճիւղ ու հսկայամարմին ընկուզենու վրայից կաթկաթում են խեճճ ընկոյզներ. իսկ նրա դիմացը՝ այգու պատերից կախ են ընկած ահագին դդումներ: Այգու աջ կողմը մի ընդարձակ տարածութիւն բռնում է խաղողի որդը, որի ահագին ողկոյզները՝ սև, սպիտակ, կանաչ ու կարմիր գոյնով, հրաւիրում են քեզ փառաբանելու այս ամենայն հարստութիւնը Պարզևողին: Վազների այս ու այն կողմն էլ նշենին է իւր վահանապատ պտուղները պատրաստել: Սակաւ չեն նսեւ լայնատերև թզենու թփերը, որոնց կաթնահամ պրտուղները հրապուրում են ամենքին: Անպատմելի կեանք և ուրախութիւն է ներկայացնում պտղալից այգին: Մարգիկ շտապում են ժողովել բնութեան առատ տուրքը: Նոցա շրթունքներին ուրախութեան ժպիտը միախառնում է այն փառաբանութեան հետ, որ վեր են ուղղում դէպի երկինքը: Բայց ահա և այս աշխատանքը իւր վախճանին է մօտենում և գիւղացու գործերը օրէցօր նուազում են, թէ և այնքան չեն սակաւանում, որ նա պարապ նստի: Արտերից կրածը նա պէտք է կասէ, այգիներից ժողոված խաղողից զինի պէտք է պատրաստէ: Չատ անգամ նա, մինչդեռ ձմեռը չէ եկել, իր տարեկան ալիւրը պէտք է աղայ,

որ մի գուցէ ձմեռը ջրերը բռնուին: Վերջապէս աշնանը պէտք է սերմ գցէ նա, աշնանացան անէ, որ եկող տարի էլ հաց ունենայ: Երբ այս բոլորը կը պրծնի, այն ժամանակ միայն գիւղացին իւր հանգիստը կ'առնի: Աշնան վերջերին, ձմեռուայ սկիզբներին, նորա ուրախութիւնները կըսկսուին: Գիւղացու տօները—նորա հարսանիքները այդ ժամանակն են լինում, երբ նորա կարասը գինով, իսկ ամբարը ալիւրով է լիքը:

Աշունն սկսուելուց յետոյ (սեպտեմբերի 11-ից, երբ գիշեր ու ցերեկ հաւասար են լինում) փոքր առ փոքր օրերն սկսում են կարճանալ, իսկ գիշերները երկարել: Օրերը կարճանալու հետ նուազում է արեգակի ջերմութիւնը, որովհետև նա սկսում է հակուիլ դէպի հարաւ: Աշնան նշաններն օրէցօր աւելի բազմապատկուում են: Չուտով երկինքը ծածկուում է միակերպ տխուր քօղով, որ երկար օրեր չէ հեռանում և սգաւորի աչքերի նման շարունակ կաթիլներ է թափում վերեւից: Ամենաթեթև հողմն անգամ խլում է ծառերի թարշամած զարդը և երբ ամպերի միջից գլուխը հանում է արեգակը, նորա ճառագայթները լուսաւորում են միայն քայքայուող բնութեան տխուր պատկերը: Ամենայն բան բնութեան մէջ իւր վախճանին է մօտենում. ամենայն բան պատրաստուում է ննջելու: Ամենատուշ շուող թռչունները—ծիծեռնակներն ու արտուտներն էլ թռել, հեռացել են արդէն: Դաշտային հարստութեան յետին մնացորդները ժողովում են շտապով: Ամենայն բան թարշամում է ու դեղնում և սաստիկ քամին, մղելով ծառերից թափուած տերևը, կարծես, ձիւնի տեղ է պատրաստում:

96. Ա Չ Ո Ի Ն

Գալիս է աշուն. թափուում է տերև.

Սոխակն իւր վարդին տայ վերջին բարև,

եւ տարափոխիկ արագիլ, կռունկ

Գաղթում են դէպ' տաք երկիրներ խորունկ:

Ուժգին, ցրտաբեր փշում է հիւսիս.

Սև-սև թուխպերով պատուում է Մասիս:

Մահուան դեղնութեամբ ծածկուում են դաշտեր.

Ջուարճասէր սրտից չեն ցրւում վըշտեր:

Լիքն է հունդերով մըջիմի ամբար,

Թէև չըցանեց, չըկասեց իւր կալ.

եւ իւր մոմեղէն խըցում շար ի շար

Մեղուն կազմել է ձմեռուան պաշար:

97. Զ Մ Ե Ռ

Զմեռն արեգակը թէև լուսաւորում է, բայց սակաւ է տաքացնում: Սորա պատճառն այն է, որ նա երկար չէ մնում երկնակամարի վրայ, որովհետև ձմեռուայ օրերն անհամեմատ կարճ են ամառուայ օրերից. բացի սորանից ձմեռը, ինչպէս ինքներդ կարող էք նկատել, արեգակը հեռացած է լինում մեզանից դէպի հարաւ, հետևաբար և իւր ճառագայթները թեքուած ուղղութեամբ է արձակում դէպի մեզ: Զմեռն սկսւում է դեկտեմբերի տասնից: Երկրիս լեռնոտ և բարձրաւանդակ մասերում, որպէս և այն աշխարհներում, որոնք առաւել դէպի հիւսիս են, ձմեռը նշանակած օրից առաջ է սկսւում: Սաստիկ սառնամանիքը կաշկանդում է բոլոր աշխարհը: Սառուցի հաստ կե-

ղևով ծածկուում են գետերն ու լճերը. նրանց տակ հոսող ջուրը իւր մէջ պահպանում է բազմաթիւ կենդանիներ, որոնք շատ սակաւ սնունդ են ընդունում: Չիւնի անսաման սփռոցները միակերպ տարածուում են մեր աչքի առջև և անխնայ ծածկուում թէ թարշամած խոտերը և թէ աշնանացանի դեռ ևս կանաչ արտերը: Բայց ձիւնը թէ արտերի և թէ բոլոր բուսականութեան համար աւելի օգտակար է, քան թէ անձիւն ցուրտը: Չիւնի տակ սերմերը և նորաբոյս կանաչների արմատներն անվնաս են մնում, որովհետև այնտեղ համեմատաբար աւելի տաք է: Ամենուրեք միաձև սպիտակ մերկութիւն է տիրում և արևի կարճատև ճառագայթների տակ բազմաթիւ ցովմունքներ են գոյանում: Եթէ ձիւնի վրայ շնշմարուէին նապաստակների, գայլերի, աղուէսների, կզաքիսների հետքեր, եթէ գիւղերի և քաղաքների շրջակայքում չթռչէին շատ քաղցած թռչուններ, իսկապէս կարող էին կարծել, որ բուսականութեան հետ ընդհատուել է և կենդանական կեանքը: Կերակրի պակասութիւնը, մանաւանդ խիստ ձմեռը, վայրենի գազաններին, մինչև անգամ զգոյշ աղուէսին, հարկադրում է մօտենալ մարդկային բնակարաններին: Գայլը կրկնապատկում է իւր համարձակութիւնը և սպառնալի է լինում նոյնիսկ մարդու համար: Բայց շատ գազաններ էլ ձմեռ ժամանակը մտնում են իրանց որջերի մէջ: Արջը ձմեռուայ սկզբից թմրած-քնած է քարայրի մէջ, իսկ սկիւռը թէև չէ թռչկոտում ծառերի վրայ, բայց իւր խոռոչում աշնան սկզբից պատրաստած առատ պաշարը վայելում է:

Բայց միայն կենդանիները չեն, որ անհանգիստ են լինում ձմեռուայ ցրտից: Մարդիկ ևս պատրաստում են նրան ընդունելու: Իրանց բնակարանների դռներն ու լուսամուտներն ամրացնելով, նորա վառարանները վառում

դանջում է: Սա ևս նոյն անտեսանելի մարմինն է, որ զարկուելով խո-
ղովակի պատերին, մինչև անգամ շառաշիւն առաջ բերեց: Հայն բա-
նալով ձեր փէշերը՝ արագապէս վազեցէք քամու հակառակ և դուք
կըզգաք, որ մի բան սաստիկ դիմադրում է ձեզ. սա ևս նոյն անտես-
անելի մարմինն է, որ գտնուում է ամենայն տեղ: Նայեցէք ձեր կուրծ-
քը անդադար բարձր ու ցածր է անում և ամենայն անգամ, երբ նա
բարձրանում է, ձեր բերանից և ուննդներից մի բան ներս է հոսում,
իսկ երբ նա ցածրանում է, այդ հիւրը նորից դուրս է վազում այնտե-
ղից. սա միևնոյն անտեսանելի մարմինն է, որ մինչև անգամ ձեր մարմ-
նի ներսն այցելութիւն է դնում: Այս անտեսանելի մարմինը կոչուում
է օդ: Այսպէս ուրեմն օդը մենք չենք տեսնում, բայց մեր միւս զգայ-
արաններով—շօշափելիքով, լսելիքով և հոտոտելիքով նորա ներկայու-
թիւնն իմանում ենք: Բայց ինչի՞ մենք նորան չենք տեսնում: Եթէ
լուսամտի ապակին շատ մաքուր է, շատ անգամ դուք կարծում էք,
թէ չըջանակի մէջ ապակի չկայ: Մենք ապակին չենք տեսնում, որով-
հետև նա շատ թափանցիկ է. իսկ օդն ապակուց աւելի թափանցիկ
է: Այնուամենայնիւ, եթէ օդի շերտը շատ հաստ է, նա տեսնուում է
և կապոյտ գոյն է ունենում: Կապոյտ երկնակամարը, որ տարածուում
է մեր գլխավերևը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ օդի շերտը, որի հաստու-
թիւնը 60 վերստից աւելի է և որի միջից, որպէս չափազանց թա-
փանցիկ առարկայի միջից, տեսնում ենք երկնային լուսաւորները: Բո-
լոր օդը, որ շրջապատում է ամբողջ երկիրը, մթնոլորտ է կոչուում:

Եթէ օդը մարմին է, նա պիտի բռնի որևէ տարածութիւն, պի-
տի ունենայ և որոշ ծանրութիւն: Օդը երկու յատկութիւններն էլ ու-
նի: Վեր առնենք մի բաժակ և մի ջրով լիքը գաւաթ: Բաժակը շուռ
տուած դնենք ջրի վրայ և սկսենք սակաւ առ սակաւ իջեցնել ջրի
մէջ: Մենք կը տեսնենք, որ ջուրը նորա մի փոքրիկ մասը կը լցնի,
իսկ բաժակի վերին մասը դատարկ կը մնայ, շնայելով որ մենք մին-
չև վերջը խորասուզեցինք նրան ջրի մէջ: Ի՞նչն է արգելում ջրին լցնել
բաժակը: Բաժակում, բացի օդը, ուրիշ ոչինչ չէ կարող լինել, որով-
հետև նա դատարկ է. նշանակում է՝ արգելք դնողն օդն է: Ուրեմն
օդը ևս մարմին է, որ բաժակում բռնում է իւր որոշ տեղը և թոյլ չէ
տալիս մի ուրիշ մարմնի նոյն տեղը բռնել: Երբ մենք բաժակը ջրի
մէջն ենք իջեցնում, զգալի է լինում, թէ ինչպէս մի բան տակից դի-
մադրում է և բաժակը դժուարութեամբ է իջնում. իսկ եթէ նրան մի
փոքր ծռէինք, ջուրը մի կողմի վրայ աւելի ճնշելով, միւս կողմից

գուրս կը պայթէր տակից դիմադրող օդը և բաժակն ինքն իրան կը
խորասուզուէր ջրի մէջ: Բաժակը ջրի մէջ ընկղմելուց յետոյ հանենք
նորան, բայց ուղղադր կերպով և բերանը դէպի դաւաթի յատակը:
Մենք կը տեսնենք, որ ինչքան բարձրացնում ենք բաժակը, նորա հետ
բարձրանում է նորա միջի ջուրը, շնայելով որ նա ջրի մակերևոյթից
բարձր է կանգնած արդէն:—Ինչի՞: Որովհետև այժմ արտաքին օդը
չկայ. նա բոլորովին դատարկ է, ուստի ջուրը չորս կողմից ճնշուելով,
մտնում է այդ դատարկութեան մէջ: Նշանակում է՝ օդը մարմին է,
բայց շատ նուրբ և թափանցիկ. նա ունի ծանրութիւն, թէև շատ ան-
նշան: Օդը ջրից շատ թեթեւ է, որովհետև նորա մասնիկները չափա-
զանց թոյլ և հեռու-հեռու են կապակցուած միմեանց հետ, քան թէ
ջրինը: Այն մարմինները, որոնց մասերը այնպէս թոյլ և հեռու են
կապակցուած և այնպէս նուրբ են, որ մենք չենք կարող նոցա տես-
նել, կոչուում են օդածու, կամ գազային մարմիններ:

Օդն ամենքին հարկաւոր է. առանց օդի չէ կարող ապրել ոչ մի
կենդանի. չէ կարող աճել ոչ մէկ բոյս: Այդ պատճառով էլ նախա-
ինամութիւնն օդին տուել է մի այնպիսի յատկութիւն, որ նա ամե-
նայն տեղ գտնուում է՝ թէ ջրերի մէջ, թէ հողի տակը փորած որջե-
րում և թէ մինչև անգամ պինդ մարմինների ամենափոքր ծալտա-
ներում, միով բանիւ ամենայն դատարկ տեղ բնութեան մէջ լիքն է
օդով: Երբ ջուրը եռ է գալիս, դուք տեսնում էք, որ նորա մակերե-
ւոյթի վրայ պղպջակներ են բարձրանում, դոքա ոչ այլ ինչ են, եթէ
ոչ ջրի միջի եղած օդը, որ յայնանալով ուռչում է ու բարձրանալով ջրի
երեսը, գոլորշիների հետ ցնդում է սառն օդի մէջ: Օդն ամենայն
կողմից շրջապատում է երկրագունտը որպէս մի անագին ովկիանոս և
այդ ովկիանոսի տակն ապրում են մարդիկ ու բոլոր կենդանիներն
այնպէս, ինչպէս ձկները ջրի տակը: Նա բարձրանում է մինչև տասը
մղոն: Որքան մօտ է նա երկրին, այնքան թանձր է ու ծանր. իսկ
որքան հեռանում է երկրից, այնքան նոսրանում է ու թեթեւանում:
Մի մղոն բարձրութեան վրայ նա այնքան է նոսրանում, որ մարդուն
անկարելի է այնտեղ ապրել, որովհետև նորա շնչառութիւնը դժուար-
անում է: Թուշուներն ևս այդչափ բարձրութեան վրայ չեն կարողա-
նում թռչիլ:

Ոչ որ չէ տեսնում ցրտութիւնը, բայց ամենքն դգում են նորա ներգործութիւնը: Երբոր դարունը գալիս է, արեգակը բարձրանում է երկնակամարի վրայ, նորա ճառագայթները սկսում են աւելի ուղղակի թափուիլ երկրի վրայ, քան թէ ձմեռը. եղանակը տաքանում է: Օրինակի համար, ձեռքդ ուղիղ բռնիր մոմի վրայ և նա կ'այրուի, թէև փոքր ինչ բարձր էլ պահես. յետոյ դարձրու ձեռքդ դէպի մոմի աջ կամ ձախ կողմը և այնքան ջերմութիւն չես դգալ, եթէ մինչև անգամ համեմատաբար աւելի մօտիկ պահես, որովհետև մոմի ճառագայթներն ուղղակի չեն ներգործում ձեռքիդ, այլ ծուռը: Այսպէս է լինում և արեգակից. կէսօրին շոք է լինում, որովհետև ուղիղ մեր գլխի վերևն է կանգնած արեգակը և իւր ճառագայթները, համարեա ուղղահայեաց, առատօրէն թափում է մեր գլխին, իսկ առաւօտեան և երեկոյեան նա հակուած դիրք ունի և այդ ուղղութեամբ էլ ուղարկում է իւր ճառագայթները: Այս բանը դուք կարող էք նշմարել և ձեր ստուերի վրայ. կէսօրին ստուերը շատ կարճ է լինում և համարեա ոտների տակ, որովհետև ճառագայթները, վերեից թափուելով, չըջապատում են ձեզ ամենայն կողմից. իսկ առաւօտեան և երեկոյեան ձեր ստուերը մի կողմի վրայ երկար ձգուում է: Արեգակը տաքացնում է երկիրը և օդը, իսկ երկրից և օդից մենք ենք տաքանում: Եթէ օդ չլինէր կամ շատ սակաւ լինէր, մենք էլ սակաւ կը տաքանայինք. եթէ երկրից երեք վերստ հեռու բարձրանանք (թէ կ'ուզես օդապարիկով), նոյն իսկ ամառը մենք սաստիկ ցրտութիւն կըզգանք: Սորա պատճառն, ի հարկէ, այն է, որ ինչքան բարձրանում ենք, օդը նօսրանում է: Բարձր սարերի կատարներին, ամենատաք երկրներումն անգամ, մշտապէս ձիւն և սառուց է լինում: Արեգակն է գլխաւոր աղբիւրը տաքութեան, բայց արեգակից դատ մենք կրակից էլ ենք ջերմութիւն ստանում: Կրակն առաջանում է մարմինների այրուելուց և պայծառ բոց է տալիս, թէև սաստիկ այրուիլը կարող է առանց բոցի ևս լինել. երկաթը, որ սաստիկ ջերմութիւնից համարեա սպիտակում է և ամենևին կրակի նմանութիւն չունի, այրում է ամենայն բան, ինչ որ դիպչում է իրան: Բայց լինչպէս է ստացւում տաքութիւնը և կրակը: Հին ժամանակ կրակ ստանալու համար ծակում էին պինդ տախտակը, նորա միջով աւելի փափուկ փայտ էին անցկացնում և սկսում էին արագութեամբ պտրտել: Փայտերի շփուե-

լուց տաքութիւն էր առաջանում, իսկ այդ տաքութիւնից կրակում էր փափուկ փայտը: Վայրենիները մինչև այսօր էլ այդպէս են կրակ անում: Փորձի համար թուր շարունակ քսիր ծառին և նա ծուխ կ'արձակի ու կ'այրուի: Չփուելուց մինչև անգամ սայլերի անիւներն են այրում, այդ պատճառով էլ մարդիկ ձիւթում կամ սապնում են նոցա: Ձիւթը սուսակի և անիւների մէջ փափուկութիւն է պահպանում և չէ թոյլ տալիս նոցա սաստիկ շփուել միմեանց: Տաքութիւնը զարկելուց էլ է ստացւում. եթէ մուրճով շարունակ խփես երկաթին, նա կը տաքանայ: Գուք դիտէք, որ երբ մենք հրահանով զարկում ենք կայծաքարին, պողպատի մանրիկ մասնիկները սաստիկ քուելուց այնպէս տաքանում ու կարմրում են, որ այրում են փափուկ արեթը: Մարմինների փտելուց և նոցա այլ և այլ միախառնութիւնից ևս ջերմութիւն է առաջանում: Ձեզ յայտնի է, որ եթէ չհանգած կըքարի վրայ ջուր ածէք, նա սաստիկ կը տաքանայ: Գիւղացիին խոտն ուշի ուշով չորացնում է և ասպ դիզում. նա գիտէ, որ եթէ թացութիւնից սկսի փտիլ, կրակ կ'ընկնի և կ'այրուի:

Ամենայն մարմին միատեսակ չէ տաքանում. կան շուտ տաքացողներ, կան և ուշ տաքացողներ: Փայտէ ճիպոտը դու կարող ես վառել մի ծայրից, իսկ միւս ծայրը բռնել ձեռքիդ. նոյնպէս կարող ես բաժակի մէջ մինչև կէսը տաք ջուր ածել և վերին դատարկ մասից բռնել, առանց ձեռքդ այրելու, որովհետև ապակին ուշ տաքացող է, իսկ փայտն աւելի ուշ: Սորանից աւելի ուշ տաքանում է ջուրը, օդը, փետուրը, թուղթը, վուշը, բուրդը և այլն: Բայց փորձիր ձեռքդ առնել մի երկաթէ ճիպոտ կամ որևիցէ մետաղէն, որի մի ծայրը կրակի մէջ լինի, և դու իսկոյն ջերմութիւն կըզգաս. իսկ եթէ փոքր պահես, ձեռքդ կ'այրես: Այդ պատճառով էլ ասում են որ երկաթը պահես, ձեռքդ կ'այրես: Այդ պատճառով էլ ասում են որ երկաթը և միւս մետաղները ջերմութեան լաւ անցուցանողներ են: իսկ ջուրը, օդը, փետուրը և այլն՝ վատ անցուցանողներ: Լաւ անցուցանողը թէև շուտ է տաքանում, բայց նոյնքան էլ շուտ սառչում է. երկաթեայ վառարանը մի վայրկեանում բորբոքում է և նրանից արագութեամբ անցնում է տեղում, բայց շատ կարճ միջոց. աղիւսէ վառարանը մենք նրանից նախապատիւ ենք համարում, որովհետև նա թէև ուշ է տաքանում, բայց և անհամեմատ ուշ է սառչում: Մենք ձմեռը բրդեղէն և մազեղէն զգեստներ ենք հագնում, որովհետև դոքա վատ անցուցանող են. վատ անցուցանող է և նոցա մազերի մէջ եղած օդը և դոքա միապէս արգելք են լինում և թոյլ չեն տալիս մեր մարմնի

սեպհական ջերմութեանը դուրս գալ: Հէնց այդ պատճառով էլ ցուրտ երկրներում մարդիկ լուսամուտների վրայ երկու շրջանակներ են հագցընում. ապակիները և շրջանակների միջի տարածութեան օդը՝ իբրև վատ անցուցանողներ, չեն թոյլ տալիս տան ներսի ջերմութեանը դուրս գալ:

Կաշին ևս վատ անցուցանող է ջերմութեան, և այն կենդանիները, որոնք հիւսիսային սառն երկիրներումն են ապրում, բացի փափուկ մազէ մուշտակից, ունին և հաստ, ամուր կաշի: Բրդի մազերը որքան բարակ են և նաղուք, այնքան նա տաք է: Պտղատու ծառերը ձմեռը փաթաթում են ծղօտով և փսիաթով, որ չսառչեն: Չիւնը ևս վատ անցուցանող է և բաց անապատներում, փոթորիկների ժամանակ, անցուորականների համար ուրիշ փրկութիւն չկայ, բացի ձիւնի տակ պահուելուց: Վատ անցուցանող առարկաների միջնորդութեամբ ամառը կարելի է սառուցը շուտ հալուելուց ազատ պահպանել:

101. ՄԱՐՄԻՆԵՆԲԻ ԶԵՐՄՈՒԹԻՒՆԻՑ ԼԱՅՆԱՆԱԼԸ

Բամու ծագումը.—Ջերմաչափ:

Յրտութիւնից՝ մարմինները սեղմում են, իսկ տաքութիւնից լայնանում: Այդ դժուար չէ ստուգել: Վեր առ մի կտոր երկաթէ կամ արծճէ ճիւղոտ, չափիւր նրան, ապա տաքացրու. դու կը տեսնես, որ ճիւղոտը փոքր ինչ երկարացաւ. միևնոյն ճիւղոտը անցկացրո՛ւ մի ծակած տեղով նախ սառը և ապա տաք ժամանակ: Սառը ժամանակ նա հեշտութեամբ կը մտնի, իսկ ջերմացած ժամանակը չի մտնի: Միևնոյն հիման վրայ է, որ դարբինները նախ լաւ տաքացնում են անիւի երկաթէ շրջանակը և ապա հագցնում. սառչելուց յետոյ նա պնդապէս գրկում է անիւը: Բայց ինչի՞ համար գետնախնձորը, կրակի մէջ խորովելուց յետոյ, խորշոմում և փոքրանում է. ինչի՞ թաց և նոր դռները դժուարութեամբ են փակում, իսկ երբ նոքա շորանում են, սկսում են ազատ շարժուիլ իրանց կրունկների վրայ: Սրանց պատճառը բոլորովին այլ է: Ինչպէս կարտոփիւր, նոյնպէս և թաց փայտը պարունակում են իրանց մէջ շատ ջրային կաթիլներ. ջերմութիւնից ջուրը գոլորշիանում է և նոցա մէջ մնում են դատարկութիւններ, որոնց տեղը բռնում են առարկայի մասունքները միմեանց մօտենալով: Փորձի

հար մի փայտի կտոր գցեցէք ջրի մէջ և մի երկու օրից յետոյ հանեցէք նրան, դուք կը նկատէք, որ փայտը անհամեմատ ծանր է և լայն. նշանակում է՝ նրա բոլոր ծակոտիները ջրով լցուել են: Դրէք այդ փայտը մի տաք տեղ, ջուրը փոքր առ փոքր կը գոլորշիանայ և փայտի միմեանցից հեռացած մասերն իրանց նախկին դիրքը կ'ընդունեն: Թէ ջուրը գոլորշիանում է ջերմութիւնից, այդ դուք տեսնում էք ամենայն օր, երբ եռացնում են ջուրը. եռացման ժամանակ նորա կաթիլներն այնպէս լայնանում և հեռանում են միմեանցից, ամենամանրիկ մասունիկների բաժանուելով, որ վերջապէս շոգիաձև բարձրանում են կաթսայից, որովհետև սաստիկ լայնանալով, օդից ևս թեթեւանում են: Բայց ինչ է պատճառը, որ սառուցը լողում է ջրի երեսին. ո՛չ ապաքէն նա ջրից սառն է, ուրեմն և նրանից աւելի սեղմուած պէտք է լինի, իսկ եթէ աւելի սեղմուած է, այսինքն եթէ շատ մասնիկներ ժողովուած ու խտացած են մի փոքրիկ տարածութեան մէջ, նա ծանր կը լինի, ուրեմն և դէպի ջրի խորքը կը սուղուի: Բնութեան մէջ այս իրողութիւնն այլապէս է կատարում. ջուրը ցրտութիւնից, ճշմարիտ է, սկզբումը սեղմում է, բայց երբ նա ցրտեց այնքան, որ պէտք է սառչի, նրա մանրիկ մասերն ուռչելով ուռչում են ու ծաւալում, ուստի և առաւել լայնանալով՝ աւելի մեծ տեղ են բռնում: Սակաւ ջուրն անհամեմատ մեծ դիրք ստանալով, քան սառչելուց առաջ, բռնում է աւելի մեծ տարածութիւն և իւր տակն եղած ջրի սիւնից աւելի թեթեւ լինելով, լողում է նրա վրայ: Նախախնամութիւնից սահմանած այս բնական բացառութիւնը անբացատրելի օգուտներ ունի: Եթէ սառուցը ևս միւս մարմինների նման սառչելով սեղմուէր և ծանրանար, հետեւաբար և ջրի տակը գնար, այն ժամանակ փոքր առ փոքր բոլոր ջրերը կը սառչէին և մենք, ջուր ստանալու համար, հարկադրուած կը լինէինք հալել նրան: Բացի դրանից՝ ձկները և բոլոր ջրային կենդանիները կը սառչէին և կը կոտորուէին:

Արդեօք օգը ևս լայնանում է ջերմութիւնից: Փորձի համար փքիւր եղան փամփուշտը և այդպէս օդով լիւր մօտ դիւր կրակին. նա կը պայթի: Նշանակում է՝ օդը նրա մէջ տաքանալով լայնացաւ այնքան, որ չկարողացաւ ամփոփուել իւր առաջին տեղում և պայթեց նրան: Վառարանը վառած ժամանակ շատ անգամ նրա մէջ դարսած փայտերը կայծեր են արձակում. նշանակում է՝ փայտի մէջ եղած օդը, սաստիկութեամբ լայնանալով, մղում է դէպի այլ և այլ կողմեր կայծացած ածուխի կտորները: Երբ սինեակում կրակ ենք վառում, նը-

լա միջի օդը տաքանալով լայնանում է և իբրև աւելի թեթև մարմին, ծխնելոյդով դուրս է գնում, իւր հետ տանելով ածուխի մանր մասուկները իբրև ծուխ, որոնցից խոշորներն իբրև մրուր նստում են ծխնելոյդի շրջապատի վրայ: Այդ միջոցում սենեակի բոլոր օդը բռնութեամբ ներս է մղում վառարանի մէջ՝ դատարկ տեղը լցնելու համար: Այսպէս սկսւում է օդի ծզումն: Միևնոյն ժամանակ սենեակի օդի բացակայութիւնից առաջացած դատարկ տեղը լցւում է նոր օդով, որ մտնում է դռներից, լուսամուտների մանր ճեղքերից և այդպէս՝ վառարանը վառելով, սենեակի օդը մաքրւում է: Ջերմ օդի մասերը լայնանալով թեթևանում են և սկսում են բարձրանալ դէպի առաստաղը՝ այնտեղից էլ հակւում են դէպի լուսամուտները և այդ ընթանալու ժամանակ փոքր առ փոքր խառնուելով սառն օդի հետ, իջնում են դէպի դռները, իսկ դռներից դէպի վառարանը: Այդտեղ տաքանալով՝ օդը նորից բարձրանում է դէպի առաստաղն ու նոյն կարգով իջնում է դէպի յատակը: Այսպէս անհատկապէս անդադար պտոյտ է խաղում սենեակի մէջ, մինչև որ նորա բոլոր մասերը հաւասարապէս տաքանում են: Բնց արա ցուրտ սենեակի դուռը դէպի տաքը և դռան մէջը պահիր վառած մոմը. եթէ դու մոմը բարձր բռնես, կը տեսնես, որ նորա բոցը տաք սենեակից դէպի ցուրտն է հակւում,— ուրեմն այդ ուղղութեամբ է ընթանում տաք օդը. յետոյ ցածրացրու մոմը դէպի շէմքը և դու կը տեսնես, որ բոցը հակառակ ուղղութիւն ստացաւ, այն է, հակուեցաւ դէպի տաք սենեակը.— նշանակում է՝ ցուրտ սենեակից սառն օդը ներս հոսելով՝ բոցին ևս այդ ուղղութիւնը առեց. բռնիր մոմը դռան միջնավայրում, և նրա բոցն ուղիղ կացութեան մէջ կը տեսնես. նա կը տատանուի այս ու այն կողմը.— նշանակում է՝ այդտեղ սառն ու տաք օդի հոսանքը նոյն ուժով հանդիպելով, արգելում են միմեանց առաջ գալը: *Բամին էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ օդի հոսանքը:*

Ինչ որ մենք տեսանք սենեակում, պատահում է նաև աշխարհի երեսին. տաք աշխարհներից օդն ընթանում է դէպի ցուրտ երկիրները, իսկ ցուրտ երկիրներից՝ դէպի տաքը և այդպիսով առաջանում է հողմը: Հողմն այլևայլ փոփոխութիւններ է կրում լեռների, անտառների և ջրի ներգործութիւնից, որովհետև յիշեալ առարկաներն ամառը հովացնում են օդը: Ծովի եզերքում երկու տեսակ օդի հոսանք է լինում. ցերեկը հողմը փչում է ծովից դէպի ցամաքը, իսկ գիշերը — ցամաքից դէպի ծովը:— Ինչի: Յերեկը հողը շուտ է տաքանում՝

քան թէ ջուրը և ցամաքի օդը լայնանալով՝ դէպի վեր է ընթանում, այդ ժամանակ ծովային աւելի ցուրտ օդը դիմում է նրա տեղը լցնելու. գիշերը, ընդհակառակն, ջուրն իբրև վատ անցուցանող, երկար ժամանակ է պահում իւր մէջ ցերեկուանից ստացած ջերմութիւնը, մինչդեռ ցամաքն արդէն ցրտացած է լինում և այդ պատճառով վերջինիս ցուրտ օդը դիմում է դէպի ծովը: Ծովեզերեայ երկիրներում սովորապէս ձմեռը սաստիկ ցուրտ չէ լինում և ոչ էլ ամառը սաստիկ տաք, այլ լինում է բարեխառն եղանակ:— Ինչի:

Ջրի և օդի ջերմութեան աստիճանն իմանալու համար մտածեցին չափել նրան սնդիկի միջնորդութեամբ: Այս նպատակի համար սնդիկն ածում են հաւասարաչափ լայնութիւն ունեցող մի ապակեայ բարակ խողովակի մէջ, որի մի ծայրը բաց է, իսկ միւս ծայրը գնդաձև ու խփուած: Օդը դուրս մղելու և խողովակը դատարկելու համար նրան փոքր առ փոքր տաքացնում են. տաքութիւնից օդը լայնանալով բարձրանում է և մասամբ դուրս է հոսում խողովակից, այդ միջոցին իսկոյն նորա բաց կողմը ձգում են սնդիկի մէջ և նա բռնում է օդից դատարկուած տեղը: Այս կերպ տաքացնելը մի քանի անգամ կրկնելով՝ խողովակի գնդակը լցնում են սնդիկով: Առանց տաքացնելու՝ խողովակի մէջ սնդիկ ածել չէր կարելի, որովհետև օդն արգելք կը լինէր: Խողովակի գնդաձև մասը սնդիկով լցնելուց յետոյ, նրան դարձեալ տաքացնում են փոքր առ փոքր, մինչև որ բարձրանում է և դուրս է մղում խողովակից բոլոր օդը, այն ժամանակ իսկոյն բաց ծայրի ափերը սաստիկ կեծացնելով՝ միացնում են: Ապահովութեան համար այդ ապակեայ խողովակը ամրացնում են տախտակի վրայ: Յետոյ ամբողջ գործիքը դնում են հալուող ձիւնի մէջ և ուր որ կանգնում է սնդիկը, այնտեղ գիծ են քաշում և դնում են Օ նշանը: Այդ կէտը կոչւում է *հալման կամ սառուցման կէտ*: Յետոյ վեր են առնում գործիքը և դնում են եռացող ջրի մէջ: Տաքութիւնից սնդիկը բարձրանում է և այնտեղ, ուր նա դադարում է բարձրանալուց, նշանակում են գիծ և 80 թուանշանը: Այդ կէտը կոչւում է *եռացման կէտ*: Այնուհետև Օ և 80 միջնավայրը բաժանում են ութսուն հաւասար մասերի և նշանակում են թուերով: Այդպիսի նշաններ անում են և՛ Օ-ից դէպի ցած: Այդ բաժանմունքներն *աստիճաններ* են կոչւում, իսկ ամբողջ գործիքը կոչւում է *ջերմաչափ*: Օ-ից բարձր եղած աստիճանները *տաքութեան* չափն են ցոյց տալիս, իսկ Օ-ից ստոր եղածները՝ *ցրտութեան* չափը: Գրելու ժամանակ տաքութեան հա-

մար նշանակում են յաւելման նշան (+), իսկ ցրտութեան համար՝ հանման նշան (—): Հալման և եռացման կէտերի համեմատ առարկաների ըարեխառնութիւնը (բարեխառնութիւն է կոչուում առարկաների ջերմութեան որքանութիւնը) որոշելով՝ մենք, օրինակ, կարող ենք ասել, որ ամառային տաք օրերում մեր երկրներում 20—35 աստիճան ջերմութիւն է լինում (+20° կամ +35°), որ սենեակներում տասն և հինգ աստիճանից (+15°) աւելի ջերմութիւնը վնասակար է, որ սառուցեալ ովկիանոսների մօտ ցրտութիւնը երբեմն երեսուն աստիճանից (—30°) աւելի է լինում. բայց 30° աւելի ցրտութիւն սնդիկը չէ կարող ցոյց տալ, որովհետև այդքան ցրտութեան մէջ նա ևս սառչում է: Մեր նկարագրած ջերմաչափը հնարեց մի երևելի ռուսացիական, Բէօմիւր անունով: Բացի դորանից գործ են դնում նաև մի ուրիշ ջերմաչափ, որ հնարել է Կելսիոս անունով մէկը: Կելսիոսը եռացման և սառուցման կէտերի միջոցը բաժանեց հարիւր մասի, փոխանակ ութսունի: Կելսեան ջերմաչափի աստիճանները մանր են քան թէ Բէօմիւրեան ջերմաչափինը: Կելսեան ջերմաչափի 5° հաւասար է Բէօմիւրեանի 4°-ին: Ջերմութիւնը նշանակելու ժամանակ աստիճանների առաջ դնում են Բ. կամ Կ. տառը, նայելով թէ՛ սր ջերմաչափով է վերցրած:

102. Ջ Ո Ի Բ

I

Երբ հեշտանուի կամ կաթսայի ջուրը եւ է գալիս, մենք գոլորշի ենք նշմարում և գիտենք, որ այդ գոլորշին միևնոյն եռ եկած ջուրն է: Ամենքդ տեսած կը լինիք սապնէ պղպջակներ: Գոլորշին էլ միևնոյն տեսակ ջրային պղպջակ է, որի մէջ լիքն է օդով, բայց այդ պղպջակներն այնքան մանր են, մաքուր և փայլուն, որ նորանց հասարակ աչքով միշտ չէ կարելի տեսնել: Ահա գոլորշին բարձրանում է կաթսայի վրայից ու շքանում: Բայց սր է կորչում նա: Նորա պղպջակները ցնդւում են օդի մէջ և նա աննկատելի է դառնում. նշանակում է նա տեսնուում է այն ժամանակ, երբ շատ պղպջակներ են ժողովուում միասին, ինչպէս օրինակ՝ կաթսայի վրայ կամ բաղանիքներում: Մենք շունչ ենք առնում, և մեր բերանից, որպէս և ամբողջ

մարմնուց, օդի հետ գոլորշի էլ է դուրս գալիս: Այս բանը դու կարող ես նկատել, երբ տաք սենեակից դուրս գաս դէպի ցուրտը: Ուրեմն ուր մարդիկ են բնակուում, այն սենեակում պէտք է գոլորշի լինի: Գոլորշին առաւելապէս գոյանում է տաքացրած ջրերից, կերակուրներից, թէյից, թէև մենք նրան միշտ չենք նշմարում: Փորձի համար ձմեռուայ մի ցուրտ օր տաք սենեակի դուռը միանգամից բաց արա և դու թանձր շոգի կը նշմարես սենեակում: ուրեմն նորա պղպջակները, որ առաջ ցրուած էին օդի մէջ, այժմ ցրտի ներգործութիւնից սեղմուելով՝ միացան, թանձրացան և նշմարելի եղան: Եւ այսպէս՝ շոգին գոյանում է ջրից. չէ կարելի արդեօք նրան նորից ջուր դարձնել:

II

Եթէ սենեակի մէջ ներս բերես մի սառը դաւաթ կամ մի բաժակ սառը ջրով լիքը, դու իսկոյն՝ թէ գաւաթի և թէ բաժակի վրայ կաթիլներ կը նշմարես. նշանակում է սենեակի աննշմարելի գոլորշին, դիպչելով սառն ամաններին, ոչ թէ թանձրացաւ, այլև ջուր դարձաւ և նրանց միաւորութիւնից կաթիլներ գոյացան: Միևնոյն է լիձաւ և նրանց միաւորութիւնից կաթիլներ գոյացան: Միևնոյն է լիձաւ և լուսամտի ապակիների վրայ: Երբ մարդ ցուրտ օդի մէջ է, նրա բերանից և ռուսգներից դուրս եկած շոգին ոչ միայն նշմարուում, այլ բերանից և ռուսգներից դուրս եկած շոգից ու մօրուսից և մինչև անգամ և իրրև ջուր թափուում է նրա ընչացքից ու մօրուսից և մինչև անգամ ձիւն ու սառուց է դառնում: Նշանակում է գոլորշից միշտ կարելի է անձրև (ջուր) ստանալ: Բայց ի՞նչ էք կարծում, միթէ անպատճառ պէտք է ջուրը եռացնել, որ նա գոլորշիանայ: Դուք իմանում էք, որ թաց լուացքը դուրսը ցամաքում է նաև ցուրտ եղանակին, մանաւանդ երբ քամի է լինում. որովհետև քամին նրանից հեռացնում է ջրի պղպջակները և դրանով օժանդակում է նորա շուտով ցամաքելուն: Ջուրը պղպջակները և դրանով օժանդակում է նորա շուտով ցամաքելուն: Գէտք է ասել, որ նոյնիսկ նախով՝ սաստիկ սառցնում է մարմինը: Պէտք է ասել, որ նոյնիսկ սառուցը դուրսը, ցրտումը դրած ժամանակ, մաշուում է, որովհետև նրանից ևս գոլորշի է բարձրանում: Նշանակում է՝ ջուրը միշտ կը գոլորշիանայ, բաւական է, որ ամենափոքր տաքութիւն լինի, իսկ այդոչափ տաքութիւն մինչև անգամ սառուցի և սառնամանիքների մէջ ևս կայ: Երբ տեսնում ենք, որ գետերը սառան, օդը ցրտեց, ձիւն եկաւ, կայ: Երբ տեսնում ենք, որ գետերը սառան, օդը ցրտեց, ձիւն եկաւ, մեր մաշկն զգաց արաքին օդի փոփոխութիւնը, ասում ենք, թէ ցուրտ է, բայց աւելի ուղիղ կը լինէր, եթէ ասէինք, թէ շատ սակաւ

տաքութիւն կայ: Երբոր ջերմաչափը 10° ցրտութիւնից իջնում է մինչև 5°, ոչ ապաքէն մենք ասում ենք, թէ եղանակը փոքր ինչ կոտրուեցաւ, օգը քիչ տաքացաւ: Եւ այդ շատ ուղիղ է, որովհետեւ այդ ժամանակ ևս տաքութիւն կայ:

Ջուրը գոլորշիանում է ամենայն ժամանակ՝ ամառ թէ ձմեռ, միայն ամառն առաւել շատ, իսկ ձմեռը սակաւ: Այսպէս ևս ամառը շոգիացումն աւելի առատ է տաք եղանակին, քան գոլ, ցերեկը՝ քան թէ գիշերը: Սակայն անցնում է տօթ օրը և մենք գոլորշին միայն գիշերն ենք նշմարում, բայց այդ չէ նշանակում, թէ նոքա գիշերն էլ գոյացան, այլ որովհետեւ ցերեկը ջերմութիւնը սաստիկ էր, նոքա այնպէս լայնացած և հեռացած էին միմեանցից, որ անկարելի էր նշմարել, իսկ պարզընկայ գիշերը նոքա մօտենալով միմեանց՝ թանձրացան: Արեգակը կը տաքացնի նոցա և նոքա նորից լայնանալով կ'անյայտանան: Գարնանը և աշնանը մէգը շատ յաճախ է պատահում, որովհետեւ այդ ժամանակներում եղանակն առհասարակ խառն և փոփոխական է լինում: Երբ միևնոյն գոլորշին աննկատելի կերպով վերանում է շատ բարձր, այնտեղ, ուր շարունակ ցուրտ է լինում, այն ժամանակ մէգը ոչ թէ մեզ մօտ է կազմում, այլ բարձր—երկնքում և մենք նրան ամպ ենք անուանում: Եթէ հեռուից նայես բաղանիքից բարձրացող գոլորշու վրայ, դու նրան ևս ամպ կը համարես: Ամպերը զանազան բարձրութեան վրայ են լինում, սկսած մի վերստից մինչև վեց-եօթն և աւելի: Կան այնպիսի լեռներ, որոնք ամպերից բարձր են. նոցա վրայ մշտապէս ձիւնն ու սառուցն անպակաս է լինում. նոցանից կարկաչելով գլորում ու թափում են սրընթաց առուակներ: Սարի ստորոտից նայում-տեսնում ես, որ ամպերը միջից կտրում են նրան. բարձրանում ես և միայն թանձր մառախուղ ես նշմարում շուրջը, փոքր ևս բարձրանում ես և ամպերը քեզանից շատ ներքև են մնում. ներքևում շատ անգամ անձրև է գալիս, որոտում է, իսկ քեզանից բարձր տարածում է պայծառ երկինքը:

III

Երբ օդի մէջ գոլորշիներ են ժողովում, ամպերը թանձրանում են և անձրև է գալիս, այսինքն՝ այդ միախառնութիւնից առաջացած կաթիլները իրանց յենարանից—օդից ծանրանալով՝ ցած են ընկնում: Չատ անգամ պատահում է, որ ամպերը ցած իջնելով՝ հան-

դիպում են ջերմ օդի, որից լայնանում ու նորից չքանում են առանց անձրև բերելու. նշանակում է՝ նոցա փոքր ինչ սեղմուած ու թանձրացած փամփուշտները ցրուեցան առաջ, քան թէ կը միախառնուէին և կաթիլներ կը կազմէին: Ընդհակառակն՝ պատահում է, որ ամենպարզ եղանակին անձրև է գալիս, երբ յանկարծ սառը հողմ է փչում. ուրեմն անտեսանելի ջրային գոլորշիները սառը քամու ներգործութիւնից արագ միախառնուելով՝ կաթիլներ են գոյացնում, մինչդեռ մենք ոչ ամպ ենք տեսնում երկնքի վրայ և ոչ իսկ մէգ, կամ եթէ տեսնում ենք, շատ աննշան:

Եթէ օդի բարեխառնութիւնը 0-ից ցած է, այն ժամանակ ջրային գոլորշիները մի որոշ բարձրութեան հասնելով և փոքր ինչ թանձրանալով՝ տեղն ու տեղը սառչում են և զանազան ձևեր կազմելով՝ խաչաձև, փետրաձև... ցած են թափում: Այդպիսի սառած գոլորշիները ձիւն են կոչում: Ձիւնը մեզ մօտ, երկրի վրայ ևս կարող է գոյանալ. գարնանային կամ աշնանային ցուրտ գիշերները՝ ցերեկը գոյացած և դեռ ևս բաւականաչափ չբարձրացած գոլորշիները քսուելով սառն առարկաներին՝ քարերին, խոտերին, ծառերին, տաշկնելին, իրանք էլ սառչում են և նոցա վրայ նստում: Այդ տեսակ ձիւնը եղևաւմն է կոչում: Չատ հաւանական էր կարծել, որ կարկուտն էլ ձմեռը գար, բայց այդ կարծիքն ուղիղ չէր լինիլ: Կարկուտն ամառն է գալիս. նշանակում է՝ նա շատ բարձր ամպերումն է գոյանում, այնտեղ՝ ուր մշտական ցուրտ է թափւորում: Ցրտութիւնից գոլորշիները միախառնուելով խոշոր կաթիլներ են գոյացնում, որոնք թէ այդ բարձրութեան վրայ և թէ ճանապարհին սառչում, ամբանում են իրրև սառուցի կտորներ և ցած են թափում երկնքից: Բայց թէ ինչից է առաջանում ցողը, մենք այդ մասին մի խօսք անգամ չենք ասել: Ցողը լինում է ամառը, այն էլ պարզ գիշերները, ջերմ ցերեկից յետոյ: Դու չես տեսնում նկատած կըլինիս, որ պարզընկայ գիշերներն աւելի ցուրտ է լինում, քան թէ թուխպ գիշերները. դորա պատճառն այն է, որ ջերմութիւնը տաքացած երկրից բարձրանալով՝ պարզ գիշերը ազատաբար ընդլայնում և կորչում է օդի մէջ, իսկ թուխպն արգելք է լինում տաքութեան բարձրանալուն և նորան յետ է մղում: Այսպէս է լինում ձմեռը—պարզ և անամպ օրերը սաստիկ ցուրտ է լինում, քան ամպոտ օրերը: Այժմ հասկանալի է, թէ ինչի ամառուայ պարզ գիշերներին՝ ջրային փամփուշտները, որոնք երեկոյեան բարձրանում են երկրից, հեռու չեն կարողանում գնալ և իսկոյն, կաթիլներ կազմելով՝

Տ ծայրը մօտեցնենք ասեղի սուր կողմին, մենք կընկատենք, որ նա յետ է փախում կամ բուժ կողմն է դէպի նորան դարձնում. իսկ եթէ N նշանակած ծայրը մօտեցնենք, ասեղը իւր սուր կողմով կըմօտենայ շերտիկին: Սորանով դեռ բոլորովին չեն իմացում մեր շերտիկի և նրանով շփած ասեղի հրաշալիքը: Հեռացրէք այդ երկաթի կտորը, որովհետև ասեղը նրանից այնպիսի ոյժ ստացաւ, որ առաջ չունէր. նայեցէք թէ ինչպէս նորա մի ծայրը միշտ միևնոյն կողմն է ձգտում, իսկ միւսը՝ միշտ նորա հակառակ կողմը. դարձրէք նորան ինչպէս կամենաք և նա նորից անպատճառ իւր առաջին ուղղութիւնը կըստանայ: Ուշադրութեամբ նայեցէք և դուք կըտեսնէք, որ ասեղի մի ծայրը միշտ դէպի հիւսիս կը նայի, իսկ միւսը դէպի հարաւ, և ամենեին չէք կարող հարկադրել, որ նորա դէպի արևելք կամ դէպի արևմուտք նայեն: Բացի դորանից դուք և այն կը նկատէք, որ եթէ ասեղի սուր ծայրը դէպի հիւսիս է նայում, իսկ բուժը դէպի հարաւ, դուք ոչ մի կերպով չէք կարող ստիպել նոցա, որ փոխեն իրանց տեղերը:

Թէ ինչն է ձգում ասեղին դէպի երկաթէ շիւղը, ինչն է յետ մղում նորան, ինչն է հարկադրում նորան իւր մի որոշ ծայրն անպատճառ դէպի հիւսիս ուղղել, իսկ միւսը դէպի հարաւ, այդ բանը հաստատապէս ոչ ոք չէ իմանում: Թէև մենք այս երևոյթի պատճառը չգիտենք, բայց կարող ենք մեծամեծ օգուտներ քաղել նրանից: Դիցուք թէ մենք նկատեցինք, որ ասեղի սուր ծայրը միշտ դէպի հիւսիս է նայում, իսկ բուժը դէպի հարաւ և այդ ասեղը ձեռներէս մըտանք անտառը, որ մեր տանից դէպի հիւսիս է գտնուում. մենք այդ անտառում երկար յետ ու առաջ թափառելուց յետոյ, ճանապարհը կորցրինք և էլ չենք իմանում, թէ ո՞ր կողմով դուրս գանք անտառից: Մենք գիտենք, որ մեր տունը անտառի հարաւային կողմումն է գտնուում, բայց տարաբարբար չենք իմանում, թէ ո՞ր կողմն է հարաւը և ո՞րը՝ հիւսիսը, որովհետև երկինքը սաստիկ ամպած է և արեգակը չէ երևում: Այդտեղ ահա մտաբերում ենք, որ մենք ունինք վերկարար ասեղը, որ առանց արեգակի ևս գիտէ, թէ ո՞ր է հիւսիսը և ո՞ր՝ հարաւը: Դնենք նորան մի փոքր տաշեղի վրայ և գցենք առաջին անգամ հանդիպող մորի վրայ (пужа́лка). ասեղի սուր ծայրն իսկոյն դէպի հիւսիս կ'ուղղուի, իսկ բուժը դէպի հարաւ: Այնուհետև մեզ համար դժուար չէ գտնել մեր գիւղը:

Բայց այդ ի՞նչ շերտիկ է, որ այդպիսի հրաշքներ է գործում: Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի պողպատի կտոր. դա ինքն էլ մի ուրիշ

աւարկայից է ստացել այն ոյժը, որ հաղորդում է ասեղին: Կայ մի տեսակ քար՝ երկաթաքար, որ մագնիսական յատկութիւն ունի: Այդ երկաթաքարը կամ աւելի ճիշդը՝ մագնիսաքարը ոչ միայն ինքն ունի այդ յատկութիւնը, այլև կարող է այդ ոյժը հաղորդել և պողպատէ կամ երկաթէ շերտիկներին, միայն այն զանազանութեամբ, որ երկաթի մէջ մագնիսական յատկութիւնը կըմնայ մինչև այն ժամանակ, քանի որ նա հաղորդակցութեան մէջ է մագնիսի հետ, իսկ պինդ պողպատի մէջ՝ որ շփած է այնպէս, ինչպէս մենք շփեցինք ասեղը, նա մնում է շատ երկար ժամանակ:

II

Մագնիսի յատկութիւնը շատ վաղուց յայտնի էր, բայց Եւրոպայում դեռ ոչ ոք չէր իմանում, թէ ինչ օգուտ կարելի է քաղել նրանից: Միայն XIV-րդ դարում մի իտալացի, Ջիօյօ անունով, մտածեց մագնիսացրած ասեղը յարմարացնել ծովագնացութեան: Մինչև այդ ժամանակ ծովերի վրայ նաւելիս ծովագնացները ճանապարհի ուղղութիւնն իմանում էին արեգակից, լուսնից, աստղերից, իսկ ամպոտ կամ մառախլապատ օրերը բոլորովին չէին իմանում՝ ո՞ւր գնան: Այս նպատակով շինում են մի փոքրիկ տուփ, որի կենդրոնում ցցած է լինպատակով շինում են մի փոքրիկ տուփ, որի կենդրոնում ցցած է լինում սուր և բարակ առանցք. առանցքի վրայ հագնում են առանձնապէս դուրա համար շինած պողպատէ մագնիսացրած սլաք, բայց այնպէս, որ նա կարողանայ ազատ շարժուիլ առանցքի վրայ. յետոյ ասեղի երեսը ծածկում են ապակեայ կափարիչով, որ իւր վրայ է ունենում առանցքի մի ծայրը: Սլաքի դէպի հիւսիս ուղղուած ծայրի դիմացը նշանակում են N (Nord—հիւսիս), իսկ նորա հակառակ կողմը՝ S (Süd—հարաւ): Միւս երկու կողմից նշանակում են արևելքն ու արևմուտքը: Յետոյ այդ գլխաւոր կողմերի մէջ երկրորդական բաժանմունքներ են նշանակում, որպիսիք են՝ հիւսիս-արևելք, հիւսիս-արևմունքներ են նշանակում, որպիսիք են՝ հարաւ-արևելք, հարաւ-արևմուտք և այլն: Այս հասարակ գործնուտք, հարաւ-արևելք, հարաւ-արևմուտք են դուրս գալիս ծիլի օգնութեամբ մարդիկ համարձակ ճանապարհ են դուրս գալիս մեծամեծ ծովերի վրայով: Սա կոչւում է կողմնացոյց: Բոլոր երևելի աշխարհագրական գիւտերն ու յայտնագործութիւնները կողմնացոյցի շնորհիւ են եղել և նորան հնարելուց յետոյ: Ահա այդքան ձեռնաուէ մեզ բնութեան օրէնքներին ծանօթ լինելը, և այդպիսի մեծամեծ

միայն իմանալ, թէ ինչով տրորենք նորան: Առարկաների այս՝ դէպի միմեանց ունեցած ձգողական ոյժը կոչուում է *ելեքտրականութիւն*: Բայց սա մի ուրիշ յատկութիւն ևս ունի. բացի դէպի ինքը ձգելուց, շատ անգամ յետ էլ է մղում: Գարեգինը հայկի ձեռքից առաւ թելը և տուեց մի ուրիշը, բայց ոչ թէ քաթանէ, այլ մետաքսէ: Նորա ծայրին ևս կախած էր թղթի կտոր: Գարեգինը տրորեց կնքամոմը և մօտեցրեց թղթին: Առաջին անգամ թուղթը մօտ թռաւ և կպաւ նորանից. բայց երբ նա կամեցաւ միենոյն փորձը երկրորդ և երրորդ անգամ կրկնել, թուղթը ոչ մի կերպով չէր մօտենում. կնքամոմը մօտեցնում էր նրան մի կողմից, նա փախչում էր միւս կողմը. մօտեցնում էր միւս կողմից, թեքում էր առաջին կողմը, ասես թէ խուզած երեսայ լինէր: «Կամենում էք, տղայք, ես դրանց հաշտեցնեմ, ես կարող եմ հրամայել և դրանք իմ հրամանից չեն դուրս գալ:

— Հրամայիր, հրամայիր:

Գարեգինը մատով խփեց թղթին և ասաց. «Բաւական է, հոգիս, հաշտուիր իմ կնքամոմի հետ»: Այս խօսքերն ասելուց յետոյ նա կնքամոմը մօտեցրեց թղթին: Թուղթն իսկոյն գրկախառնեց նորան:

— Վայ, վայ, այս ինչ բան է, Աստուած ջան. կախարդ ես դու, ինչ ես. խաչ որ կախարդ ես:

— Սպասեցէք, տղայք, սպասեցէք, ես ձեզ բոլորը կ'ասեմ. կը տեսնէք, որ դուք էլ ինձ նման կախարդներ էք: Ես միայն իբրև կատակ, բառերով հրամայեցի, եթէ ոչ, նա առանց հրամանի էլ կրկատարէր ձեր կամքը, եթէ միայն դուք մատով դիպչէիք նորան:

— Մեր մատով, թէ քո:

«Ումնով կամենաք»: Գարեգինն սկսեց կնքամոմը մօտեցնել թղթին, բայց նա ըստ առաջնոյն խոյս էր տալիս նրանից: «Ապա ո՞վ է կամենում ձեռք տալ թղթին»:— Ես, ես, բացականչեց մինը:— Բայց ոչինչ խօսք չասեմ. «Էէ, ոչինչ մի ասիր... է՛հ, բաւական է, հեռացրու մատդ»: Այս խօսքերն ասելով՝ Գարեգինը մօտեցրեց կնքամոմը և թուղթն իսկոյն կպաւ նրանից: Ամենքն էլ սկսեցին ծիծաղել:— Գրուստ սատանայ է, դրուստ, ասացին մի քանիսը: «Այժմ տուէք ինձ ձեր ձեռքը, ով կամենայ»:

— Ահա իմս. ահա իմս...

Գարեգինը մէկի ձեռքը բռնեց և սկսեց նորա վրայով տարուբերել տրորած կնքամոմը, բայց այնպէս, որ կաշուին չդիպչի: «Մի բան զգում ես, թէ ոչ»:— Զգում եմ: «Ի՞նչ ես զգում»:— Ի՞նչպէս տեսմ

քեզ, չեմ իմանում: «Հէնց իմանաս, թէ ճանձ է մանգալիս ձեռքիդ վրայ, այնպէս չէ»:— Հա՛, հա՛, այդպէս է, այդպէս է,— հիմա ինձ, հիմա ինձ, բացականչեցին զանազան կողմերից:

Գարեգինն ամենքի հետ էլ միենոյն փորձը կրկնեց:

— Այս ինչ է նշանակում, ինչի է այդպէս թուում:

«Նորա համար, որ ձեռքի երեսին եղած մագերը ցցուում և ձգուում են դէպի կնքամոմը, իսկ մենք կարծում ենք, թէ ձեռքի վրայ մի բան ման է գալիս»:— Ապա մի անգամ ևս արա՛, ես կընայեմ, տեսնեմ, ճշմարիտ մագերը բիզ-բիզ են լինում: Գարեգինն սկսեց տարուբերել կնքամոմը և մանուկը նկատեց, որ բոլոր մագերը բիզ-բիզ եղան:

«Բայց այս ելեքտրականութիւնը մի ուրիշ յատկութիւն ևս ունի. բացի դէպի ինքը ձգելուց և յետ մղելուց, նա ճայթում և կայծեր է արձակում»:

— Այդ ինչպէս է լինում, ինչպէս, պատմիր, հոգիդ սիրես:

«Այս բոլորիս ցոյց կըտամ: Գայծերն այժմ չեն տեսնուիլ, որովհետև շատ լոյս է, իսկ ճայթիւնը կըլսէք: Եթէ տանը, մութը սենեակում լինէիք, դուք կայծեր ևս կընշմարէիք»: Այդ ասելով նա տրորեց կնքամոմը և պատուիրեց մանուկներին լուռ նստել: Յետոյ հրամայեց մանուկներից մինին մատը քսել նորան: Տղան քսեց և այդտեղ մի թոյլ ճայթիւն լսուեցաւ: Նրանից յետոյ փորձեց երկրորդը, երրորդը, չորրորդը... ամենքն էլ փորձեցին և ամենքն էլ լսեցին կնքամոմի թոյլ ճայթիւնը և թեթեւ ցնցումն մատի վրայ:— Ա՛խ, արդեօք կայծը սրտերից կըլինի:— Հէնց այնտեղ, ուր որ ճայթիւնն է: Սպասեցէք, գուցէ ես այստեղ էլ կարող եմ տեսանելի անել կայծը: Բերէք իսկոյն բոլոր կապերտները, գոգնոցներն ու փալանները և նոցանից մի վրան շինեցէք, բայց այնպէս, որ նորա տակը մութը լինի»: Ասելն ու շինելը մէկ եղաւ: Յետոյ երկու-երկու մտան փոքրիկ վրանի տակ և Գարեգինը նոյն կարգով սկսեց տաքացնել կնքամոմը, իսկ մանուկները շօշափեցին նորան մատներով: Մի երկու անյաջող փորձերից յետոյ՝ նոքա որոշ նկատեցին մի թոյլ կայծ, որ աւելի սպիտակ գոյն ունէր, քան կարմիր: Այսպէս ներս մտան և նկատեցին բոլոր մանուկները, որ կայծն առաջանում է հէնց այն տեղից, ուր շօշափում ես դու կընթամոմը: Ճայթիւնը ևս նոյն տեղն է լսուում: Երբ Գարեգինը դուրս եկաւ իւր բնից, քրտինքը կաթիլ-կաթիլ հոսում էր նորա ճակատից: «Այժմ, տղայք, դուք արդէն գիտէք, թէ ինչ է կայծակը և ինչ սրտումն»:

— Ի՞նչպէս, մենք այդ սրտեղից գիտենք:

«2է որ ես ձեզ վրանի տակ ցոյց տուի թէ որոտումն և թէ կայծակ»:

— Ի՞նչ ես ասում, երբ ցոյց տուիր: Մենք այնտեղ միայն մի թեթև ճայթիւն լսեցինք և թոյլ կայծ տեսանք:

«Հէնց այդ է կայծակը և որոտումն: Չանազանութիւնը միայն նրանում է, որ այստեղ այդ բաները տեսանք փոքր չափով, իսկ երկնքումը դռքա լինում են մեծ քանակութեամբ: Երկնքումը երբ ամպ ամպի է հանդիպում, ճայթիւնի փոխանակ ասազին որոտումն է լինում, իսկ նուազ կայծի փոխանակ՝ սարսափելի շանթեր ու կայծակները, այնպէս որ՝ նրանցից մարմինները ոչ թէ թեթև ցնցումն են դռում, այլ նրանց հարուածից մեռնում են մարդիկ, այլում են դէ՛ղերը, ճեղքում են ծառերը...»:

— Ուրեմն որոտումն Եղիա մարգարէից չէ՞ յառաջանում: 2է որ տասս ինձ միշտ ասում է, թէ Եղիա մարգարէն երբ իւր չորս ձիանի կառքումը նստած ման է գալիս երկնքումը, այն ժամանակ է որոտումն լինում:

«Ոչ, ճշմարիտ չէ: Պառաւանդներն այդպիսի բաներ շատ են պատմում, օրինակ՝ քաջերի, թախամաների, երազների և ուրիշ դատարկ բաների մասին, բայց դրանցից ոչ մէկին չպէտք է հաւատալ»:

— Գարեգինը սուտ է ասում, խաչը վկայ՝ սուտ է ասում. ամպերը ձմեռն էլ են լինում. եթէ նոցանից է որոտումը, բաս ինչի՞ նրանք ձմեռը չեն որոտում:

«Ճշմարիտ է, որոտումն ձմեռը չէ լինում, բայց այն ժամանակ ելեքտրականութիւն էլ չէ լինում: Ելեքտրականութիւնը չափազանցօրէն ժողովում է չոր և տաք եղանակին, ինչպէս այժմ: Չմեռը և խոնաւ եղանակին ես չէի կարող այն բոլոր փորձերն անել, որոնք արեցի այս բովանդակ: Եւ ինչպէս որ այս փորձերը յաջողում են ամառը երաշտ եղանակին, այնպէս էլ որոտումն լինում է միայն ամառը: Բայց, ասում եմ, նա ուրիշ բանից չէ յառաջանում, այլ միայն օդում ժողովուած ելեքտրականութիւնից: Եթէ այս բանը չիմանային, չէին կարող արգելք դնել կայծակին»:

— Ի՞նչպէս թէ արգելք դնել կայծակին:

«Այնպէս, էլի՛, որ արգելում են: Մի այնպիսի գործիք կայ, որին շանթարգել (կայծակնաւ) են կոչում: Այն տունը, որի վրայ շանթարգել է դրած, կայծակից երբէք չի դարկուիլ և չի այրուիլ»:

— Ի՞նչպէս է շինում շանթարգելը:

«Ահա ինչպէս: Տան կտուրի վրայ տնկում են մի երկաթէ ձող, որի վերին ծայրը սուր է լինում: Այդ սուր ծայրը երկնային ելեքտրականութեան համար միևնոյն է, ինչ որ կնքամոմի համար բո մատիդ ծայրը: Նորա վրայով ընթանում է օդի մէջ եղած ելեքտրականութիւնը: Այս ցցի ստորոտից կպած է երկաթէ շղթայ, որ կախած է պատից և մի ծայրը մտցրած է հողի մէջ: Բոլոր ելեքտրականութիւնը, որ ժողովում է տան կտուրի վրայ և նորա շրջակայքում եղած օդի մէջ, շանթարգելի միջով անցնում է շղթային, իսկ դորանից հողի մէջ, ուրեմն և տան կտուրի վրայ մեծ քանակութեամբ չէ մնում ու չէ բռնում երկնային կայծակից ու որոտումից»:

— Դու ինչպէս ես ասում. ընթանում է: 2է որ ճայթելուց յետոյ նա ոչնչանում է:

«Ո՛չ, չէ ոչնչանում: Ճայթիւնը նշան է, որ ելեքտրականութիւնը բաժանուեցաւ կնքամոմից և մտաւ մատիդ մէջ. բայց այդտեղ նա չկորաւ, այլ բոլոր մարմնովդ անցաւ դէպի ոտներդ. իսկ ոտներիցդ մտաւ հողի մէջ: Լոյսն առհասարակ ճառագայթներով է սփռում, ճայնը ալիքանման, իսկ ելեքտրականութիւնը ոչ այսպէս և ոչ այնպէս, այլ հոսանքով: Դուք մտաբերում էք, որ առաջ ես Հայկին մի թուղթ տուի, որ կապած էր հասարակ թելի վրայ, իսկ յետոյ մետաքսէ թելի վրայ: Եւ երբ նա հասարակ թելի վրայ էր կապած, ամենայն անգամ մօտենում էր կնքամոմին, իսկ երբ մետաքսէ թելի վրայ—երկրորդ և միւս անգամները չէր մօտենում: Ի՞նչ էր սորա պատճառը: Պատճառն այն էր, որ հասարակ թելի միջով ելեքտրականութիւնը հեշտութեամբ էր հոսում, իսկ մետաքսէ թելի միջով ամենին չէր հոսում: Երբ ես կնքամոմը թղթին եմ մօտեցնում, թուղթն էլ կնքամոմից ելեքտրականութիւն է ստանում. եթէ ճանապարհ կայ, այդ ելեքտրականութիւնը դուրս է հոսում—այնտեղից մանում է թելի մէջ, թելից մատներիդ մէջ, իսկ մատներիցդ ամբողջ մարմնովդ անցնում է հողի մէջ, այնպէս որ թղթի մէջ էլ ամենին չէ մնում: Այդ պատճառով էլ երբ երկրորդ անգամ մօտեցնում են նորան կնքամոմը, նա նորից կպչում է նորան: Բոլորովին ուրիշ բան է պատահում, երբ թուղթը մետաքսէ թելից է կախուած, միանգամ իւր մէջ ելեքտրականութիւն ստանալով՝ նա ճանապարհ չունի դուրս հոսելու, որովհետեւ մետաքսը ելեքտրականութիւն չէ ընդունում: Այդ է պատճառը, որ երբ կրկին անգամ նորան մօտեցնում ենք կնքամոմը, նա բաւական

ելեքտրականութիւն ունենալով իւր մէջ, նրանից խուսափում է: Մի-
նուոյն օրէնքով հնարուած է հեռագրագիծը, այն՝ որ սիւնների վրայից
տարածուած է դէպի հեռու աշխարհներ: Սիւնների վրայ ձգած է եր-
կաթէ լարեր, որոնց միջից հեշտութեամբ հոսում է ելեքտրականու-
թիւնը, իսկ եթէ այդ լարերը մետաղից լինէին, ելեքտրականութիւնը
չէր հոսիլ նսրանցով և մենք չէինք կարող նորանով մեր մտքերը հա-
ղորդել հեռաւոր երկրներին»:

—Միթէ հեռագրագծի վրայով ելեքտրականութիւն է հոսում.
իսկ ես կարծում էի թէ նամակներ են ուղարկում:

«Ի հարկէ նամակներ են ուղարկում, միայն ելեքտրականութեան
միջնորդութեամբ և ոչ թէ առանձին ծրարներով: Լարերի մի ծայրից
ելեքտրական հոսանք են մտցնում, իսկ միւս ծայրում, թէև դա հա-
զարաւոր մղոն հեռու լինէր, իսկոյն ճայթիւն է առաջանում, և քանի
անգամ որ ճայթում է, մարդիկ նորա համեմատ այլ և այլ նշաններ
են գրում: Ճայթիւնները գծերով նշանակելուց յետոյ, նոցա փոխար-
կում են տառերի, արտագրում և ուղարկում են այն մարդուն, որին
ուղղուած է նամակը:

—Զարմանք է, զարմանք. ախար նա ո՞նց է այդպէս շուտ վազում:

«Նա այնպէս շուտ է հոսում, որ աներևակայելի. երբ հազարաւոր
մղոն հեռաւորութիւն ունեցող հեռագրագծի մի ծայրից հոսանք են
մտցնում, նոյն վայրկեանում միւս ծայրին ճայթիւն է առաջանում»:

—Այդ լաւ-լաւ բաները դու սրտեղ ես սովորել, Գարեգին ջան»:

«Ուսումնարանում: Այնտեղ մենք շատ բան ենք սովորում»:

—Ախ, երանի՛ր թէ մեզ էլ ուսումնարան տային, բացականչեցին
մանուկները.—բայց ո՞ր է, մեղաւորին ո՞վ է տուել արքայութիւն»:

105. ԶՈՒՐ ԵՒ ՅԱՄԷՔ

Յոլակը գնաց դաշտը զբօսնելու: Նա շատ խելացի
մանուկ էր և երբ դաշտն էր դուրս գալիս, ամենայն բանի
վրայ ուշադրութեամբ էր նայում: Այս անգամ նա կամե-
ցաւ դիտել, թէ ինչ տեսակ ցամաք և ինչպիսի ջրեր կան,
որ յետոյ պատմէ ուսուցչին: Արտերից անցնելով՝ նա հա-
սաւ գետի եզերքը: Մանր քարերի վրայով ընթանում էր

գետը. նորա ափերը թումբ-թումբ էին, տեղ-տեղ՝ ափերի
վրայից դէպի գետը, կախուած էին ջրուռու և վայրի խա-
ղողենու ծառեր. տեղ-տեղ էլ փայլում էր մաքուր աւազը:
Յոլակը մտածեց. «Գետը գնայուն ջուր է, որ հոսում է
հողի խորութեամբ—տաշտով: Այդ տաշտը, երևի, ինքը
գետն է փորել շատ հին ժամանակներից: Քարերը լուա-
նալով՝ երևի ջրերի յորդութեան ժամանակ, նա տարել է
այն աւազի կոյտերը, որոնք այստեղ այնտեղ երևում են»:
Յոլակը գետի հոսանքի ուղղութեամբ առաջ գիմեց որ
տեսնէ, թէ նա շատ հեռու է գնում: Որքան նա հեռանում
էր, այնքան տեղի մակերեսը ցածրանում էր: Նշանա-
կում է՝ գետը հոսում է քարձրեց դէպի ցած. ուրեմն եթէ
նորա հոսանքին հակառակ գնանք, մենք ուրեիցէ կը
գտնենք նորա ափերը: Այնտեղ, երևի, ջուրը ժողովուած
կըլինի մի լճի մէջ կամ բլրակիս կըլինի հողի տակից իբ-
րև աղբիւր: Մարգագետնից դուրս գալով՝ գետը կտրում
էր ճանապարհը, այս պատճառով նորա վրայ կամուրջ էր
շինուած: Ճանապարհի միւս կողմը տարածուած էր մի ան-
տառ, որի մօտ Յոլակը տեսաւ մի փոքրիկ լճակ: Լճակը
շատ տեղերում ծածկուած էր տղմով և նրա վրայ լողում
էին վայրենի բաղեր: Յոլակը մտածեց. «Լճակը փոքրիկ
կանգնած ջուր է, որ ժողովուել է մի խորութեան մէջ»:
Գետի մի թևը միայն մտնում էր լճակի մէջ: Յոլակը ցան-
կանում էր իմանալ, թէ ո՞ր է գնում գետը: Նա առաջ
գնաց կոճղերի և մամուռների միջով: Որքան նա առաջ
էր գնում, այնքան հողի խոնաւութիւնն աւելանում էր:
Յոլակը միայն իւր ոտների տակն էր նայում և զգուշու-
թեամբ անցնում էր արմատների վրայով: Վերջապէս նա
բարձրացրեց գլուխը և յանկարծ տեսաւ, որ անտառն ըն-
դարձակօրէն բացուել է իւր առաջ և արեգակի ճառա-
գայթների տակ շողշողում է մի լիճ, շրջապատուած գե-

ղեցիկ կանաչ թփերով: «*Լիճը կանգնած ջուր է, որ շրջապատուած է հողով*»: Նա լճակից մեծ էր և միայն քամին էր բարձրացնում նորա վրայ թեթև տատանմունքներ, իսկ առանձին հոսանք ամենևին չունէր: Այստեղ գետը ևս իւր լայն ու ձանձաղ ընդանով թափուում էր նորա մէջ: Լճի աջ կողմից մտնում էր նորա մէջ մի հրուանդան, որպէս մի սուր բլրակ. «*հրուանդան է կոչուում այն ցամաքամասը, որ շատ կամ սակաւ մտնում է ջրի մէջ*»: Լճի մէջտեղում երևում էր մի փոքրիկ կանաչ կղզի—*մի կտոր հող, որ ամենայն կողմից շրջապատուած էր ջրով*: Լճի միւս կողմից գեղեցկապէս ներս էր մտած ջրի մէջ մի թերակղզի, որ համարեա ձգուում էր մինչև կղզին: «*Թերակղզի է կոչուում այն ցամաքամասը, որ երեք կողմից շրջապատուած է ջրով*»: Չորրորդ կողմից թերակղզին մի նեղ հողաշերտով միանում էր մնացած ցամաքի հետ, ուր տարածուած էր անտառը: «*Նեղ հողի տարածութիւնը՝ որ երկու մեծ ցամաք միացնում է միմեանց հետ, կոչուում է պարանոց*»: Լճի շուրջը, փոքրիկ ծոցերի մօտ, դուրս էին եկած շատ ծառեր և իրանց ստուերներով խաղում էին լճակի պարզ ու կապուտակ ջրի մէջ: «*Ծոց է կոչուում ջրի այն մասը, որ շատ կամ քիչ մտնում է ցամաքի մէջ և երեք կողմից պատած է հողով*»: Թերակղզին բաժանուում էր փոքրիկ կղզուց ջրի նեղ տարածութիւնով—*նեղուցով*: Ցուակը չկարողացաւ բաւականաչափ զուարճանալ լճի գեղեցիկ տեսքով. արեղակը թեքուում էր դէպի անտառի յետեր և նա շտապեց դէպի տուն: Միւս օրը, երբ նա բոլոր նկատածները պատմեց ուսուցչին, ուսուցիչը ցոյց տուեց և պատուիրեց նրան կաւից փոս շինել լեռնային լճակի համար, որից սկիզբն է առնում գետը, յետոյ դորանից աստիճան առ աստիճան ցած տանել գետի տաշտը (հունը) և նորա բերանի մօտ շինել առաւել մեծ փոս՝ անտառային

լճի համար՝ իւր կղզիներով, թերակղզիներով, նեղուցով, պարանոցով, ծոցերով և այլն, յետոյ կաւէ զանգուածը ցամաքացնել, ամրացնել և վերին փոսի մէջ ջուր ածելով՝ ստանալ արուեստական գետ և լիճ, բնական գետի և լճի նման, և նրա մասերը ցոյց տալ իւր ընկերներին ու պատմել նոցա բոլորը, ինչ որ գիտէ այդ մասին:

Ցուակն արդէն գիտէր արշինով չափել սեղաններ, աթոռներ, նստարաններ, սենեակի պատերը, լուսամուտները, և այլն: Նա այժմ կարող է մի անգամ նայելով որևէ առարկայի կամ տարածութեան, մօտաւորապէս իմանալ նորա երկարութիւնը: Վերջապէս ուսուցիչը ցոյց տուեց նորան, թէ ինչպէս պէտք է վեր առնել սենեակի մակարդակը մէկ թերթ թղթի վրայ՝ չափելով նորա լայնութիւնն ու երկարութիւնը: Սորա համար պէտք է վերցնել մի փոքրիկ գիծ, դիցուք մի կամ երկու բլթաչափ, և նորան մի արշինի տեղ ընդունել: Օրինակ՝ եթէ սենեակի երկայնութիւնը 9 1/2 արշին է, պէտք է վեր առնել թղթի վրայ քո ընդունած չափին համեմատ 9 1/2 բլթաչափ: 2 փեցիլը և նշանակեցիլը երկայնութեան գիծը, նորա ծայրը քանոշանով ուղղագիւր կտրում ես և ուղիղ անկիւն ես կազմում. այդ անկիւնից ձգում ես մի ուրիշ գիծ, որ լայնութիւնն է նշանակում: Դիցուք թէ սենեակի լայնութիւնը վեց արշին է. դու էլ նոր գծի վրայ վեր ես առնում քո չափովդ վեց: Վեց բլթաչափ վերցնելուց յետոյ դու երկայնութեան գծի միւս ծայրին նոր անկիւն ես կազմում և նորանից հորիզոնական գիծ ևս կանգնեցնում լայնութեան գծի հետ. այդ նոր գծի վրայ ևս վեց բլթաչափ վերցնելով, չորրորդ գծով, որ հորիզոնական է լինում երկայնութեանը, միացնում ես լայնութեան առաջին կան է լինում երկայնութեանը, միացնում մի քառանկիւնի պատկեր, որ փոքր գծի հետ: Այսպիսով կըստանաս մի քառանկիւնի պատկերի բիկ դիրքով ցոյց կըտայ քեզ սենեակի յատակը: Յետոյ այդ պատկերի իւրաքանչիւր գիծը հիմք վեր առնելով՝ նոյն կարգով կըկանգնացնես նորա վրայ սենեակի պատերը: Պատերի վրայ, չափելով, կարող ես նշանակել թէ ուր են լուսամուտները, դռները, վտարանները և այլն:

Այսպէս շարունակելով՝ դու կարող ես վեր առնել ամբողջ շինութեան յատակագիծը իւր բոլոր սենեակներով՝ իւրաքանչիւր սենեակը առանձին չափերով և միմեանց կցելով: Երկար թուր իրրև չափ վեցնելով, դու կարող ես վեր առնել բակի, պարտէզի և մինչև անգամ ձեր տան շրջակայքի մակարդակը: Բայց որքան ընդարձակ տեղի և մեծ շինութեան մակարդակ վեր առնելիս լինիս, նոյնքան պէտք է քո ընդունած չափը փոքրացնես, կամ ուրիշ խօսքով, նորան մեծ չափի տեղ ընդունես: Այսպիսի մակարդակները վրայ մի սենեակը չի կարող իւր բոլոր մանրամասնութիւններով նշանակուիլ, այլ մի փոքրիկ քառանկիւնի ձև կը ստանայ: Այն փոքրիկ պիծը, որ դու ընդունում ես արշինի, սաժէնի, վերստի, մինչև անգամ մղոնի փոխանակ, որով կարող ես վերցնել տան, բակի, շրջակայքի և ամբողջ նահանգների մակարդակը, կոչւում է մասշտաբ. այս պատճառով էլ ասում են, թէ մակարդակը մեծ կամ փոքր մասշտաբով է վերցրած:

107. ՀԵՌՈՒ ԵՒ ՄՕՏԻԿ

Ով որ լաւ տեսանելիք ունի, նա կարող է լաւ կարգալ մի արշին հեռաւորութիւնից. բայց եթէ միևնոյն գիրքը հեռացնենք հինգ-վեց արշին, այն ժամանակ մինչև անգամ հեռանկատ մարդը միմիայն մի սև պիծ կընկատի և շատ, շատ կ'որոշի խոշոր գլխատառերը: Թո՛ղ մէկը վեր առնի գիրքը, նորա բաց Երեսը ձեր դիմացը բռնի և շարունակ հեռանայ ձեզանից. 14—15 սաժէնից յետոյ՝ տողերը կ'անյայտանան, 100 քայլ հեռացած՝ ամբողջ գիրքը սպիտակ կէտի նմանութեամբ կ'երևայ, մի 10—15 սաժէն ևս հեռացած, ոչ թէ անկարելի կըլինի որոշել, թէ ինչ ունի բռնած հեռացող մարդը, այլ մինչև անգամ դէմքից դժուար կըլինի ճանաչել նրան: Հինգ-վեց վերստ հեռացած մարդը ինքը հազիւ մի նկատելի կէտի կընմանի, այն ևս համարեա անշարժ կէտի, չնայելով՝ որ նա գնում է ամենայն արագութեամբ. մի քանի սաժէն ևս անցնելով՝ այդ անշարժ կէտն էլ կ'անյայտանայ:

Գուցէ դուք տեսած լինիք, թէ ինչպէս արծիւը կամ անգղը ծառի կամ ժայռի վրայից թռչելով՝ արագապէս բարձրանում է: Առաջ դուք շատ որոշ նշմարում էք նրա լայն թևերը, պուշը և գլուխը, բայց մի րոպէից յետոյ արագութեան զիշատողը երևում է ձեզ իբրև մէկ սև ու անշարժ բիծ՝ թէև նա թռչում է նոյն արագութեամբ. մի երկու րոպէ ևս, և բիծը կէտ է դառնում, ապա նոյնիսկ կէտը չքանում է կապոյտ երկնակամարի վրայ:

Բոլոր առարկաները, որքան ևս մեծ լինին նորա՝ տեսնելը, եկեղեցիները, հսկայամարմին սօսիները, ահագին սարերը, բոլորը, բոլորը փոքրանում են մեր աչքի առաջ այն չափով, որ չափով մենք հեռանում ենք նրանցից, և եթէ ձեզ ասեն, թէ այն գիծը, որ դուք նշմարում էք հորիզոնի վրայ, ձեզանից տասը վերստ հեռու է, դուք՝ գիտենալով, թէ որքան փոքրանում են առարկաները հեռաւորութիւնից, ի հարկէ մօտաւորապէս կ'ըմբռնէք, որ դա այնպէս փոքր չէ, ինչպէս թւում է ձեզ. գուցէ դա մի շատ բարձր շինութիւն է, երբ տասը վերստ հեռաւորութիւնից երևում է: Իսկ եթէ դուք հորիզոնի վրայ տեսնում էք մի առարկայ 50—60 վերստ հեռաւորութիւնից, անկասկած կըմտածէք, որ նա մի մեծ սար պէտք է լինի:

Բայց ինչ կըմտածէք, եթէ ես ձեզ ասեմ, թէ լուսինը, որ ձեզ մի մեծ սկուտղի չափ է երևում, մեզանից համարեա 400,000 վերստ հեռու է գտնուում: Այնուհետև դուք, ի հարկէ, կը հաւատաք, որ լուսինն իսկապէս մի մեծ մարմին է. նա 49 անգամ միայն փոքր է մեր երկրից, որի վրայ մենք ապրում ենք: Իսկ արեգակը որ լուսնից փոքր է երևում, շատ ու շատ աւելի հեռու է մեզանից քան թէ լուսինը: Կարող էք երևակայել, թէ որքան ահագին պէտք է լինի նա, երբ 150 միլիոն վերստ հեռաւորութիւնից դեռ այդ մեծութեամբ էլ երևում է մեզ: (Արե-

Հնդկաստան և Չինաստան հասնելու համար ցամաքային ճանապարհներով պէտք է անցնէին անապատներ, որոնց վրայ միայն կիսավայրենի ցեղեր էին թափառում: Երբեմն Հնդկաստանից Եւրոպա էին բերում ոսկի, փղոսկր, թանկագին կերպաներ, այլ և այլ հազուադիւս իրեղէններ, մանաւանդ բուսական թագաւորութիւններից, որպիսի է լեղակը, պղպեղը և այլն: Բայց այսու ամենայնիւ լուրեր էին տարածուում, որ Հնդկաստանի հարօտութեանը չափ և սահման չկայ, այս պատճառով եւրոպացիներից շատերը մտածում էին, թէ ինչպէս անեն, որ յարմարաւոր ծովային ճանապարհ գտնեն զէպի այդ երկիրները, բայց չէին կարողանում:

Մենք ասացինք, որ այդ ժամանակ ևս մի քանի խելացի մարդիկ գուշակում էին որ երկիրս տափակ շրջանակաձև չէ, այլ գունդ է, բայց ոչ ոք չէր մտածում, որ Եւրոպայից զէպի արևմուտք ճանապարհ ընկնելով և միշտ զէպի առաջ դիմելով, առանց յետ դառնալու, կարելի է հասնել Հնդկաստանին, որ իսկապէս գտնուում է իրանց արևելեան կողմը: Իսկ եթէ մտածէին էլ, շատ դժուար էր իրագործել այդ միտքը, որովհետև հեշտ չէր անցնել Ջիբրալտարի նեղուցը և մտնել մի ընդարձակ ծով, որի սահմանը ոչ ոքի յայտնի չէր:

Զմտ ու շատ տարիներ անցան: Հոռոմայեցիք այնքան ուժեղացան, որ նուաճեցին Կարթագենացոց, Յունաց և Եգիպտացոց: Հայերն էլ հարկատու եղան նոցա: Բայց այդ մեծ տէրութիւնը ևս փոքր առ փոքր թուլացաւ: Զոայլութիւնն ու փառասիրութիւնը նոցա մէջ այնչափ զարգացան և սորանից նոցա ներքին բարոյական և զինուորական ոյժը բոլորովին թուլացաւ: Այդ ժամանակ հիւսիսային երկրներից արշաւեցին նոցա վրայ կիսավայրենի Գերմանական ցեղերը, նորա ամբողջութիւնը քայքայեցին և նուաճեցին: Հին առևտրական ազգերից շատերը չքացան. նոցա աւերակների վրայ հիմնուեցան նոր տէրութիւններ, որոնցից երևելի էին Վենետիկը, Սպանիան և Պորտուգալիան: Այդ երկիրների վաճառականներից ոմանք աշխատեցին և կարողացան ցամաքային ճանապարհով հասնել Հնդկաստան և մինչև անգամ Չինաստան. բայց զարձեալ ոչ ոք չէր վստահանում անցնել Ջիբրալտարի նեղուցը և տեսնել թէ ինչ աշխարհ կայ նորա միւս կողմը: Վերջապէս յայտնուեցաւ մի մարդ, որին վիճակուած էր անյայտութեան դարևոր քօղը բաց անել: Սա էր Քրիստափոր Կօլումբոսը, որ ունէր մեծ խելք և արիութիւն մի այնպիսի գործի ձեռնամուխ լինելու համար:

Քրիստափոր Կօլումբոսը Գենուացի վաճառականի որդի էր: Նա ծնուեցաւ 1436 թուականին: Իւր մանկութեան ժամանակ նա ջանապարհութեամբ շատ բան սովորեց, պարապեց աշխարհագրութեամբ և աստեղագաշխութեամբ և մի քանի ծովային ճանապարհորդութիւններ արաւ: Այդ ժամանակ անա յղացաւ այն միտքը, որ գտնի Հնդկաստանի ծովային ճանապարհը: Երկար մտածեց նա այդ խնդրի վրայ և վերջապէս վճռեց գործադրել: Բայց սորա համար նաւատորմիկ էր հարկաւոր: Կօլումբոսը յաջողաբար դիմեց Գենուայի, Պորտուգալիայի և Անգլիայի կառավարութիւններին, բայց ոչ ոք չէր վստահանում նաւատորմիկ յանձնել նրան այդպիսի մի ցնորամիտ նաւատակի համար: Երկար ու անյաջող որոնմունքից յետոյ՝ վերջապէս յաջողեցաւ Սպանիայի թագաւոր Ֆերդինանդից և նորա կին Իզապէլլայից օգնութիւն ստանալ: Թագաւորը տուեց նորան երեք նաւ 120 մարդով:

Կօլումբոսի փոքրիկ նաւատորմիկը 1492 թ. օգոստոսի 3-ին դուրս եկաւ Սպանիայից և տասն օրից յետոյ նա արդէն Ջիբրալտարի նեղուցն անցել՝ Կանարեան կղզիներին էր հասել: Կօլումբոսի ճանապարհորդակիցները համարձակ ու գործունեայ մարդիկ էին, բայց երբ մրտան ընդարձակ և անծանօթ ծովը, մտատանջութեան մէջ ընկան, միայն Կօլումբոսն էր հաստատ համոզուած իւր ձեռնարկութեան յաջողութեան մասին: Կարճատև խաղաղութիւնից յետոյ, որ կանգնացրեց համարձակ ծովապետին Կանարեան կղզիների մօտ, սեպտեմբերի 9-ին փչեց յաջողակ հողմը, առագաստները լցուեցան և նաւերը մղեցին զէպի արևմուտք, և Փերըօ կղզու բարձրաւանդակը շուտով ծածկուեցաւ ծովի տակ: Հին աշխարհը չքացաւ ծովագնացների յետևը, մինչ դեռ անաջները սփռած էր անսահման և անծանօթ ովկիանոսը: Լողում են մի, երկու երեք օր, լողում են, բայց ոչինչ չեն տեսնում, բացի երկրից ու ծովից: Վերջապէս հինգերորդ օրը թռչուններ երևեցան՝ սպիտակ գանգաւոր արագիլը և սպիտակ խաղտոնիկը: Ծուլեցան՝ սպիտակ գանգաւոր արագիլը և սպիտակ խաղտոնիկը: Ծուլեցան թռչում այդ թռչունները ցամաքից: Մի քանի օր ևս լողալուց յետոյ, ծովագնացների յոյան սկսեց փոքր առ փոքր նուազիւ: Հողմը միշտ յաջողակ էր, որովհետև այնտեղ, ուր Սպանացիք լողում էին, աշնանը յաջողակ էր, որովհետև այնտեղ, ուր Սպանացիք լողում էին, աշնանը պատաստեան քամիներ են փչում. բայց հողմի նոյնիսկ միակերպ

բերքեր, առանձին գծերով միացնելով, կազմում են մի այլ գօտի, որ կոչւում է հացաբեր: Մեր աշխարհը ամբողջապէս գտնուում է այդ գօտիում, այդ պատճառով գիւղական մշակութիւնը— երկրագործութիւնը աշխատաւոր գիւղացու գլխաւոր պարապմունքն է համարւում և երկիրն առատապէս վարձատրում է նրան: Մեր աշխարհի շատ տեղերում երկիրը ծածկուած է սեահողով: Սեահողը գոյացել է այստեղ ամենահին ժամանակից՝ խոտերի և այլ բոյսերի փտելուց: Այդ տեսակ հող դուք կրգանէք ամենայն բոյսի արմատի մօտ, բայց վարելահողերում դոքա առաւել մաքուր են և հասա շերտով: Փտած ածխային մասերը նրանում խառնուած են մանր աւաղի կամ կաւի հետ և նա բաւական փուխը է, ջուրը հեշտութեամբ է ծծուում և երկար է պահպանուում նորա մանրիկ մասերի մէջ. այդ է պատճառը, որ նա այնպէս բարեբեր է: Գուք գիտէք որ երկիրը հերկում են միմիայն նորա համար, որ նորա կոշտերը փշրուեն ու մանրանան, իսկ սեահողը, երբ վերեկից շորանում է, ոչ թէ կաւի պէս կարծրանում է, այլ փշրուում և փոշի է դառնում: Այս էլ պէտք է իմանաք, որ ամենայն սև բան աւելի շատ է տաքանում, քան պարզն ու փայլունը, ինչպէս հին ու մրոտ կաթսայում ջուրն աւելի շուտ է տաքանում, քան նոր ու փայլուն կաթսայում: Այսպէս էլ սեահողը ամառն արեգակի ճառագայթներ աւելի շատ է ընդունում, քան միւս հողերը: Հացաբոյսերը, պարտէզի բոյսերը և բազմատեսակ խոտերը հիանալի կերպով աճում են նորա վրայ. իսկ ծառերն Գայնքան հիւթալի հող չեն սիրում. նոցա հարկաւոր է աւելի մեծ շափով խառնուրդ աւաղի կամ կաւի: Գարտոֆիլը ևս սեահողի վրայ վատ է պտղաբերում. նա խոնաւութիւնից փտում է. նրան հարկաւոր է շուտ ցամաքող, աւաղախառն հողի մէջ ցանել:

Ինչպէս որ երկիրն է, այնպէս էլ նորա բնակիչներն են: Երկիրը և նորա կլիման մեծ ներգործութիւն ունին մարդու կեանքի և բնաւորութեան վրայ: Ինչպէս որ մեր երկրի դիրքը բազմաաստիակ է, այնպէս էլ նորա բնակիչների պարապմունքը և նոցա բնաւորութիւնն այլ և այլ է: Գիւղացի հայը, եթէ նա բնակուում է լեռնոտ՝ բայց երկրագործութեան ու անասնապահութեան յարմար երկրում, աշխատասէր է իւր գործի մէջ և քաջարի՝ զէնքի մէջ: Արցախեցի հայը միևնոյն ժամանակ երկրագործ է և քաջ զինակիր. նորա մանուկներն անգամ իշխում են հրացանին: Արցախեցոց նման և նոցանից առաւել են մեր զէյթունցի եղբայրները, որոնք հուշակուած են իրանց քաջութեամբ և անվեհեր արիասրտութեամբ: Նոքա, բնութիւնից դրդուած, պէտք է

որսորդ լինին, իսկ որսորդութիւնը զարգացնում է մարդու մէջ արիութիւն, զինակրութեան հմտութիւն, ճարպիկութիւն: Զիրակեցի հայը կարող է հայ երկրագործի նախատիպը համարուիլ. նա ամբողջ տարին համարեա հանգստութիւն չունի: Գարնանը նա գարունքաւար է անում. այնուհետև սկսում է ցիլի իւր արտերը աշնանացանի համար. դեռ այդ գործը չվերջացրած, ահա հասած խոտը մանգաղ է կանչում և անխոնջ հայ երկրագործը, իւր նահապետական երգը երգելով, փայլուն գերանդին ուսին, դաշտ է դուրս գալիս: Սեպտեմբերին նորա արտերը հասունանում են, հունձը եռ է գալիս և դուք նրան տեսնում էք՝ մանգաղը կամ գերանդին առած, իւր աշխատանքի պտուղը ժողովելիս: Հունձը վերջացրեց, տասնեակներ դրեց, այժմ նա պէտք է կրէ, կալսէ, ամբարէ: Աշունը վերջացաւ. Զիրակեցին իւր տարեկան վաստակի կէսը պէտք է վաճառահանէ. ահա նա լծում է իւր նահապետական փոքրիկ սայլակը և կրում է ցորենը կամ ալիւրը դէպի մօտակայ նշանաւոր քաղաքները: Զիրակեցին, բացի երկրագործութիւնից, պարապում է նաև անասնապահութեամբ: Նա ամբողջ տարին ծանրաբեռնուած է գործերով. նա ժամանակ չունի զէնքի վրայ մտածելու, անտառներ չունի, որ կարողանայ որսի գնալ. նորա կեանքն անցնում է շատ խաղաղ և նա երջանիկ է, եթէ Աստուած օրհնել է նորա վաստակը: Իւր պարապմունքի համեմատ՝ Զիրակեցին հանդարտ, չափաւոր և խաղաղ բնաւորութեան ու կեանքի տէր է: Սէրը և խաղաղուոր և խաղաղ բնաւորութեան ու կեանքի տէր է: Սէրը և խաղաղութիւնը թագաւորում է նորա տան մէջ, որի բոլոր անդամները հպարտութիւնը թագաւորում է նորա տան մէջ, որի բոլոր անդամները հպարտութիւնը թագաւորում են տան նահապետի ամենայն ակնարկութիւնները: Բոլորովին հակառակ պատկեր է ներկայացնում մեզ Գողթան գաւառի հայը: Երկիրը չվարձատրելով նորա աշխատանքը՝ ստիպում է նրան թողնել իւր տուն ու տեղը և աշխարհի այլևայլ կողմերում իրան համար բազդ որոնել. նա, որպէս և քաղաքաբնակ հայերի մեծ մասը, պարապում է վաճառականութեամբ: Նոքա շատ հմուտ են, համբերատար, չափաւոր և գործունեայ: Փող վաստակելու համար նոքա պատրաստ են թափառել ամենայն կողմեր, ամենայն տեղ իրանց ընդունակութիւնը ցոյց տալով այդ կոչման մէջ:



ՆԱԽԵՐԻ ՅԱՆՎԵ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

		Երես	
1.	Երկու խոփ. թարգ. Ղուկասեանց	3	
2.	Երկրագործի յոյսերը, բան. Բարխուդարեանց	4	
3.	Երիտասարդը և իւր ըստուերը, Կրիլովից	5	
4.	Հովիւ և մոծակ, Կրիլովից	5	
5.	Հայր և երեք որդին, թ. Դու. Բարխուդարեանց	6	
6.	Մի հաւատար, բանաստ. Մանուէլեան	8	
7.	Հարստութիւն, թ. Ղուկասեանց	9	
8.	Կրիլովից	—	
9.	Արդար Գատաստան թ. Նազարեանց	11	
10.	Գթասիրտ, բան. Փանսեան	12	
11.	Սոխակ, «Բազմավէպից»	14	
12.	Սոխակներ, բն. Ղ. Աղայեան	14	
13.	Հաւատարիմ շուն	18	
14.	Իմ չնիկ, բան. Ղազարեան	18	
15.	Արծիւն ու հաւը, թ. Ղուկասեանց	—	
16.	Արծիւն ու ճիճուն, բան. Արծիւեան	19	
17.	Թռչունի երգը	21	
18.	Երգ. բան. Հիւզովից (Բաֆ.)	24	
19.	Ճնճողիկ, Տուրգենևից »	26	
20.	Թռչուն, բան, Բարկաս	—	
21.	Աղանիւներ, Տուրգենևից (Բաֆֆի)	27	
22.	Բազէն ու աղանիւն, բան. Նժդեհ	28	
23.	Իւր վիճակից գոհ մանուկը, ֆրանսերէնից	30	
24.	Մի պատառ հաց	33	
25.	Ոսկի ձկնիկ, Պուշկինից, Ղ. Ա.	39	

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԳ

26.	Բնութեան կենդանանալը, Պուօշեանց	50	
27.	Գարնան գալուստը, բան. Ղազարեանց	53	
28.	Առատ	54	
29.	Լուսադէմին	55	
30.	Գարնան մեծ տօները, Լէօ	56	
31.	Յորուն աստղերը, բան. Յովհաննիսեան	6	
32.	Մայիսուայ խաղը, Լէօ	6	
33.	Տապանագիր, Ռ. Պատկան. 7 ²	7 ²	
34.	Արագածտանի ջրվէժը, Պուօշեանց	74	
35.	Ջրվէժ և առուակ, Կրիլովից	75	
36.	Վարդ, Բաֆֆի	76	
37.	Առ Վանահայրն Վարագայ, բան. Աղայեան	79	
38.	Ջրաբերդ, Բաֆֆի	—	
39.	Երգչի անէժըրը, բան. Յովհաննիսեան	89	
40.	Մասիս Z	91	
41.	Արագած. Z	93	

42.	Ծաղկաձոր, բան. Գամ. - Բաթիպա	94	
43.	Խաչարձաններ, Պուօշեանց	96	
44.	Աւերակ, բն. Յովհաննիս.	97	
45.	Հին ուսումնարանը, Պուօշ.	98	
46.	Հատիկ, բան. Յովհաննիս.	101	
47.	Փոթորիկ, Բաֆֆի	—	
48.	Փոթորիկ, Թաղէսեան	107	
49.	Այլը լիճը (աւանդութ.), Պուօշեանց	—	

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԳ

50.	Մարդու ստեղծագործութիւնը	113	
51.	Նախաստեղծ աշխարհ, բան. Բարխուդարեանց	115	
52.	Նահապետական հայի տունը, Բաֆֆի	116	
53.	Անձրեկի կաթիլ	119	
54.	Ուսիր առաջ քո մայրենի լեզուն	119	
55.	Առ մարդին լեզու, բանաստ.	120	
56.	Սիրիւր քո հայրենիքը և ազգը	122	
57.	Վերջին հրաժեշտ, բան. Ա. Ծատուրեանց	120	
58.	Անառակ որդին, Լէօ	123	
59.	Արտաւազ, բան. Յովհաննիսեան	129	
60.	Նաւասարդի տօները, Ալիշան	131	
61.	Երեք արմաւենի, Լեւոնտովից (Գ. Բ.)	132	
62.	Քրիստոնէութեան սկիզբը Հայաստանում	134	
63.	Երբոր տեսնում եմ, բան. Մանուէլեան	136	
64.	Գրիգոր Լուսաւորիչը	138	
65.	Քահանայ, բան. Գ. - Բաթիպայի	142	
66.	Ներսէս Մեծը	143	
67.	Մինաստան, բան Նարդոս	145	
68.	Մեծն Սահակ	146	
69.	Ժայռ, բան. Յովհաննիսեան	149	
70.	Մեկուսի վարդապետը	149	
71.	Մայրենի լեզու, բան. Նազարեանց	151	
72.	Վարդանանց նահատակութիւնը, Տ. Ստեփանեանց	152	
73.	Տապանագիր, բան. Արծիւեան	158	
74.	Ուրացողի վերջին օրերը, Եղիշէից	159	
75.	Յուդայ, Նաթիսովից (Մադաթեան-Թումանեանց)	161	
76.	Հինգերորդ դարի Հայկանալը, Եղիշէից	167	
77.	Սպիտակ զգեստ, բան. Կուսերէնից	171	
78.	Քաջի նկարագիրը, Խ. Արովեանց	173	
79.	Պանդխտի երգը, բան. Մանուէլեան	177	
80.	Աղասի, Խ. Արովեանց	178	
81.	Աղասու մօր երգը, Գ. - Բ.	180	
82.	Ջրիկ խաղացողներ, Արովեանց	181	
83.	Լեւոնային վտակ, բան. Մանուէլեանց	184	
84.	Աղասու վիճակն ու հոգսերը, Խ. Արովեանց	185	
86.	Գաղթականի պատմածից, բան. Ալէքեան	192	
87.	Արիսիրտ ճանապարհորդները, Խ. Արովեան	194	

Բարձր քառասուն

88. Աքսորական, Վիկ. Հիւկօից (Ա. Ծատուրեան) . . . 200	մեան Հայրիկ 201
89. Պանդխտի կեանքը, Խլրի.	90. Ալպեան որսորդ, բան. Աբեղեան 202

ՀԱՏՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԿ

91. Գարուն 205	108. Երկիր 248
92. Գարուն, բան. Բաֆֆի . 207	109. Երկրագունտ 250
93. Ամառ 208	110. Համառօտ ծանօթ. կի- սագնտերի հետ 251
94. Ամառ, բան. Բաֆֆի . 211	111. Կօլումբոս 255
95. Աշուն 212	112. Վասիլօ-դէ-Գամա 262
96. Աշուն, Բաֆֆի 216	113. Մագելան 264
97. Ձմեռ —	114. Երկնակամար 267
98. Ձմեռ, Բաֆֆի 219	115. Երկրի շարժողութիւնը . 269
99. Օդ —	116. Պիւթագորոս 271
100. Ջերմութիւն և ցրտու- թիւն 222	117. Կոպերնիկոս 272
101. Մարմինների ջերմու- թիւնից լայնանալը 224	118. Գալիլէոս 272
102. Ջուր 228	119. Նիւտօն 275
103. Մագնիս 233	120. Առանցք, բևեռներ, հա- տարակած, գօտիներ . 278
104. Երկրաբանութիւն և մագնիսականութիւն . 236	121. Կլիմաների տարբերու- թիւնը 281
105. Գիւղիկ և ցամաք 242	122. Երկրի յատկութիւնը և բնակիչների պարապ- մունքը 283
106. Մակարդակ 245	
107. Հեռու և մօտիկ 246	

Բարձր քառասուն

«Ազգային գրադարան»



NL0243454

9843

